Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"
կայքի՝ www.freebooks.do.am
կողմից եւ ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...
For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ԼՈՒՍԱԼՈՒՄ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ԼԵՌՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՍՏԱՆ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԷՈՒՄՈՊԱՏԵԼԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹԿԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՆ՝

www.freebooks.do.am

ՀԱՐՀԱՎԱՆ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:
ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:

ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

ՍՓԻՒՌՔ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՍԻՐԵՐԳ ՈՒԹՅԱՆ

ՆԱՄԱԿԱՆԻ

Համաշխարհային սիրերգության նամականեր

Սփիւռքահայութեան հեռ կապերի կոմիտէ Երեւան 1992

ԳՄԴ 83.3(0)
Հ 202

Կազմեց, խմբագրեց՝
ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆԸ

Հ 202 Համաշխարհային սիրերգության նամականի *(Կազմ., խմբ. Ա. Անդրանիկյան, նկարիչ՝ Մկրտիչ Մաթևոսյան)*
Եր. Սփիւռք, 1992— 304 էջ —

«Համաշխարհային սիրերգության նամականի»

Ժողովածուն ընդգրկում է 18—20-րդ դ. դ. քաղաքական, մշակութային գործիչների սիրային նամակները։ Այն, իհարկե, իր ընդգրկումով որպես այդպիսին ամբողջական չէ, բայց եղածն ըստ կարելվույն մեկտեղվել է՝ նախադեպն ունենալով Ա. Չեբոտարյովսկայայի ժամանակին կազմած գիրքը («Սերը 18—19 դ. դ. նշանավոր մարդկանց նամակներում», Մոսկվա, 1913 թ.)։

Այդուհանդերձ ժողովածուում ներկայացված այլազգի և հայ մեծահամբավ անհատների կյանքի այնկողմնային աշխարհի հետ ընթերցողի հաղորդակցումը խիստ հետաքրքրահարույց է։

Հ $\frac{4603020000}{779(01)92}$ 92 ԳՄԴ 83.3(0)

ISBN 5—8079—0410—9 © «Սփիւռք» հրատարակչություն, Երևան, 1992

«ՍՓԻՒՌՔ» ՀՐԱՏ., ԵՐԵՒԱՆ—10, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ—37.
Հեռախոս՝ 562413, տելէքս՝ 243318 ARAKSSU, *ֆաքս՝ 151064*

Տպագրուել է ՀՀ Նախարարների խորհրդին առընթեր մամուլի վարչության № 1 տպարանում, Երևան-10, Հանրապետության 65։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ 3

(Առաջաբանի փոխարեն) 4

ՍԵՐ... ԳԱՅԹԱԿՂՈՒԹՅՈՒՆ... ԶՈՀԱԲԵՐՈՒՄ...— ռուս. թարգմ. **Դոնարա Ղարագյոզյան** . 6

Դիդրոն՝ տիկին Վոլանին 6
Միրաբոն՝ Սոֆի Մոնլեին 7
Վոլտերը՝ Օլիմպիա Դլունուալեին 12
Գյոթեն՝ տիկին ֆոն Շտեյնին 16
Գյոթեն՝ Քրիստինե Վուլպիուսին . . . 24
Բետտիան ֆոն Արնիմը՝ Գյոթեին 26
Տիկին Ռոլանը՝ Լեոնարդ Բյուզոյին . . 28
Շիլլերը՝ Լոտտային . . 31
Լոտտան՝ Շիլլերին . . 32
Ֆիխտեն՝ Իոհան Մարի Ռանին 33
Տիկին Ստելը՝ Բենջամին Կոստանին . . . 35
Բենջամին Կոստանը՝ տիկ. Ռեկամյեին . . . 36
Շատոբրիանը՝ անհայտ աղջկան 37
Նապոլեոնը՝ Ժոզեֆինային 40
Նապոլեոնը՝ Մարիա Վալևսկային . . 43
Նապոլեոնը՝ կայսրուհի Մարի-Լուիզային . . 44
Կայսրուհի Ժոզեֆինան՝ Նապոլեոնին . . . 44
Բեթհովենը՝ «անմահ սիրեցյալին» 46
Հայնեն՝ Քամիլե Զեյդանին 49
Շումանը Կլարա Վիկին 51
Կլարան՝ Շումանին . . 52
Լորդ Բայրոնը՝ Միլբենկին 54
Լորդ Բայրոնը՝ Աստղուստա Լեյգին . . . 56
Լորդ Բայրոնը՝ կոմսուհի Գվիչիոլիին . . . 57
Տիկին Շատը (Էլվիրա)՝ Լամարթինին . . . 58
Բալզակը՝ տիկին Գանսկային . . . 59
Հյուգոն՝ Զուլիետա Դրուեին 64
Զուլիետա Դրուեն՝ Հյուգոյին 65
Ստենդալը՝ Մենտիային 66
Ֆլոբերը՝ տիկին Հ-ին . 67
Ժորժ Սանդը՝ Ալֆրեդ Դը Մյուսեին . . . 75
Ժորժ Սանդը՝ դոկտոր Պեգալյին 78
Ալֆրեդ Դը Մյուսեն՝ Ժորժ Սանդին . . . 80
Ալֆրեդ Դը Մյուսեն՝ Էմե Ալտոնին . . . 83
Էդգար Պոն՝ տիկին Պոպին 86
Էդգար Պոն՝ Ելենա Ուիտմանին 87
Բոդլերը՝ տիկին Մարիին . 90
Մանձինին՝ Զուդիտա Սիդոլիին 93
Գարիբալդին՝ Անիտային . 94
Վագները՝ Մաթիլդա Վեզենդոնկին 96
Բիսմարկը՝ հարսնացու Իոհաննե Պուտկամերին . 100
Լասալը՝ Ելենա ֆոն Դենիգեսին 102
Ելենա ֆոն Դենիգեսը՝ Լասալին 104
Իբսենը՝ Էմիլի Բարդախին 106
Պուշկինը՝ Նատալյա Գոնչարովային . . . 110
Պուշկինը՝ անծանոթ կնոջը 112
Պուշկինը՝ Ա. Պ. Կեռնին . 113
Իշխան Վյազեմսկին՝ կնոջը՝ կոմսուհի Գագարինային 114
Օգարյովը՝ կնոջը՝ Մ. Ռուսավևային . . 116
Բելինսկին՝ կնոջը՝ Մ. Օլովային 124
Ալեքսել Տոլստոյը՝ կնոջը՝ Միլլերին . . . 130
Տուրգենևը՝ Պոլինա Վիրդոտին 134
Լև Տոլստոյը՝ Ս. Բերսին 140
Վլադիմիր Սոլովյովը՝ Ե. Ռոմանովային . . . 141

ԱՐՅՈՒՆՔԻ ԱԶՆՎԱՅՈՒՄ . 145

Եղիա Տեմիրճիպաշյանը՝ Սրբուհուն 145
Տիրան Չրաքյանը (Ինտրա)՝ Վերժինին . . . 187
Ռուբեն Սևակը՝ Յանինին . 197
Ավ. Իսահակյանը՝ Շուշանիկ Մատակյանին . . 232
Ավ. Իսահակյանը՝ Զավահիր Ներսիսյանին . . 234
Ավ. Իսահակյանը՝ Շ. Մատակյանին . . . 239
Ավ. Իսահակյանը՝ Աննա Մատակյանին . . . 242
Վահան Տերյանը՝ Անթառամ Միսկարյանին . 262
Վահան Տերյանը՝ Մարթա Միսկարյանին . 296

(ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ)

...Հավերժելի,— և միայն,— ընդգրկունությամբ է լեցվել, կենսականացվել ու լիարյունացել՝ սերը... «Ահա միակ մեղքը»: Գերզգայնություն պետք չէ ունենալ, ազնվաբարությունն էլ ամենևին անպարտադիր է՝ նվաճվելու համար, քանզի որքան փոթորկաբեր է, նույնքան՝ հանդարտ-ընթաց՝ սերը: Ահա միակ տևարարը, տեսանելիորեն ոստյունի պատրաստ զգայնորեն համակերպն ու հոգիների օրհնաբանը... Այս ամենը ի բնուստ եղել է, կա և գալ ընթացության (թեկուզև անչափավոր քաղաքականացված մերօրյա պայմաններին ամենևին ոչ հարիր) մեջ որոշորեն բաբախուն: Որովհետև մեր հարատև շարունակումի, սերընդակոչման սկզբնասկիզբն է՝ սերը— իր ոգելից հնքով թափառիկ ու խոստումնաբեր, և որն ամենաէականն է, երբեմնի պղատոնական փայլքով՝ տարածուն, խորքով՝ անընդգրկելի, լռությամբ՝ եզակի, հիշողությամբ՝ արդար-սթափեցնող, հավերժությամբ՝ նորածին...

Ժամանակները պատմությանն են պատկանում, մեզ մնացել է ոգեշունչը, և եթե զորու չենք վերագրել, վերակոչել մեր Սկիզբը, ուրեմն ժառանգորդաբար մեզ է անցել չսեփականացված-չյուրացվածը, ուրեմն տակավին շարունակում ենք պարտ մնալ մեր նախնյաց, որոնք զորեղ էին ամեն ինչի դեմ՝ սիրով, հավատարմորեն, անանձնականությամբ: Այդ սերը միս ու արյուն ուներ, և կրքազերծ էր, և կրքալի՝ մանավանդ հակատագրական պահերին, օրերին և ընդհանրապես: Այդ սերը նաև հորդում էր պարզ ու անհատ մարդկանց կրծքից, ինքնաբխորեն էր հոսում բյուր երևելիների հոգուց: Նվազչեղած սիրուց ոչ մարդը և ոչ էլ ազգերն են ինքնապաշտպանունակ, պռատ սիրուց թշնամանքն է անպակաս և նույնիսկ ծնված երեխան դույզն-ինչ ապօրեն: Լեցուն սիրուն է ենթակա ամենայն ինչ և իրավ մշակույթն առավելաբար, որն ի վերջո մարդու հոգևոր եռքային զգացումի արգասիք է, հասարակական հնչողության հասցրած արտահայտություն: Իսկ մեծերը միշտ էլ ուժգին ու տարօրինակ են սիրում, գրեթե «արևին դեմ մանկնալուն» հանգույն, «հաց

ուզելուն պես», բովանդակալի ջերմությամբ, ինքնամերժի ցասմամբ ու երկյուղանքով:

Այս հատկորոշող ու ընդհանրական առումներով է «Համաշխարհային սիրերգության նամականի» հավաքածուն արժեքոր գրեթե բոլորի համար: Խորհրդամղող բոլոր նրանց, ովքեր ցարդ Նապոլեոնին, Գարիբալդուն, կոմս Լև Տոլստոյին, Տիրան Չրաքյանին և այլոց բոլորովին այլ կերպ են պատկերացրել կամ նրանց անձնական-մարդկային նկարագրի մասին գաղափար չեն ունեցել, իսկ նամակները (և այն էլ սիրային) գործչի, գեղագետի ոչ միայն հոգու հայելին են... Շարունակենք ճանաչել նրանց և եթե գիտեինք, առավել մերձենանք՝ սիրո,— ինչ-ինչ առումներով,— կորստի մտավախությունն հաղթահարելու ի գին: Մեր գրականության ներսի Ոգուն նիրհից հանելու մտադիր ցանկությամբ, քանզի այս հավաքածուն, ինչու չէ նաև ոգեմղիչ և ոգեցույց է... Եվ ամենայն ինչով բովանդակավոր կյանքը, որ սիրո, և նախ սիրո ծնունդ է, այժմ մեզ այլ կերպ է պատկերանում: Բնականապես մեր նպատակադիր ջանքը մշտաբար ուղղված է եղել դարաշրջանների, պսակակիր անձանց գործունեությանը—ստեղծաբանմանը, այլ ոչ թե նրանց ներաշխարհային դրսևորումների ճանաչմանը: Բոլորովին այլ է, երբ մինչ այդ հանրածանոթն ու մեծահռչակը «ինքնակամորեն» են առավել ներկայանալի դառնում: Կցկտուր նախադասություններով կամ ամբողջական էջեր նամակ-հղումներով բացահայտելով իրենց ԵՍ-ի տրտունջն ու հոգևոր երկփեղկ, անելանելի վիճակը, սիրո հիացմամբ ապրողի իրենց օրերի, ժամերի, պահերի ողջ հովվերգականությունն ու անդորրը:

Ճանաչենք նրանց, քանզի նրանք սիրել են և այդ սիրո շնորհով է նաև աշխարհը վերստեղծվել, երանգավորվել, նրանց ստեղծածը շնչավորվել-կերպավորվել խանդավառ ոգեշնչումից, լքումից, մերժումից, տևող ապասումների աշխարհն անդրադարձնող հայելիազարդ սենյակներում:

Շարունակենք ճանաչելով մերձենալ և մերձենալով ապրել մեծաց ապրած աշխարհներից անդին՝ ապրել մեր այս բաժին երկինք-երկրի օրհնաձեռ խաչակնքման տակ, քանզի ընդմիշտ է տևելու սերը՝ մեր քայլքով և ուղեկցությամբ Աստծո:

ԱՐԹՈՒՐ ԱՆԴՐԱՆԻԿՅԱՆ

ՍԵՐ... ԴԱՅԹԱԿՎՈՒԹՅՈՒՆ... ՀՈՀԱՓԵՐՈՒՄ...

ԴԻԴՐՈՆ՝ ՏԻԿԻՆ ՎՈԼԱՆԻՆ

Դենի Դիդրոն (1713—1784) հայտնի հանրագիտակ, հասուն տարիքում, բավարարված չլինելով կնոջ հետ ունեցած հարաբերություններից, սիրեց Սոֆիա Վոլանին: Նրանց նամակագրությունը վերաբերում է 1759—1774 թվականներին, իսկ բարեկամությունը տևեց մինչև Սոֆիայի մահը՝ 1783 թ: Սոֆիայի նկատմամբ Դիդրոյի փայլուն վերաբերմունքը ի դեպ ապացուցվում է հանրահայտ Ֆալկոնեին գրված նամակից՝ «Եթե նա ասեր՝ տուր խմեմ արյունդ, ես մի պահ չէի վարանի և կբավարարեի նրա ցանկությունը»:

Փարիզ, 10 հուլիսի

Գրում եմ, չեմ տեսնում, մութ է: Եկա, ուզում էի համբուրել Ձեր ձեռքը ու հեռանալ: Ստիպված եմ սակայն հեռանալ առանց այդ պարգևի. բայցևայնպես մի՞թե բավարար չափով պարգևատրված չեմ, որ եկա ապացուցելու Ձեզ իմ սերը: Ժամը ինն է. գրում եմ Ձեզ, որ սիրում եմ: Համենայն դեպս ես ուզում եմ այդպես գրել, բայց համոզված չեմ, որ գրիչս հպատակվում է ինձ: Արդյոք չե՞ք գա, որ ես կարողանամ դա ասել Ձեզ և անմիջապես չքանալ: Ցտեսություն, իմ Սոֆի, մնաք բարով. ուրեմն Ձեր սիրտը չի հուշում, որ ես այստեղ եմ: Առաջին անգամ եմ գրում կիսամթում, և դա անշուշտ իմ ներսում քնքշություն պիտի ծնի: Բայց զգում եմ միայն մի բան՝ չեմ ուզում գնալ: Ձեզ տեսնելու հույսը ինձ պահում է այստեղ, և շարունակում եմ զրուցել Ձեզ հետ, ու չգիտեմ բոլո՞ր բառերն են գրվում: Ուր որ բացակայեն դրանք, կարդացեք՝ ես սիրում եմ Ձեզ.

ՄԻՐԱԲՈՆ՝ ՍՈՖԻ ՄՈՆՅԵԻՆ

Կոմս Գաբրիել Միրաբոն (1749—1891) ամուսնացած լինելով՝ սիրահարվել էր Սոֆյա Մոնյեին, որին 16-տարեկանում ամուսնացրել էին 70-ամյա ծերուկի հետ: Երբ նրանք գտնվում էին Հոլանդիայում, երկուսին էլ բանտարկում են՝ Միրաբոյին՝ երեք ու կես տարի Վենսենյան ամրոցում, իսկ Սոֆին ծննդաբերությունից հետո տարվում է մենաստան (1778): Բանտարկության տարիներին սիրահարները հաճախակի էին գրում միմյանց՝ օգտվելով ոստիկանապետ Լենուարի ծառայությունից: Բանտից դուրս գալուց հետո Միրաբոն անտարբեր դարձավ Սոֆիի նկատմամբ, որը երկրորդ անհաջող ամուսնությունից հետո ինքնասպան եղավ (1789): Միրաբոյի միայն Վենսենից գրված նամակները կազմում են 30000 տող:

«Մարդը բավարարված է զգում իրեն, երբ գտնվում է այն շրջանակներում, ում սիրում է»,— ասել է Լա-Բրյուերը: Նշանակություն չունի՝ զրուցում եմ, մտածում, թե լռում, կարևորը նրանց հետ լինելն է: Բարեկամս, որքան ճշմարիտ է ասված: Եվ ճիշտ է այն, որ դրան այնքան ենք վարժվում, կյանքը առանց այդպիսի բարեկամության դառնում է անհետաքրքիր, անկարելի: Ավա՜ղ: Ես դա լավ գիտեմ, պիտի լավ գիտենամ, քանի որ արդեն երեք ամիս է ապրում եմ քեզնից հեռու, երեք ամիս է դու ինձ չես պատկանում, և իմ երջանկությունը վերջացած է: Եվ այնուամենայնիվ ամեն առավոտ փնտրում եմ քեզ, ինձ թվում է, որ կեսս չկա,և դա է ճշմարտությունը: Օրվա ընթացքում քսան անգամ հարցնում եմ ինքս ինձ՝ ո՞ւր ես: Հենց դրանով էլ դատիր, թե որքան ուժեղ են պատրանքները, որքան դաժան է, որ դրանք ոչնչացված են: Անկողնում միշտ քեզ տեղ եմ թողնում: Կպչում եմ պատին՝ թողնելով քեզ իմ ձեղ մահճակալի մեծ մասը: Դա անում եմ չգիտակցելով, մեքենայաբար: Ա՜խ, ինչո՞ւ ենք այդպես վարժվում երջանկությանը: Ավա՜ղ: Հասկանում ես դա, երբ արդեն կորցրած ես լինում նրան, և համոզված ես, որ մենք հասկացանք, թե որքան անհրաժեշտ էինք իրար, երբ մեր գլխին պայթեց այդ անավոր փոթորիկը: Մեր արցունքների

ակունքը չի ցամաքել, սիրելի Սոֆի: Մենք չենք ապաքինվել, մեր սրտերում ապրում է սերը, հետևաբար պիտի սգանք: Թող ասեն, թե խորը վշտից հնարավոր է ապաքինվել կամքով ու գիտակցությամբ, դա թույլերից ու թեթևամիտներից է գալիս, և թող նրանք մխիթարվեն: Կորուստներ կան, որոնց հետ երբեք չես հաշտվում: Երբ սիրո մեջ երջանկություն չեն գտնում, գտնում են տառապանքի մեջ կամ ցանկանում են դա: Ինչ էլ ուզում են ասեն, այդ զգացողությունը կա ամենանուրբ սիրո մեջ: Մի՞թե Սոֆին հուսախաբ չէր լինի, եթե իմանար, որ Գաբրիելը մխիթարվել է:

Ինչո՞ւ պիտի այդ զգացողությունը արգելվեր Գաբրիելին: Ճշմարիտն այն է, որ երբ սիրում են սիրեկանին կամ սիրուհուն, սիրում են իրենց անձից առավել, բայց ոչ սեփական սիրուց: Կարելի է ամեն ինչ զոհաբերել, ի՞նչ եմ ասում, այդպես էլ անում են, հիարկե բացի սիրածի զգացմունքից: Եթե գտնվի մեկը, որը այլ կերպ է պատկերացնում ու մտածում, որ ինձնից ուժեղ է, ուրեմն պակաս սիրահարված է, քան ես:

Գոյություն ունի ևս մի միջոց զոհաբերելու աստվածային սերը՝ խոցել սեփական սիրտը: Եթե համոզված լինեի, որ իմ մահը անհրաժեշտ է քո երջանկության համար, որ դու այդ գնով կունենաս այն, ես կսպանեի ինձ՝ առանց մի վայրկյան տատանվելու: Ես դա կանեի մեծ ուրախությամբ, քանի որ քեզ պիտի ծառայություն մատուցեի: Եվ դա կլիներ համարյա վրեժ ինձ նման սիրող մարդու համար՝ իմ մահվան պատճառով անշնորհակալ սիրուհուն դարձնել անշնորհակալ մարդ: Եվ դա կանեի առանց ափսոսանքի, քանի որ կպարզվեր, որ չես սիրում ինձ, եթե կարող ես երջանիկ լինել առանց ինձ: Ես չէի զոհաբերի իմ սերը, բայց դա կլիներ վրեժ քո անհավատարմության դիմաց՝ միակ միջոցը պատժելու ինքս ինձ՝ Սոֆիի համար: Բնավ չհրաժարվելով քո սիրուց, ես ինձ կպատժեի միայն նրա համար, որ կորցրի այն: Ով այդպես է մտածում, նա խաբում է ինքն իրեն կամ ուզում է խաբվել: Նա մտածում է, որ, սիրում է շատ ավելի ուժգին, քան կա իրապես և ստիպում է հավատալ դրան:

Իմ կարծիքով դա նույնքան պարզ է, որքան որ ճշմարիտ: Ես կարող եմ զոհաբերել քեզ ամեն ինչ, բայց ոչ քո սերը: Ես չեմ կարծում, որ դա մեծահոգություն չէ, եթե երբևէ դու

այդպես մտածես, ես կպատժեմ ինձ, բայց ես սիրում եմ ու չեմ կարծում, որ որևէ մեկը ինձնից ավելի ուժգին սիրեր. իմ սրտում այնքան կենսական ուժեր կան, որ չունի մեկ ուրիշը և ոչ մի սիրահար այնքան պարտ չէ իր սիրուհուն, որքան Գաբրիելը Սոֆիին: Երախտագիտությունը ինձ համար այնքան մաքուր հաճույք է, որ բավական է ինձ սիրահար դարձնել: Իմ քնքշությունը մշտապես անկախ է որևէ այլ զգացմունքից: Գիտեմ, եթե պատահեր, որ ինձ ատեիր, միևնույն է, չպիտի կարողանայի ապաքինվել իմ սիրուց, հենց ճանաչեցի քեզ, դու բոնակալի պես տիրեցիր ինձ: Քո հաճելի բնավորությունը, քո թարմությունը, քո նրբագեղ, սիրառատ էությունը գերեցին ինձ, ամեն մի բառդ հոգեմոտ էր ինձ: Ես ցանկանում էի տիրանալ քեզ ու լինել միմիայն քո բարեկամը, քանի որ անավոր վախենում էի սիրուց: Դու ինձ դուր էիր գալիս քո ջահելությամբ, գեղեցկությամբ և գայթակղություն էիր հոգուս համար: Ամեն ինչ մեզ մտերմացնում էր: Լինելով եռանդուն ու զգացմունքամին՝ թեպետ փորձում էիր թաքցնել զգացմունքայնությունդ, զարմացնում ու հուզում էիր ինձ: Քո բարեկամությունը վերափոխվեց սիրո, ու ես անկեղծորեն խոստովանեցի, որ չեմ կարող լինել քո ընկերը: Քո շուրթերից կայծակնային արագությամբ թռչող սրամտությունները զարմացնում էին ինձ իրենց անսպասելիությամբ, գերում ու հուզում: Այդ հուզումը ինձ անչափ անհանգստացնում էր: Ես հանգստացնում էի ինձ՝ այնքա՞ն կին եմ տեսել, այնքա՞ն սիրուհիներ եմ ունեցել: Նա այնքան անփորձ է: Ո՞նց նա ինձ կհաղթի: Նա դեռ երեխա է: Բայց այդ երեխան այնքան քնքուշ է, իմ ինքնասիրությունը շոյվում էր նրա անհոգ ուշադրությունից: Այն, որ ընկալում ու գնահատում էր իմ ամեն մի խոսքը, հիանում, ու դա դառնում էր ինձ համար անհրաժեշտություն: Մենք սիրում էինք միմյանց՝ թաքցնելով այդ զգացմունքը: Իմ Սոֆին, որ հասարակ ու անմեղ էր, քնքշության ու անկեղծության տիպար էր թվում, չկար միայն կիրքը, դա էլ խոստանում էր սեր: Նա նման չէր ոչ ոքի, և դա փոքր-ինչ տարօրինակ էր, որ այդ ամենը այնքան էր սազում նրան. անգամ խստությունը, որ ինձ մոտ ցանկություն էր առաջանում տիրել նրան, և ներքուստ ինչ-որ մի բան համո-

զում էր, որ դա ինձ կհաջողվի: Ես չսխալվեցի, բայց գայթակղվելով, գայթեցի նաև: Դա անսպասելի էր, ու ես վախեցա: Ի՞նչ խելագարն էի ես: Ինչպիսի՞ երջանկությունից էի ուզում հրաժարվել: Ես սերը միշտ հպարտությունից վեր եմ դասել: Ների՛ր ինձ, իմ Սոֆի, ների՛ր: Փոխադարձ քնքշության հաճույքը ես չէի զգացել, միայն քո շնորհիվ ես ճաշակեցի այն: Ես քավեցի իմ մեղքերը: Իմ սերը այդ շղթաների նկատմամբ ավելին է, որքան վախը:

Կանանց խաբելու սովորությունը տղամարդկանց դարձնում է անհավատարիմ: Հենց դա էլ իմ մեջ թախիծ առաջացրեց սիրելիիս նկատմամբ, որին հույս չունեի հանդիպել և որին այնքան ավելի եմ ցանկանում, այնքան ավելի եմ գնահատում:

Սիրո արժանի շատերը կան: Ես դա տեսնում եմ այն օրից, երբ դժբախտացա: Ոչ մեկը խելքը, մտածելակերպը, բնավորությունը այնպես չգերեցին ինձ, ինչպես քոնը: Ես չէի կարող սիրել հոգով աղքատ մի կնոջ, քանի որ հոգեպես անհարազատ պիտի լինեի: Շինծու սրամտությունը հոգնեցնում է ինձ, որն այնքան բնորոշ է տիկին Ֆեյլանին: Ավելորդ կրքոտությունը, իմ կարծիքով, այնքան է անբնական, որքան ներկած այտերն ու գեղեցկությունը: Ես պարտավոր էի գտնել պարզ, քնքուշ, հաստատուն և ուրախ մի էակ: Ես զերծ եմ սովորական նախապաշարումներից, իմ մտածումները այնքան են տարբերվում աշխարհիկ կարծիքներից, որ մանրուքներից ու անընդհատ իրար հակասող բնազդներից հյուսված կինը հազիվ թե հարմար լինի ինձ: Քո մեջ ես տեսա կենսունակություն, անսասան բնավորություն, վճռականություն: Բայց դա դեռ ամեն ինչ չէ, իմ բնավորությունը անկայուն է, իմ ընկալումները հրեշային են, իմ խանդավառությունը բացառիկ՝ այդ իսկ պատճառով ինձ պետք է քնքուշ ու հեզ կին, որը կարող էր ինձ սանձել: Երբեք չէի հանդգնի երազել, որ այդ սքանչելի հատկությունները, միահյուսված այդքան շնորհներով, իմն են լինելու՝ դա բացառիկ երևույթ է: Այնուհանդերձ այդ բոլորը ես գտա քո մեջ, իմ թանկագին բարեկամ: Երևակայիր ուրեմն, թե ինչ ես դու ինձ համար. իմ երջանկության տունը կառուցված է

քեզնով: Մի զայրացիր, որ ես դողում եմ մեզ սպառնացող որևէ վտանգի մասին մտածելիս, որ դու ինձ համար ավելի մեծ բարիք ես, քան ես քեզ համար: Իմ բնավորությունը արդեն կազմավորվել է, քոնը դեռ ոչ, իմ սկզբունքները հաստատուն էին, դու նոր էիր մտածում այդ կերպ: Դու կարող էիր ունենալ այլ բարեկամություն ու երջանկություն, քան այն, որը տրվեց քեզ քո Գաբրիելի գրկում: Բայց Սոֆյան անհրաժեշտ էր իմ երջանկության համար, միայն նա կարող էր շնորհել ինձ այն:

Չորեքշաբթի, 9 հունվարի 1778 թ

Իմ թանկագին, իմ միակ բարեկամ, արցունքներով, համբույրներով ցողեցի նամակդ: Ա՜խ, իմ բարեկամ, ի՜մ Սոֆյա, ինչպիսի բեռից ազատեցիր դու իմ հոգին: Ա՜խ, ոչինչ չես գրում առողջությանդ մասին: Գիտեմ, որ տանջալից վիճակում է գրվել նամակդ, զգացի, որ միայն մի բառ ես ավելացրել, միայն մի բառ, երբ ամեն ինչ վերջացել էր: Եվ այդ բառը ինչպիսի երկյուղալի թրթիռով է գրված: Ծուռտիկ տառերը կրծում էին հոգիս: Աստվածային, աստվածային վերաբերմունք: Ամեն տողում երևում է հոգիդ: Բայց և այնպես, ինչպե՞ս ես զգում, ինչպե՞ս, ասա ինձ, գրիր ինձ, իմ Սոֆյա: Ես ո՞նց հանդարտվեմ: Ա՜խ, սիրտս այնքան խավար: Թող այս նամակիս անհարթությունը չտագնապեցնի քեզ, ձեռագիրս էլ է փոխվել, այդ լուրը ինձ դուրս բերեց ուշից, հուզմունքս ուժեղ ու բնական է: Չուզեցի հանդարտվել ու նոր միայն գրել այս նամակը, քանի որ պիտի հետաձգեի հանույթդ:

Սիրելի՜, սիրելի՜ Սոֆյա, և ահա դու մայր դարձար: Եվ քո մանկիկին չեն խլի քեզնից: Եվ թող նա թեթևացնի քո վիշտն ու տառապանքը: Ես ասում եմ՝ քո մանկիկը, բայց ես գիտեմ, որ նա նաև իմն է: Քո բարեկամը երբեք չի հրաժարվի հայր լինելու երջանկությունից... Անհոգի Սոֆյա, դու նախատում ես ինձ: Աստված իմ, մի՞թե մենք դժբախտ չենք, և դա՛ է ինձ տանջում: Հանդարտվի՛ր, սեր իմ, աղաչում եմ: Հիշիր, որ դու իմ էության կեսն ես, և կձուլվեիր իմ կյանքին, եթե չհոգայիր քո մասին... Դու հոգեկան անդորրի կարիք

ունես, իմ Սոֆյա, աղաչում եմ, խնայիր քեզ, պահպանիր քեզ ավելի լավ օրերի համար: Ես կմխիթարվեի, եթե իմանայի, որ նամակս կհասնի քեզ: Գրիր վիճակիդ մասին, ինչպես ես զգում, խնդրում եմ՝ չխաբես...

Խնդրում եմ՝ մի խաբիր ինձ, գրիր հենց որ հնարավոր կլինի: Իմ հոգին տառապում է, բայց դեռ ուժեղ եմ, իսկ դու ուժասպառ ես, ուստի մի շտապիր, և թող ե՛ս տանջվեմ մի փոքր ավելի:

Դու ասում ես՝ աղջիկս ինձ նմա՞ն է: Դա պարզև չէ, բայց նա կունենա քո հոգին ու դրանով հարուստ կլինի, որով բնությունը կփոխհատուցի նրա ծննդյան արատը... Կարծում եմ՝ նա կլինի չափազանց դյուրազգաց: Բայց որքան էլ նա տառապի դրանից, վնաս չի լինի:

Չեմ ուզում երկար գրել, չեմ էլ կարող: Վախենում եմ, սիրտս, քո վիճակի համար: Բարեկամս, իմ Սոֆյա, ծնկաչոք աղաչում եմ, անգամ պահանջում, թախանձում եմ աղջկադ, նրա հոր արցունքից, քո երդումներով, քո քնքշությամբ՝ պահպանիր քեզ: Մի խուսափիր այն ամենից, ինչը կարող է վերականգնել առողջությունդ, ապավինիր բնավորությանդ հրաշալի գծերին: Առողջությո՛ւն: Մնաս բարո՛վ, իմ ուրախություն, իմ կյանք:

ՎՈԼՏԵՐԸ՝ ՕԼԻՄՊԻԱ ԴՅՈՒՆՈՒԱՅԵԻՆ

Ֆրանսուա Արուե Վոլտերը (1694—1778) երբ 18 տարեկան էր, Հասագայում ծառայության տարիներին սիրահարվում է 16-ամյա Օլիմպիա Դյունուայեին, որին մայրը հեռացրել էր կաթոլիկ հորից, քանի որ ինքը բողոքական էր:

Բացի պատանեկան սիրահարվածությունից, Վոլտերին ոգեշնչել է նաև երիտասարդ աղջկան հոր մոտ՝ Փարիզ վերադարձնելու ցանկությունը:

Հոկտեմբեր 1713 թ.

Ինձ թվում է, սիրելի օրիորդ, որ դուք ինձ սիրում եք, և պատրաստ եղեք այս հանգամանքներում ապացուցել ձեր

ուժը: Երեկ հենց վերադարձա հյուրանոց, պարոն Լ*-ն ասաց, որ այսօր պիտի մեկնեմ, բայց կարող եմ հետաձգել մինչև վաղը՝ այն պայմանով, որ ոչ մի տեղ չգնամ հյուրանոցից, քանզի նա վախենում է, որ Ձեր հարգարժան մայրիկը կարող է վիրավորել ինձ, որ շատ ցավագին կանդրադառնա իր և թագավորի վրա, նա անգամ չթողեց, որ որևէ ձևով հակադրվեմ իրեն: Ես ստիպված եմ մեկնել առանց Ձեզ տեսնելու: Կարող եք երևակայել իմ հուսահատությունը: Կյանքս կտայի, եթե համոզված չլինեի, որ պիտի օգտակար լինեմ՝ զրկվելով Ձեր թանկագին ներկայությունից: Ճանապարհին ինձ սփոփելու է այն միտքը, որ անպայման կհանդիպենք Փարիզում: Այլևս չեմ համոզելու, որ թողնեք Ձեր մայրիկին և երբեմն հանդիպեք հայրիկի հետ, որ Ձեզ խլեցին, որ Ձեզ դժբախտացնեն**: Ամբողջ օրը կանցկացնեմ տանը: Ինձ երեք նամակ ուղարկեք՝ մեկը Ձեր հորը, մյուսը՝ հորեղբորը, երրորդը՝ Ձեր քույրիկին, դա պարտադիր է, և կհանձնեմ պայմանավորված տեղում, մանավանդ Ձեր քրոջ նամակը: Թող նամակները բերի կոշկակարը, նրան մի բան խոստացեք, և թող ձեռքին լինի կաղապարը՝ իբր իմ կոշիկները ուղղելու համար: Նամակների հետ ուղարկեք նաև մի քանի տող՝ գրված Ձեր ձեռքով, որպեսզի մի փոքր մխիթարվեմ մեկնելուց առաջ, բայց կարևորը՝ հանուն սիրո, որը տածում եմ Ձեր հանդեպ, ուղարկեք նաև Ձեր դիմանկարը, ամեն ինչ արեք, որ այն Ձեր մորից ստանաք: Ծառան, որին ուղարկում եմ Ձեզ մոտ, անկասկած հավատարիմ է ինձ, իսկ եթե դուք կուզեիք նրան ներկայացնել Ձեր մայրիկին որպես ծխախոտավաճառի, ոչինչ, նա նորմանդացի է, և այդ դերը լավ կխաղաղ, կտա Ձեզ իմ նամակները, որոնք կուղարկվեն իր հասցեով և դուք նույնպես կարող եք նամակներ ուղարկել նույն ձևով, նաև վստահեցեք նրան Ձեր դիմանկարը:

Գրում եմ Ձեզ գիշերը, դեռ չգիտեմ ինչպես եմ մեկնելու, բայց ամեն կերպ կաշխատեմ, որ վաղը տեսնվենք մինչև

---

* Լեֆեբր

** Այստեղ երևի մի քանի անհաճո տողեր են եղել տիկ. Դյումուայեի հասցեին, որոնք Օլիմպիայի մայրը մկրատել է:

կլքեմ Հոլանդիան: Բայց քանի որ վստահ չեմ՝ խոստումս կկատարեմ, ուստի, հոգիս, ասում եմ Ձեզ՝ ներեք, ասում և երդվում եմ այն քնքշությամբ, որին Դուք արժանի եք: Այս, սիրելիդ իմ, Պիտպատա, սիրելու եմ Ձեզ հավերժ. այդպես ասում են անգամ ամենաթեթևամիտ սիրահարները, բայց նրանց սերը չի բխում, ինչպես իմը, խորին հարգանքից, ես հավասարապես խոնարհվում եմ ինչպես Ձեր առաքինության, այնպես էլ Ձեր արտաքինի առջև, և մաղթում եմ Աստծուն, որ ինձ դարձնի Ձեզ նման վեհանձն զգացմունքների տեր: Իմ զգացմունքը թույլ է տալիս համոզված լինել փոխադարձ սիրո մեջ, հույս եմ փայփայում, որ Ձեր սրտում արթնացնելու եմ Փարիզը տեսնելու ցանկություն, գնում եմ այդ հրաշալի քաղաքը, որպեսզի կարգավորեմ Ձեր մուտքը այնտեղ, նամակներս կուղարկեմ Լեֆեբերի միջոցով, որին նամակի համար որևէ բան տվեք, որ իր գործը լավ անի:

Եվս մեկ անգամ ցտեսություն, իմ տիրուհի. երբեմն հիշեք անբախտ սիրեցյալին, բայց հիշեք ոչ տխրելու համար, հետևեք Ձեր առողջությանը, եթե ուզում եք, որ պահպանեք իմը, կարևորը՝ եղեք չափազանց գաղտնապահ, այրեք այս նամակը և բոլոր մյուսները, լավ է պակաս ուշադիր լինեք իմ և ավելի հոգատար Ձեր նկատմամբ: Մխիթարվենք առաջիկա հանդիպման հույսով, և կսիրենք իրար ողջ կյանքում: Հնարավոր է, որ ես գամ Ձեր ետևից, այդ դեպքում կլինեմ երջանկագույններից մեկը, միայն թե գաք՝ լրիվ բավարարված կլինեմ: Հանուն Ձեր երջանկության ես կզոհեմ իմը: Ես ինձ լիովին երջանիկ կզգամ, եթե գիտենամ, որ նպաստել եմ Ձեր վերադարձին:

Ցտեսություն, թանկագինս, հոգյակս: Գրկում եմ Ձեզ բյուր բազում անգամ:

ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՀԵՏՈ (1713 Թ.)

Թագավորի կարգադրությամբ ինձ պահում եմ գերության մեջ. կարող են ինձ զրկել կյանքից, բայց ոչ Ձեր սիրուց: Այո, իմ թանկագին, իմ սեր, այսօր երեկոյան ես կտեսնեմ Ձեզ, եթե անգամ ստիպված լինեմ գլուխս դնելու կառափնարանին:

Ի սերն Աստծո, մի խոսեք ինձ հետ այդ մոայլ արտահայտությունով, ինչպես որ գրում եք: Ապրեք, բայց եղեք գաղտնապահ, զգուշացեք Ձեր մորից՝ որպես Ձեր ամենաչար թշնամուց. այդ ինչ եմ ասում: Զգուշացեք բոլորից կյանքում, ոչ մեկին մի վստահեք: Հենց որ երևա լուսինը, պատրաստ եղեք, ես դուրս կգամ հյուրանոցից գաղտնաբար, և մենք քամուց էլ արագ կսլանանք դեպի Ծ. իմ վարձած կառքով, հետս թանաք ու թուղթ կվերցնեմ, և մենք մեր նամակները կգրենք, դե իհարկե եթե սիրում եք ինձ, մխիթարվեք, Ձեր ուզնվությունն ու խելքը Ձեզ ապավեն...

Եղեք պատրաստ ժամը չորսի կողմերը, կսպասեմ Ձեր փողոցի մոտերքը:

Մնաք բարով՝ չկա ոչինչ, ինչին ես չէի դիմանա հանուն Ձեզ: Դուք արժանի եք անհամեմատ ավելի մեծ զոհողության: Մնաք բարով, իմ թանկագին, հոգյակս:

ԳՅՈԹԵՆ՝ ՏԻԿԻՆ ՖՈՆ ՇՏԵՅՆԻՆ

Յոհան Վոլֆգանգ Գյոթեն (1749—1832) երկար տարիներ ապրելով Վայմարում՝ բարեկամական կապ ուներ տիկին Շտեյնի հետ: Այդ խելացի և ուսյալ կինը Գյոթեի համար մարմնավորում էր Իֆիգենիային:

1789 թվականին, երբ նրանց հարաբերությունները սառեցին, Գյոթեն ճանապարհորդության մեկնեց Իտալիա: 1792 թ. նա սիրահարվում է Քրիստինե Վուլպիուսին՝ գոեհիկ, հասարակ մի կնոջ, որը փոխարինեց տիկին Շտեյնին:

Կիրակի, 31 մարտի

Թանկագինս: Ձեր նամակը ինձ վշտացրեց: Ինձ համար անհասկանալի է Ձեր կասկածը այն հոգու նկատմամբ, որը կերջանկացնի շատերին: Կյանքում ոչինչ պետք չէ հասկանալ, ինչքան շատ եմ տեսնում, այնքան խորապես եմ հասկանում... Ձեր երազները, սիրելիս: Ձեր արցունքները: Դա այդպես է: Իրականությունը, սիրելիս, ես լավ եմ ընկալում, անուրջները ինձ հուզում են մշտապես: Ես նորից տեսա առաջին սերս: Այս ինչ անակնկալներ է ինձ մատուցում ճակատագիրը: Այս ճամփորդության ընթացքում որքան բաներ վրիպեցի, չտեսա ոչ մի կամոք: Այս ճամփորդությունը կարծես պիտի ամփոփեր իմ անցյալը: Այժմ ամեն ինչ սկսվում է նորից: Չէ որ դուք բոլորդ իմն եք: Շուտով կվերադառնամ: Դեռ չեմ կարողանում բաժանվել Շրետերից: Ցտեսություն, մնաք բարով:

Մարտի վերջին օր, 76 թիվ, Լայպցիգ:

Ուրբաթ, 25 մայիսի

Բացի քրոջից որևէ կնոջ նկատմամբ չէի ունեցել մաքրամաքուր, գեղեցիկ, ճշմարիտ զգացմունքներ, որ փշրվեցին: Ես պատրաստ էի դրան, միայն անսահման տառապում էի անցյալի և ապագայի համար խեղճ երեխայի, որին այդպիսի տանջանքների ենթարկեցի, ու նա գնաց: Չեմ ուզում տեսնել Ձեզ: Ձեր ներկա վիճակը ինձ կվշտացներ: Եթե չեմ կարողանալու ապրել Ձեզ հետ, ապա Ձեր սիրով այնքան եմ ես ապրում, որքան բոլոր այն նախկին կանանց սիրով և գոյությամբ: Ներկան է որոշողը կարիքի դեպքում, այն թեթևացնում ու ամրացնում է ամեն ինչ: Բացակայողը գալիս է հիրդեհը հանգցնելու, երբ արդեն այն մարել է, և դա արվում է հասարակությանն ի տես: Հասարակությունը ոչինչ է ինձ համար, և չի ցանկանում, որ Դու լինես իմը: Մենախցում գտնվող դատապարտյալը, որը չի լսում սիրո ձայնը, ի վիճակի չէ օգնության ձեռք մեկնել: Մնաս բարով, սիրելի:

24 մայիսի 76 թ.

Երեկոյան 16-ին

Շարունակում եմ նամակս: Երեկ գիշերը, երբ վերադառնում էինք Ապոլդի մոտից, կառքում նստած էի առջևում, ետևում հուսարները պատմում էին իրենց կյանքից, լսում ու չէի լսում և մտքերով տարված շարունակում էի ճանապարհը: Հանկարծ մտածեցի, թե որքան եմ սիրում այս վայրերը, այդ Էթեսբերգը, այդ ցածրիկ բլուրները: Եվ հանկարծ ինձ շանթահարեց այն միտքը, որ այս բոլորը ստիպված պիտի լքես: Այն վայրերը, որտեղ գտար երջանկություն, որի մասին կարող է երազել ամեն մի մահկանացու, որտեղ հաճույքդ փոխվել է տհաճության, և նորից թիթեռներով լեցուն կյանքի ու նորից պանդուխտի ցուպը ձեռքիդ պիտի լքես այն, ինչպես լքեցիր հայրենիքդ: Արցունքները թրջեցին աչքերս, ինձ այնքան ուժեղ զգացի, որ հաղթահարեցի ամենն այս: Ուժեղ, ուրեմն՝ անզգա:

Ինչու տանջեմ քեզ, սիրելիս: Ինչու խաբեմ ինձ, տանջեմ քեզ և այդպես շարունակ: Մենք ոչինչ ենք միմյանց համար և ամեն ինչ: Հավատա ինձ, երբ քեզ պարզ ասացի ամեն ինչի մասին, դու համաձայն էիր: Եվ հենց այդ պատճառով, որ իրերը տեսնում եմ այնպես, ինչպես կան, դա էլ ինձ խենթացնում է: Բարի գիշեր, հրեշտակս, և բարի լույս: Չեմ ուզում տեսնել քեզ նորից... Միայն... Դու ամեն ինչ գիտես... Դրա մասին գիտի սիրտս ու տողատակը... Ինչ որ պիտի ասեմ հիմարություն է: Սրանից հետո կտեսնեմ քեզ այնպես, ինչպես տեսնում են աստղերը: Լավ մտորիր այս բոլորի մասին:

Քո սերը լուսո ու գիշերային աստղ է՝ այն ծագում է արևից հետո ու վառվում արևից առաջ: Նման Հյուսիսային աստղին, որ երբեք չի կորչում ու մեր գլխավերևում հյուսում է մշտադալար կենդանի պսակ: Ես աղաչում եմ աստվածներին, որ չմարեն նրա լույսը՝ իմ կյանքի ճանապարհին: Հարնաճային առաջին անձրևը կարող է խանգարել մեր գրոսանքին: Բույսերը կթարմանան անձրևից, որ մենք կարողանանք հիանալ առաջին կանաչով: Մենք երբեք միասին չենք ըմբոշխնել այսպիսի հրաշք գարուն, թող նա երբեք չիմանա՝ ինչ է աշունը: Ներիր, ես կիմանամ՝ ինչ է լինելու ժամը 12-ին: Մնաս բարով, լավս, սերս:

Հասցեն՝ ՏԻԿԻՆ ՇՏԵՅՆԻՆ

10 օգոստոսի, շաբաթ

Այսօր առավոտյան վերջացրի Վիլհելմից մի գլուխ, որի ակիզբը թելադրում էի քեզ: Դու ինձ համար հաճելի ժամանց էր: Իհարկե ես գրող եմ ծնվել: Այնպիսի ուրախություն եմ ապրում, երբ հաջողվում է գրել մի բան, որ նախապես մտադրել էի: Ներիր: Պահպանիր իմ կյանքի ոգին, իմ ստեղծագործության...

Գ.

19 օգոստոսի 82 թ.

Հինգշաբթի, 17 սեպտեմբերի, 82 թ., երեկոյան

Ծածուկ վերադարձա տուն՝ կարդալու, քո մասին մտորելու: Ես ծնվել եմ, որ ապրեմ անձնական կյանքով: Չեմ հասկանում՝ ինչ գործ ունեմ, ինչու ճակատագիրը ինձ ներքաշեց պետական գործունեության մեջ ու արքայական ընտանիք:

Քեզ համար եմ ապրում, իմ Լոտտա, քեզ են տրված իմ բոլոր վայրկյանները, և դու իմն ես, ես դա զգում եմ:

Երեկ թաշկինակը թափահարում էի մինչև որ ինձ տեսանելի էիր: Ճանապարհին քեզ հետ էի, մինչև տեսա քաղաքը, նոր միայն հասկացա, թե որքան հեռու եմ քեզնից:

Փորձեցի ճշգրիտ սկիզբ գտնել, ավելի շուտ սկսել իմ հեքիաթը, տեղ-տեղ էլ փորձեցի բանաստեղծություններ գրել և կարծում եմ կատուցվեր, եթե բավական հանգիստ ժամանակ ունենայի։

Կիրակի, 17 նոյեմբերի

Առավոտ շուտ, լուսադեմից էլ առաջ, չէ, լուսադեմի հետ, ես կատարեցի իմ ուխտագնացությունը: Պատուհանիդ տակ խոնարհվեցի քեզ ու գնացի դեպի քարդ: Հիմա իմ այգում դա ամենալուսավոր վայրն է: Մաքուր երկնային արցունքները թափվում էին քարիդ, հուսով եմ, որ այդտեղ չար նախանշան չկա:

Անցա իմ փոքրիկ, լքված տնակի կողքով, ինչպես Մելուզինը իր բնակարանի, ուր նա այլևս չէր վերադառնալու, ու մտորում էի անցյալի մասին, որից ոչինչ չեմ հասկանում և ապագայի, որին չեմ ճանաչում: Ինչքան կորուստներ ունեցա ես այն ժամանակ, երբ ստիպված էի հեռանալ այս հանգըստավետ ապաստանից: Այն երկարող թելն էր, որից կախված էի, հիմա էլ կախված եմ միայն քեզնից, և, փառք Աստծո, այդ թելը ամենաամուրն է: Վերջին օրերին վերընթերցում եմ անցած տասը տարիներին ստացված նամակները ու բոլորովին չեմ հասկանում՝ ո՞վ եմ ու ի՞նչ եմ անում ես:

Մնա ինձ հետ, սիրելի Լոտտա, դու իմ խարիսխն ես այս սոորջրյա խութերում:

Հինգշաբթի, 21 նոյեմբերի

Առավոտ շուտ կլինեմ քեզ մոտ: Ինձ քեզնից չեն բաժանի ոչ կյանքը, ոչ մահը, ոչ ստեղծագործությունը, ոչ էլ գործնական թղթերի ընթերցումը: Ձյունը ինձ ուրախություն է պարգևում, հիշեցնում է անցյալ ձմեռներն ու մեր բարեկամության անմոռանալի պատկերները: Մնաս բարով, իմ կյանքի քաղցր անուրջ, դու իմ տառապանքները մեղմացնող սպեղանի: Վաղը թեյի հրավերք ունեմ: 21 նոյեմբերի: Հայտնիր քո օրը:

Վրոնա, 18 սեպտեմբերի, 86 թ.

Մի փոքրիկ թղթի վրա գրում եմ իմ սիրելիին՝ լուր չտալով՝ ուր եմ: Գոհ եմ, միայն կուզենայի կիսել քեզ հետ գեղեցկության հաճույքը՝ մի ցանկություն, որը տխրությամբ է պատում ինձ շատ հաճախ:

Ես օրագիր եմ պահելու. կգրառեմ բոլոր սքանչելի պահերը, մտորումներս: Իմ կարծիքով դու այն կստանաս հոկտեմբերի կեսին: Երևի դու կուրախանաս, ու այդ դեպքում իմ բացակայությունը քեզ ավելի կտա, քան ներկայությունս: Այնտեղ կգտնես մի քանի նկարներ: Առաջիկայում ավելին կլինի: Բայց ոչ մեկին չասես այդ մասին: Առաջին հերթին դա բացառապես քեզ համար է: Իֆիգենիայի վրա շատ եմ աշխատում և հույսով եմ, որ անտիկ աշխարհի սիրողների երախտագիտությանը պիտի արժանանամ:

Ես էլի ուրիշ բաներ ունեմ ասելու, բայց չեմ կարողանում, մատնում եմ ինձ ու ավելորդ խոստովանություններ անում: Դու Կոխբերգում ես, ու ես մտովի քեզ հետ եմ: Բարևիր Ձրիցին: Հաճախ եմ տխրում, որ նա ինձ հետ չի: Եթե գիտենայի այն, ինչ գիտեմ հիմա, անպայման կվերցնեի հետս: Ես ճիշտ ճանապարհին եմ, և այս ճամփորդությունը ինձ շատ բան կտա: Ներիր: Արտանց ուրախանում եմ, որ կտեսնվեմ քեզ հետ ու ամեն ինչ կպատմեմ:

Այն, ինչ ասում էր ուսանողը՝ «Ի՞նչ է տունը, եթե ես այն չեմ տեսել», կարող եմ ճշտել՝ «Ինչո՞ւ այդ ամենը տեսնեմ,

եթե այդ բոլորը դու չես տեսնելու»: Հազար անգամ ներիր, բարևիր Շտեյնին, Իմգոֆին ու պատիկին: Զմոռանաս և Էռնեստին, որի մասին հաճախ եմ մտածում:

ՏԵՐՆԻ, 27 հոկտեմբերի, 86 թ., երեկոյան

Նստած եմ մեկ տարի առաջ երկրաշարժից տուժած քարանձավում ու դիմում եմ քեզ աղերսով, թանկագին իմ պահապան հրեշտակ։ Ինչքա՞ն եմ ես շփացած, նոր եմ զգում: Ցասը տարի ապրել քեզ հետ, սիրվել քեզնից և հանկարծ հայտնվել օտար աշխարհում: Ես դա նախօրոք գիտեի և միայն ծայրահեղ անհրաժեշտությունը կարող էր ինձ ստիպել ընդունել այդ որոշումը:

Մենք պիտի մեռնենք միասին:

23 դեկտեմբերի, երեկոյան

Թույլ տուր հայտնեմ երախտագիտությունս նամակիդ համար: Թույլ տուր մոռանամ, որ նամակումդ հիվանդագին մի բան կա: Սեր իմ, սեր իմ: Ծնկաչոք խնդրում եմ քեզ, աղաչում եմ, թեթևացրու իմ վերադարձը դեպի քեզ, որպեսզի չդառնամ վտարանդի՝ այս անծայրածիր աշխարհում: Մեծահոգաբար ներիր ինձ, եթե ինչ-որ բանում մեղավոր եմ, և աշխատիր օգնել ինձ, որ ոտքի կանգնեմ: Ավելի հաճախ ու մանրամասն պատմիր ինձ քո մասին: Ասա, որ առողջ ես ու սիրում ես ինձ: Օրերս կգրեմ ճամփորդությանս ծրագիրը, և թող Աստված օրհնի այն: Խնդրում եմ մի մտածիր, որ քեզանից բաժանվել եմ: Ոչինչ աշխարհում չի կարող փոխարինել մեր միասնությանը... Եթե արիություն ունենայի դիմանալ բոլոր անհաջողություններին:

Դու մի բաց արա գզրոցներդ ու մի անհանգստացիր: Բարևիր Շտեյնին ու Էռնեստին: Ֆրիցին շնորհակալություն հայտնիր նամակի համար: Թող հաճախ գրի: Նրա համար էլ եմ սկսել հավաքել, կստանա, ինչ որ ուզում էր և ինչ չէր ուզում ու դեռ ավելին։

Իմ պատճառով հիվանդացել ես, ու դա շատ է տխրեցնում ինձ: Ներիր ինձ: Ես էլ պայքարում էի կյանքի ու մահվան միջև և ոչ մի բառով չեմ կարող արտահայտել այն, ինչ կատարվում էր ինձ հետ: Հոգեկան անկման այդ պահին ես ինքս ինձ գտա:

Սեր իմ: Սեր իմ:

ՊԱԼԵՐՄՈ, 18 ապրիլի, 1787 թ.

Սեր իմ: Հրաժեշտի մի խոսք էլ Պալերմոյից: Նորից պիտի կրկնեմ, որ առողջ եմ ու գոհ, ճամփորդությունս ինչ-որ տեսք է ընդունում: Նեապոլում մի փոքր հիմարացա, այսինքն իմ գրառումներից դու ավելի լավ կհասկանաս, ընդհանրապես իմ հոգեկան վիճակի, հաճելի հետևությունների մասին ոչինչ չեմ գրի, չեմ էլ կարող: Դա աներևակայելի գեղեցիկ երկիր է, բայց հասցրել եմ տեսնել ափի մի կտորը միայն: Այն, ինչ պատրաստում եմ Ձեզ համար, հաջողվում է ինձ: Ես ուրախության արցունքներ էի թափում, քանզի գիտեի, որ պիտի Ձեզ ուրախացնեմ: Ներիր թանկագինս: Սիրտս քեզ հետ է, ու հիմա երբ հեռավորությունն ու բաժանումը մաքրեցին այն ամենը, ինչ կար մեր միջև, սիրո հրաշագեղ բոցը, հավատարմությունը ու հիշողությունները նորից վառեցին ու լուսավորեցին սիրտս: Բարևիր Գրարներին ու մի մոռացիր ինձ:

(ՎԵՅՄԱՐ) 1 հունիսի, 1799 թ.

Ցնորհակալ եմ նամակիդ համար, այն ինձ տխրեցրեց: Չէի շտապում պատասխանել, քանի որ նման պարագաներում դժվար է անկեղծ լինել ու չվիրավորվել:

Թե որչափ եմ սիրում քեզ, որքան խորն եմ գիտակցում իմ պատասխանատվությունը քո հանդեպ, ես ապացուցեցի Իտալիայից վերադառնալուց հետո: Դուքսը ցանկանում էր, որ մնամ այնտեղ: Հերդերը գնաց. ու քանի որ ես չէի գտնում իմ այնտեղ մնալու անհրաժեշտությունը և օգտակար լինելս

գահաժառանգին, ուրիշ որևէ բանի մասին չէի մտածում, քան քո և Ֆրիցի:

Չեմ կրկնելու, թե ինչ լքեցի Իտալիայում: Դու բավական անբարյացակամ ընդունեցիր նրա մասին իմ անկեղծ խոստովանությունը:

Անկեղծ ասած, երբ վերադարձա, դու զարմանալի տրամադրության մեջ էիր:

Անկեղծորեն պիտի խոստովանեմ, թե դու ինչպես ընդունեցիր ինձ, և ինչպես՝ մյուսները: Անհաճո էր: Ես ուղեկցեցի Հերդերին, դքսուհուն, կառքում պարապ մնաց ինձ առաջարկվող տեղը, մնացի ձեզ հետ, որ ուրախանանք ու ստիպված ինքս ինձ անընդհատ կրկնում էի՝ իզուր եկա, իզուր մնացի և այլն: Եվ այս ամենը, մինչ այն պահը, երբ խոսք բացվեց իմ կապի մասին, որը քեզ այդքան վիրավորել է:

Ինչ մտերմություն է դա, ում է վնասում, ով է հավակնում այն զգացմունքները, որ ես տածում եմ դեպի այդ թշվառ էակը: Ով է հավակնում այն ժամերը, որոնք ես նվիրում եմ նրան:

Հարցրու Ֆրիցին, Գերդերներին, յուրաքանչյուրին, ում հետ մտերիմ եմ, մի՞թե ես ավելի նվազ ուշադիր եմ իմ բարեկամների հանդեպ, ավելի քիչ եմ նրանց հետ շփվում, քան առաջ: Մի՞թե այժմ ես ավելի շատ չեմ պատկանում նրանց ու հասարակությանը: Զարմանալի կլիներ, եթե կորցնեի ինձ համար ամենաթանկը՝ արտառուչ հարաբերություններ քեզ հետ:

Ես հասկացա, որ այդ զգացողությունները իմ մեջ դեռ կենդանի են, մանավանդ վերջերս, երբ դու լի էիր ինձ հետ զրուցելու ցանկությամբ:

Բայց պիտի խոստովանեմ, որ այլևս անկարելի է հանդուրժել քո վերաբերմունքը: Երբ ես խոսում էի, փակում էիր բերանս, երբ սկսում էի հաղորդակցվել ուրիշների հետ, նեղսրտում էիր, որ քեզ քիչ ուշադրություն եմ դարձնում կամ այժմ էլ, երբ անտարբեր չեմ մեր ընկերների նկատմամբ, նորից ես նեղսրտում, որ սառն ու անփույթ եմ քո նկատմամբ: Դու հետևում էիր իմ դեմքի ամեն մի շարժմանը, արտահայտությանը, քննադատում էիր իմ վարքն ու բարքը,

և այդ բոլորը իմ տրամադրության վրա խիստ ազդում էր: Ոնց պիտի պահպանվեն լավ հարաբերությունները ու վստահությունը միմյանց նկատմամբ, երբ դու ամեն անգամ ինձ վանում ես քո մտացածին կամակորություններով:

Կարող էի ավելացնել էլի ու էլի, բայց վախենում եմ, որ այժմյան քո հոգեկան վիճակում դա ոչ թե կօգնի, որ մենք հաշտվենք, այլ կզայրացնի ու կվիրավորի քեզ:

Դժբախտաբար, դու մերժեցիր խորհուրդս ու նորից վերադարձար սուրճին ու վատ սնունդին, դրանք ի վերջո բացասաբար կանդրադառնան առողջությանդ: Իբր քիչ են բարոյական այն դժվարությունները, որոնք ստիպված ենք հաղթահարել, հիմա էլ անցել ես մռայլ ու տխուր բաների, որոնք թուլացնում են մարմինը: Այն ժամանակ, երբ ուզում էիր խոստովանել սերդ, զսպում էիր քեզ ու լավ էիր զգում: Տա Աստված, որ ճամփորդությունը ու բուժումը օգնեն քեզ: Ես չեմ հրաժարվում այն մտքից ու հույս եմ փայփայում, որ երբևէ դու նորից կընդունես ինձ: Ներիր: Ֆրիցը ուրախ է և այցելում է ինձ: Իշխանը առույգ է և առողջ:

ԲԵԼՎԵԴԵՐ, 1 հունիսի, 1789 թ.

ԳՅՈԹԵՆ՝ ՔՐԻՍՏԻՆԵ ՎՈՒԼՊԻՈՒՍԻՆ

Սիրելի ճատիկ, այսօր Ֆրանկֆուրտից մեկնում եմ Մայնց: Պիտի ասեմ, որ լավ էի զգում, միայն ստիպված էի շատ ուտել ու խմել: Բայց ես համարում եմ, որ ուտելիքը ինձ համար այն դեպքում է համեղ, երբ այն պատրաստում է իմ հոգյակը: Մի քանի մանրմունր բաներ կստանաս անմիջապես այս նամակից հետո: Կուզենայի փոքրիկ մկնիկ դառնալ, մտնել տուփի մեջ, որ ներկա լինեի այն բանալու պահին. Իրերը դասավորելը ինձ մեծ հաճույք պատճառեց: Ամեն ինչ կարգին պահիր: Ցտեսություն, թանկագինս: Սիրիր ինձ այնպես, ինչպես ես քեզ: Բարևիր Մեյներին, համբուրիր փոքրիկին և անմիջապես գրիր ինձ:

ՖՐԱՆԿՖՈՒՐՏ, 21 օգոստոսի, 1792 թ.

Ես արդեն որերորդ նամակն եմ գրում ու չգիտեմ՝ ստանո՞ւմ ես, թե՞ դեռ ոչ: Մոռացել եմ համարակալել ու այժմ միայն սկսեցի: Հիմա լավ եմ զգում ու շատ եմ քեզ սիրում: Ա՜խ, եթե դու հիմա ինձ հետ լինեի՜ր: Այստեղ ամենուր լայն մահճակալներ կան, ու դու չէիր դժգոհի, ինչպես հաճախ անում ես տանը: Ա՜խ, սիրելիս, միասին լինելուց ավելի լավ բան չկա: Մենք դա պիտի կրկնենք անվերջ, երբ նորից միասին կլինենք: Մտածիր դրա մասին: Մենք այնքան մոտ ենք Ծամպանին, բայց գոնե մի գավաթ գինի չենք կարողանում գտնել: Ֆրաունպլենում լավ կլինի, երբ իմ ճատիկը կտնօրինի խոհանոցն ու մառանը:

Եղիր լավ տնտեսուհի ու պատրաստիր ինձ համար հարմարավետ օթևան: Խնամիր տղեկին ու սիրիր ինձ,

Սիրիր ինձ, քանի որ հաճախ մտովի խանդում եմ քեզ, շուրջս տեսնում եմ գեղեցիկ տղամարդկանց ու մտածում, որ դու կնախընտրես նրանցից որևէ մեկին, ով ինձնից ավելի բարետես ու հաճելի կլինի: Բայց դու չպիտի տեսնես նրանց, չպիտի համարես ինձնից լավ, քանի որ ես սիրում եմ քեզ ու բացի քեզնից ինձ ոչ ոք դուր չի գալիս: Հաճախ եմ տեսնում քեզ երազում, տեսնում եմ խառնիխուռն բաներ, ու թե ինչպես ենք սիրում միմյանց: Թող այդպես էլ լինի:

Մորս պատվիրել եմ, որ մեզ համար երկու վերմակ սարքի և այն էլ փետուրից ու այլևայլ լավ իրեր: Այնպես արա, որ մեր տնակը լավը լինի, մնացածը աստիճանաբար կդասավորվի: Փարիզում կգնեմ մի քանի ուրիշ իրեր, Ֆրանկֆուրտում էլ: Այսօր մի լիքը զամբյուղ լիկյոր ու թրխվածք եմ ուղարկել:

Ես անընդհատ էլի բաներ կուղարկեմ տան համար: Միայն թե սիրիր ինձ ու եղիր հավատարիմ, մնացածը կարևոր չէ: Քանի դեռ քո սիրտը իմը չէր, ինչիս էր պետք այդ ամենը: Հիմա, երբ այն իմն է, ես ուզում եմ այն պահպանել: Ես էլ քոնն եմ:

Համբուրիր երեխային, բարևիր Մեյերին և սիրիր ինձ:

Ծամբար Վերդենին մերձ, 10 սեպտեմբերի:

ԲԵՏՏԻՆԱ ՖՈՆ ԱՐՆԻՄԸ՝ ԳՅՈԹԵԻՆ

Բետտինա Ֆոն Արնիմը (1785—1859) գերմանացի կին գրող, Գյոթեի խանդավառ երկրպագուն: 1807 թվին նրան հաջողվում է տղամարդու հագուստով, ծպտյալ ընկնել Գյոթեի մոտ, որի մասին շատ էր լսել երեխա ժամանակ: Սիրային կապը Գյոթեի հետ նա նկարագրել է իր «Գյոթեի նամակագրությունը մանկան հետ» վիպակում: 1811 թվին Բետտինան ամուսնանում է Արնիմի հետ:

ՎԱՐԹԲՈՒՐԳ, 1 օգոստոսի, գիշեր

Բարեկամս, ես մենակ եմ: Բոլորը քնած են, իսկ ինձ իսանգարում է այն, որ քիչ առաջ քեզ հետ էի: Գյոթե, երևի թե դու եղավ իմ կյանքի ամենանշանակալից պահը, երևի թե ամենալիարյուն, ամենաերջանիկ վայրկյանը, ավելի լավ չի լինելու, գիտեմ, այսինքն չեմ էլ ընդունելու...

Դա վերջին համբույրն էր, որի հետ պիտի գնայի, իսկ ինձ թվում էր, որ պիտի լսեմ քեզ անընդհատ: Երբ կառքը տանում էր ինձ ծառուղիով, որի ստվերներում մենք զբոսնել էինք, թվում էր, թե պիտի կառչեմ նրանցից: Անհետացան կանաչ տարածությունները, հեռացավ սիրելի մարգագետինը, վաղուց անհետացավ քո տնակը, միայն կապույտ հեռուները, կարծես, թաքցնում էին կյանքիս նվիրական գաղտնիքը: Վերջապես ամեն ինչ չքացավ, մնաց միայն իմ ջերմ ցանկությունը, ու արցունքները թափվում էին անվերջ: Ախ, այդ պահին հիշում էի ամեն ինչ՝ ինչպես էինք գիշերով զբոսնում, ինչպես էիր ժպտում, ինչպես էի ես գուշակություններ անում ամպերին նայելով, պատմում էի քեզ իմ սիրո մասին, իմ գեղեցիկ երազների, ինչպես էինք լսում տերևների շրշյունը, որոնք օրորվում էին գիշերային քամուց, զգում գիշերվա հանգիստ լռությունը: Եվ դու սիրում էիր ինձ, ես դա գիտեմ, երբ գնում էինք փողոցներով, հուզվում էի քո շնչառությունից, քո ձայնի ելևէջներից և այն բանից (չգիտեմ ինչպես ասեմ), քեզնից եկող ինչ-որ բան համակում էր ինձ՝ զգում էի, որ դու ինձ թույլ ես տալիս թափանցել քո ներքին, թաքուն կյանքից

ներս, այդ պահին դու իմն էիր, ուրիշ ոչինչ չէիր ուզում, քան լինել ինձ հետ: Ո՞վ կարող է դա խլել ինձնից: Ի՞նչ եմ ես կորցրել: Իմ բարեկամ, ես տերն եմ այն ամենի, ինչ ստացել եմ: Ուր էլ գնամ, իմ երջանկությունը ինձ հետ է՝ այն իմ հայրենիքն է...

ՇԼԱՆԳԵՆԲԱԴ, 17 օգոստոսի

. . . . . .

. . . . . .

Եթե քո երևակայությունը թեթև ու ճկուն է այնքան, որ կարողանաս հետևել ինձ դեպի փլատակների անկյունները, ունդունդները, լեռներն ի վեր, ապա քաջություն կունենամ ներս թողնել քեզ իմ կացարանը՝ **ինձ մոտ:** Եվս երեք աստիճան, դեպի իմ սենյակը. նստիր դիմացս, բազկաթոռին, կանաչ սեղանի մոտ, ուզում եմ նայել դեմքիդ: Թռչում է արդո՞ք երևակայությունդ, Գյոթե: Այդ դեպքում դու պիտի իմ աչքերում տեսնես սերը, պիտի փաղաքշելով ինձ գիրկդ առնես ու ասես՝ այս երեխան ինձ պարգևել են իմ կորուստների դիմաց: Ինձ համար թանկ է նա, իմ գանձն է, իմ հարստությունը, չեմ ուզում կորցնել նրան: Լսու՞մ ես: Եվ պիտի համբուրես ինձ: Ահա թե ինչ է պարգևում քեզ իմ երևակայությունը:

Գնանք առաջ՝ մտիր սիրո տաճարը՝ ահա սկիզբը՝ լռություն: Ո՛չ Հումբոլդտ, ո՛չ ճարտարապետ, ո՛չ շուն, ո՛չ հաչեր: Դու իմ սրտի համար օտար չես, արի, թակիր: Սիրտը մենակ է և քեզ ներս կհրավիրի: Դու նրան կգտնես հանդարտ ու զով առագաստում, բարեհամբույր լույսը կդիմավորի քեզ, ամենուր հանդարտություն ու բարիք, և դու կլինես ցանկալի հյուր: Ի՞նչ է դա: Աստված իմ: Սիրտս բոցավառվում է: Ի՞նչ է հրդեհվում: Իմ խեղճ, խեղճ սրտիկ, ո՞վ կփրկի նրան: Այդ դեպքում ի՞նչ կարող է անել բանականությունը: Նա ամեն ինչ գիտի, բայց ոչինչ չի կարող անել, նա մնում է ձեռնունայն...

. . . . . .

. . . . . .

Ասա, ինչից է, որ այդքան մեղմ ես, այդքան շոայլ ու բարի է նամակագիրդ իմ: Խստաշունչ, սառցափայլ ձմռանը արյունս ջերմանում է արևավառ ճառագայթներից: Ի՞նչ է ինձ պակասում: Ախ, քանի ես քեզ հետ չեմ, Աստծո օրհնություն չկա ինձ վրա...

. . . . . .

. . . . . .

Ներիր: Ինչպես քամուց հետապնդված սերմն է հանձնվում, այնպես էլ իմ երևակայությունն է լողում ու խաղում քո էության հզոր ալիքներում ու չի վախենում նրանում զոհվելուց: Ինչ երանելի՜ մահ:

Նամակը գրվել է հունիսի 16-ին, Մյունխենում, երբ անձրև էր գալիս, իսկ հոգիս կես քուն-կես արթուն ձայնակցում էր եղանակին:

Բեատինա

ՏԻԿԻՆ ՌՈԼԱՆԸ՝ ԼԵՈՆԱՐԴ ԲՅՈՒԶՈՒՆ

Տիկ. Ռոլանը (1754—1793) Ժիրոնդայի ականավոր գործիչ, բանտից իր խմբի անդամ Բյուզոյին գրած նամակներում անդրադարձել է ազատությանը:

Նա հերոսաբար զոհվեց գիլյոտինի վրա 1896 թ.: Նրա ամուսինը կնոջ մահապատժից հինգ օր հետո ինքնասպան եղավ:

22 հունիսի, 1793 թ.

Շատ հանախ եմ վերընթերցում նամակներդ: Սեղմում եմ կրծքիս, օծում համբույրներով: Նամակներդ ստանալու ոչ մի հույս չունեի: Իզուր էի ջանում տիկ. Շոլեի միջոցով որևէ բան իմանալ քո մասին, մի անգամ գրեցի պարոն Տելլեին, որ քեզ տեղեկացնի իմ մասին, բայց փոստային կապ չկար: Ես չէի ուզում նամակներս հասցեագրել քեզ, քանի որ միայն քո անունը բավական է, որ նամակը բռնվի, և դա քեզ կա-

րող էր վարկաբեկել: Ես այստեղ եկա հպարտ ու հանգիստ, ես Բույսեր ու երազներ էի փայփայում, որ դեռ կան ազատությանը նվիրված իմ բարեկամները: Երբ իմացա «Քսաներկուսի»-ն բանտարկելու հրամանի մասին, գոչեցի. «Իմ հայրենիք, դու կործանվեցիր»: Տանջալից ապրումների մեջ էի, մինչև համոզվեցի, որ փախուստդ հաջողվել է, այժմ նորից եմ անհանգստանում՝ քո բանտարկության հրամանի մասին իմանալով: Նրանց նողկալի պահվածքը՝ հետևանքը քո արիության, ու հենց իմացա, որ Կալվադոսում ես, նորից հանդարտվեցի: Շարունակիր քո ազնիվ գործունեությունը, բարեկամս: Բրուտոսը Ֆիլիպիկների ճակատամարտում շատ շուտ հուսախաբվեց Հռոմի ազատության մեջ: Մինչև հանրապետության կողմնակիցը ազատության մեջ է, շնչում է ու քաջ է, նա կարող է և պիտի օգտավետ լինի: Ֆրանսիայի հարավը, եթե դա անհրաժեշտ է, քեզ կհյուրընկալի, կապաստանի բոլոր արժանավորներին: Դեպի հարավ պիտի հառնի հայացքդ, ու ընթանան քայլերդ: Ստիպված ես ապրել այնտեղ, քանի որ մերոնց պիտի սատար լինես ու օգնես ամեն ինչով, ցույց տաս քաջությունդ: Ինչ վերաբերում է ինձ, կընպասեմ արդարության իշխանության վերադարձին, հանգիստ կընդունեմ բռնատիրության վերջին ճնշումը, հույս տածելով, որ արածս անհետ չի կորչի: Ինչից եմ վախենում՝ որ դու իմ պատճառով զուր ճիգեր գործադրես:

Բարեկամս, ազատելով մեր հայրենիքը, դու ինձ էլ ես ազատում: Ես անվերապահորեն կզոհեմ կյանքս, եթե իմանամ, որ դու պայքարում ես հանուն ազատության: Մահը, տանջանքները, ցավը ինձ համար ոչինչ են, ես դրանք ընդունում եմ հանգիստ: Թող այդպես էլ լինի, կապրեմ մինչև վերջին շունչս՝ ոչ մի վայրկյան չտրվելով զուր հուզումների:

Բարեկամս, 15-ին գրած քո նամակը գրված է արիության այն ոճով, որին ես այնքան քաջածանոթ եմ ու գիտեմ քո ազատատենչ ոգին: Նորից տեսա իմ ընկերոջը, նորից վերապրեցի բոլոր այն զգացումները, որոնք կապում են մեզ: 17-ի նամակը շատ տխուր էր: Ի՞նչ մռայլ մտքերով է այն վերջանում: Մի՞թե այդքան կարևոր է՝ ապրելու է քեզնից հետո այդ հայտնի կինը: Կարևորը հայրենիքի ազատության սիրույն ապրելն է, մնացածը ժամանակի հարց է:

Թող կատարվի, ինչ կատարվելու է: Մենք չենք դադարի արժանի լինել այն զգացմունքներին, որոնք ներշնչել ենք մեկմեկու: Դրանով ենք մենք երջանիկ:

Մնաս բարով բարեկամս, իմ անսահման սիրելի...

Հրաժեշտ նամակից, 13 հոկտեմբերի, 1793 թ.
(մահապատժից առաջ)

Դու, որի անունը չեմ համարձակվում տալ, դու, որին երբևէ ավելի լավ կճանաչեն, դու, որին ամենակուլ կրքերը կարողացան խանգարել. մեծարել ազնվությունը, մի՞թե կվըշտանաս, որ քեզնից առաջ գնում եմ այնտեղ, ուր ոչինչ չի խանգարի մեր միասնությանը: Այնտեղ հարգանում են կործանիչ նախապաշարումները, կամայական վտարումը, ատելությամբ լեցուն կրքերը, բռնակալության ամեն տեսակ: Ես գնում եմ ու կսպասեմ քեզ հավիտենական հանգստավայրում: Մնա այստեղ, դեռ մնա աշխարհում, որ մերկացնես անարդարությունը: Իսկ եթե անիրավ ճակատագիրը բարձրացնի վրադ վարձու մարդասպանի ձեռքը, մեռիր ազատ, ինչպես ապրել ես, որ պսակվի քո վերջին խիզախությունը, որն ինձ մշտապես ոգևորել է...

Մնաս բարով... Ոչ, միայն քեզնից չեմ բաժանվում...

Լքելով կյանքը՝ մենք մոտենում ենք միմյանց:

ՇԻԼԼԵՐԸ՝ ԼՈՏՏԱՅԻՆ

Յոհան Շիլլերը (1759—1805) 1787 թ. ծանոթացավ 23-ամյա Շառլոտա Լենգեֆելդի հետ, որը երեք տարի հետո դարձավ նրա կինը: Ամուսնությունը համընկավ Շիլլերի թափառական, անապահով կյանքի վերջին տարիներին: Հարսնացուին, նրա քրոջը՝ Կարոլինային և նրանց մորը գրած նամակներում արտացոլվել են Շիլլերի հայացքները սիրո ու բարեկամության մասին:

3 օգոստոսի

Արդյոք ճի՞շտ է, սիրելի Լոտտա, որ Կարոլինան հաղորդեց ինձ, նա կարդացել է Ձեր հոգում այն, ինչի մասին ես չեմ համարձակվել խոստովանել ինքս ինձ:

Ախ, որքան ծանր էր ինձ համար պահել այդ գաղտնիքը այն մեծ ծանոթության իսկ օրից: Այն օրից, ինչ միասին ենք, հաճախ արիություն դրսևորելով պատրաստվում էի գալ Ձեզ մոտ խոստովանելու, բայց չէի կարողանում: Իմ ցանկությունը ինձ թվում էր եսասիրություն, և վախենում էի, որ չկարծեք, թե միայն իմ երջանկության մասին եմ մտածում: Եթե պատահեր այնպես, որ դուք չկարողանայիք ինձ համար լինել այն, ինչ ես էի Ձեզ համար, ուստի կխաթարվեր մի հրաշալի ներդաշնակություն ու նաև Ձեր՝ քրոջս բարեհաճությունը: Բայց և այնպես լինում էին պահեր, երբ հույսը արթնանում էր. միասին լինելու երջանկություն. այն վեր էր ամեն ինչից, ես անգամ պատրաստ էի զոհաբերել ամեն ինչ դրան հասնելու համար: Դուք կարող էիք լինել երջանիկ առանց ինձ, բայց դժբախտ իմ պատճառով՝ երբեք: Դա ես

հաստատ զգում էի, երբ մտածում, հուսադրվում էի: Դուք կարող էիք տրվել ուրիշին, բայց ոչ ոք չէր սիրի Ձեզ այնպես մաքուր ու քնքուշ: Ոչ մեկի համար Ձեր երջանկությունը չէր լինի սրբություն, ինչպես ինձ համար: Իմ կյանքի ամենաթանկագինը նվիրաբերում եմ Ձեզ: Եթե ես ձգտում եմ ավելի ազնվանալ, միմիայն Ձեզ արժանի լինելու, Ձեզ ավելի երջանիկ դարձնելու համար: Հոգիների վեհությունը իսկական բարեկամության ու սիրո գրավականն է: Մեր սերն ու բարեկամությունը կլինեն հավիտենական, քանի որ նրանք բխում են ճիշտ այդպիսի զգացմունքներից:

Մոռացեք այն ամենը, ինչը պիտի բռնանա Ձեր սրտին, տրվեք Ձեր զգացմունքներին: Ապացուցեք այն, ինչի մասին ինձ հուսադրեց Կարոլինան: Ասացեք ինձ, որ ուզում եք իմը լինել, և որ դա զոհողություն չէ Ձեր կորմից: Համոզեք ինձ գոնե մեկ բանով: Մեր հոգիները վաղուց էին մոտ միմյանց: Թող չքվի օտարը, որ մինչև հիմա կար մեր միջև, և թող ոչինչ չարգելի մեր հոգիների մերձեցմանը: Ցտեսություն, թանկագին Լուտտա: Ես փափագում եմ մի հանգիստ պահ ունենալ, որ նկարագրեմ իմ հոգու տվայտանքները, երբ մերթ երջանիկ էի, մերթ՝ դժբախտ: Դեռ ինչքան բան ունեմ ասելու Ձեզ:

Մի հապաղեք ցրել իմ կասկածները, իմ կյանքը, իմ ապագան թողնում եմ Ձեր հայեցողությանը: Վաղուց չեմ պատկերացնում այն առանց Ձեր ներկայության:

Մնաս բարով, սիրելիս:

ԼՈՏՏԱՆ՝ ՇԻԼԼԵՐԻՆ

Առավոտյան երեք անգամ վեր եմ կացել անկողնուց, հենց լսել եմ ձիերի դոփյունը, կարծելով, որ դու պիտի լինես, բայց ավաղ՝ ջրաղացպանն էր պարկերով լեցուն կառքով:

Վերջապես չորրորդ անգամ դու էիր: Ես քեզ տեսա այն պահին, երբ անցնում էիր շուկայի միջով, հետո թեքվեցիր տան կողմը: Հոգիս հետևում էր քեզ, իմ սիրելի: Երեկ սքան-

չելի օր էր, մենք այնքան երջանիկ էինք, այդպիսի խաղաղ օրեր դեռ շատ ենք ունենալու: Դա նշանակում է նորից ապրել, վերագտնել իրար սիրո գրկում: Աշխարհն այնքան նեղ է առանց դրա:

Ի՞նչ ես անելու այսօր: Ախ, ուզում եմ ամեն ինչ իմանալ: Հենց նոր ճաշեցի և մենակ էի, քանի որ Լինան պիտի ճաշեր պալատում: Երեկոյան ես էլ պիտի լինեմ այնտեղ: Այնքան զարմանալի է, որ նրանց միջավայրում եմ լինում, ինձ թվում է, որ պիտի լինեմ քեզ հետ, ու մարդիկ անցնում են կողքովս, կարծես ստվերներ լինեն, հոգիս չի զգում, քանզի այն լեցուն է քեզնով:

Մեր երեկվա որոշումները այնքան պարզ ու լուսավոր են, ու հավատում եմ, որ կիրականանան: Եթե դու լավ ես զգում Ռ.-ում, եթե ոչինչ չես կորցնի ապագայում, ուրեմն ամեն ինչ լավ կլինի: Բարի հայրիկը կհանդարտվի քո բացատրություններից հետո ու կհամոզվի, որ դու մեզ մոտ լավ ես զգում: Եվ իհարկե, սիրելիս, դու երջանիկ կլինես, ճիշտ է, չէ՞:

Ախ, այն միտքը, որ ես կարող եմ քեզ երջանկացնել, թևավորում է հոգիս:

ՖԻԽՏԵՆ՝ ՅՈՀԱՆ ՄԱՐԻ ՌԱՆԻՆ

Յոհան Ֆիխտեն՝ (1760—1814) հանրահռչակ փիլիսոփան, 1788 թ., երբ Ցյուրիխում ծառայում էր որպես տնային ուսուցիչ, ծանոթացավ Յոհան Ռանի հետ, որի հետ չորս տարի անց ամուսնացավ:

Սիրելի բարեկամս, ոչ մի խոսք այն մասին, թե ինչպես գողի պես թաքցրեցի Ձեր նամակը ու շտապեցի կացարանս, որ դանդաղ ըմբոշխնելով կարդամ յուրաքանչյուր տողը, այլ ոչ թե կուլ տամ, ինչպես միշտ եմ անում:

...Երբեք չեմ զգացել որևէ կնոջ նկատմամբ այն, ինչ տածում եմ դեպի Ձեզ: Այնպիսի վստահություն եմ տածում, առանց կասկածի մի փոքր նշույլի, անգամ ուզում եմ երևալ

Ձեզ այնպես, ինչպես կամ, այնպիսի մտերմություն, ուր սեռը ոչ մի նշանակություն չունի, քանզի անհնարին է խորապես ճանաչել մարդու հոգին:

Կարող եմ Ձեզնից հեռու լինել, մոռանալ: Արդյո՞ք հնարավոր է մոռանալ բոլորովին նոր կեցության ձևը և դրա պատճառը: Իսկ հնարավո՞ր է մոռանալ ազնիվ լինելը:

. . . . . .

Անսահման կարևոր շատ բաներ ունեմ Ձեզ ասելու, Դուք անհասկանալի մի գաղտնիքի եք տիրապետում՝ մտերմության մթնոլորտ ստեղծել: Իմ նվիրվածությունը ծնվեց ոչ հանկարծակի, քանզի այդպիսին որքան շուտ ստեղծվում, այնքան էլ շուտ չքանում է: Երբ առաջին անգամ տեսա Ձեզ, հասկացա, որ այդ ծանոթությունը հենց այնպես չէ, իմ հոգուն, իմ բնույթին, իմ կոչումին այն հետաքրքիր թվաց: Երբ ծանոթացանք, իմ միտքն ու հոգին տարվեցին Ձեզնով, իսկ այժմ առավել սերտ է այդ ձգտումը: Այդ ինչպես է հաջողվում Ձեզ: Կամ ինչպես է ստացվում ինձ մոտ: Դա հրաշալիորեն հայտնի է ինձ: Դուք գանձ ունեք, որը ընծայում եք միայն բարի կամոք, հոգեհարազատորեն և չեք վատանում հենց այնպես:

1 նոյեմբերի, երեկոյան

...Եվ այդպես, իմ թանկագին ընտրյալ, հանդիսավորությամբ Ձեզ եմ հանձնվում ու դառնում խոնարհ: Երախտապարտ եմ, որ ինձ չհամարեցիք Ձեզ անարժան ընկեր կյանքի ճանապարհին: Շատ եմ մտածել, որ երբևէ (տա Աստված, որ դա ուշ լինի) փոխարինեմ Ձեզ, Ձեր ազնիվ հորը և դառնամ Ձեզ ընծա՝ կայծկլտող իմաստությանդ համար ու մանկական սիրուդ դիմաց, անմեղությանդ, բոլոր շնորհներիդ: Դեռ որքան անգետ եմ, որ վերցնեմ այդ ահռելի պատասխանատվությունը: Բայց դրա վեհությունը, սերը, բարյացակամությունդ կտան այն, ինչ ինձ չի բավականացնում: Սա մեր հաճույքի թագավորությունը չէ, հիմա ես գիտեմ դա, մեր ոքնանքի երկիրն է, և ամեն մի ուրախություն մեզ տրվում

է ի գին ամեն բանի: Ձեռք ձեռքի կգնանք այդ երկրով, փոխանցելով մեկմեկու մեր ուժը, մինչև, ա՛խ, եթե դա լիներ նույն պահին, մեր հոգիները կհամբառնեն հավիտենական խաղաղության տաճար...

ՏԻԿԻՆ ՍՏԱԼԸ՝ ԲԵՆՋԱՄԻՆ ԿՈՍՏԱՆԻՆ

Տիկ. Ստալը՝ (1766—1817) բարոն Նեկկերի դուստրը, տաղանդավոր գրող, տարիների ընթացքում սիրային հարաբերությունների մեջ է եղել Բենջամին Կոստանի հետ: Այդ կապի արձագանքները նկարագրված են նրա «Կորիննա» վեպում: Ներկայացվող նամակները գրված են մահվանից առաջ:

Լոնդոն, 1813, նոյեմբեր

Ճշմարիտ է, որ չեմ կարողանում մոռանալ Ձեզ: Ես ուզում եմ, կարող եմ թաքցնել հոգուս խորքերում վիշտս, մխիթարվել հաճելի ժամանցով, բայց այն նորից է կենդանանում, երբ մենակ եմ մնում: Ընդմիշտ կորսված երջանկություն: Եթե Դուք նվիրված բարեկամի հատկություններով օժտված լինեիք, ես մահկանացուներից ամենաերջանիկը կլինեի: Բայց ես չարժանացա դրան: Եթե ես տեսնեի Ձեզ, հոգումս կարթնանար հավատը, որ ես կորցրել եմ... Եթե Դուք չգաք ինձ մոտ, ապա ես կգամ մայր ցամաք: Դա հնարավոր է: Ով գիտի՝ ինչ կլինի աշխարհում: Երկու կողմից էլ վտանգ է սպառնում ազատությանը... Նա, ով վեր է կանգնած մարդկային կեցվածքից*, դադարել է թագավորելուց: Ցլեհելի ուղարկած երկտողը հանձնեցի նախարարներին: Այդ գրված էր նույնքան գերազանց, որքան այն ամենը, ինչ անում եք: Ես կասկածում եմ, որ որևէ մեկին հաջողվի տիրապետել նման ոճի, հստակ ու պարզ արտահայտությունների: Դուք

---

* Նկատի ունի Նապոլեոնին

ստեղծված եք բարձր կոչման համար, եթե հավատարիմ լինեիք ինքներդ Ձեզ և այլոց:

Տեսել եք, արդյոք իմ գրքի* առաջաբանը և գիտեք, թե ինչ ներգործություն ունեցավ այն մայր ցամաքում: Եթե կցանկանայիք վաճառքի հանել Ձեր գործը**, կաշխատեմ օգտակար լինել: Ինչ վերաբերում է այժմյան քաղաքական իրադարձությանը, այստեղ շատ է գնահատվում: Ձեզ հետ տեսնվելուց հետո, մեկնելու եմ Հունաստան: «Ռիչարդ» բանաստեղծությունը կլինի իմ կտակը: Բենջամին, դուք խլեցիք իմ կյանքը: Տասը տարիների ընթացքում մի օր չի եղել, որ ես չկարոտեմ Ձեզ: Ինչպես եմ՝ սիրում Ձեզ: Լավ, թողնենք այդ, դա շատ դաժան է, համենայն դեպս երբեք չեմ ների Ձեզ, ինչպես և չեմ դադարի տառապելուց...

Ավազի վրա տուն շինելը պարապ բան է, միայն տառապանքն է հավերժ:

Գրեք ինձ:

ԲԵՆՋԱՄԻՆ ԿՈՍՏԱՆԸ՝ ՏԻԿԻՆ ՌԵԿԱՄՅԵԻՆ

Հայտնի քաղաքական գործիչ Բենջամին Կոստանը երկար տարիներ կապի մեջ էր տիկ. Ստալի հետ: Բայց ի վերջո սկսեց ձանձրանալ և տարվեց տիկ. Ռեկամյեով (1814 թ): Ահա այն հուզաշունչ նամակը, որը նա գրել է տիկ. Ռեկամյեին:

3 սեպտեմբերի, 1814 թ.

Վաղը երեկոյա՞ն, վաղը երեկոյա՞ն: Ի՞նչ երեկո է դա: Ինձ համար այն կսկսվի առավոտյան 5-ին: Վաղն այսօրն է: Փառք Աստծո, երեկն անցել է: Եվ այդպես, ես կլինեմ Ձեր դռների մոտ առավոտյան ժամը 9-ին: Ինձ կասեն, որ Դուք

* «Գերմանիայի մասին»

** «Նվաճողության և բռնատիրության բնույթը»

չկաք: Նորից կգամ 10—11-ին և մի՞թե կասեն, որ Դուք բացակայում եք:

Ես նախապես տառապում եմ այն մտքից, որ պիտի նորից տառապեմ: Համոզված եմ, որ ինձ չեք հավատում: Դա նրանից է, որ ինձ չեք ճանաչում: Իմ հոգում կա մի միստիկ լար: Քանի նրան չեն դիպել, նա հանգիստ է: Հենց որ դիպչեն, ամեն ինչ որոշված է: Գուցե դեռ ուշ չէ:

Ես միայն Ձեր մասին եմ մտածում, բայց դեռ հնարավոր է դիմադրել: Ոչինչ չէի տեսնում Ձեզնից բացի այս երկու օրվա ընթացքում: Ամբողջ անցյալս, Ձեր հրապույրները, որոնցից այնքան վախենում էի, տիրել են սրտիս: Գրում եմ, շունչս կտրվում է: Զգուշացե՛ք, Դուք կարող եք ինձ ոժբախտացնել, բայց Դուք էլ կարող եք տուժել, քանզի ինձ միայն մի միտք է համակել: Դա Դո՛ւք եք ցանկացել, ես մտածում եմ միայն Ձեր մասին: Քաղաքականությունը, հասարակությունը՝ ամեն ինչ հօդս է ցնդել: Երևի ես Ձեզ խելագար եմ թվում, բայց տեսնում եմ Ձեր հայացքը, կրկնում եմ Ձեր բառերը, Ձեր գեղանի, մի կողմից էլ չարաճիճի, տեսքը: Իհարկե, կխելագարվեմ: Իսկապես խենթ կհամարվեի, եթե հանկարծ այդ բոլորը զգալուց հետո լինեի սովորական մարդ:

Եվ այդպես, մինչև երեկո: Ասված իմ, եթե Դուք աշխարհի ամենաանտարբեր կինը չեք, ուստի չեք թողնի, որ այդքան տառապեմ: Չէ՞ որ սիրել նշանակում է տառապել, բայց ապրել, իսկ որքան ժամանակ է ես չեմ ապրել: Հնարավոր է, որ ես դեռ երբեք այսպես չեմ ապրել:

Մի անգամ էլ՝ մինչև երեկո:

ՇԱՏՈԲՐԻԱՆԸ՝ ԱՆՀԱՅՏ ԱՂՋԿԱՆ

Ֆրանսուա Շատոբրիանը (1768—1848) ունեցել է բազմաթիվ սիրային հաղթանակներ: Մի անգամ, երբ նա արդեն 62 տարեկան էր (1830 թ) Պիրինեյներում հանդիպում է պրովինսալցի մի աղջկա, որի հետ նախօրոք նամակագրական կապ ուներ:

Ինչպես երևում է, աղջիկը անտարբեր չի եղել բանաստեղծի նկատմամբ: Նրանց ռոմանտիկ սիրո պատմությունը, չգիտես ինչու, չի մտել Ծատոբրիանի «Հիշողությունների» մեջ:

Ներքոբերյալ հատվածը մի փոքրիկ պատառիկ է նրա նամակագրությունից:

Գիտես ինչ, եթե ես թույլ տամ, որ խենթությունս բռնի, համոզված չեմ լինի, թե վաղը կսիրեմ քեզ: Ես չեմ հավատում ինձ ու չգիտեմ, թե ով եմ ես: Երբ կիրքը ինձ հոշոտում է, պատրաստ եմ լինում ինքս ինձ սրախողխող անել կամ էլ ծիծաղել: Ես քեզ աստվածացնում եմ, բայց մի վայրկյան հետո, քեզնից ավելի սիրում եմ քամու սուլոցը՝ ժայռերի մեջ, լողացող ամպը, թափվող տերևները: Այդ իսկ պատճառով պիտի աղոթեմ Աստծուն արցունքներով, հետո երևակայեմ անէությունը: Ուզո՞ւմ ես ինձ երջանկություն պատճառել: Արա՛ մի բան՝ հանձնվիր ինձ: Իսկ հետո թույլ տուր խոցեմ սիրտդ ու փշրեմ այն...* Դրանից հետո կհամարձակվե՞ս առանձնանալ ինձ հետ: Եթե դրանից հետո ասես, որ ինձ հոր պես ես սիրում, սարսափ կպատճառես: Եթե ասես, որ սիրում ես որպես սիրուհի, չեմ հավատա: Ամեն պատանի ինձ պիտի ախոյան թվա, որին կնախընտրես: Քո հարգանքը կստիպի, որ զգամ տարիքս, քո գորգուրանքները կառաջացնեն խենթ խանդ: Գիտես, որ դու մի ժպիտ ունես, որը բացահայտում է իմ թերությունները, ինչպես արևի լույսն է բացահայտում քարանձավի խորշերը: Գեղանի էակ, ես աստվածացնում եմ քեզ, բայց չեմ տիրի քեզ: Գտիր քեզ համար մի պատանի, որի թևերը կպարուրեն քեզ, բայց ինձ մի ասա դրա մասին: Հիշիր, որ ինձնից շատ ես ապրելու, որ դեռ երկար ժամանակ երիտասարդ ես լինելու, երբ արդեն ես չեմ լինի: Երեկ, երբ նստած էիր կողքիս՝ քարին, քամին աղմկում էր նոճիների սաղարթներում ու հիշեցնում ծովի ալիքները: Մտորում էի. արդյո՞ք ձեռքս այնքան թեթև է, որ շոյեմ ոսկի գանգուրներդ: Ինչո՞ւ տոչորեմ շուրթերդ, որոնք պատրաստ էին հպվել իմ շուրթերին, որ դո՛ւ ինձ նվիրես ջահելություն ու կյանք: Նա իմ ի՞նչը կարող է սիրել: Ուրվա-

---

* Անհասկանալի երկու բառ:

կան, որ կարող է խաթարել մի կյանք: Միևնույն ժամանակ, երբ գլուխդ դնում ես ուսիս, երբ արբեցնող բառերը թռչում են քո շուրթերից, երբ թևերդ պատրաստ են օղակել մարմինս որպես ծաղկաշղթա, ես օգնության եմ կանչում իմ սարիքի ողջ հպարտությանը, որ հաղթահարեմ քաղցր գայթակղությունը, դրանից էլ կարմրում եմ:

Հիշիր իմ բառերի կրքոտությունը, ու երբ սիրես որևէ պատանու, հարցրու ինքդ քեզ, այդպե՞ս է խոսում, ինչպես ես, սիրո՞ւմ է քեզ այդպես ուժգին, ինչպես ես... Ա՛հ, միևնույն է: Դու կանչես նրա գրկում, քո շուրթերը կհպվեն նրա շուրթերին, քո կուրծքը կհպվի նրա կրծքին ու կարթնանաք զըմայլված: Ի՞նչ պիտի նշանակեն քեզ համար այն բառերը, որ մի օր դու լսել ես հրաշագեղ դաշտում:

ՆԱՊՈԼԵՈՆԸ՝ ԺՈԶԵՖԻՆԱՅԻՆ

Նապոլեոն Բոնապարտը (1769—1821) սիրելով ամուսնացել է Ժոզեֆինայի հետ 1796 թ., որից (չբերության պատճառով) բաժանվեց: 1810 թ. ամուսնացավ Ավստրիայի արքայադստեր՝ Մարի-Լուիզայի հետ: Նապոլեոնի բազմաթիվ սիրային կապերից առանձնանում է Մարիա Վալևսկայայի սիրավեպը, (Վարշավայում): Վալևսկայան հետագայում այցելեց նրան՝ Էլբա կղզի, ուր Մարիա-Լուիզան հարկ չհամարեց գնալ գահընկեց տիրակալի հետ:

3 ապրիլի, 1796 թ.

Իմ միակ Ժոզեֆինա, քեզնից հեռու ամբողջ աշխարհը ինձ թվում է անապատ, որտեղ ես միայնակ եմ... Դու տիրում էիր ոչ միայն իմ հոգուն: Դու իմ մտորումների միակ տիրուհին ես: Երբ ինձ ձանձրացնում են, այսպես կոչված մարդիկ, երբ պատրաստ եմ անիծել կյանքը, այնժամ ձեռքս դնում եմ կրծքիս, իսկ այնտեղ քո նկարն է, նայում եմ նրան, սերը ինձ համար բացառիկ երջանկություն է... Ինչպիսի գայթակղություններով կարողացար դու հպատակեցնել իմ բոլոր ունակությունները ու իմ հոգու կյանքը՝ միմիայն քո շուրջը: Ապրել Ժոզեֆինայի համար՝ ահա իմ կյանքի պատմությունը:

Մեռնել առանց հագենալու քո սիրով՝ դժոխային տանջանք է, իսկապես ոչնչանալ է: Իմ միակ բարեկամ, ճակատագիրն ընտրել է մեզ, որ անցնենք կյանքի ճանապարհով միասին: Այն օրը, երբ քո սիրտը ինձ չի պատկանի,

կյանքը կկորցնի ինձ համար իր ողջ գեղեցկությունն ու գայթակղությունը:

ՄԱՐՄԻՐՈԼՈ, 17 հուլիսի, 96 թ.

Հենց նոր ստացա նամակդ, իմ աստվածային ընկերուհի, այն ուրախությամբ լցրեց իմ հոգին: Անչափ երախտապարտ եմ մանրամասն տեղեկությունների համար առողջությանդ մասին, երևի լավ ես զգում: Խորհուրդ եմ տալիս ձիավարժությամբ զբաղվել, դա օգտակար կլինի քեզ:

Այն օրից, ինչ բաժանվել ենք, շատ եմ տխրում: Իմ երջանկությունը քո կողքին լինելն է: Անընդհատ մտածում եմ քո համբույրների, քո արցունքների, քո հմայիչ խանդոտության, անհամեմատելի Ժոզեֆինայի հմայքների մասին, որոնք այրում են իմ սիրտն ու միտքը: Երբ ազատվեմ բոլոր տագնապներից, գործերից, ողջ ժամանակս և ամբողջ գործս պիտի լինի քեզ սիրելը: Պիտի մտածեմ ու խոսեմ միայն երջանկության մասին ու ապացուցեմ դա: Կուղարկեմ քո ձին, հուսով եմ, որ շուտով կկարողանա գալ ինձ մոտ:

Վերջերս մտածում էի, որ շատ եմ սիրում քեզ, բայց երբ նորից տեսա, զգացի, որ սիրում եմ հազար անգամ ավելի: Որքան ավելի լավ եմ ճանաչում քեզ, այնքան ավելի եմ սիրում: Դա ապացուցում է Լա-Բրյուէրի տեսության սխալը՝ որ սերը ծագում է հանկարծակի: Բնության մեջ ամեն ինչ ունի զարգացման իր օրինաչափությունը ու տարբեր աստիճանների: Ա՜խ, աղաչում եմ քեզ, ասա՝ քո թերությունները որո՞նք են: Եղիր ավելի քիչ գեղեցիկ, սիրալիր, քնքուշ և առաջին հերթին՝ քիչ ավելի բարի: Երբեք մի խանդրիր, մի արտասվիր, քո արցունքները այրում են ինձ, զրկում բանականությունից: Հավատա, որ հիմա ես չունեմ մի միտք, մի պատկերացում, որ քեզ չպատկանի: Առողջացիր, հանգստացիր, վերականգնիր ուժերդ: Շուտ եկ ինձ մոտ, որ կարողանանք ասել ամեն ինչ, մինչև չի հասել մահվան պահը՝ «Մենք այնքան երջանիկ օրեր ենք ունեցել»:

Միլիոն անգամ համբուրում եմ, անգամ Ֆորտյունեին*, չնայած նա չարն է:

---

* Ֆորտյունե— Ժոզեֆինայի շնիկը:

4 օգոստոսի, 96 թ.

Այնքան հեռու եմ քեզանից։ Շուրջս խիտ մթություն է։ Եվ դա կտևի այնքան ժամանակ, մինչև մեր թնդանոթների անարկու կայծակը չցրի այդ անթափանց մութը։

Ժոզեֆինա, դու արտասվում էիր, երբ բաժանվում էինք, դու լալի՞ս էիր։ Ներսումս ամեն ինչ փուլ էր գալիս։ Հանգիստ եղիր ու մխիթարվիր։ Վրումզերը** թանկ կվճարի այդ արցունքների համար։

ԿԱԼԴԻԵՐՈ, 13 նոյեմբերի, 96 թ.

Ես քեզ այլևս չեմ սիրում։ Ես ատում եմ քեզ։ Դու զզվելի, հիմար, անմիտ կին ես։ Դու ինձ չես գրում, դու չես սիրում քո ամուսնուն։ Դու լավ գիտես՝ ինչ ուրախություն են պատճառում նրանք քո ամուսնուն, և չես կարող մի վեց տող գոնե գրել։

Այսինքն՝ ի՞նչ եք անում դուք ամբողջ օրը, տիկի՛ն։ Ի՞նչ կարևոր գործեր են խլում ձեր ժամանակը, խանգարում, որ գրեք ձեր սիրեցյալին։ Ի՞նչ արգելքներ կան ձեր քնքուշ ու հաստատուն սիրո դեմ, որով դուք այդպես հպարտանում էիք։ Ո՞վ է այդ նոր գայթակղողը, նոր սիրեցյալը, որը հակակնում է ձեր ժամանակին, խանգարում զբաղվել ձեր հարազատ սիրեցյալով։ Ժոզեֆինա, պաշտպանվեք, թե չէ, մի գեղեցիկ գիշերով ես կջարդեմ ձեր ննջարանի դուռը ու կկանգնեմ ձեր առջև։

Իսկապես, սիրելիս, ես տագնապում եմ, որ քեզնից ոչ մի լուր չունեմ։ Անմիջապես կգրես չորս էջ ու անպայման այն բաների մասին, որոնք հաճելի ուրախությամբ են լցնելու սիրտս։

Հուսով եմ շուտով քեզ գիրկս առնել ու ծածկել միլիոն համբույրներով, որոնք այրում են ինձ Էկվադորի արևի պես։

---

* Վրումզեր— ավստրիական գեներալ-ֆելդմարշալ, որը պարտվեց։

ՆԱՊՈԼԵՈՆԸ՝ ՄԱՐԻԱ ՎԱԼԵՎՍԿԱՅԻՆ

հունվար, 1807 թ.

Լինում են պահեր, երբ բարձր մաստիճանը ճնշում է, այժմ ես հենց այդպիսի վիճակում եմ: Ինչպե՞ս զսպեմ դեպի Ձեր ոտքերը թռչող սիրտս, որ զուգահեռվում է «բարձր դասի» ճնշող պատկանելության պայմանականություններով:

Ա՜խ, եթե Դո՛ւք դա ցանկանայիք, միայն Դուք կարող եք ոչնչացնել մեզ բաժանող արգելքները: Իմ բարեկամ Դյուրոկը կօգնի թեթևացնելու այդ գործը:

Ա՜խ, եկեք, վերջապես եկեք ինձ մոտ: Ձեր բոլոր ցանկությունները կբավարարվեն, Ձեր հայրենիքը ինձ համար էլ թանկ կդառնա, եթե խղճաք ինձ:

(առաջին օրը տեսակցությունից հետո, 1807 թ.)

Մարիա, քաղցր Մարիա, առաջին ցանկությունս նորից քեզ տեսնելն է: Դու նորից կզգաս, ճի՞շտ է: Դու խոստացար ինձ: Եթե չգաս, Արծիվը ինքը կթռչի քեզ մոտ: Ինձ խոստացված է, որ քեզ կտեսնեմ սեղանի շուրջ: Բարի եղիր ընդունել այս փունջը*, թող այն լինի մարդկային եռուզեռի մեջ կայացած մեր սիրո թաքուն գրավականը: Ամբոխի հայացքների ներքո մենք կհասկանանք միմյանց: Երբ ես սեղմեմ ձեռքս կրծքիս, դու իմացիր, որ ես ամբողջ էությամբ քեզ եմ ձգտում, ի պատասխան դու էլ սեղմիր փունջը: Սիրիր ինձ, իմ գեղանի Մարիա, և թող ձեռքդ երբեք չանջատվի այդ փնջից:

---

* թանկագին քարերից կազմված փունջ

ՆԱՊՈԼԵՈՆԸ՝ ԿԱՅՍՐՈՒՀԻ ՄԱՐԻ-ԼՈՒԻԶԱՅԻՆ

ՖՈՆՏԵՆԵԲԼՈ, ապրիլ... 1814 թ., երեկոյան ժ. 8-ին

Իմ հիանալի Լուիզա, ստացա նամակդ ու հասկացա, թե ինչքան ես տխրել, որը ինձ էլ է վշտացնում: Հաճույքով տեսնում եմ, որ Կարվիզարը* հավանություն է տալիս, դրա համար ես նրան շատ եմ շնորհակալ: Իմ անունից նրան ասա, որ արդարացնում է իմ կարծիքը իր մասին՝ իր ազնիվ վարքով: Նա պարտավոր է քո առողջական վիճակի մասին ինձ տեղեկություններ հաղորդել: Աշխատիր անմիջապես մեկնել Էկս, որի ջրերը, ինչպես ինձ ասել են, օգտակար են, կարծեմ քեզ խորհուրդ է տվել Կարվիզարը: Առողջություն եմ ցանկանում քեզ ու քո որդուն, որը քո հոգատարության կարիքը ունի:

Ես մտադրություն ունեմ մեկնելու Էլբա կղզին, որտեղից կգրեմ քեզ: Ամեն կերպ կաշխատեմ դիմավորել քեզ:

Ինձ հաճախ գրիր, նամակներդ հասցեագրիր թագավորի օգնականին կամ հորեղբորդ, որը, ինչպես ասում են, կդառնա Տոսկանիայի Մեծն հերցոգ:

Մնաս բարով, սիրելի Լուիզա-Մարիա:

ԿԱՅՍՐՈՒՀԻ ԺՈԶԵՖԻՆԱՆ՝ ՆԱՊՈԼԵՈՆԻՆ

Նավարրա, 19 ապրիլի, 1810 թ.**

ԹԱԳԱՎՈՐ (ԿԱՄ ՈՂՈՐՄԱԾ ՏԵՐ)

Իմ որդու միջոցով ես տեղեկություն ստացա, որ Ձերդ Պայծառափայլությունը թույլ է տվել ինձ Մալմեզոն վերադառնալ և Նավարրայի իմ դղյակը վերականգնելու համար միջոցներ է հատկացրել:

---

* արքայի բժիշկը

** Այս նամակը գրվել է Նապոլեոնի և Մ. Լուիզայի պսակադրության օրը:

Ձեր այդ երկակի ողորմածությունը, Տեր, թեթևացնում է իմ բազմաթիվ հոգսերը, ազատում Ձերդ Պայծառափայլության երկար ժամանակ տևող լռության վախից: Ինձ տագնապեցնում էր այն, որ բոլորովին մոռացել եք ինձ, բայց հասկանում եմ, որ դա այդպես չէ: Այդ իսկ պատճառով հիմա ես ինձ այնքան էլ դժբախտ չեմ զգում, իսկ երջանիկ այլևս չեմ լինի: Ամավա վերջին մեկնում եմ Մալմեզոն, եթե Ձերդ Մեծությունը որևէ արգելք չի տեսնում: Բայց գտնում եմ, որ պիտի ասել Ձեզ, որ ես այդքան շուտափույթ չէի օգտվի Ձերդ Պայծառափայլության ողորմածությունից, եթե Նավարրայի իմ կացարանը կարիք չունենար որոշ բարեփոխության, դա կարևոր է թե իմ, թե ինձ շրջապատողների առողջության համար: Ես նպատակ ունեմ Մալմեզոնում մնալ մի կարճ ժամանակ, հետո մեկնելու եմ ջրերը՝ բուժման: Բայց Ձերդ Մեծությունը թող համոզված լինի, որ ես կլինեմ Մալմեզոնում, Ձեզանից այնքան հեռու, որքան Փարիզն է...

Ես շատ բան զոհաբերեցի, Տեր իմ, ամեն օր ավելի ու ավելի եմ զգում դրա մեծությունը, սակայն այդ զոհողությունը կտանեմ մինչև վերջ: Ձերդ Պայծառափայլության երջանկությունը որևէ կերպ չի մթագնի իմ վիշտը:

Անդադար պիտի ցանկանամ Ձերդ Մեծության երջանկությունը, գոնե այն բանի համար, որ նորից տեսնեմ Ձեզ, միևնույն ժամանակ հանգիստ եղեք, մշտապես կհարգեմ Ձերդ Մեծության նոր կարգավիճակը, ապավինելով Ձեր իմ նկատմամբ ունեցած զգացմունքներին, ոչ մի նոր ապացույց չեմ պահանջի՝ հույս տածելով Ձեր արդարամտության վրա:

Նամակս վերջացնում եմ մի խնդրանքով՝ Ձերդ Պայծառափայլություն, Դուք ինքներդ գտեք այն միջոցը, որով հնարավոր լինի ինձ և իմ մերձավորներին ապացուցել, որ ես Ձեր հիշողության մեջ դեռ մի փոքր տեղ եմ զբաղեցնում և մի փոքր ավելի արժանի եմ Ձեր բարեկամությանն ու հարգանքին: Ինչ էլ որ լինի, այն կթեթևացնի իմ վիշտը, չխաթարելով, ինչպես կարծում եմ, Ձերդ Պայծառափայլության երջանկությունը, որի մասին ես այնքան շատ եմ հոգում:

ԺՈԶԵՖԻՆԱ

Գահի կորստյան համար չէ, որ կարեկցում եմ Ձեզ, սեփական փորձից գիտեմ, որ դրա հետ կարելի է հաշտվել, ավելի շատ ցավում եմ այն դառնության համար, որ պիտի զգաք Ձեր փառքի զինակից-բարեկամներից բաժանվելիս:

Ա՜խ, ինչ հաճույքով կթռչեի Ձեզ մոտ, կապացուցեի, որ արտաքսումը կարող է վախեցնել միայն մանր հոգիներին, որ դժբախտությունը ոչ թե նվազեցրել է իմ անշահախնդիր նվիրվածությունը, այլ նոր ուժ է հաղորդել ինձ:

Մտադիր եմ թողնել Ֆրանսիան, հետևել Ձեզ, նվիրաբերել Ձեզ մնացյալ կյանքս, որից Դուք այդքան երկար ժամանակ զրկված էիք: Ինձ զսպում է միայն մի բան, պատճառը Դուք կհասկանաք:

Երբ ես կիմանամ, որ բոլոր հնարավոր թեկնածուներից ես միակն եմ, որը ցանկանում է կատարել իր պարտքը, ոչ մի արգելք ինձ ետ չի պահի, կգնամ աշխարհի այն միակ տեղը, որտեղ ես կարող եմ երջանիկ լինել, քանզի կարող եմ սփոփել Ձեզ՝ դժբախտության մեջ գտնվողին:

Մնաք բարով, ի՛մ Տեր, ինչ էլ որ ավելացնեմ, պիտի ավելորդ թվա, հիմա ոչ թե խոսքով, այլ գործով պիտի ապացուցեմ Ձեր հանդեպ ունեցած վերաբերմունքս:

Ինձ պետք է Ձեր համաձայնությունը:

ԲԵԹՀՈՎԵՆԸ՝ (Անմահ սիրեցյալին)՝ կոմսուհի ՋՈՒԼԻԵՏԱ ԳՈՒԱԿԱՐԴԻԻՆ

Լյուդվիգ վան Բեթհովենը (1770—1827) այս նամակները գրել է 1808 թ. 16-ամյա գեղեցկուհի կոմսուհի Ջուլիետա Գուակարդիին: Հանրահռչակ երգահանը նրան է նվիրել իր Cismolt սոնատը: Երբ Բեթհովենը կոմսուհուն երաժշտության դասեր էր տալիս, նա արդեն նշանված էր միջակ երաժիշտ համարվող Հալենբերգի հետ:

...Իմ հրեշտակ, իմ կյանք, իմ երկրորդ ես, այսօր միայն մի քանի բառ եմ գրում, այն էլ մատիտով (քո): Վաղվանից բնակարան պիտի փնտրեմ, ունեցածս անհարմար է այժմ

ինձ համար: Ինչի համար է այդ խորը տրտմությունը՝ անխուսափելիության շեմին: Մի՞թե սերը կարող է գոյություն ունենալ առանց զոհաբերության, մի՞թե դու կարող ես անել այնպես, որ ես պատկանեմ միայն քեզ, և դու էլ՝ ինձ, Աստված իմ: Մեզ շրջապատող հրաշք բնության մեջ փնտրիր օգնությունն ու հպատակվիր, դա անխուսափելի է: Սերը պահանջում է ամեն ինչ և ունի դրա իրավունքը, այդ իմաստով ես զգում եմ նույնը, ինչ դու, միայն թե դու մոռանում ես, որ ես ապրում եմ երկուսիս համար: Եթե մենք միանայինք, մենք չէինք տառապի՝ ոչ դու, ոչ ես:

Ճանապարհորդությունը սարսափելի էր: Տեղ հասա երեկ ժամը չորսին, քանի որ քիչ էին ձիերը, փոստը ուրիշ ճանապարհով էր գնացել, բայց ինչ ահավոր ճանապարհ էր: Վերջին կանգառում ինձ խորհուրդ չտվեցին մեկնել գիշերով, պատմում էին զանազան վտանգների մասին, որ դարանակալում են այս, այն անտառում, բայց դա ինձ միայն բորբոքում էր, թեպետ դա ճիշտ չէր, կառքը կարող էր շարքից դուրս գալ այդ սարսափելի գյուղական ճանապարհին, եթե կառապաններ չլինեին, կմնայինք կես ճամփին:

Էստերհազին գնաց սովորական ճանապարհով, ութը ձիանոց կառքով, և նույն տհաճությունները պատահեց: Ինչևէ, ես ինձ բավարարված զգացի ինչպես միշտ՝ դժվարությունները հաղթահարելուց հետո:

Թողնենք այդ, անցնենք ուրիշ բաների: Երևի շուտով կտեսնվենք և այսօր չեմ կարող քեզ ասել, թե ինչ եմ որոշել, ինչ է լինելու հետագա կյանքս, եթե մեր սրտերը միասին տրոփեին, կասեի: Հոգիս լեցուն է, այնքան բան ունեմ քեզ ասելու: Ախ, լինում են պահեր, երբ մարդկային լեզվով անկարող ես արտահայտվել: Զվարճացի՞ր, առաջվա պես եղիր իմ միակը, ինչպես ես քոնը: Թե ինչ կլինի մեզ հետ, Աստված գիտե...

Քեզ հավատարիմ՝ ԼՅՈՒԴՎԻԳ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԱՆ, 6 ՀՈՒԼԻՍԻ, 1801 Թ.

...Իմ գանձ, դու տառապում ես: Հիմա հասկացա, որ նամակները հարկավոր է ուղարկել առավոտ կանուխ: Եր-

կիրակի և հինգշաբթի միակ օրերն են, որ փոստը տանում են Կ-ը: Ա՜խ, դու տառապում ես, որտեղ ես եմ, այնտեղ դու ինձ հետ ես, համոզված լինելով, որ իմն ես, կանեմ ամեն ինչ, որ միանանք: Ա՜խ, ի՜նչ, ի՜նչ կյանք կլինի: Այո՜, եթե առանց քեզ լինեմ, կարժանանամ մարդկանց արհամարհանքին, որին իմ կարծիքով արժանի չեմ: Չեմ կարողանում տանել, երբ ստորացնում են մարդուն: Եթե տիեզերական չափանիշներով եմ նայում ինձ, ի՞նչ եմ ես: Իսկ ի՞նչ է նա, ում համարում են Մեծ: Բայց հենց այդ գիտակցության մեջ էլ թաքնված է մարդու աստվածային առեղծվածը: Ես արտասվում եմ, երբ մտածում եմ, որ մինչև շաբաթ չես ստանալու նամակս: Ինչպես էլ սիրես ինձ, ես քեզ ավելի եմ սիրում, ինձ հետ անկեղծ եղիր, բարի՜ գիշեր:

Քանի որ բուժական լոգանքներ եմ ընդունում, ժամանակին եմ քնում (այստեղ Բեթհովենի ձեռքով ջնջված է չորս անընթեռնելի բառ): Աստված իմ, այնքան մոտ ենք միմյանց ու այնքա՜ն հեռու: Մի ամբողջ տիեզերք է մեր սերը և մի՞թե այն նրա պես հաստատուն է:

7 հուլիսի, 1801 թ.

Ողջո՜ւյն: Հենց որ արթնանում եմ, միտքս թռչում է քեզ մոտ, իմ անմահ սեր: Մեկ խնդրում եմ, մեկ լալիս, երբ մտածում եմ, թե ինչ է ճակատագիրը անելու մեզ հետ: Ես կարող եմ գոյություն ունենալ միայն քեզ հետ, որոշել եմ այնքան դեգերել հեռուներում, մինչև համոզված լինեմ, որ կգամ, կընկնեմ գիրկդ, կզգամ, որ իմն ես, կվայելեմ այդ երանությունը: Ստիպված եմ այդպես վարվելու, համաձայնիր, դու էլ չես կասկածում իմ հավատարմությանը, ոչ մեկը իմ սրտին չի տիրանա, երբե՜ք: Ա՜խ, Աստված իմ, ինչո՞ւ լքել այն, ինչ այնքան սիրում ես: Իմ կյանքը Վ-ում ծանր է, քո սերը ինձ մեկ երջանկացնում է, մեկ՝ դժբախտացնում, իմ տարիքում մարդը կարիք ունի ինչ-որ միօրինակության, հաստատուն կյանքի, մի՞թե դա հնարավոր է ինձ ու քեզ համար:

Հրեշտակս, նոր իմացա, որ փոստը գնում է ամեն օր, շտապում եմ վերջացնել, որ շուտ ստանաս նամակս: Հան-

գիստ եղիր, միայն դա կօգնի իրականացնելու մեր նպատակը՝ ապրել միասին:

Սիրիր ինձ այսօր, վաղը. ա՜խ, ինչպե՜ս եմ ուզում տեսնել քե՛զ, քե՛զ, իմ կյանք (ձեռագիրը դառնում է անընթեռնելի), հոգյա՛կս, մնաս բարով, առաջվա պես սիրիր ինձ, երբեք մի կասկածիր քո սիրելի Լ-ի հավատարմությանը:

Հավերժ սիրիր քեզ, ինձ, մեզ:

ՀԱՅՆԵՆ՝ ՔԱՄԻԼԱ ՋԵԼԴԵՆԻՆ

Գերմանացի բանաստեղծ Հայնրիխ Հայնեն (1798—1856), 1848 թ. «Ներքնակե գերեզմանին» էր գամվել ծանր հիվանդության պատճառով: Մահվանից առաջ սիրահարվեց մի ջահել աղջկա՝ Քամիլա Ջելդենին:

Սիրելի, թանկագին: Կամ էլ ելնելով քո անվանական կնիքի բուրմունքից, որ տարածվում էր նամակիցդ, ինչպես քեզ կոչեմ: Այդ դեպքում պիտի ասես՝ գեղանի, մշկաբույր կատվիկ: Երկու օր առաջ ստացա նամակդ, գլխումս, գուցե և սրտումս պտտվում են «ճանճի թաթիկները»:* Ընդունիր երախտագիտություն իմ նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար: Բանաստեղծությունների թարգմանությունը հրաշ՛ալի է, մեկնելուցդ առաջ արդեն ասացի քեզ: Ուրախանում եմ, որ շուտով կտեսնեմ քեզ ու համբույրներ կդրոշմեմ քո քաղցր այտերին: Ա՜խ, այս բաները չէին ստանա պլատոնիկ նշանակություն, եթե ես դեռ մարդ լինեի: Բայց դըժբախտաբար, ես արդեն միայն ոգի եմ, գուցե դա քեզ հարմար է, ինձ՝ ոչ:

Բանաստեղծությունների Ֆրանսիական հրատարակությունը լույս է տեսել ու մեծ աղմուկ բարձրացրել: Իսկ այն բանաստեղծությունները, որոնք դեռ չեն տպագրվել, ինչպես «Նոր գարուն»-ը, լույս կտեսնեն երեք-չորս ամսից ֆրան-

* Հայնեն իր սիրեցյալին մտերմորեն «ճանճիկ» էր կոչում:

սիական վերջին հատորում: Ինչպես տեսնում ես, ժամանակ չեմ կորցրել: Ուրախ եմ, որ շուտով պիտի տեսնեմ քեզ, իմ սիրելի: Իմ հրաշալի կատվիկ, անգորյան կատվիկ, որոնց տեսակը ամենից շատ եմ սիրում: Երկար ժամանակ սիրում էի վագրային տեսակը, բայց դրանք վտանգավոր են, ու երբ համբուրում էի, տհաճ էին: Առաջվա պես վատ եմ զգում, ոչ մի լավ բան, խենթանալիք ցավ, կատաղության հասնող նոպաներ:

Դիակ, որը տենչում է վայելել կյանքը: Դա սարսափելի է, ներիր:

Ցանկանում եմ, որ լոգանքները օգնեն քեզ:

Սրտանց ողջունում եմ քեզ, քո բարեկամ՝

ՀԱՅՆՐԻԽ ՀԱՅՆԵ:

ԹԱՆԿԱԳԻ՞Ն ԷԱԿՍ,

Այսօր սարսափելի ցավում է գլուխս, վախենում եմ, որ վաղը կշարունակվի: Այդ պատճառով վաղը խնդրում եմ մի գա, կգաս երկուշաբթի, իսկ եթե շատ կարևոր է գործդ, իմացիր, որ կընկնես տհաճ վիճակի մեջ: Ես այնքան ուրախ պիտի լինեմ տեսնել քեզ, իմ վերջին ծաղիկ, իմ տխուր աշնան: Անչա՞փ սիրելի իմ էակս:

Մնում եմ հավերժ, հիմար քնքշությամբ, քեզ նվիրված՝

Հ. Հ.

Անմիջապես կօգտագործեմ ծրարները, որոնք այնքան գեղեցիկ է ստորագրում սիրելի թաթիկդ: Ես վատ գիշեր անցկացրի, այնպես էի հազում, որ թվաց՝ ահա կմեռնեմ, մինչև հիմա չեմ կարողանում խոսել, շնորհակալ եմ, հրաշալի արտագրել ես տիկ. Ռ-ին գրած նամակս:

Ողջույն, համբույրներ: Ցավից ծիծաղում եմ, կրճտացնում ատամներս, խենթանում եմ:

Հ. Հ.

Սիրելի՜ս, դեռ տառապում եմ գլխացավից, որ երևի միայն վաղը կանցնի, ուրեմն քեզ կտեսնեմ միայն հինգշաբթի, իմ անուշիկ ճանճին: Ի՜նչ դժբախտություն: Այնքան վատ եմ: Երբեք բանաստեղծը այսքան երջանկության մեջ այդքան դժբախտ չի եղել: Համբուրում եմ քո գեղեցիկ մարմինը՝ իհարկե մտովի: Երազներ՝ ահա ինչ կարող եմ տալ քեզ, խեղճ աղջիկ: Ցտեսություն:

Հ. Հ.

ՀՈԳԻՍ, ՍԻՐԵԼԻՍ

Անհավոր տառապում եմ, տխուր եմ: Աջ կոպս ուզում է հետևել ձախին ու չի բարձրանում: Դժվարությամբ եմ գրում: Բայց ես հաճախ եմ մտածում քո մասին, սիրում եմ, հոգյակս: Պատմվածքը բոլորովին էլ վատ չէ ու ապագայում շատ բան է խոստանում: Դու այնքան էլ հիմար չես, ինչպես թվում է, ու հրապուրիչ ես անչափ, որի համար ուրախ եմ: Կտեսնե՞մ քեզ վաղը: Եթե վիճակս վատթարանա, ուրեմն՝ ոչ:

Զգում եմ, որ ինձ պարուրում է ինչ-որ լալկան տրամադրություն: Սիրտս ջղաձգվում է: Կամ թող մեռնեմ, կամ էլ այնպիսի առողջ մեկը լինեմ, որը ոչ մի դեղի կարիք չունենա:

Անունդ տխրություն է՝ Հ. ՀԱՅՆԵ

•

ՇՈՒՄԱՆԸ ԿԼԱՐԱ ՎԻԿԻՆ

Հանրահռչակ երգահան Ռոբերտ Շումանը (1810-1856) ամուսնացել է 1840 թ. իր ուսուցչի դստեր՝ Կլարա Վիկի հետ, որին անչափ սիրահարված էր: Ամուսնության ժամանակ Շուբերտը հրապուրված էր վոկալ արվեստով: Մեկ տարվա ընթացքում նա գրեց ավելի քան հարյուր երգ: 1852 թ. ի հայտ եկան երգահանի հոգեկան հիվանդության նշանները, որից և չորս տարի անց վախճանվեց:

13 օգոստոսի, 1837 թ.

Դուք հավատարի՞մ ու հաստա՞տ եք դեռ: Որքան էլ որ հավատամ Ձեզ, բայց ամեն արիություն սպառվում է, երբ ոչինչ չգիտես քեզ համար ամենաթանկ մարդու մասին: Իսկ աշխարհում ամենաթանկը ինձ համար Դուք եք: Հազար անգամ ծանրութեթև եմ անում ու ներքուստ զգում եմ խորապես, որ այդպես էլ կլինի, ինչը մենք ենք ուզում, եթե ճիշտ վարվենք: Պարզապես գրեք ինձ «այո», եթե համաձայն եք հանձնելու Ձեր հորը (ձեր ծննդյան օրը՝ 13 սեպտեմբերի) իմ նամակը: Հիմա նա ինձ լավ է վերաբերվում, եթե Դուք էլ մի քիչ խնդրեք, չի մերժի: Գրում եմ Ավրորայի օրը: Ա՜խ, եթե մեզ միայն մի արևածագ բաժաներ: Կարևորը, հավատացեք, որ ամեն ինչ կկայանա, ինչը մենք ցանկանում ենք: Այս նամակի մասին ոչ ոքի չասեք, թե չէ, ամեն ինչ կարող ենք փչացնել:

Առաջին հերթին չմոռանաք «այոն»: Ես պիտի ունենամ այդ համոզվածությունը, նախքան որևէ քայլի դիմելը:

Ամբող ջհոգով հավատում եմ, որ ինչ այստեղ գրված է, հաստատում եմ իմ անունով:

ՌՈԲԵՐՏ ՇՈՒՄԱՆ

ԼԵՅՊՑԻԳ, 15 օգոստոսի, 1837 թ.

ԿԼԱՐԱՆ՝ ՇՈՒՄԱՆԻՆ

Ինձնից ընդամենը մի փոքրիկ «այո» եք պահանջո՞ւմ: Այդքան պստլիկ բառ ու այդքան կարևո՞ր: Բայց մի՞թե իմ սիրտը, որ լեցուն է աներևակայելի սիրով, չի արտաբերի այդ փոքրիկ բառը: Այդպես էլ անում եմ, և իմ հոգին շշընջում է Ձեզ այդ հավերժ «այոն»:

Իմ սրտի տառապանքը, անհամար արցունքները՝ կարող եմ արդյո՞ք ամեն ինչ արտահայտել, օ՜, ոչ: Գուցե ճակատագիրը այնպես դասավորվի, որ վերջապես հանդիպենք ու խոսենք, Ձեր նախընտրությունը ինձ վտանգավոր է թվում, բայց սիրող սիրտը չի վախենում վտանգից: Եվ՝ այսպես

կրկնում եմ՝ «Այո»: Մի՞թե Աստծոն հաճո է իմ տասնութամյակի օրը դարձնել տխրության օր: Օ՜, ոչ, դա շատ դաժան կլիներ: Վաղուց էի զգում, որ «դա պիտի կայանա», աշխարհում ոչինչ չի խաբի ինձ: Ես կապացուցեմ հորս, որ ջահել սիրտն էլ կարող է արի լինել:

ՋԵՐ՝ ԿԼԱՐԱ

ԼԵՅՊՅԻԳ, 1837 թ.

Այդպիսի երկնային բառերից չեն բաժանվում: Ես համոզված եմ: Ոչ մի խոսք այլևս անցյալից: Մեր ձգտումները միայն դեպի ապագան, դեպի մեր նպատակը... Հավատա ինձ, սիրելի Կլարա, և թող իմ ուժերի նկատմամբ քո խորը համոզմունքը օգնի քեզ հաղթահարելու դժվարությունները: Մինչ մենք կբաժանվենք, մի խնդրանք ունեմ, նվիրիր ինձ մարդկանց այդպես սերտացնող «դու»-ն: Զէ՞ որ դուիմ ջերմորեն սիրված հարսնացուն ես, իսկ հետո... հետո նաև՝ համբույրդ: Ներիր:

ՔՈ՝ ՌՈԲԵՐՏ

Նախամանորյա գիշեր, 1837 թ.
ժամը 11-ից հետո

Ամբողջ մի ժամ նստած եմ այստեղ: Ուզում էի ամբողջ երեկո գրել քեզ, բայց բառեր չկան: Նստիր կողքիս, գրկիր ինձ, թող նայեմ աչքերիդ՝ լուռ, դյութված:

Ամբողջ տիեզերքում երկու սիրահար:

Ժամը երեքն անց է:

Հեռվից ժամերգությունն է լսվում: Դու գիտե՞ս այն երկուսին, որ սիրում են իրար: Ի՜նչ երջանիկ ենք, Կլարա: Արի խոնարհենք ծնկներս: Արի, իմ Կլարա, ես զգում եմ քեզ... Միասին մեր վերջին խոսքը հղենք Աստծուն:

ԼՈՐԴ ԲԱՅՐԸՆԸ՝ ՕՐԻՈՐԴ ՄԻԼԲԵՆԿԻՆ

Լորդ Բայրընը (1788—1824) բազմաթիվ նամակներում, ուղղված իր հարսնացուին՝ (1813—15) օր. Միլբենկին, արտահայտել է ավելի շուտ իր հարգանքը, քան սերը, որը և վատ նախանշան էր նրանց դժբախտ ամուսնության: Եվ իբր Բայրընի հարաբերությունները քրոջ՝ Ավգուստա Լենգի հետ պատճառ դարձան ամուսինների բաժանության: 1818 թ. Բայրընը սիրահարվում է երիտասարդ կոմսուհի Թերեզա Գվիչիոլիին, որը նոր էր ամուսնացել 60-ամյա մի հարուստի հետ:

Բայրընը բաժանում է նրանց, ապրում է կոմսուհու հետ մինչև Հունաստան մեկնելը:

Բենետ-ստրիտ, 25 օգոստոսի, 13 թ.

Ինձ անչափ շոյված եմ զգում, և անմիջապես ուզում եմ վկայել, որ Ձեր նամակը ստացել եմ: Մինչ պատասխանելը, թույլ տվեք (որքան հնարավոր է կարճ) խոսել անցած աշնանը տեղի ունեցած դեպքերի մասին: Տարիներ են անցել այն օրից, երբ ծանոթացա մի կնոջ հետ, որն ինձ ցուցանեց երջանիկ լինելու հնարավորությունը: Հետո հանդիպեցի մի ուրիշ կնոջ, որի նկատմամբ որևէ վերաբերմունք չի կարող ունենալ, ինձ լսել կարողանալու հույսից զատ: Հայտնի էր, որ նրա սիրտը դեռ ազատ է: Այդ իսկ պատճառով Լեդի Մելբուրնը որոշեց պայմաններ ստեղծել մեր հնարավոր բարեկամության համար: Եվ եթե այն ստացվեր, կարող էր վերածվել ավելի ջերմ հարաբերությունների: Նրա ջանքերը մի փոքր չափազանց էին (բայց քանի որ բարեկամական էին,

պիտի ներողամիտ լինել), նա իմ անունից Ձեզ առաջարկություն էր արել, որն ավելին էր, քան ես կարող էի ինձ թույլ տալ, և դա Ձեզ պիտի հանդգնություն թվար:

...Լեդի Մելբուրնը ճիշտ է վարվել, ասելով, որ ես Ձեզ բոլոր կանանցից գերադասում եմ: Մինչև հիմա էլ այդպես է: Ես չհուսախաբվեցի, քանի որ դառնությամբ լեցուն անոթի մեջ այլևս ոչ մի կաթիլ չես տեղավորի: Մենք մեզ չենք ճանաչում, չեմ կարծում, որ իմ ինքնասիրությունը շատ է վիրավորված:

Հակառակը, ինչ-որ մի տեսակ հպարտություն եմ զգում Ձեր մերժումից, գուցե ավելի, քան մի որևէ կնոջ համակրանքից, քանզի այդ մերժումը ինձ հիշեցնում է, որ ժամանակին ինձ համարել եմ այդ կնոջ սիրուն արժանի, որին մշտապես բարձր եմ դասել բոլորից:

Ուզում եմ խոսել Ձեր նամակի այն հատվածի մասին, որը ինձ է վերաբերում, շատ բան կարող էի ասել, բայց խոսքս կարճեմ: Եթե Դուք իմ մասին ինչ-ինչ բաներ եք լսել, դրանք կարող են ճշմարիտ լինել, բայց չափազանցված: Ամեն հարցի առիթով կարող եմ տալ լրիվ տեղեկություններ:

Հանուն մեր բարեկամության ես պիտի ազնիվ լինեմ: Սրտումս ապրում է մի զգացում և թե ինչ է այն, չեմ կարող բացատրել: Կասկածում եմ, որ զսպեմ ինձ ու չսիրեմ Ձեզ, թեպետ մեր բացատրությունից հետո ժամանակ է անցել, և իմ վարքը դժկամություն չպիտի առաջ բերի: Հաստատ հավոզված եղեք, որ չեմ հետապնդի Ձեզ, և հազիվ թե կարողանամ ձև անել, որ անտարբեր եմ:

Դուք պիտի ներեք ինձ, եթե իմ նկատմամբ ինչ-որ բաներ Ձեզ դուր չեն եկել, ուրեմն գրելը դժվարանում է: Շատ բան չգրեցի և ինչ չպիտի գրեի, ասացի:

Իմ հնարավոր մեկնումը Անգլիայից հետաձգվում է, պատհառը-ժանտախտի մասին լուրերն են և այլն, և այլն:

Ինձ մնաց միայն ստորագրելու տեղ:

Մշտապես Ձեր հնազանդ ծառա՝ ԲԱՅՐՈՆ

...Վերջին բառ. դու ստիպված ես լսելու ինձ: Պատասխան չեմ սպասում, պետք էլ չի, բայց ինձ լսել պարտա-

վոր ես: Հենց նոր հրաժեշտ տվեցի Ավգուստային, միակ անձը, որին դու դեռ թողել ես ինձ և որին դեռ կարող եմ հրաժեշտ տալ:

Ուր էլ գնամ,— իսկ ես հեռու եմ գնում,— մեզ չի կարելի հանդիպել ոչ այս, ոչ էլ այն աշխարհում: Նայիր դրան որպես քավության: Ինչ էլ պատահի ինձ, եղիր բարի Ավգուստայի նկատմամբ, եթե նա էլ չլինի՝ նրա երեխաների: Դու գիտես, որ ես կտակ եմ արել Ավգուստայի երեխաների օգտին, քանի որ մեր երեխաների օգտին ավելի վաղ ու ավելի լավ դա արվեց: Դա չպիտի քեզ վիրավորի, այն ժամանակ մենք դեռ չէինք կռվում, մեր որոշման համաձայն դա չի ազդի քո կյանքի վրա: Ուրեմն եղիր Ավգուստայի նկատմամբ գթասիրտ, քանզի նա երբեք վատ չի վերաբերվել քեզ: Հասկացիր, եթե քեզ համար շահավետ է զրկվել ամուսնուց, նրա համար ծանր է նույնիսկ գիտակցել, որ մեր միջև ծովեր կան ու բաժանում են մեզ օտար աչքեր: Գուցե և հիշես թե ժամանակին ինչ ես խոստացել ինձ: Ստիպված եմ կրկնել, քանզի խոր ատելությունը թուլացնում է հիշողությունը: Քո խոստումը մի համարիր անկարևոր, քանի որ դա ուխտ էր:

...Մատանու քարը այնքան էլ թանկարժեք չէ, բայց նրանում թաքցրել են թագավորի մազերը*, որը իմ նախահայրն էր, ես կուզեի, որ մատանին պահվեր տիկ. Բայրընի համար...

Քեզ նվիրված՝ ԲԱՅՐԸՆ

ԼՈՐԴ ԲԱՅՐԸՆԸ՝ ԱՎԳՈՒՍՏԱ ԼԵՅԳԻՆ

Բուրջաջ Մանոր, 22 մարտի, 1804 թ.

Սիրելի Ավգուստա, իմ պատասխանը ուշացավ, խնդրում եմ մի կարծիր, որ անփույթ եմ, ես կասեի անհամարձակ եմ: Կփորձեմ ուժերիս ներածին պատասխանել քո սիրալիր

* Շոտլանդիայի թագավոր Հակոբ I, որից սերում է Բայրընի մայրը:

նամակին և հուսով եմ, որ ապագայում ինձ կընդունես ոչ միայն որպես եղբայր, այլև որպես ընկեր ու թույլ կտաս պաշտպանել քեզ, եթե դրա կարիքը զգացվի: Սիրելի քույրս, մտածիր, որ դու իմ միակ արյունակից ազգականն ես նաև հոգեկան ընդհանրությամբ: Բավական է ինձ ասես, թե ինչով կարող եմ քեզ ծառայել, պատրաստ եմ, վստահիր եղբորդ, ու նա երբեք չի խաբի քեզ:

ԼՈՐԴ ԲԱՅՐՈՆԸ՝ ԿՈՄՍՈՒՀԻ ԳՎԻՉԻՈԼԻԻՆ

Բոլոնիա, 25 օգոստոսի, 1819 թ.*

Թանկագին Թերեզա: Այս գիրքը կարդացել եմ քո այգում: Դու բացակայում էիր, թե չէ ինչ կարդալ: Սա քո սիրած գիրքն է, իսկ հեղինակը՝ իմ բարեկամը: Դու չես հասկանա անգլերեն բառերը, մյուսները՝ նույնպես: Դա է պատճառը, որ չխզբզեցի իտալերեն: Բայց դու կճանաչես ձեռագիրը նրա, ով քեզ սիրում է ամբողջ հոգով, կհասկանաս, որ գիրքդ տեսնելով միայն նա կարող էր մտածել սիրո մասին: Այդ բառը, որը բոլոր լեզուներում բարեհունչ է, բայց ամենաբարեհունչը՝ արտացոլում է իմ ողջ լինելիությունը: Ես զգում եմ, որ կամ և կլինեմ, բայց ինչի համար, դու պիտի որոշես: Իմ ճակատագիրը քո ձեռքում է, դու ընդամենը տասնյոթ տարեկան ես ու երկու տարի առաջ ես դուրս եկել մենաստանից: Ամբողջ հոգով կուզեի, որ մնայիր այնտեղ ու երբեք չճանաչեի քեզ, որպես ամուսնացած կնոջ:

Արդեն անչափ ուշ է: Ես սիրում եմ քեզ, դու էլ ինձ, համենայն դեպս, այդպես ես ասում ու գործում, ամեն դեպքում դա մեծ մխիթարություն է ինձ համար: Իսկ ես ոչ թե սիրում եմ, ես չեմ կարող չսիրել:

Հիշիր ինձ, երբ օվկիանոսն ու Ալպերը կլինեն մեր միջև, իսկ նրանք մեզ կբաժանեն միայն այն ժամանակ, երբ դու ցանկանաս:

* Այս նամակը Բայրոնը գրել է տիկ. Ստալի «Կորինն» վեպի վերջին էջի վրա, որը պատկանում էր կոմսուհի Գվիչիոլիին:

ՏԻԿԻՆ ՇԱՌԼԸ (ԷԼՎԻՐԱ)՝ ԼԱՄԱՐԹԻՆԻՆ

Տիկին Շառլը (1784—1817), որին բանաստեղծ Լամարթինը Էլվիրա անվանն էր արժանացրել, հանդիպել է Էկս առողջարանային քաղաքում և սիրահարվել: Տիկին Շառլը թեպետ տարիքով մեծ էր ու ամուսնացած, սակայն դա չխանգարեց նրանց հրապուրվածությանը, սիրուն:

1817 թ. տիկին Շառլը մահացավ՝ բանաստեղծին կտակելով Քրիստոսի պատկերով իր խաչը:

26 դեկտեմբերի, 1817 թ.

Ես Ձեզ էի սեղմում իմ կրծքին, Ալֆոնս: Ձեզ կորցրի ես, ինչպես կորցնում են երջանկության ուրվականը: Հարց եմ տալիս ինձ, արդյո՞ք երկնային պարգև չէր դա ուղարկված ինձ Աստծո կողմից, կվերադառնա նա ինձ, նորից կտեսնեմ ես քեզ, իմ թանկագին տղեկ, իմ աստվածային հրեշտակ... Ինչ ցավ պատճառեցին բիրտ մարդիկ, Ալֆոնս, բաժանելով մեզ: Ինչ ընդհանուր բան կա նրանց ու մեր միջև, որ իրավունք ունենային ասելու՝ դուք այլևս չեք տեսնի միմյանց: Ես կարծում էի, որ կասեմ նրանց՝ հանգիստ թողեք ինձ, շատ եմ տառապել ու կարող եմ նորից շնչել միայն նրա կրծքին: Ա՜խ, ինչ երկար է այս գիշերը: Եվ ոնց է տանջում ինձ: Ինչպես, Ալֆոնս, Դուք այստեղ եք: Դուք այնտեղ եք, որտեղ ես եմ: Բայց ես կհամոզվեմ միայն վաղը: Եվ պիտի անպայման տեսնեմ Ձեզ, համոզվելու համար, որ երջանիկ եմ: Բայց այսօր իմ հուզմունքը անսահման է, տանջալից: Իմ սիրելի Էկս: Օ՜, երկինք, դու այնքան շռայլ էիր մեր նկատմամբ: Եվ այն հարատևեց, ինչպես մեր սերը: Եվ կարող էր տևել մի ամբողջ կյանք: Բայց այստեղ էլ այն ընդհատվեց: Ա՜խ, ինչ երեկո էր, և որքան մենք կսխալվեինք, սիրելիս, եթե հույս չունենայինք, որ ամեն ինչ լավ կլինի: Տեսնում եք, թե որքան միայնակ եմ...

Տեսնում եք, իմ անգին հրեշտակ, եթե վաղը Աստված կամենա ու պարգևի մեզ մեր կյանքը, մինչև երեկո որքան ժամանակ կարող ենք անցկացնել միասին... Դժբախտաբար ես վաղը ազատ եմ միայն կեսօրից հետո:

Ինձ սպասեք, ես կգամ, հրեշտակս։ Հենց որ ազատվեմ, կգամ Ձեր ետևից ու մնացած ժամանակը կլինենք միասին։ Ո՜, փոքրիկս, ո՞նց եմ սիրում Ձեզ, ո՞նց եմ սիրում։ Դուք զգո՞ւմ եք, թե ինչպես եմ սիրում Ձեզ։ Երբ մարդկանց մեջ ենք լինում, Դուք զգո՞ւմ եք իմ սիրտը։ Զգո՞ւմ եք իմ տառապանքը։ Զգո՞ւմ եք սրտիս ձայնը, Ալֆո՜նս, Ալֆո՜նս։ Շունչս կտրվում է հուզմունքից։ Ես աստվածացնում եմ Ձեզ, բայց սյլևս ուժ չունեմ արտահայտվելու։ Օ՜, ինչպես կթեթևանայի արցունքներից։ Ի՜նչ դժվար է կրել երջանկության լուծը։ Մարդկային խղճուկ էություն, դու շատ անկարող ես դրա համար։ Բաժանվում եմ քեզանից, իմ անգին փոքրիկ, ընդամենը մի քանի ժամով։ Դու պիտի քնես, իսկ ես կպահպանեմ քո հանգիստը՝ աղոթելով Աստծուն, որ շուտ գա վաղը։

Իսկ հետո, հետո կարելի է և մեռնել...

ԲԱԼԶԱԿԸ՝ ՏԻԿԻՆ ԳԱՆՍԿԱՅԱՅԻՆ

Օնորե Բալզակը (1799—1850) երկար տարիներ նամակագրական կապ ուներ լեհական ծագում ունեցող տիկին Գանսկայայի հետ։ 1840 թ. Բալզակը այցելում է Սանկտ-Պետերբուրգ, որտեղ էլ նրանք հանդիպում են, ու սկսվում է նրանց սիրային կապը։ 1850 թ. մահանում է տիկին Գանսկայայի ամուսինը, և նույն թվականին էլ Բերդիչևում Բալզակը ու Գանսկայան ամուսնանում են։ Մի քանի ամսից մեծ գրողը կնքում է իր մահկանացուն։

Փարիզ, 9 սեպտեմբերի, 1833 թ.

Մեզ մոտ արդեն ձմեռ է, սիրելի բարեկամս։ Ես արդեն փոխադրվել եմ ձմեռային կացարանս, Ձեզ հայտնի անկյունը՝ կանաչ ընդունարանը, ստիպված էի թողնել, որտեղից ծով կանաչ տեսարանից անդին Հաշմանդամների գմբեթն է։ Հենց այս անկյունում եմ ստացել ու կարդացել Ձեր նամակները ու հիմա այն ավելի շատ եմ սիրում, քան առաջ։ Գալով այստեղ, ասեցինս, ես չեմ կարողանում զսպել ինձ ու գոնե մի քիչ Ձեզ հետ չզրուցել։ Ոնց եք ուզում, որ Ձեզ չսիրեմ, Դուք

առաջինն եք, որ հայնտվեցիք հեռուներից, որ ջերմացնեք սիրուց տառապող իմ սիրտը: Ես արեցի ամեն ինչ, որ երկնային հրեշտակի ուշադրությունը գրավեմ՝ փառքը միայն փարոս էր ինձ համար, ուրիշ ոչինչ: Իսկ հետո Դուք հասկացաք ամեն ինչ՝ որ ես սիրտ ու հոգի ունեցող մեկն եմ: Դեռ երեկ վերընթերցելով Ձեր նամակը, հասկացա, որ Դուք միակն եք, որ հասկացել եք իմ ամբողջ կյանքը: Հարցնում եք, թե ոնց եմ ժամանակ գտնում Ձեզ գրելու:

Սիրելի Եվա, թույլ տվեք կրճատել Ձեր անունը, այդպես այն ավելի լավ կապացուցի, որ Դուք մարմնավորում եք կանացիությունը, միակ կինն եք ամբողջ աշխարհում, ինչպես Եվան՝ առաջին տղամարդու համար: Ուրեմն այդպես, սիրելի Եվա, Դուք առաջինն եք, որ հարցնում եք խեղճ արվեստագետին, արդյոք նա չի զոհաբերում իր ժամանակը, որ գրի իր սիրեցյալին: Իմ շրջապատում դրա մասին ոչ ոք չի մտածում: Ամեն ոք, առանց տատանվելու, կխլեր իմ ժամանակը: Հիմա ես կուզեի միայն Ձեզ նվիրաբերել իմ կյանքը, մտորել միայն Ձեր մասին, գրել միայն Ձեզ: Ինչ ուրախությամբ, եթե ազատ լինեի բոլոր հոգսերից, դեռ կնետեի իմ բոլոր դափնիները, կառքը, իմ լավագույն ստեղծագործությունները ու խնկի հատիկների նման կնետեի սիրո խորանին: Սիրելի Եվային՝ սա՛ հա իմ կյանքի իմաստը:

Վաղուց էի ուզում խնդրել Ձեր նկարը, եթե դրանում որևէ վիրավորական բան չկա: Ես դա ցանկացա, երբ տեսա Ձեզ: Այսօր, իմ երկնային ծաղիկ, ես ուղարկում եմ իմ մազերից մի փունջ, դրանք դեռ սև են, ես խաբել-շրջանցել եմ ժամանակը, բոլորը հարցնում են, ինչո՞ւ եմ երկարացնում մազերս: Ինչի՞ համար, ասեմ: Ես ուզում եմ, որ Դուք դրանցից հյուսնք ապարանջան ու շղթաներ:

Ներեցեք ինձ, իմ անգին, ես Ձեզ սիրում եմ ոնց երեխա, առաջին սիրո ուրախություններով, նախապաշարումներով, պատրանքներով: Իմ անգին հրեշտակ, ինչքան եմ ասել. «Ուզում եմ, որ ինձ սիրի քսանչորսամյա կին, որքան երջանիկ կլինեի ես, կսիրեի նրան ամբողջ կյանքում՝ չվախենալով, որ տարիքի պատճառով կբաժանվենք»: Իսկ Դուք, իմ կուռք, կարող եք իրականացնել իմ սիրո երազանքը:

Սիրելիս, ես մտածում եմ 18-ին գնալ Բզանսոն: Անհե-

տաձգելի գործեր ունեմ: Ամեն ինչ կթողնեի, եթե գործը չվերաբերեր մորս: Ինձ խենթի տեղ կդնեն, առանց այն էլ դժվար է խելացի մարդու համբավ ունենալը:

Մի տխրեք, սեր իմ, ամեն վայրկյան կարող եք զգալ Ձեզ մեկ այլ հարազատ հոգում ու գտնել այնտեղ սեր ու հոգածություն:

Բուրավետ արկղիկ եմ պատվիրել, որ պահեմ Ձեր նամակներն ու թղթերը: Ուզում եմ Ձեզ համար էլ պատվիրել նույնից: Այնքան հաճելի է մտածել, որ Դուք բացում, շոշափում եք: Այն այնքան նրբագեղ է: Պատրաստված է թանկարժեք փայտից: Դուք կարող եք պահել և Ձեր սիրելի Շենյեին, սիրո բանաստեղծին, որին մեծ հաճույքով ծնկաչոք կկարդայի Ձեր առաջ:

Մնաք բարով, ուրախության գանձ: Ձեմ հասկանում ինչու եք Ձեր նամակներում բաց էջեր թողնում: Լավ, թող այդպես լինի, պարտադրել պետք չէ: Ես կլրացնեմ դրանք: Մտածում եմ, որ Ձեր ձեռքը հպվել է, ու համբուրում եմ:

Մնաս բարո՜վ, իմ հույս, մինչև հանդիպում:

Եվ այդպես, ցտեսություն, իմ անգին Եվա, իմ խոստումնալից, գեղանի աստղ: Գիտեք, որ երբ Ձեզանից նամակ պիտի գա, ես դա զգում եմ, անհասկանալի, բայց իրական նախազգացում:

Ցտեսություն, մինչև հանդիպում:

Փարիզ, կիրակի, 6 հոկտեմբերի, 1833 թ.

Տուն վերադառնալուց ու լոգանք ընդունելուց հետո, գտա քո հիանալի նամակը: Հոգյակս, հասկանո՞ւմ ես, կամ երբևէ կհասկանա՞ս, թե ինչ ուրախություն պատճառեց այն ինձ: Ոչ, չես հասկանում, քանի որ դրա համար պետք է ասեմ, թե որքան եմ սիրում քեզ, իսկ արտահայտել այն, ինչ անսահման է, անկարելի է...

Իմ մեկնումի օրը արթնացա ժամը 5-ին, սիրելի իմ Եվա, և կես ժամի չափ վերևում սպասում էի... ո՞ւմ, ինչ ես կարծում: Դու չեկար, տունը լուռ էր, դրսում ոչ մի կառք չկար: Այդ պահին սկսեցի կասկածել, որ դու ինձ հետ խաղեր ես

անում, որ դու դեռ մի օր էլ ես մնալու, և հազար տեսակի կասկածներ էին կրծում հոգիս:

Հրեշտակս, քեզ երախտապարտ կլինեմ այն ժամանակ, երբ դա հնարավոր լինի և այնպես, ինչպես միայն ես եմ կարող:

Չարն ես, հա՞: Ինչ վատ ես մտածում իմ մասին: Եթե քեզանից ոչինչ չխնդրեցի, միայն այն պատճառով, որ շատ եմ պահանջկոտ, քեզնից կվերցնեի այնքան, որ շղթան սարքվեր՝ քո նկարը կրելու համար, իսկ ես չէի կամենա զրկել քո հրաշալի խոպոպները այդ զարդից: Ես կարծես Բուրիդանի հիմար էշը լինեի՝ երկու գանձի մեջտեղում՝ նույնքան ժլատ ու ագահ: Ուղարկեցի իմ ոսկերիչի հետևից, նա ազնիվ մարդ է ու կասի ինչքան է դեռ հարկավոր, և քանի որ զոհողությունը սկսվել է, ուրեմն թող դա անի իմ հրեշտակը: Այդպես, եթե դու կպատվիրես քո մանրանկարը, կարծում եմ, որ Ժենում լավ նկարիչ կա, ասա թող մեդալիոնի մեջ դնեն: Պաշտոնական նամակը ինձնից կստանաս միայն ծանրոցի հետ, որը շուտով կուղարկեմ:

Իմ անգին, սիրելի կինս, թող Աննան կրի խաչը, որը ես կպատվիրեմ իր քարերից, և երբ էլ նայես նրան, հիշիր սիրեցյալիդ:

Իմ աննման Եվա, ինձ համար սկսվեց հրաշագեղ մի կյանք: Ես տեսա քեզ, զրուցեցի, մեր մարմինները մերձեցան այնպես, ինչպես և մեր հոգիները, և ես գտա քո մեջ այն ամենը, ինչը երազել եմ:

Ժենում, իմ աստվածային հրեշտակ, Ժենում ես մեր սիրուն այնքան հնարանքներ կնվիրեմ, որ կբավի հազարավոր խելոքների:

. . . . . .

Վաղվանից դու ամեն շաբաթ մի նամակ կստանաս, ամեն երեկո կգրեմ քեզ անցուդարձը, կտանեմ փոստ ամեն կիրակի: Քնելուց առաջ իմ գրածը կդառնա աղոթք, որը կանեմ հանուն իմ սիրո: Ես ինձ թալանում եմ, որ հարստացնեմ ինձ: Իմ կյանքում ոչինչ չի լինի բացի քեզնից ու աշխատանքից:

Հանգիստ քնիր, խանդոտս: Ոչինչ, շուտով դու կհասկանաս, որ ես միասեր եմ, ինչպես կանայք ու սիրում եմ կնոջ

պես և երազում եմ ամեն տեսակ քնքշությունների մասին:

Այո, իմ աստվածային ծաղիկ, քո պատճառով ես ապրում եմ խանդի բոլոր տեսակները: Միայն քեզանով ճանաչեցի խանդը, քանզի սիրուց չէի վախենում: Միայն այն ժամանակ կհանգստանամ, երբ դու կլինես Փարիզում:

. . . . . .

Աստված իմ, որքան հպարտ եմ, որ իմ տարիքը հնարավորություն է տալիս գնահատել քո բոլոր գանձերը ու սիրել քեզ պատանեկան եռանդով, լիահույս ու արիությամբ, չվախենալով ապագայից:

Օ՜, իմ խորհրդավոր սեր: Թող այն ընդմիշտ թաղված լինի ձյան տակ, ինչպես անհայտ ծաղիկը: Եվա, սիրելիս, միակ կին աշխարհում, իմ աշխարհը լեցնող, ներիր ինձ, որ ստիպված էի գնալ փոքրիկ խորամանկություններին, որ թաքցնեմ մեր սերը:

Աստված իմ, ինչ գեղեցիկ էիր քո մանուշակագույն զգեստով կիրակի օրը, ինչպես ցնցեցիր երևակայությունս: Ինչո՞ւ է իր ուզում, որ անպայման բառերով արտահայտեմ զգացածս, ինձ համար հանախ հայացքը ավելի խոսուն է: Ես ուզում էի իմ հայացքի բոցով հաղորդել քո հոգուն այդ բոլորը:

Սրանից հետո, իմ թանկագին բարեկամ, իմացիր, ինչ էլ որ գրեմ, ինչպիսի տրամադրության մեջ էլ լինեմ, իմ հոգում անհուն սերն է թագավորում, դու լցրիր իմ հոգին ու կյանքը: Հանախ չեմ կարողանում արտահայտել զգացածս, բայց դրանից չի տուժում իմ սերը: Հակառակը, այն անընդհատ կծաղկի, մեր սերը ճշմարիտ է, իսկ ամեն ճշմարիտ բան ծաղկում է:

. . . . . .

Իմ անգին հրեշտակ, դու չափազանց մեծ նշանակություն ես տալիս իմ կյանքին, և ինչ կլինի, երբ արդեն միասին լինենք:

. . . . . .

Հազար համբույրներ հոգուս խորքերից, կուզեի քեզ ողողել համբույրներով: Աստվա՜ծ իմ, ես դեռ երազում եմ դրանցից ամենաքնքուշի մասին:

Օ. ԴԵ ԲԱԼԶԱԿ

ՀՅՈՒԳՈՆ՝ ՋՈՒԼԻԵՏԱ ԴՐՈՒԵԻՆ

1833 թ. Վիկտոր Հյուգոն (1802—1885) պարահանդեսի ժամանակ հրապուրվեց ոչ այնքան տաղանդավոր, բայց անչափ գեղեցիկ դերասանուհի Ջուլիետա Դրուեով, որը խաղում էր Հյուգոյի «Լուկրեցիա Բորջիա» պիեսում: Հետագայում այդ հրապուրանքը փոխակերպվեց երկարատև ու խորը կապվածության:

Հյուգոյի կինը ներողամտաբար էր վերաբերում ամուսնու շուրջ 40 տարի տևած կապին: Կնոջ մահից հետո Ջուլիետան հոգում էր գրողի տան ամենայն հոգս: Նա մահացավ Հյուգոյից երկու տարի առաջ:

Հիշում ես, իմ անգին, իմ սեր, մեր առաջին գիշերը, 33 թվի բարեկենդանի առթիվ, պարահանդեսի գիշերը: Ինչ-որ տեղ, ինչ-որ թատրոնում պարեր պիտի լինեին, ու մենք հրավիրված էինք: (Նամակս ընդհատում եմ, որ քաղեմ համբույրդ հրաշք շուրթերիցդ:) Ոչինչ, անգամ մահը չի ջնջի այդ հիշողությունը: Այդ գիշերի բոլոր պահերը անցնում են իմ երևակայության միջով, ոնց աստղերը իմ հոգու աչքերի առջևով: Դու պիտի գնայիր պարահանդես, բայց չգնացիր, ինձ էիր սպասում:

Իմ խեղճ հրեշտակ, որքան գեղեցիկ ես ու լի սիրով: Հիշում եմ քո փոքրիկ սենյակում, ի՜նչ հրաշալի լռություն էր: Դրսից լսվում էր հրճվող Փարիզի աղմուկը, փողոցով անցնում էին ծիծաղող ու երգող դիմակները: Համընդհանուր տոնակատարության մեջ մենք համեստորեն փակվել էինք ու նրա ստվերում մեր հրճվանքն էինք ապրում: Փարիզը հարբած էր, մենք՝ արբած:

Երբեք չմոռանաս, իմ հրեշտակ, այդ խորհրդավոր ժա-

մերը, որոնք այնպես կտրուկ փոխեցին քո կյանքը: Այդ գիշեր՝ 18 փետրվարի 1833 թվի, խորհրդանիշն էր այն լուսավոր տոնի, որը տեղի ունեցավ քո հոգում... Այդ գիշեր դու բաժանվեցիր ամբոխից, նրա աղմուկից, կեղծ փայլից, ունայնությունից: Եվ ընտրեցիր առանձնությունը, գաղտնիքը, Սերը:

Այդ գիշեր ես եղա քեզ հետ ութը ժամ: Այդ ժամերը հիմա դարձել են տարիներ...

Բոլոր ութ տարիների ընթացքում իմ հոգին լի է եղել քեզնով, և ոչինչ չի փոխվի, եթե այդ տարիները դառնան դարեր:

ՋՈՒԼԻԵՏԱ ԴՐՈՒԵՆ՝ ՀՅՈՒԳՈՅԻՆ

ԲՐՈՒՍԵԼ, 27 դեկտեմբերի 1851 թ.

Մի անհանգստացիր, սեր իմ, ես ավելի քնքուշ եմ սիրում քեզ, երբ ստիպված ես նվիրվել ընտանեկան պարտականություններիդ, կնոջդ ու երեխաներիդ հանգիստն ապահովելուն: Նվիրվիր նրանց, քանի դու այստեղ ես, քո անձնվեր ու քաջ կնոջը: Դու պարտավոր ես նրան զվարճացնել, ցրել նրա վատ տրամադրությունը և փորձությունները, որ նրան բաժին ընկան: Իմ նվիրվածությունից նրա համար թավշե գորգ գործիր, թող նրա հենքում լինի իմ արիությունը և իմ մեծարանքը, և թող դրանք պաշտպանեն նրան խորդուբորդ արահետներից: Քանի նա քեզ հետ է, զվարճացրու ինչքան կարող ես, շռայլիր ուշադրությունդ ու սերդ, որոնց նա արժանի է ու մի վախեցիր, որ կխամրեն իմ համբերությունն ու հավատարմությունը:

ՍՏԵՆԴԱԼԸ ՄԵՆՏԱՅԻՆ (ԿՈՄՍՈՒՀԻ ՔԼԵՄԱՆՏԻՆ ԿՅՈՒՐԱԼԻՆ)

Ստենդալը (1783—1847) իր գրական ու հասարակական գործունեության տարիներին սիրահարվում է կոմսուհի Քլեմանտին Կյուրալին (Մենտալին) (1824 թ.): Նրանց կապը տևում է երկու տարի, որից հետո Քլեմանտինը լքում է Ստենդալին՝ կապվում ուրիշի հետ: Ստենդալը ծանր է տանում այդ բաժանումը:

ՓԱՐԻԶ, 1824 թ.

Իմ հրեշտակ, այն բանից հետո, որ Ձեզ երեք օր շարունակ տեսնում եմ, ավելի եմ սիրում, եթե դա ընդհանրապես հնարավոր է: Դրանից է, որ մենք ավելի մտերմացանք, մեզ բաժանում էին նախապաշարումները, որոնք հատուկ էին քո շրջապատին: Բայց այս երեք օրվանից հետո մենք այլևս չենք վերադառնա մեր նախկին կարծիքին, ու կերազենք միայն սիրո ու երջանկության մասին:

Աստված իմ, որքա՜ն երջանիկ էի երեկ՝ չորեքշաբթի: Ես նշում եմ այդ օրը, քանի որ Աստված գիտի, թե երբ կհամարձակվեմ ուղարկել քեզ այս նամակը: Այնպես եմ սիրում քեզ այսօր, ամբողջովին քեզ եմ պատկանում, պետք է գրեի, որ սիրտս թեթևանար:

Եթե մենք գոնե մի շաբաթ միասին լինեինք ու, եթե մեր սրտերը այրվեն այդպիսի կրքով, կարծում եմ այլևս չենք բաժանվի:

Երեքշաբթի ես այնքան երջանիկ չէի, անգամ մի փոքր նեղված էի: Բայց երեկվա ճաշի ընթացքը իսկական երանություն էր, քո ներկայությունը, երջանկության զգացողությունը: Ինձ համար, այնպիսի բոպեներ, որ երբեք թույլ չեմ տա սիրած էակի հետ կատակներ անել:

ՓԱՐԻԶ, 1824 թ.

Իմ անգին սեր: Որպեսզի քեզ քիչ վշտացնեմ իմ տարօրինակություններով, մի հիմար բան էլ անեմ, ուզում եմ խոսել իմ մասին:

Իմ բարեմասնությունները, եթե այդպիսիք ունեմ, արդյունք են իմ բնավորության տհաճ գծերի, որոնք ինձ համար ավելի անընդունելի են քան ուրիշների համար: Վերջին երկու տարիների ընթացքում սկսեցի ինքս ինձ ավելի լավ ճանաչել: Այդ թերությունները ոչինչ են Իտալիայում, այստեղ ամեն ոք անում է ինչ ուզում է, տարօրինակությունը ընդունելի է, բոլորովին չհոգալով, թե ինչ կասի հարևանը, իսկ Փարիզում անընդհատ ասում են· «Ի՞նչ կասի հարևանը»:

. . . . . .

Ինձ համար մի անհանգստացիր, ես քեզ այնքա՜ն եմ սիրում, թեպետ այդ սերը երևի շատ է տարբերվում քո շրջապատի ու վեպերում հանդիպող սերերից: Քո հանգստության համար, ես կուզեի որ իմ սերը լիներ այնպիսին, ինչպիսին դու կնախընտրես՝ ամենաքնքուշը: Ես տխրում եմ այն մտքից, որ երեք օր ձանձրացել ես: Մի՞թե մենք պիտի բազմապատկենք մեզ հետապնդող տհաճությունները: Եթե այդպես պիտի շարունակես՝ կվիրավորեմ: Մի՞թե իմ անիծված յուրօրինակության պատճառով դու սխալ ես ընկալում իմ քնքշությունը:

ՖԼՈԲԵՐԸ՝ ՏԻԿԻՆ X-ԻՆ

Գուստավ Ֆլոբերը՝ (1821—1880) բավական ինքնամփոփ ու ծածկամիտ վիպասանը, ամեն ինչից վեր էր դասում իր արվեստն ու գրականությունը: Նա լուրջ զգացմունքներ է տածել գրող Լուիզա Կոլի նկատմամբ: Այն շարունակվել է դեթ տարի: Ծանոթացել են 1846 թ.:

7 օգոստոսի 1846 թ.

Այն պահից, երբ մենք բացատրվեցինք, դու հարցնում ես, թե ինչո՞ւ ես չեմ ասում, որ սիրում եմ քեզ «հավերժ»: Ինչո՞ւ, որովհետև ես միշտ գուշակում եմ ապագան ու հակված եմ

հակադրություններ: Երբ տեսնում եմ մանկանը, գիտեմ, որ նա պիտի ծերանա տեսնում եմ օրորոցը մտածում եմ գերեզմանի մասին: Երբ նայում եմ կնոջը տեսնում եմ նրա կմախքը: Ուրախ տեսարանները ինձ մշտապես տխրեցնում են, իսկ ես տխրությանը՝ անտարբեր եմ վերաբերում: Այնքան եմ հոգուս խորքում տառապում, որ արցունք թափելն ավելորդ է, կարդացածը ինձ ավելի է հուզում, քան իրական տառապանքը: Երբ ես ընտանիք ունեի հաճախ մտածում էի, որ ավելի լավ է չլիներ, ես ազատ կլինեի, կարող էի գնալ Չինաստան կամ վայրենիների մոտ: Իսկ հիմա ընտանիքից զրկված եմ և կառչում եմ պատերից: Ճշմարիտն ասած ուրիշները կհպարտանային քո սիրով, նրանց փառասիրությունը բավարարված, իսկ տղամարդկային ես շոյված կլիներ, իսկ իմ սիրտը տխրությունից ճմլվում է, երբ հանգչում է կիրքը ու, ես ասում եմ ինձ՝ նա սիրում է ինձ, իսկ ես՝ ոչ այնքան: Եթե նա ինձ չճանաչեր, այդքան չէր արտասվի, որքան այժմ:

Փոքրիկս, կարծում ես ինձ պիտի սիրես միշտ, մի՞շտ, ինչ ինքնավստահ է հնչում այդ բառը մարդու շուրթերին: Չէ, որ դու էլի ես սիրել, ինչպես և ես, ճի՞շտ է, հիշիր, այն ժամանակ էլ էիր ասում՝ հավերժ: Ես հիմա դաժան բաներ եմ ասում, տխրեցնում եմ քեզ... Ես նախընտրում եմ մթագնել քո երանությունը հիմա, քան գիտակցաբար չափազանցնել, ինչպես անում են շատերը: Հետո տառապանքը, երջանկության կորուստը մեծ տառապանք է պատճառում... Ո՞վ գիտի, հնարավոր է, որ հետագայում դու երախտապարտ լինես, որ այնքան էլ քնքուշ չեղա քեզ հետ: Ա՜խ, եթե Փարիզում ապրեի, եթե կարողանայի իմ բոլոր օրերը ապրել քեզ հետ, առանց վախի կտրվեի այդ զգացմունքին: Ես կգտնեի իմ մտքի ու սրտի համար կերակուր, ու չէի հոգնեցնի ոչ քեզ, ոչ ինձ: Բայց մենք բաժանված ենք, տեսնվում ենք հազվադեպ, դա սարսափելի է, ի՞նչ հեռանկար: Բայց ի՞նչ արած... Չեմ հասկանում ինչպե՞ս կարող էի բաժանվել քեզնից: Եվ համենայն դեպս դա ինձ նման է: Դա այնքան բնորոշ է իմ խղճուկ էությանը, եթե դու ինձ չսիրեիր, ես կմեռնեի: Դու սիրում ես, ես փորձում եմ մարել քո սերը: Կուզենայի քո կյանքում լինել սառնորակ գետակ, որը թարմացնի ծարավ ափերդ, այլ ոչ թե

վարար մի գետ, որ քանդում տանում է ամեն ինչ, ուզում եմ, որ հիշողություններն իմ մասին դող առաջացնեն քո մարմնում ու ժպիտ քո հոգում։ Մի անիծիր ինձ, երբե՛ք, միայն ուժեղ սիրուց հետո ես կդադարեմ քեզ սիրել։ Ես միշտ կաղոթեմ, քո կերպարը ինձ համար միշտ կմարմնավորի քնքշանքը ու բանաստեղծականությունը, ինչպես երեկվա արծաթավուն գիշերը, որ պարուրված էր ծիրանագույն շղարշով։ Օրերս կգամ ու մի ամբողջ օր միասին կլինենք։ Ես պիտի բացատրություն տամ քո նամակում եղած մի քանի տողի վերաբերյալ, քանի որ տեսնում եմ, որ դու ինչ որ պատրանքներ ունես իմ նկատմամբ։ Եթե թողնեմ քեզ մոլորության մեջ դա կլինի իսկական վախկոտություն, իսկ վախկոտությունը ատելի է ինձ համար՝ ընդհանրապես...

Ինչ էլ ուզում են ասեն, իմ հոգու խորքում ես խեղկատակ եմ։ Մանկության ու պատանեկության տարիներին ես անչափ սիրում էի բեմը։ Գուցե և մեծ դերասան դառնայի, եթե աղքատ ծնվեի։ Հիմա էլ ամենից վեր դասում եմ ձևը, միայն թե այն հիանալի լինի, ինձ ոչինչ այլևս պետք չի։ Այն կանայք որոնք զգացմունքային են և միակողմանի մտածող, չեն հասկանում գեղեցիկ կուռքը՝ զգացմունքը բացառող։ Նրանց միշտ պետք են պատճառն ու նպատակը։ Ես միատեսակ եմ սիրում և կեղծ փայլը և ոսկին։ Կեղծ փայլի բանաստեղծականությունը ավելի բարձր է, քանզի նրանում տխրություն կա։ Աշխարհում ինձ համար գոյություն ունեն միայն գեղեցիկ բանաստեղծություններ, քանի որ նրանք պարունակում են ներդաշնակություն, երգեցիկ երանգ, հրաշք արևամուտ, լուսնի փայլ, գունային պատկերներ, անտիկ մարմար, ներշնչված դեմքեր։ Մնացածը՝ ոչինչ է։ Ավելի շատ կուզենայի լինել Տալմա, քան Միրարո, քանի որ Տալման ապրում էր լիակատար գեղեցիկի շրջապատում։ Վանդակում ապրող թռչունները այնպիսի խղճահարություն են առաջացնում, ինչպես ստրկության մեջ ապրող մարդիկ։ Միակ բանը, որ ինձ համար ընդունելի է քաղաքականության մեջ՝ ապստամբությունն է, թուրքի պես ֆատալիստ եմ, և միևնույն է թե ինչ կանենք մենք մարդկության առաջընթացի համար... Ինչ վերաբերում է առաջընթացին՝ վատ եմ պատկերացնում այդ խրթին գաղափարները։ Դրան վերա-

բերող ամեն ինչ ինձ սարսափելի ձանձրացնում է: Ատում եմ ժամանակակից միապետությունը, բայց ինչ վերաբերում է հին ժամանակներին, ես այնտեղ տեսնում եմ մարդու էության ամենաաքանչելի արտահայտություններ, այլ ոչ թե այժմյան թուլությունը, վախկոտությունը, հիմարությունը: Ես առաջին հերթին կամակորություն, երևակայություն, անսպասելի արարքներ թույլ տվող մարդ եմ: Երբևէ ես կմեկնեմ այստեղից ու ոչ ոք ոչինչ չի լսի իմ մասին: Այն ինչ վերաբերում է մարմնային սիրուն, և առավել է հուզում տղամարդկանց, ինձ համար այլ նշանակություն ունի: Ես նկատեցի, որ մի անգամ դու ծաղրեցիր Վ-ին հենց այդ առումով, բայց չէ որ դա հենց իմ պատմությունն է: Դու, իհարկե, միակ կինն ես, որին սիրել եմ:

Տասնչորսից մինչև քսան տարեկանում սիրել եմ մեկին, որին չեմ դիպել, և նա չի իմացել ոչինչ, դրանից հետո երեք տարի ես ինձ տղամարդ չէի զգում... Կարծում էի, որ այդպես կլինի մինչև կյանքիս վերջը, ու դրա համար երախտապարտ էի Աստծուն... Դու միակն ես որին ցանկացա դուր գալ, և երևի միակն ես որին դուր եկա: Շնորհակալ եմ, շնորհակալ: Բայց կհասկանա՞ս դու ինձ մինչև վերջ, կարո՞ղ ես տանել իմ տխրության բեռը, իմ տարօրինակությունները, իմ կամակորությունները, իմ հանկարծակի սառնությունը և կրքոտ վերադարձները: Դու ուզում ես, քեզ ամեն օր գրեմ, իսկ եթե չգրեմ, ուրեմն պիտի սպանե՞ս ինձ: Եվ այսպես, այն, որ դու ամեն առավոտ սպասելու ես իմ նամակին, խանգարելու է ինձ: Թող տուր ինձ, որ սիրեմ քեզ, ինչպես ես եմ ուզում, ինչպես հատուկ է ինձ, ինչպես թելադրում է ինձ իմ տեսակը: Ինձ ոչինչ մի պարտադրիր և ամեն ինչ կանեմ: Հասկացիր ինձ... Եթե քեզ համարեի թեթևամիտ ու հիմար, ինչպես ուրիշ կանանց, գլխիդ կթափեի դատարկ խոստումներ ու երդումներ: Դա ինձ համար դժվար չէր: Բայց ես ուզում եմ, որ իմ խոսքերը լինեն զգացմունքային և ո՛չ բարձրագոչ...

Հերոդոտը ասում էր, որ նումիդացիների մոտ մի զարմանալի սովորություն կար: Փոքրիկ երեխաների գլխի կաշին այրում էին կրակով, որպեսզի նրանք անզգա լինեին, բարկ արևի ազդեցությունից զերծ, քանի որ նրանց երկրում արևը

սպանիչ է: Երևի դրանից է, որ նրանք աշխարհի ամենաառողջ ազգն են: Պատկերացրու, որ ես մեծացել եմ Նումիդայում: Եվ իզուր չէ, որ նրանց ասում են. դուք ոչինչ չեք զգում, անգամ արևը ձեզ չի տաքացնում:

Օ՜, մի վախեցիր, եթե սիրտը կոփված է, նա դրանից քիչ քնքուշ չի դառնում:

9, օգոստոսի 1846 թ. շաբաթ-կիրակի գիշերը

Երկինքը պարզ է, փայլում է լուսինը: Ինձ է հասնում ծովայինների երգը, որոնք պատրաստվում են ափ հանել իրենց նավակները, ե՞րբ կսկսվի մակընթացությունը: Ոչ մի ամպ, քամու ոչ մի նշույլ: Ստվերում գետը ևս թվում է լուսնի տակ՝ արծաթափայլ: Լույսի շուրջը պտտվում են թիթեռնիկները, բաց պատուհաններից ինձ է հասնում գիշերվա բուրմունքը: Քնա՞ծ ես հիմա, թե երազում ես պատուհանի մոտ: Հիշո՞ւմ ես նրան, ով տենչում է քեզ: Ի՞նչ գույնի են աչքերդ: Արդեն մի շաբաթ անցավ Բուլոնյան անտառում զբոսնելու օրից: Ի՞նչ անդունդ է բաժանում ինձ այդ օրից: Այդ եթերային ժամերը անցնում են ուրիշների համար այնպես, հենց այնպես, իսկ մեզ համար դրանք շողշողուն պահեր են, որոնք հավետ պիտի լուսավորեն մեր հոգիները: Ինչ գեղեցիկ էր մեր ուրախությունն ու քնքշությունը, ճիշտ ե՞մ, իմ խեղճ բարեկամ: Եթե ես հարուստ լինեի, կգտնեի այդ կառքը, կպահեի իմ կառապահում, ու երբեք չէի գործածի: Այո, շուտով կվերադառնամ, շուտով, քանի որ անընդհատ քո մասին եմ մտածում, երազում եմ դեմքդ, ուսերդ, քնքուշ, ճերմակ վիզդ, ժպիտդ, քո ձայնը՝ կրքոտ, իշխանական ու միևնույն ժամանակ քնքուշ՝ ոնց սիրո կանչը: Կարծեմ ասել եմ քեզ, որ ամենից շատ ինձ հրապուրեց հենց քո ձայնը:

Այսօր, ծովափում առավոտյան մի ժամից ավելի սպասել եմ փոստատարին: Մի քիչ ուշացավ: Ինքն էլ չի կասկածում, թե քանի սրտեր են ստիպված տրոփում՝ կարմիր օծիքով այդ հիմարը: Շնորհակալ եմ քնքուշ նամակիդ համար, բայց մի սիրիր ինձ այդպես, մի սիրիր. դու ինձ հուսահատեցնում ես: Թույլ տուր, որ ես սիրեմ, մի՞թե դու չգիտես, որ անհուն

սերը երկուսին էլ դժբախտություն է բերում: Դա նման է այն չափազանց սիրված երեխաներին, որոնք վաղ են մեռնում: Կյանքը դրա համար չի ստեղծված: Երջանկությունը՝ հանցագործություն է: Ով ձգտում է նրան՝ պատժվում է:

Մայրս առաջին օրը շատ վատ էր զգում, մոայլ ցնորքներ էին այցելում նրան: Հավատա, մշտապես նրա հետ էի: Դու չգիտես, թե ինչ բան է օրեօր տանել այդ բեռը: Հիշիր այս տողերը ,երբ քեզ չափազանց դժբախտ զգաս: Աշխարհում կա մի կին որը անասելի դժբախտ է, դրան հետևում է կամ մահը, կամ խելագարությունը: Մինչ քեզ հանդիպելը հանդարտ էի, հիմա ես՝ էլ եմ... Ապրում էի մեքենայի ճշգրտությամբ, որը հատուկ գործածության համար է պատրաստված: Այնքան լավ էի քանդել ու դասավորել ամեն ինչ իմ մեջ, որ նման ավելի հանդարտ պահ իմ կյանքում չէր եղել, ուրիշներն էլ կարծում էին, որ շատ խեղճ եմ: Դու հայտնվեցիր, որ մի հպումով ամեն ինչ փշրես: Հին նստվածքները խառնվեցին, սրտիս լիճը փոթորկվեց: Բայց փոթորիկը ստեղծված է օվկիանոսի համար: Երբ այն ալիքում է փոքրիկ լճակը միայն նեխած հոտ է տարածում: Ասում եմ քեզ, որովհետև սիրում եմ: Մոռացիր ինձ, եթե կարող ես, պոկիր սրտիցդ երկու ձեռքով, տրորիր այն, որ կորչի իմ հետքն անգամ:

Վերլուծելու իմ մոլուցքը իսկապես խենթացնում է ինձ: Կասկածում եմ ամեն ինչի, անգամ իմ կասկածին: Դու ինձ ջահելի տեղ ես դնում, իսկ ես ծեր եմ: Երբ պատահում էր խոսում էի ծերուկների հետ, զարմանում էի, թե ինչպես էին վառվում նրանց աչքերը, ապշած լսում էին ինձ ու անընդհատ կրկնում՝ ձեր հասակում, դուք, դուք: Խլեք ինձնից նյարդային գրգռվածությունս, երևակայության խաղը, վայրկյանական պատրանքները՝ և այլևս ինձ ոչինչ չի մնա: Ահա թե ինչից է կառչում մարդ: Ես ստեղծված չեմ հաճույքների համար: Պետք չի դա հասկանալ հասարակ իմաստով, այլ հարկավոր է զգալ ասածիս մետաֆիզիկական իմաստը: Ամեն անգամ ասում եմ ինքս ինձ՝ դժբախտություն կբերեմ քեզ, եթե չլինեի ես, քո կյանքը չէի մոայլվի, որ պիտի բաժանվենք (մշտապես զայրանում եմ այդ մտքից): Այդ պահերին խենթ կարոտը սեղմում է սիրտս, անկարելի արգա-

հատանք եմ զգում իմ նկատմամբ ու անսահման քնքշություն քո...

Անսահման է միայն երկինքը իր աստղերի հետ, ծովը իր ջրերով ու մարդկային հոգին իր արցունքներով: Հենց դա է մարդուն դարձնում վեհ: Մնացածը ոչնչություն է: Մի՞թե ճշմարիտ չեմ: Փորձիր հասկանալ ինձ:

Դու ակնարկում ես աշխատանքը, այո, աշխատիր, սիրիր արվեստը: Կյանքի բոլոր խաբկանքներից նա ամենից քիչն է խաբում: Ինքնամոռաց, բացառիկ սիրով սիրիր: Դու ընդունակ ես: Միայն Գաղափարն է անմահ, առանց նրա կյանքը անիմաստ է: Մեր օրերում չկան այնպիսի արվեստագետներ ինչպես առաջներում, որոնց կյանքն ու միտքը կույր գործիք էին Գեղեցիկը ստեղծելու համար աստվածացնելու Աստծուն: Նրանց համար գոյություն չուներ աշխարհը, ոչ ոք չէր կասկածում թե ինչպես են նրանք տառապում, ամեն երեկո նրանք քուն էին մտնում վշտաբեկ ու զննում էին մարդկային կյանքը այնպիսի զարմանքով, ինչպես մենք՝ մրջնանոցը:

Դու դատում ես իմ մասին ինչպես կին: Բողոքե՞մ: Դու այնպես ես սիրում ինձ, որ մշտապես պատրանքներ ես ստեղծում՝ տաղանդ ես վերագրում ինձ, ոճ, խելք... Եվ ի՞նձ, ի՞նձ... Դու ինձ ինքնահավան կսարքես: Իսկ ես հպարտացել եմ, որ զերծ եմ դրանից: Զգում ե՞ս, թե որքան ես փոխվել մեր ծանոթությունից հետո: Դու կորցրել ես քննադատելու կարողությունդ ու մեծարում ես նրան ով սիրում է քեզ: Ինարկե մեծ եմ, քեզ հնարավորություն եմ տալիս ինձնով հպարտանալու (քանի որ ես էլ հպարտանում եմ քեզնով: Ասում եմ ինձ. նա սիրում է քեզ, հնարավոր է...

Այո, ուզում եմ գրել հրաշալի, լավ գործեր, որ դու ընթերցելիս հիացմունքից արտասվես: Պիեսներ կգրեի, դու կնստեիր օթյակում, կլսեիր, թե ինչպես են ինձ ծափահարում: Բայց արդյոք չե՞ս հոգնի՝ ստեղծելով իմ դափնեկերպարը:

Մանուկ հասակում երազում էի փառքի մասին, ինչպես բոլորը, ոչ ավել, ոչ պակաս: Ողջախոհությունը իմ մոտ ուշ արթնացավ, բայց շուտ էլ փթթեց: Կարծում եմ, դժվար բան է, որ հասարակությունը ինձնից գոնե մի տող ստանա, եթե պատահի էլ գոնե մի տաս տարի կտևի:

Չեմ հասկանում, թե ինչը գայթակղեց ինձ, որ քեզ համար կարդամ, ներիր ինձ թուլությանս համար: Չկարողացա զսպել ինձ՝ ուզում էի, որ հարգես ինձ: Ես համոզված էի, որ քեզ դուր կգա: Ինչ տղայամտություն: Բայց ոչինչ չեմ ուզում տպագրել: Դա որոշում է, երդում, որ արել եմ կյանքիս ճակատագրական պահին: Ես աշխատում եմ անշահախնդիր, առանց հետին մտքի, չեմ մտածում ապագայի մասին: Ես սոխակ չեմ, մորահավ եմ, որ ճչում է ու թաքնվում մացառներում, ուր իրենից բացի ոչ-ոք չլսի: Այ թե կարողանայի հայտնվել իմ բոլոր բանաստեղծություններով զինված, բայց չէ, երբեք չեմ համարձակվի:

Արդեն իմ երևակայությունը սպառվել է, ոգեշնչումս հանգել, բառերը հոգնեցրել են, իսկ եթե պահում եմ գրածներս, միայն նրա համար, որ սիրում եմ հիշողություններս, այնպես, ինչպես չեմ վաճառում իմ հնոտիները: Ժամանակ առ ժամանակ գնում եմ խորդանոց, երազում ա՜յն օրերը, երբ դրանցով շուրջառված-պճնված ինչ որ բաներ էի անում:

ԺՈՐԺ ՍԱՆԴԸ՝ ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵԻՆ

Ժորժ Սանդը (1804—1876) իր առաջին ամուսնուց բաժանվելուց հետո (1831 թ.) հանդիպեց բանաստեղծ Մյուսեին: Սիրահարները մեկնեցին Իտալիա, որտեղ և Սանդը հրապուրվեց Մյուսեին բուժող Պեգալոյով: Որոշ ժամանակ անց նա նորից մտերմացավ Մյուսեի հետ: Նրանց բուռն սերը Ժ. Սանդը պատկերեց իր «Տղամարդն ու կինը» ստեղծագործության մեջ:

12 մայիսի 1834 թ.

Ոչ, իմ սիրելի փոքրիկ, այս վերջին երեք նամակը մի համարիր վերջին ձեռքսեղմումը քեզ սիրող կնոջ՝ դա քո եղբոր ողջագուրանքն է: Այդ զգացումը այնքան մաքուր է, այնքան գեղեցիկ, այնքան քնքուշ, որ երբևէ չէի ուզենա կորցնել: Իսկ դու, իմ փոքրիկ, միթե վստահ ես, որ չես հրաժարվի: Չէ որ նոր սերը քեզ կստիպի: Թող հիշողությունները իմ մասին երբեք չխամրեցնեն քո ուրախությունը, բայց և չջնջեն իմ անցյալը: Սիրված ու երջանիկ եղիր: Սրտիդ գաղտնարանում պահիր իմ սերը, տխուր օրերին հիշիր նրան, որ մխիթարվես: Ոչինչ չես գրում առողջության մասին: Թեպետ գրում ես, որ քամին սենյակդ յասամանի ու գարնան շունչ է բերում ու ստիպում, որ սիրտդ լցվի սիրով ու ջահելությամբ: Իսկ դա էլ հենց առողջության և ուժի նշաններն են՝ բնության ամենաքնքուշ պարգևները: Սիրիր, իմ Ալֆրեդ, սիրիր անկեղծ: Սիրահարվիր ջահել, դեռ սեր չապրած աղջկա, որ չգիտենա, թե ինչ է տառապանքը: Հոգա նրա մասին ու մի վշտացնի: Կնոջ սիրտը տխուր է, եթե իհարկե քար ու

սառույց չի: Ես կարծում եմ, որ այդ հարցում չկա միջինը, ինչպես նաև քո սիրո մեջ: Իզուր ես ջանում թաքնվել քո սնվստահությամբ, կամ էլ երեխայական փախուստի ես դիմում: Քո հոգին ստեղծված է վառ սիրո համար, եթե չես դառնում անգութ: Ես չեմ կարողանում հավատալ, որ սիրո, ջահելության ուժի այդպիսի հնարավորություններով դու լինես սուրբ հեսվատարմություն։*

Դու հաճախ կդրժես այն ու սիրուդ շռայլ հորձանքը կը-թափես անարժանների վրա: Դու բյուրբազում կրկնել ես. ինչքան էլ հրաժարվես, աշխարհում կա միայն մի կարևորագույն բան՝ դա սերն է: Հնարավոր է, որ այն աստվածային հատկություն, է որը կորցնում ենք և նորից հայտնաբերում: Պիտի կատարելագործենք, կամ դաժան տառապանքների ու անհավոր փորձությունների միջոցով գնենք:

Գուցե ինձ սիրել ես տառապելով, որ մեկ ուրիշին տրվես թեթև ու անկեղծ: Հնարավոր է, որ քո ապագա սերը քեզ ինձնից քիչ սիրի ու ավելի երջանիկ ու սիրված լինի: Տե՛ս, ինչքան անհասկանալի բաներ կան, Տեր Աստվածը այնքան նոր ու անսպասելի ուղիներ է բացում մեր առաջ: Հանձնվիր ճակատագրին, մի վիճիր նրա հետ: Նա չի դավում իր ընտրյալներին: Նա տանում է նրանց շրջանցելով ստորջրյա խութերը, որպեսզի հետո փառաբանվի խնջույքը հանգստավայրում: Հոգիս հանդարտվում է, հույսն է իջնում... Իմ երեվակայությունը մարում է ու ձգտում եմ բացարձակապես գրական հնարանքների... Սիրտս կա ու մնում է զգայուն, վայրկենական գրգռվող, մի փոքր խոցվելուց հետո արյունաքամվող: Այդ դյուրազգացողությունը ինչ որ հիվանդագին ու յուրահատուկ բան է, մի օրում չես բուժվի:

. . . . . .

Կյանքումս առաջին անգամ սիրում եմ առանց կրքի: Դու դեռ չես հասել դրան, դու կմոտենաս մի ուրիշ կողմից։ Գուցե քո վերջին սերը կլինի ամենառոմանտիկն ու ամենաջահելը: Բայց քո բարի սիրտը՝ աղուչում եմ մի զոհաբերիր... Թող նա լրիվ կամ մասամբ մասնակցի քո սիրախաղերին, բայց երբ ետ նայի, թող ինձպես կարողանա ասել. **ես տառապել եմ,**

---

* Մյուսեի կատակներից

երբեմն սխալվել, բայց միշտ սիրել: Դա ես եմ եղել, այլ ոչ թե ինչ որ հնարածին էակ, որ իմ հպարտության ու անտարբերության արգասիքն էր: Փորձել եմ խաղալ այդ դերը, երբ միայնակ ու տխուր եմ եղել, բայց միայն այն ժամանակ, երբ շատ էի միայնակ, իսկ երբ երկուսով ենք եղել տրվել եմ սիրուն, ինչպես երեխա, դարձել եմ հիմար ու հեզ, որպիսին սերն էր ուզում տեսնել մեզ:

. . . . . .

Սերը երջանկություն է, որ նվիրաբերում են միմյանց: Օ՜, Աստված իմ, օ՜, Աստված իմ: Ես մեղադրում եմ քեզ, քեզ որն այնքա՜ն է տառապել: Ներիր ինձ, իմ հրեշտակ, իմ սիրեցյալ, իմ թշվառ: Ես այնպես եմ տառապում ու չգիտեմ ո՞ւմ մեղադրել: Ես բողոքում եմ Աստծոն, նրանից հրաշք եմ խնդրում, նա ոչինչ չի տալիս, նա լքել է մեզ: Ի՞նչ պիտի լինի... Պետք է, որ մեզանից մեկը ուժեղ լինի, որ սիրի կամ որ ապաքինվի այդ սիրուց, բայց մի խաբիր քեզ, մենք չունենք ուժը հրաժարումի: Դու հավատում ես, որ կարող ես դեռ սիրել ինձ, առավոտյան ասում ես այն, ինչը հերքում ես գիշերը: Դու քսաներեք տարեկան ես, ես երեսունմեկ, իմ անցյալում այնքա՜ն արցունք կա, այնքա՜ն տառապանք: Ու՞ր ես գնում: Ի՞նչ ես սպասում մենությունից, այրող տառապանքներից: Ավա՜ղ, ես զգում եմ, որ կամազուրկ եմ, կարծես կտրված լար լինեմ, կոտրված սիրուս հետ գլորվում եմ ու ոչ մի կերպ ուժ չեմ գտնում ելնելու կամ էլ այդ դիակը թաղելու: Իսկ դու ուզում ես ապրել բորբոք պահելով տառապանքներդ: Ինչ վերաբերում է ինձ, չեմ կարծում որ ավելի վատ կարող է լինել...

Իսկ դու դեռ հույսե՞ր ես տածում: Գուցե դեռ կապաքինվե՞ս: Հա՜, հիշում եմ. դու ասում էիր, որ դեռ կկովես՝ կամ կհաղթես, կամ կմեռնես: Այո՜, ճիշտ է, դու երիտասարդ ես, դու բանաստեղծ ես, ծաղկում ես ապրում, գեղեցիկ ես: Փորձի՛ր: Իսկ ես, ե՞ս՝ կմեռնեմ:

Մնաս բարով, չեմ ուզում լքել քեզ ու չեմ ուզում նորից քեզ հետ լինել: Ոչինչ, ոչինչ չեմ ուզում: Հիմա ծնկաչոք եմ, բոլորովին ջարդված, թող այլևս ինձ ոչինչ չասեն: Ուզում եմ գրկել՝ հողը ու արտասվել: Չեմ սիրում քեզ այլևս ու սիրում եմ հավերժ: Այլևս քեզ չեմ ուզում, բայց և առանց քեզ

չեմ կարող: Թվում է, թե միայն երկնային ամպրոպը ինձ կամոքի՝ ոչնչացնելով... Մնա՞ս բարով, մեկնիր կամ մնա, միայն թե մի ասա, որ չես տառապում: Միայն դա բավական է, որ ավելի տառապեմ:

Իմ սեր, իմ կյանք, իմ սիրտ, իմ եղբայր, իմ արյուն՝ գնա՞, մի՛ սպասիր ինձ, գնա՞:

ԺՈՐԺ ՍԱՆԴԸ՝ ԴՈԿՏՈՐ ՊԵԳԱԼՈՅԻՆ

Մենք տարբեր ենք, քանի որ ծնվել ենք տարբեր երկինքների տակ, և այլ են ոչ միայն մեր լեզուները, այլև մտքերը, բայց գոնե մեր սրտերը նման են: Իմ հայրենիքի խոնավ օդը ինձ վրա մելամաղձոտ ու քնքուշ հետք է թողել, իսկ ինչ կրքեր է քեզ նվիրել քո ջերմաշնորհ արևը, ոսկեգունելով ճակատդ: Ես գիտեմ թե ինչ է նշանակում սիրել ու տառապել, իսկ դու ինչ ես հասկանում սիրուց: Քո հուր հայացքը, քո խենթ գրկախառնումները, քո հանդուգն ցանկությունները հմայում են ինձ, միևնույն ժամանակ վախ ներշնչում: Չեմ կարողանում ոչ հաղթահարել քո կիրքը, ոչ էլ բաժանել: Իմ երկրում այդպես չեն սիրում, քո կողքին ես կարծես անգույն արձան լինեմ, նայում եմ քեզ զարմանքով, ցանկահարույց տագնապով: Չեմ հասկանում, իսկապես սիրում ես: Եվ երբեք չեմ իմանա: Դու հազիվ ես իմ լեզվով մի քանի բառ արտաբերում: Իսկ ես քո լեզուն չիմանալու պատճառով, չեմ կարողանում նման բարդ հարցեր շոշափել: Գուցե չես էլ հասկանա, եթե անգամ հաղորդակցվեմ: Գուցե մեղավոր են այն մարդիկ ու վայրերը ուր ես եմ մեծացել, որպեսզի հասկանանք իրար: Իմ թույլ էությունը ու քո վառ խառնվածքը ծնում են բոլորովին տարբեր հասկացություններ: Հազար ու մի դառնություն, որ վշտացնում է ինձ, քեզ համար գոյություն չունի, իսկ ինձ հուզում է: Կամ էլ, գուցե դու չգիտես ինչ է արցունքը: Ինչ եմ գտնելու քո մեջ՝ բարեկամի, թե բռնակալի: Կմխիթարես դու ինձ իմ տառապանքներում, որ տարել եմ մինչ քեզ հանդիպելը: Կի-

մանաս ինչու եմ տխուր: Դու գիտես ինչ են կարեկցանքը, հիամբերությունն ու բարեկամությունը: Գուցե քեզ դաստիարակել են այնպես, որ կինը հոգի չունի: Համոզվա՞ծ ես, որ նրանք հոգի ունեն: Դու քրիստոնյա չես, մահմեդական չես, ոչ քաղաքակիրթ ես, որ վայրենի, և ի՞նչ մարդ ես դու: Ի՞նչ է թաքնված այդ ամբարտավան կրծքի տակ, առյուծի հայացքի ներքո, արքայական ճակատի տակ: Այցելո՞ւմ են քեզ մաքուր, ազնիվ մտքեր, եղբայրական ու վեհ զգացմունքներ: Համբառնո՞ւմ ես դու երկինք, գոնե երազում, ապավինո՞ւմ ես Աստծոն, երբ քեզ չարություն են անում: Կլինեմ քո բարեկամը, թե՞ ստրուկը: Ցանկանո՞ւմ ես ինձ, թե՞ սիրում ես: Կարո՞ղ ես լինել վեհանձն, երբ կիրքդ մարի: Արդյոք ճանաչո՞ւմ ես ինձ, իսկ եթե ոչ՝ չե՞ս վախենում: Անհասանե՞լի կին եմ ես, որին ձգտում ու երազում են, թե՞ հասարակ մի կին, որոնցով լեցուն են հարեմները: Քո հայացքը, որն ինձ երկնային ճառագայթ է թվում, արդյոք չի՞ արտացոլում այդպիսի կանանցով բավարարվելու ցանկություն:

Քեզ հայտնի են մարդկային ոգու պահանջները: Ես չգիտեմ ոչ քո անցյալը, ոչ բնավորությունը, չգիտեմ ինչ են մտածում մարդիկ քո մասին: Չգիտեմ կարող եմ քեզ հարգել: Ես սիրում եմ քեզ, որովհետև ինձ դուր ես գալիս, բայց և հնարավոր է, որ ատեմ: Եթե իմ երկրի մարդ լինեիր, կփորձեի քեզ ու դու ինձ կհասկանայիր: Հնարավոր է այդ դեպքում խաբեիր ինձ ու ես դժբախտ լինեի: Ծայրահեղ դեպքում դու ինձ չես խաբի, դատարկ, կեղծ խոստումներ ու երդումներ չես տա: Կսիրես ինձ այնպես, ինչպես ինքդ գիտես ու կարող ես: Այն ինչ իզուր փնտրում էի ուրիշների մոտ: Մտածում, որ կա քո մեջ: Իմ պերճախոսությամբ կզարդարեմ քո անուրջներն ու լռակյացությունը: Երբ ինձ հետ մեղմ վարվես, կմտածեմ, որ էությունդ տենչում է ինձ:

Եվ այդպես, կմնանք այնպես, ինչպես կանք, առանց իրար լեզու սովորելու: Չեմ ուզում իմանալ, թե ինչ ես մտադիր անելու հետագայում և ինչ համարում ունես մարդկանց մեջ: Գոց պահիր ինձնից քո հոգին, որպեսզի ես այն գեղեցիկ պատկերացնեմ:

ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵՆ՝ ԺՈՐԺ ՍԱՆԴԻՆ

Իմ թանկագին Ժորժ, ես պիտի Ձեզ մի հիմար ու ծիծաղելի բան ասեմ: Հիմարաբար գրում եմ, փոխանակ սպասեմ, որ զբոսանքից վերադառնաք: Երեկոյան այդ պատճառով հաստատ պիտի ափսոսանք ապրեմ: Դուք կծիծաղեք ու ինձ կհամարեք ճոռոմախոս: Դուք կասեք, որ հեռանամ, մտածելով, որ սուտ է առ Ձեզ ունեցած իմ սերը: Սիրում եմ հենց առաջին օրից, երբ Ձեզ մոտ էի: Կարծում էի, որ կմաքրվեմ դրանից, եթե Ձեզ այցելեմ իբրև ընկեր: Ձեր բնավորության մեջ կան այն գծերը, որոնք ինձ կբուժեն. աշխատում էի համոզել ինքս ինձ ամեն կերպ: Բայց այն պահերը, որ անցկացնում եմ Ձեզ հետ, այնքան էլ դյուրին չեն ինձ համար: Ավելի լավ է ասեմ, քան տառապեմ, գուցե ամոքվեմ, եթե դուռը փակեք իմ առջև: Գիշերը որոշեցի ասել, որ եղել եմ գյուղում, պետք չէր զուր հանելուկ հորինել կամ էլ առանց պատճառի վիճաբանել: Այժմ, Ժորժ, Դուք կասեք Ձեր սովորական բառերը՝ էլի մի երկրպագու: Եթե ես Ձեզ համար պատահական մեկը չեմ, ապա ասեք, ինչ անեմ հիմա: Բայց խնդրում եմ, եթե Դուք կասկածում եք ինձ, ավելի լավ է չպատասխանեք: Գիտեմ ինչ եք մտածում իմ մասին, ու ասելով դա, հույսեր չեմ տածում: Ես կկորցնեմ մի բարեկամի և այն հաճելի ժամերը, որ անցկացրեցի վերջին ամսվա ընթացքում: Բայց գիտեմ, որ բարի եք, որ սիրել եք ու ապավինում եմ Ձեզ ոչ թե որպես սիրեցյալի, այլ բարեկամի ու ընկերոջ: Ժորժ, ես ինձ խենթի պես եմ պահում, զրկվելով այն հաճելի պահերից, երբ կարող եմ տեսնել Ձեզ, քանի դեռ Փարիզում եք և չեք մեկնել Իտալիա, որտեղ մենք հիանալի գիշերներ կանցկացնենք, եթե ես ավելի քաջ լինեմ: Իրականում ես տառապում եմ ու քաջություն չունեմ:

ԱԼՖՐԵԴ ԴԸ-ՄՅՈՒՍԵ

30 ապրիլի 1834 թ.

Եվ այդպես, դա ֆանտազիա չի, իմ թանկագին: Դա սեր ապրող բարեկամություն է, որը ծաղրում է հասարակու-

թյունը, իսկ որքան եմ ես ծաղրել, մեր բարեկամությունը: Ուրեմն դա ճիշտ է, դու ասում ես, ու ես հավատում եմ քեզ, զգում՝ դու սիրում ես ինձ: Ինչ է կատարվում ինձ հետ, բարեկամս: Ես այնպես հավատում եմ նախախնամությանը: Հավատում, բարեկամս: Հիմա ամեն ինչ վերջացավ, ես չեմ հրաժարվի ոչ այն կյանքից, ոչ էլ այն ընկերներից, որ ունեի: Անհնար է այն նորից սկսել, համոզված եմ, բայց և գոհ եմ, որ ապրել եմ: Դու կարող ես հպարտանալ, իմ լավ Ժորժ, դու երեխայից տղամարդ սարքեցիր: Ցանկանում եմ երջանկություն, եղիր սիրելի, օրհնյալ լինես, հանդարտվիր, ներիր ինձ: Ինչ կլինեի առանց քեզ, սեր իմ: Հիշիր մեր զրույցները քո սենյակում, ինչպիսին դու ինձ վերցրիր և ինչպիսին ես թողնում· Տես թե որքան մեծ է քո ազդեցությունը, մի անգամ ասացիր. քո տեղը այստեղ չէ: Վերցրու ձեռքս ու ինձ ցույց տուր իմ ուղին: Նստիր ու շունչ առ այդ ճանապարհի եզրին, դու բավական հոգնեցիր, որպեսզի ինձ հետ շարունակես ճանապարհդ:

Դու պիտի հաճախ գրես ու թույլ տաս, որ ես էլ պատմեմ ինձ հետ կատարվածը: Հիշիր, որ դու հիմա միակն ես իմ կյանքում, բացի քեզնից ամեն ինչից հրաժարվել էի, ծանակել, հայհոյել: Ասա ինձ կբավականացնի արիությունդ: Կարող եմ փոթորիկի մեջ գտնվող նավապետի պես աչքերս հառել միակ ուղեցույց—աստղին, իմ միակ աստղին՝ մութ գիշերով: Հարցրու ինքդ քեզ: Կարո՞ղ եմ համարել այս վերջին նամակները ինձ լքող սիրուհու նամակներ, իսկ առաջինները բարեկամի: Մոռացիր ինձ, անտարբեր եղիր: Բայց չէ որ այս թևերով եմ գրկել քեզ: Գիտես ինչու ոչ ոքի չեմ կարողանում սիրել քեզնից բացի: Գիտես ինչու, երբ գնում եմ հյուր նայում եմ բոլորին աչքիս տակով, ոնց մի վախկոտ ձի: Ես լավ գիտեմ քո թերությունները, բայց դու երբեք չես ստում: Ահա թե ինչու եմ քեզ սիրում: Հրաշալի հիշում եմ այն գիշերը, երբ գրեցի քեզ այն նամակը: Չէ որ դու չես ասել, որ սիրում էիր ինձ: Միթե ես զգուշացված չէի: Միթե իրավունք ունեմ: Օ՜ իմ թանկագին փոքրիկ, երբ դու սիրում էիր, դու չէիր խաբում: Ինչի համար կարող էի մեղադրել քեզ այդ յոթ ամիսների ընթացքում, երբ տեսնվում էինք ամեն օր: Վախկոտի մեկը չի նա, ով մեղադրում է տղամարդուն հար-

գող կնոջը, որն ասում է՝ քո ժամը խփեց: Սուտը՝ ահա թե ինչն է ինձ վանում, ինչն է դարձնում ամենահավատացյալը, երևի ամենաղժբախտը: Եվ դու ինչքան ճշմարտախոս ես, այնքան էլ վեհանձն ու հպարտ:

Ահա ինչու եմ վստահում քեզ ու պիտի պաշտպանեմ քեզ ամբողջ աշխարհի առաջ մինչև վերջին շունչս: Հիմա ով ուզում է, թող խաբի ինձ, ծաղրի, տրորի, ես կտանեմ բոլոր տառապանքները, գիտեմ, որ դու կաս: Եթե իմ մեջ կա ինչ որ լավ բան, եթե ստեղծեմ ինչ որ մեծ գործ, դու կիմանաս-որտեղից... Ճիշտ է չէ, Ժորժ, իմ մեջ կա ինչ որ մի արժեք, որի մասին ես չէի էլ կարծում: Երբ տեսա այդ Պեգալոյին, նրա մեջ գրեթե ճանաչեցի ինձ՝ միայն մաքրագործված ու ավելի ազնվացած: Հենց այդ պահին էլ հասկացա, որ պիտի մեկնեմ: Մի զղջա, իմ սիրելի քույր, որ եղել ես իմ սիրեցյալը: Դա պետք էր, որ ճանաչեի քեզ (այստեղ մի տող ջնջված է), ու երբեք մի հիշիր այն անարդար բառը, որ քեզ ասել եմ և որը հիշեցնում ես քո վերջին նամակում: Այն ուրախությունը, որ ես գտա քո գրկում, ճիշտ է ավելի անմեղ, բայց և մեծ էր: Ինձ պիտի լավ ճանաչել, այնպես ինչպես ես գիտեմ ինձ, որ հասկանալի լինի ասածս: Հիշիր Նաումնայի այն տողը: Քո գրկում մի պահ եմ ապրել, որի հիշողությունը ինձ արգելում է մերձենալ ուրիշ մեկին և դեռ երկար ժամանակ արգելելու է:

Եվ, իհարկե, ես դեռ շատ սիրեցյալներ կունենամ, ծառերն արդեն տերևակալում են ու յասամանի բուրմունքը քամին լցնում է սենյակս, ամեն ինչ վերածնվում է ու սիրտս անհանգիստ տրոփում: Ես դեռ ջահել եմ, առաջին կինը, որին կսիրեմ ինձ պես ջահել կլինի, այլևս չեմ վստահի տարիքով կանանց: Այն, ինչ գտա քո մեջ, բավարար է, նորից փնտրելու համար:

. . . . . .

Հաղորդիր Պեգալոյին, որ շնորհակալ եմ քո նկատմամբ տածած սիրո ու հոգատարության համար: Բայց ինչ ծիծաղելի է չէ իմ այդ վերաբերմունքը: Այդ տղային էլ եմ սիրում այնպես, ինչպես քեզ, ոնց ուզում ես հասկացիր: Նա է պատճառը, որ կորցրեցի իմ կենսական հարստությունը, իսկ ես սիրում եմ նրան այնպես, կարծես այդ ամենը նվիրել է

ինձ: Չէի ուզենա ձեզ միասին տեսնել, բայց և երջանիկ եմ, որ միասին եք: Օ, հրեշտակ իմ, հրեշտակ, երջանիկ եղիր ու երջանիկ եղիր հենց դրանով:

Մնաս բարով, իմ հրեշտակ, իմ ճնճղուկ, իմ աստվածային փոքրիկ, մնաս բարով ամեն ինչ, ինչ սիրում էի այս մռայլ երկնքի տակ, ամեն ինչ, ինչ գտել էի այս խղճուկ երկրում: Երբևէ երգում ես իմ իսպանական ռոմանսները, երբևէ մտորում ես քո մեռնող Ռոմեոյի մասին: Մնաս բարով, իմ Ջուլիետա:

Սեն Բյուվը խնդրում է իր փոխարեն սեղմեմ ձեռքդ:

ԱԼՖՐԵԴ ԴԸ ՄՅՈՒՍԵՆ՝ ԷՄԵ Դ-ԱԼՏՈՆԻՆ

Ալֆրեդ դը Մյուսեն (1810—1857) Ժորժ Սանդի հետ ունեցած բուռն սիրային կապից հետո, ապրեց ևս մի հրաշալի սիրո գարուն՝ սիրահարվելով (1837 թ.) մի ջահել աղջկա՝ Էմե դ-Ալտոնին, որի հետ չկարողացավ ամուսնանալ նյութական միջոցներ չունենալու պատճառով: Հետագայում Էմեն ամուսնացավ Մյուսեի եղբոր հետ: Դ-Ալտոնը ոգեշնչեց Մյուսեին գրելու իր հանրահայտ «Տիցիանի որդին» բանաստեղծությունը:

(սկիզբը չի պահպանվել) **Ապրիլ, 1837 թ.**

Այդպիսին է գեղեցկագույն հրեշտակը, որին երազում եմ, որին սիրում եմ, որի մասին չեմ կարողանում մտածել երեկոյան, որ չդողամ ողջ էությամբ: Խնդրում եմ ուրիշներին թողեք հուսախաբությունը. օրինակ այլանդակներին: Աստված Ձեզ չի ստեղծել նրա համար, որ մարդիկ հուսախաբվեն ձեզնից՝ հակառակը, հրաժարվեք այդ մտքերից: Կրակը հետեք փիլիսոփայական մտորումները սիրո մասին և իմը առաջին հերթին... Կարդացեք այդ բոլորը Ձեր հայելում, Ձեր սիրեցյալի աչքերում, դրանք շատ ավելի լավ խորհրդա-

տուներ են, քան. «Դարի որդու խոստովանանքը»: Եթե Դուք սերը համարում եք խղճուկ մի բան, ուրեմն Դուք չեք սիրել: Բավ է փնովեք Ձեզ, եկեք ինձ մոտ ու ասեք. «Փոքրիկս, ահա ես» և կարևորը ավելացրեք, ինչպես Ձեր համակում էր. «Դու կարող ես ինձ խաբել, բայց ստորացնել՝ երբեք»: Ձեզ չի հաջողվի անել դա, քանի որ ես կընդհատեմ խոսքդ մի ջերմ համբյուր դրոշմելով շուրթերիդ:

Եկեք ինձ մոտ, օրիորդ, Ձեզ չեն ստորացնի, չեն խաբի, կանեն ամեն ինչ, որ Դուք կամենաք, կլսեն, համոզված եղեք, կհավատան Ձեզ, կխոնարհվեն Ձեր առաջ, որքան բավարարեն ուժերը, կխնդրեն, որ թույլ տաք Ձեզ աստվածացնել:

Ձեր համակում միայն մի բառ կա՝ սիրոն վերաբերյալ: Դուք գրում եք. «Ես ուզում եմ, օ, ոչ ես աղաչում եմ»: Դուք աղաչում եք, սիրելիս, որ ես վերջ տամ Ձեզ հետապնդելուն: Ոչ, սիրելիս, չեմ լսելու Ձեզ, սատանայի ծոցն եմ ուղարկել դիվանագիտությունը, պատվախնդրությունը, և այսօրվա ու վաղվա բոլոր իսպանական թագավորներին:

Ես մնում եմ, ուզում եմ լսել միայն Ձեր մասին, մտածում եմ միայն Ձեր մասին, հետապնդելու եմ միայն Ձեզ: Քաղաքականությունը առանց ինձ էլ յոլա կգնա, ինչ վերաբերում է իմ ապագային, ես նրանից միայն մի բան եմ հուսալու՝ որ Ձեր սրտի տրոփյունը լսեմ կրծքիս տակ...

Էմէ, ինձ այդպիսի տողեր այլևս մի գրեք: Եթե չեք ուզում գալ, համբուրեք ճերմակ թղթի մի կտոր և ուղարկեք: Եթե սիրում եք՝ եկեք:

14 ապրիլի

Ես սիրում եմ քեզ, սիրում, սիրում, և հասկանալի է, որ ինձ դուր նկավ քո ծրագիրը, եթե այն քեզ հարմար է: Բայց երևի դու գիտես, որ ապրում եմ մորս հետ ու դա բավական դժվար է: Երկուսս էլ օգտվում ենք մի բանալուց և իմ սենյակը պիտի անցնենք ճաշասենյակով: Մեր բնակարանը մեծ չէ, ինձնից բացի եղբայրս է, քույրս և երեք ծառա: Վախեցա՞ր, իմ հրեշտակ: Շտապում եմ քեզ հանգստացնել: «Հենց

լույսը բացվի ես Ձեր ծառան եմ»,— ասում ես դու: Այդ բառերը ինձ գերագույն հաճույք պատճառեցին: Ոչ մի դժվարություն չի լինի, եթե գաս առավոտյան ժամը 7-ից 8-ը: Գուցե դա կանո՞ւխ է: Համբուրում եմ գրածդ, գուցե այս բոլորը հնարավոր չէ՞ իրագործել: Ծտապ գրիր ինձ, կարո՞ղ եմ հույս ունենալ: Իմացիր որ այս մեծ տան բնակիչները հանգչում են դրախտի քնով մինչև ութն անց կես, կամ ավելի շուտ ինձը: Ոչ մի մարդ չի լինում: Եթե խնդրում եմ, որ գաս յոթից ութը, ես մեծ զգուշավորություն եմ ցուցաբերում: Պատահականության վրա հույս դնել չի կարելի, դու գիտես, որ ապրում եմ շատրվանի մուտքը, դուռը աջից է, բավական անպետք արձանի մոտ: Դու կանցնես բակով, ոչինչ չասես դռնապանին, քանի որ տունը ցերեկները չի պահպանվում: Բակում գտնել մեր դուռը դժվար է, քանի որ դրանք շատ են: Այն բակի խորքում է, աջից, վերևում մեծ տառերով գրված է՝ աստիճաններ: Ես լուսամուտի վարագույրի ետևից կհսկեմ իմ սիրեցյալին ու կիջնեմ նրան ընդառաջ հենց այդ աստիճաններով: Բոլոր դժվարությունները կվերջանան: Ներս մտնելուց հետո դու արդեն կհայտնվես ընկերոջդ նշանի տակ ու իմ կուռքը կզգա իրեն նույնքան ապահով ինչքան հնդիկների անտառներում: Ինձ մոտ դուրս գալը ավելի դյուրին է: Ընդհանրապես ես ցերեկը քնում եմ ժամը 2-ից մինչև 5-ը, ինձ արթնացնելը խստիվ արգելված է, ուրեմն՝ բացարձակ անվտանգ: Մնում է միայն դուռը փակել ներսից ու ծածկել վարագույրները և օ՜, իմ անուշ հրեշտակ, ինչ օր է լինելու, ի՜նչ մտքեր: Քո նամակները ինձ կխենթացնեն: Ես անընդհատ պիտի կարդամ և համոզվեմ, որ երջանիկ եմ, հավատամ, որ անուրջներս միայն անուրջներ չեն: Քո պարոն Փորձը՝ հրաշք է, որքան եմ ծիծաղել, բարի երթ, ահա թե որքան եմ քեզ սիրում, սիրո՞ւմ, ոչ աստվածացնում եմ, ա՜խ, ինչ անիմաստ են բառերը, երբ գրվում են կամ կարդացվում:

Ցտեսություն, ցտեսություն, հազար համբյուրներ քո շուրթերին, քո սրտիկին, քեզ՝ լրիվ: Քեզ եմ ուղարկում թղթի մի կտոր, կպցրու վզիկիդ, ուսերիդ, քեզ՝ լրիվ:

ԷԴԳԱՐ ՊՈՆ՝ ՏԻԿԻՆ ՊՈՅԻՆ (ՎԵՐՋԻՆԻԱ)

Էդգար Պոն (1811—1849) ամերիկյան հայտնի բանաստեղծ, գրող, իր բազում ֆանտաստիկ պատմվածքները գրել է սիրելի կնոջ հիվանդության, իսկ հետո էլ մահվան ազդեցության տակ: Վերջինիա Կլեմը, որի հետ Պոն ամուսնացել էր 1836 թ., մահացավ 25 տարեկանում, թոքախտից: Ամուսնության տաս տարիները թեպետ նյութապես անբավարար, բայց Պոյի ստեղծագործական կյանքում ամենանշանակալիցն էին:

Կնոջ մահից հետո Էդգար Պոն հրապուրվել է մի շարք կանանցով՝ Ելենա Ուիտմանով, Աննա Ռ.-ով, պատանության տարիների իր հարսնացու Էլմիրայով:

12 հուլիսի 1846 թ.

Իմ անուշիկ Սիրտ՝ իմ սիրելի Վերջինիա, մեր Մայրը կբացատրի, թե ինչու ես այսօր գիշերը քեզ մոտ չեմ լինելու: Համոզված եմ, որ խոստացածդ զրույցը կավարտվի ինձ համար բարյացակամ ոճով, քո և նրա համար, սիրելիս, ստիպիր սրտիդ, որ մի փոքր հույս փայփայի, մի քիչ էլ հավատա: Իմ վերջին մեծ հուսախաբությունից հետո ես կկորցնեի արիությունը, եթե դու չլինեիր, իմ փոքրիկ, իմ սիրելի: Իմ ազնիվ ու միակ ընեցուկն ես, որ կարողանամ պայքարել օտար, ինձ չբավարարող ու անշնորհակալ կյանքի դեմ:

Քեզ հետ կլինեմ վաղը կեսօրից հետո, և մի կասկածիր, որ մինչև քեզ տեսնելիս կպահեմ սիրատոչոր հոգուս մեջ քո վերջին բառերն ու աղաչանքը:

Լավ քնիր, թող Աստված նվիրի քեզ խաղաղ ամառ նվիրյալիդ՝ Էդգարի հետ:

ԷԴԳԱՐ ՊՈՆ՝ ԵԼԵՆԱ ՈՒԻՏՄԱՆԻՆ

(Թիվը չի նշված)

Գեղանի Ելենա, ես հպվեցի շուրթերով Ձեր նամակին, թրջելով այն ուրախության արցունքներով կամ «աստվածային վհատությամբ»: Իսկ ես, որ վերջերս Ձեր ներկայությամբ գովաբանում էի «Խոսքի ուժը»... Եթե իսկապես հավատայի, կաղոթեի Աստծոն, անմիջապես ծունր կիջնեի ու կաղաչեի (իմ կյանքի այս նշանակալից պահին), որ ինձ բառեր ներշնչի, որ կարողանամ Ձեր առաջ լրիվ բացել սիրտս: Իմ բոլոր մտքերը, կրքերը դարձել են միացյալ մի ցանկություն, մի ցանկություն, որ հնարավորություն տա Ձեզ տեսնել, հասկանալ այն, ինչի համար բավական չի մարդկային ձայնը, իմ սիրո աներևակայելի հուրը, քանզի այնքան լավ գիտեմ Ձեր բանաստեղծական էությունը, որ եթե Ձեր հոգու աչքերով թափանցեիք իմ հոգին, Դուք կսիրեիք ինձ, գոնե կմեծարեիք իմ սերը: Բայց մի՞թե որևէ բան նշանակում է այդ սիրված լինելը մեր տխուր, մթին աշխարհում: Օ՜, եթե կարողանայի դաջել Ձեր հոգում իրական, խորը նշանակությունն այդ երեք տառի՝ սեր, ավա՜ղ, ջանքերս իզուր են. «ես ապրում ու մեռնում եմ չհասկացված...»:

Եթե կարողանայի գրկել Ձեզ ու հպել սրտիս, շշնջալ Ձեզ իմ հոգու գրերի զարմանահրաշ գաղտնիքները: Դուք կզգայիք, որ այն չէր կարող և չի գտնվում որևէ մեկի իշխանության տակ, Դուք կարող էիք շրջապատել ինձ, լույսով պատել, վառել իմ հոգին փառքով, հրաշքով, ափոփել ինձ այդ բոլոր անասելի զգացումներով:

Երբ զբսնում էինք գերեզմանոցում, իմիջիայլոց, խոսեցի արցունքների մասին. թե ինչպես էին անդադար հոսում (ու այն բառերը. «Ելենա ես հիմա եմ սիրում. առաջին և միակ անգամ»): Աչացի հույս չունենալով, որ կհավատաք և նաև այն պատճառով, որ միմյանց տրվելիք մեր զգացմունքները... Ես՝ ամեն ինչ միանգամից ու լրիվ եմ տալիս և անգամ այն բանից հետո, որ Ձեր Պոեմի բառերը դեռ հընչում էին ունկերումս:

Օ՜, Ելենա ինչո՞ւ ինձ ցույց տվեցիք այդ տողերը: Ախր Դուք այլ պատճառ ունեիք: Այդ տողերի գեղեցկությունը ինքնին դաժանություն էր իմ նկատմամբ:

Իսկ հիմա ամենահասարակ բառերով ուզում եմ նկարագրել այն տպավորությունը, որ Ձեր արտաքինով թողեցիք ինձ վրա: Եթե Դուք տատանվելով, շատ գունատ և նեղսրտած առաջացաք դեպի ինձ, հառեցիք Ձեր աչքերը ուղիղ իմ աչքերին, ես հավատացի. որ գոյություն ունի հոգեկան ազդեցություն ու հասկացա, որ իմ Ելենան եք, հազար երազներիս Ելենան... Նա, որին Մեծ նվիրաբերողը ինձ է տվել եթե ոչ այս կյանքում, ապա գոնե՝ այն՝ Երկնային: Դուք խոսում էիք կարկամելով, ես հազիվ էի հասկանում: Ես չէի ընկալում բառերը, միայն լսում էի թավիշ ձայնը, որի մեղեդին ինձ ավելի հարազատ էր, քան իմ սեփականը...

Ձեր ձեռքը գտավ իմը և հոգիս հիացմունքից դողաց, և այնժամ, եթե Ձեզ վիրավորելու վախը չպատեր ինձ, պիտի ծունկի գայի ինչպես ծնրադնում են Կուռքին կամ Աստծուն:

Եվ հետագայում, այն երկու երեկոների ընթացքում, երկնային հիացմունքի այն ժամերին, Դուք քայլում էիք սենյակում այսուայն կողմ, մեկ նստում էիք կողքիս, մեկ քիչ հեռվում, կամ աթոռիս թիկնակին էիք դնում Ձեր ձեռքը, անկենդան փայտից անբնական դողը անցնում էր իմ էությանը, ցնցում սիրտս: Ու այն, որ Դուք մեկ տխուր, մեկ պայծառ դեմքով, ինչ որ անհնշմարելի ուրախությամբ լեցուն հոգով այդտեղ էիք, գլուխս սկսում էր պտտվել, Ձեր արտեցնող ներկայությամբ ու ոչ թե իրական զգացմունքներու էի տեսնում ու լսում Ձեզ. հոգիս էր Ձեզ նշմարում:

Թույլ տվեք մեջբերեմ Ձեր նամակից մի հատված. «Թեպետ Ձեր ներկայությամբ ես ինձ երեխա եմ զգում, ու խոնարհվում եմ Ձեր իմաստնության առաջ, բայց չգիտեք, որ մի քանի տարով մեծ եմ...»: Ասենք թե դա ճիշտ է: Արդյոք չե՞ք համարում, որ հոգու նվիրական անկյուններում «Հոգեկան սերը»,— որի մասին այդքան անհեթեթորեն խոսում են,— ամենաիրականն է ամեն տեսակի իրականություններից: Չե՞ք զգում, սիրելիս, հարցնում եմ Ձեր

բանականությանը, Ձեր սրտին, որ իմ աստվածային էությունը, իմ հոգին շնչահեղձվելով ձգտում է խառնվել Ձեր հոգուն: Ելենա, միթե հոգին տարիք ունի: Կարո՞ղ է Անմահությունը նայել ժամանակին: Կարո՞ղ է հավերժ տնելին հաշվի առնել մի քանի ինչ որ խղճուկ տարիներ: Օ, համարյա պատրաստ եմ վիճելու Ձեզ հետ անհիմն մեղադրանքի համար, ի պաշտպանություն Ձեր աստվածային զգացմունքի:

Ինչպես պատասխանեմ Ձեզ, երբ ակնարկում եք Ձեր արտաքինը: Չեմ տեսել Ձեզ, Ելենա, չեմ լսել ես ավելին, քան Ձեր ձայնի մեղեդին: Միթե չի մարել սիրտս Ձեր հրաշք ժպիտից: Չեմ պահել Ձեր ձեռքը ափումս, չեմ սուզվել Ձեր հոգում՝ Ձեր բյուրեղյա աչքերի միջով: Եղե՞լ է այդ բոլորը: Թե ես երազում եմ, կամ էլ խենթ եմ:

. . . . . .

Ո՞վ է, որ Ձեզ երբևէ տեսել է ու չի սիրել:

Հիմա ինձ կրծում է վախը, և տեսնում եմ, որ Ձեր առարկությունները դատարկ ու անհիմն են... Ես դողում եմ այն մտքից, որ այդ բոլորը շինծու են, Դուք թաքցնում եք իրականը, որ կարեկցանքից դրդված չասեք ինձ ճշմարտությունը: Ավաղ, պարզորեն տեսնում եմ, որ ոչ մի անգամ, ոչ մի դեպքում Դուք թույլ չտվեցիք ասել, որ սիրում եք ինձ: Գիտեք ինչ, քնքուշ Ելենա, ես հիմք ունեմ ամեն կերպ համառել իմ սիրո համար: Եթե ես աղքատ չլինեի, ու իմ վերջին սխալներն ու շռայլությունները չլինեին, որ շատերն են այպանում, հարուստ լինեի ու կարողանայի մատուցել աշխարհիկ վայելքներ, այնժամ դատ կբացեի Ձեր դեմ՝ Ձեր սիրո համար:

Օ, Ելենա: Հոգիս: Ինչեր եմ գրում: Ինչ խենթության եմ Ձեզ մղում: Ինչ եմ ես Ձեր համար: Ես, որ գուցե ոչինչ եմ: Դուք ունեք և մայր և քույր ու լուսավորում եք նրանց սիրով, կյանքով: Բայց, օ, սիրելիս, եթե թվում եմ եսասեր, հավատացեք, սիրում եմ, սիրում եմ Ձեզ, իրավ, որ դա ամենաառգեղեն սերն է:

Մտածեք մի քիչ իմ մասին...

Ես կգգվեմ, կհանգստացնեմ Ձեզ: Դուք հոգսեր չեք ունենա, կկտրվեք աշխարհիկ տագնապներից: Դուք ի վերջո

կառողջանաք: Իսկ եթե ոչ, Ելենա, եթե Դուք մահանաք, այնժամ կառնեմ ձեռքերդ ափերիս մեջ և հաճույքով, լսում եք, հաճույքով կիջնեմ Ձեզ հետ մութ շիրիմ:

Շուտ, շտապ պատասխանեք ինձ, բայց շատ մի գրեք, մի հոգնեք, մի հուզվեք ինձ համար: Ասեք ինձ այն ցանկալի բառերը, որ Երկիրը Երկինք են դարձնում:

(չի ստորագրված)

ԲՈԴԼԵՐԸ՝ ՏԻԿԻՆ ՄԱՐԻԻՆ

Գրականության մեջ մոդեռնիզմի և էսթետիզմի հիմնադիր ֆրանսիացի բանաստեղծ Շառլ Բոդլերը (1281—1867) արդեն հասուն տարիքում սիրում էր տիկին Սաբատեին: Բոդլերի վերաբերմունքը նրա նկատմամբ՝ իդեալական էր:

1852 թ.

Տիկին,

Հնարավոր է, որ այլևս Ձեզ հետ չհանդիպեմ: Դա ինձ համար շատ կարևոր է, քանի որ Ձեր բացակայությունը ինձ համար դառնում է անկարելի:

Երբ իմացա, որ հրաժարվում եք նկարվել և ակամա մեղավորը ես եմ, շատ տխրեցի:

Որոշեցի ի գին ամեն բանի Ձեզ գրել, թեպետ դեմ եմ նամակագրությանը, որովհետև միշտ զղջում եմ: Ես ոչ մի վտանգի չեմ ենթարկվում և որոշել եմ տրվել Ձեզ:

Գիտեք, որ չորեքշաբթի օրվա մեր խոսակցությունը շատ տարօրինակ էր: Դրա հետևանքը եղավ այն, որ որոշեցի գրել այս նամակը:

Այն տղամարդը, որն ասում է՝ ես Ձեզ սիրում եմ և կինը, որ պատասխանում է՝ Սիրել Ձեզ, Ես, Երբեք: Եվ շարու-

նակում . Ես սիրում եմ ուրիշի, վայ նրան, ով կգա նրանից հետո, նա ոչինչ չի ստանա բացի իմ արհամարհանքից ու անտարբերությունից:

Եվ տղամարդը, որ լսում է Ձեզ, միայն Ձեր աչքերին նայելու հաճույքից արբած, թույլ է տալիս խոսել մեկ ուրիշի մասին: Այդ խոստովանության հետևանքը եղավ այն, որ Դուք հիմա ինձ համար ոչ թե մի հասարակ կին եք, այլ մեկը, որին սիրում են ուղղամտության ու կրքոտության, սրամտության ու անձնվիրության համար:

Ես շատ բան կորցրի այդ բացատրության պահին, քանզի Դուք այնքան համարձակ էիք, որ ստիպված ենթարկվեցի:

Իսկ Դուք, տիկին, Դուք շատ բան շահեցիք՝ Դուք ինձ ներշնչեցիք խորը հարգանք ու մեծարանք: Եղեք միշտ այդպիսին, պահպանեք Ձեր կրքոտությունը, որը դարձնում է Ձեզ նույնքան գեղեցիկ ու երջանիկ:

Նորից եկեք, աղաչում եմ, խոստանում եմ համեստ ու հեզ լինել: Ես արժանի էի Ձեր հակակրանքին, երբ ասացի, որ կբավարարվեմ միայն փշրանքներով: Ես խաբեցի: Օ, եթե իմանայիք, ինչ հրաշք էիք այդ երեկո: Չեմ համարձակվում Ձեզ գովեստներ շռայլել: Դա այնքան ճղճիմ է, բայց Ձեր աչքերը, Ձեր շուրթերը, Դուք ամբողջովին՝ խանդավառ ու կրակոտ, անցնում եք իմ փակ աչքերի առջևով ու ես զգում եմ, որ անդառնալի է ամեն ինչ:

Նորից եկեք, աղաչում եմ ծնկաչոք, չեմ ասում Ձեզ, որ ինձ կգտնեք անզգա վիճակում, բայց և Դուք չեք արգելի, որ երևակայեմ Ձեր ուսերը, Ձեր հրաշք ձեռքերը, Ձեր ամբողջ մարմնական հրաշալիքները, որոնցում պարփակված է Ձեր էությունը: Ոչ, ես գիտեմ, որ ի վիճակի չեք անելու դա, հանգիստ եղեք, Դուք ինձ համար կուռք եք ու ես այն չեմ կորցնի, ուզում եմ մշտապես տեսնել Ձեզ շողշողուն, ինչպես որ կաք: Դուք այնքան լավն եք, գեղեցիկ, այնպիսի քնքշությամբ պարուրված: Դուք ինձ համար արտացոլում եք կյանքը իր շարժման մեջ՝ ոչ թե Ձեր կրքոտությամբ ու բուռն պահվածքով, այլ ավելի շատ Ձեր աչքերով, որոնք կարող են բանաստեղծի սրտում հավերժ սեր վառել: Ինչպես ասեմ, թե որքան եմ սիրում Ձեր աչքե-

ը, գնահատում Ձեր գեղեցկությունը: Այն երկու իրար, հակասող հրապույր ունի՝ դա երեխայի ու կնոջ հրապույրն է: Օ, հավատացեք ինձ, որ ես ասում եմ մաքուր սրտով: Դուք արժանի եք աստվածացման, ու սիրում եմ Ձեզ ամբողջ հոգով: Ինչ որ ակնածանք՝ եմ զգում Ձեր նկատմամբ: Ես հավերժ մերձեցա Ձեզ: Սրանից հետո Դուք իմ թալիսմանն եք, իմ ուժը: Ես սիրում եմ Ձեզ, Մարիա՝ դա անվիճելի է, բայց իմ սերը Ձեզ համար նույնն է, ինչ առ Աստված ունեցած զգացումս, դրա համար էլ երբեք մի կոչեք այն հոգեղեն: Իմ և Ձեր հոգին իրար ագուցող այդ անմեղ ու քնքուշ... Դա կլիներ սրբապղծություն: Ես մեռած էի, Դուք ինձ հարություն տվեցիք: Օ, Դուք չգիտեք ինչով եմ Ձեզ պարտական: Ձեր հրեշտակային հայացքում ես անիմանալի հանդարտություն գտա, Ձեր աչքերը ինձ ընտելացրին պերճաշուք ու բարձր բերկրանքին: Այսուհետև, Դուք իմ միակ թագուհին եք, իմ սերն ու գեղեցկությունը, Դուք իմ մասնիկն եք, իմ փոխակերպված էությունը:

Ձեր միջոցով, Մարիա, ես հայտնի կդառնամ և ուժեղ կլինեմ: Պետրարկայի պես ես էլ կերգեմ իմ Լաուրային: Եղեք իմ Պահապան-Հրեշտակը, Իմ Մուսան, Իմ Աստվածամայրը ու առաջնորդեք ինձ դեպի գեղեցիկը:

Բարի եղեք պատասխանել ինձ գոնե մեկ բառով, աղաչում եմ Ձեզ: Յուրաքանչյուրիս կյանքում լինում են երկմտանքի օրեր, երբ բարեկամի ձեռքը բարի հայացքը, երկտողը բավական են, որ խենթություն կամ հիմարություն անենք: Երդվում եմ, Ձեզ, որ հիմա ես այդ վիճակում եմ: Ձեր գեթ մի բառը ինձ համար սրբություն կլինի, որին ես կվերաբերվեմ երախտագիտությամբ... Թե գիտենայիք՝ որքան եք սիրված: Տեսեք, ես Ձեր ոտքերն եմ ընկել, գոնե մեկ բառ, մեկ բառ... Չէ՛, Դուք այն չեք ասի:

Երջանիկ է նա ով ընտրել է Ձեզ, հազար անգամ երջանիկ: Ձեզ՝ այդքան գեղեցիկ ու քնքուշ, այդքան թովիչ ու խելացի: Ի՞նչ կին կարող էր Ձեզ փոխարինել: Չեմ համարձակվում հետամուտ լինել Ձեզ, Դուք ինձ կմերժեք: Նախընտրում եմ սպասել:

Ես երկար կսպասեմ, և երբ Դուք կտեսնեք, թե ինչքան եք սիրված, ինչ հարգալից, բացարձակ անշահախնդիր վե-

բաբերմունք ունեմ Ձեր նկատմամբ, այնժամ կհիշեք, Ձեր անարդարացի պահվածքն ու կզղջաք:

Ի վերջո չեմ կարող պաշտպանվել իմ կուռքի հարվածներից, Ձեզ դուր է գալիս ինձ վոնդել, ինձ դուր է գալիս Ձեզ պաշտել:

15, փ. Օդեան

Երկուշաբթի 9 մայիսի 1853 թ.

Անկեղծորեն խնդրում եմ Ձեզ, տիկին, հազար ներողություն այդ անստորագիր, անպետք բանաստեղծությունների համար, տղայամտություն, բայց ի՞նչ արած: Հիվանդների ու երեխաների պես ես էլ եմ եսասեր: Ձեր մասին մեծ մասամբ մտածում եմ ու անմիջապես վերածում բանաստեղծության ու երբ պատրաստ է, չեմ զսպում ինձ, ուզում եմ ցույց նրան ով ոգեշնչել է: Միևնույն ժամանակ երկյուղում եմ, թաքնվում այն մարդու պես, որ վախենում է ծիծաղելի երևալ, արդյո՞ք սերը ինչ որ ծիծաղելի բան չի պարունակում իր մեջ, մանավանդ նրանց համար ովքեր դեռ չեն սիրել:

Երդվում եմ, բացատրվում եմ վերջին անգամ, ու եթե իմ բուռն համակրանքը տևի այնքան, ինչքան իմ գրած առաջին բառից հետո «սկսվող» ժամանակը՝ ուրեմն մենք միասին կծերանանք:

Ինչքան էլ Ձեզ անհեթեթ թվա այս ամենը, պատկերացրեք, որ կա մի սիրտ որը Դուք չեք ծաղրի և որը մինչև մահ կկրի Ձեր պատկերը:

ՄԱՆԶԻՆԻՆ՝ ՋՈՒԴԻՏԱ ՍԻԴՈԼԻԻՆ

Իտալացի հանրահռչակ քաղաքական գործիչ Ջուզեպե Մանձինին (1805—1872) սիրում էր իտալուհի Ջուդիտա Սիդոլիին: Մանձինին իր ընկերոջը՝

Միլիգարիին գրած նամակներում բազմիցս գրել է իր սիրո մասին, մինչև 1838 թ. երբ ամուսնացավ Մադլեն x-ի հետ: Ահա մի տող հիշյալ նամակներից. «Ես ազատ եմ հասարակության ու մարդկանց առաջ, բայց ոչ Աստծո: Մի՞թե դու չգիտես, որ Ջուդին սիրում է ինձ, ես էլ նրան, և երդվել եմ սիրել հավերժ»:

Սիրելիս,

... Քանի՜ նամակ ստացա այս կարճ ժամանակում: Երախտապարտ եմ քեզ, հազար անգամ, մխիթարության իմ հրեշտակ, շնորհակալ եմ դիպվածին, որ բոլոր նամակները հասան: Աստված իմ, ես դրանց կարիքը միշտ և այժմ էլ զգում եմ: Քանզի դու իմ կյանքն ես, մնացածը տխրություն ու ցավ է: Դու այնքան սիրառատ ես զրուցում ինձ հետ: 15-ին գրածդ նամակում այնքան քնքուշ բառեր կան, որ ուրախությունից դողում էի... Երբեք մի կասկածիր իմ սիրոն, ինձ, ինչքան ուզում ես, բայց ոչ դրանում, մեղք է, մեղք է՜ իմ դեմ, քանի որ վերջին օրերին ես զգացի իմ սիրո ուժը, որ կապում է մեզ: Համարյա մեռած, լրիվ անգիտակից վիճակում տեսա քեզ: Սպասում էի քեզ, որովհետև զգում էի, որ մեռնում եմ:

Համբույրներով եմ պատել քո խոպոպը (որ գիտես) ու մշտապես պահում էի կրծքիս: Բայց կորցրել էի: Եթե իմանայիր ի՜նչ պայմաններում*: Քո խոպոպի հետ մի քիչ էլ թույն ունեի՝ ինձնից անբաժան... Երեկ գտնվեց: Նայում եմ մազերիդ որպես թալիսմանի, որն ինձ կօգնի հաղթել...

ԳԱՐԻԲԱԼԴԻՆ՝ ԱՆԻՏԱՅԻՆ

Ջուզեպե Գարիբալդին (1807—1882) ծանոթացել է ամերիկուհի Անիտայի հետ Հարավային Ամերիկայում: Մանձինիի դավադրությանը մասնակից

* Սավոյական կռիվների ժամանակ Մանձինին ծանր հիվանդ ու հուսահատ վիճակում կորցնում է գիտակցությունը:

լինելու համար Գարիբալդին դատապարտվել էր մահվան և փախել Հարավային Ամերիկա: Անիտան բաժանվում է ամուսնուց և 1848 թ. Գարիբալդիի հետ վերադառնում Իտալիա: Նա իր սիրեցյալի հետ ապրում է բոլոր տագնապներն այն հերոսական պայքարի, որ վիճակվեց իտալացի ապստամբներին: 1849 թ. պատերազմի ժամանակ, Անիտան վախճանվեց՝ անտառում, գյուղական խրճիթում: Գարիբալդու վիշտն անփարատելի էր:

Սիրեցյալ իմ Անիտա,

Գրում եմ քեզ, որ հայտնեմ առողջության մասին, և որ Զորասյան հետ գնում ենք դեպի Անագնի, որը կվերցնենք երևի վաղը, ինչքան կմնանք, չգիտեմ: Այնտեղ զինվորների համար կստանանք հրացաններ և հագուստ: Ես կհանգստանամ միայն այն ժամանակ, երբ լուր ստանամ, որ դու հասել ես Նիցցա, սիրելի Անիտա: Գրիր մանրամասն Գենուայից ու Տոսկանայից քո տպավորությունների մասին: Դու ուժեղ ու հերոս կին ես: Ինչ արհամարհանքով պիտի նայես կանացիակերպ իտալացիներին, իմ հայրենակիցներին, նրանց աշխատեցի ներշնչել հոգեկան վեհանձնություն, բայց արժանի չեղան: Ճշմարիտ է, դավադրությունը թուլացրեց արիության պոռթկումը՝ ինչ էլ որ լինի, մենք դատապարտված ենք, իտալացու անունը ողջ աշխարհում դարձել է հայհոյանքի ու ծաղրանքի առարկա: Ես վիրավորված եմ, որ պատկանում եմ վախկոտների ընտանիքին, բայց մի կարծիր, որ դրա պատճառով կորցրել եմ եռանդս, որ հուսահատ եմ հայրենիքիս վաղվա օրվա մասին մտորելիս, ընդհակառակը հիմա ավելի եմ հուսալի, քան երբևէ: Կարելի է անպմտիժ ձևով անպատվել առանձին անձի, բայց ոչ մի դեպքում մի ողջ ժողովրդի, դավաճանները հայտնի են:

Իտալիայի սիրտը տրոփում է, թեպետ այնքան էլ առողջ չի, բայց ի վիճակի է ազատվելու վարակված հիվանդոտ մասից:

Ռեակցիային հաջողվեց դավաճանությամբ ու զեղծարարություններով շփոթեցնել ժողովրդին, բայց... ժողովուրդը

երբեք չի մոռանա ռեակցիայի դավաճանությունն ու խարդախությունը: Երբ նա ուշքի գա, սարսափելի կատաղած ոտքի կկանգնի և այս անգամ կոչնչացնի իր խայտառակության հեղինակներին:

Գրիր ինձ, ես պիտի լուր ունենամ քո, մայրիկի ու երեխաների մասին: Մի անհանգստացիր, ես ինձ լավ եմ զգում, քան երբևէ: Իմ զինված տասներկու հարյուրյակով ես անպարտելի եմ:

Հռոմը այժմ պատկառելի տեսարան է ներկայացնում, բոլոր քաջերը հավաքվում են Հռոմի մոտակայքում և Աստված մեզ կօգնի: Բարևիր Աուգուստոյին, Գալլի ընտանիքներին, Գուստավինոյին, Կուրտին և բոլոր բարեկամներին:

Անչափ սիրում եմ քեզ, խնդրում եմ չանհանգստանաս: Համբուրիր երեխաներին ու մայրիկին, որոնց քո հոգատարությանն եմ հանձնում:

Առողջություն:

ՔՈ՝ ՋՈՒԶԵՊՊԵ
ՍՈՒԲԻԱԿՈ, 19 ապրիլի 1849 թ.

ՎԱԳՆԵՐԸ՝ ՄԱԹԻԼԴԱ ՎԵԶԵՆԴՈՆԿԻՆ

Ռիհարդ Վագները (1813—1883 թ.) շուրջ տաս տարի իդեալական բարեկամություն է ունեցել Մաթիլդա Վեզենդոնկի հետ, որը ոգեշնչել է երգահանին ստեղծելու «Տրիստան» հրաշալի սիրային դրաման: 1866 թ. Վագները երկրորդ անգամ ամուսնացավ իր ընկերոջ՝ Լիստի աղջկա՝ Կոզիմա Բյուլովոյի հետ:

ՑՅՈՒՐԻԽ
1853 և 1856 թ.թ միջև

Իմ սիրելի... մուսան դեռ հեռվում է: Լռալլայն սպասում էի նրա այցին, չէի ուզում իմ հորդորներով անհանգստացնել: Մուսան էլ սիրո պես երջանկացնում է: Վայ նրան՝

հիմարին, սիրուց ցնորվածին, որ ուզում է ուժով տիրանալ այն ամենին, ինչ չի տրվում կամովին: Նրանց չի կարելի ստիպել: Ճիշտ եմ, չէ: Ս՚երը մուսա չէր համարվի, եթե ստիպողաբար ենթարկվեր...

Իմ սիրելի, մուսան դեռ հեռու է ինձնից:

1858 թ. Ամառ (Իսկականը կորսված է, երեքշաբթի, առավոտ)

Դու չես կարծում, չէ՞, որ քո հրաշալի աստվածային նամակը անպատասխան թողնեմ: Կամ էլ իրավունք չունեմ պատասխանել քո վսեմ խոսքերին: Բայց ինչ գրեմ, որ արժանի լինի քեզ:

Այն չլսված պայքարը, որ մենք էինք տանում, կարող էր վերջանալ այլ կերպ, քան մեր ցանկություններն ու կրքերը հաղթահարելը:

Մի՞թե մեր մերձեցման ամենաբուռն վայրկյաններին մենք չգիտեինք մեր նպատակը:

Իհարկե, գիտեինք: Քանզի դա այնքան չլսված բան էր, որ ստիպված էինք համառորեն պայքարել: Մի՞թե մենք մինչև վերջ չտոկացինք: Մնացել է էլի ինչ որ մի բան: Ես իսկապես խորությամբ զգում եմ, որ պայքարը վերջացել է:

Երբ մեկ ամիս առաջ, ես լուր ուղարկեցի ամուսնուդ, որ հրաժարվել եմ քեզնից, իսկապես հրաժարվել էի: Միով բանիվ, ես դեռ մաքուր չէի: Ես զգում էի, որ բացարձակ անջատումը կամ՝ լրիվ միացումը կպահպանի մեր սերը այն ահավոր բախումներից, որոնց լռելյայն ենթարկվեց վերջին ժամանակներս: Մեր անջատման գիտակցության կարևորությանը զուգընթաց, թեպետ ոչ ցանկալի, բայց ապրում էր մեր հնարավոր միացության գաղափարը: Ահա մեր ջղային լարվածության պատճառը և երկուսս էլ չէինք դիմանում: Ես մոտեցա քեզ, և պարզ ու որոշակի էր, որ մի ուրիշ քայլ կամայականություն կլիներ, դա պիտի հաշվի առնեինք:

Այդ պատճառով մեր հրաժարումի անհրաժեշտությունը այլ բնույթ ստացավ: Լարվածությունը փոխակերպվեց հնա-

զանդության, հաշտարարության: Եսասիրության վերջին հյուլեն անհետացավ իմ հոգուց և քեզ հետ տեսնվելու իմ որոշումը եսասիրության բռնկումի զուտ մարդկային բարեկամության հաղթանակն էր: Ես ուզում էի հաշտեցնել, խաղաղեցնել, մխիթարել, զվարթացնել քեզ, որ ինքս էլ վերապրեի այն երջանիկ պահը ակնկալելի...

Այդպիսի խոր ու սարսափելի զգացողություն չեմ ապրել, ինչպես վերջին ամիսներին: Անցյալի ապրումները համեմատած այժմյանի հետ՝ դատարկ բաներ էին: Ցնցումը, որն ապրեցի այդ աղետից, պիտի որ խորը հետք թողներ իմ հոգում՝ ավելի խորացնելով վիճակիս լրջությունը, որ նաև կնոջս վիճակն էր: Երկու ամիս ամեն օր սպասում էի նրա մահվան լուրին, որի հնարավորության մասին ինձ ասել էր բժիշկը: Իմ շուրջը մահն էր. անցյալի ու ապագայի, մտորումներս բախվում էին մահվան գաղափարին և կյանքը որպես այդպիսին կորցրել էր իր հմայքը: Ստիպված լինելով խնայել խեղճ կնոջս, այնուհանդերձ, որոշեցի քանդել մեր այնքան տքնանքով կառուցած օջախը և մեծագույն սարսափով վերջապես հայտնել նրան այդ մասին:

Դու կհասկանաս, այդ հրաշք ամռան օրերին ինչ հայացքով էի դիտում իմ հմայիչ կացարանը, որն այդքան համապատասխան էր այն օրերի ցանկություններիս ու ձգտումներիս, երբ զբոսնում էի իմ սքանչելի այգում, նայում ծաղկաշատ գորգին ու ականջ դնում վարդի թփերի մեջ բույն հյուսած շիկահավի երգին:

Թե ինձ համար ինչ է նշանակում զրկվել վերջին խարսխից, կարող ես պատկերացնել միայն դու:

Կարծում եմ, որ մի անգամ լքելով աշխարհիկ կյանքը, հնարավոր է վերադառնալ: Հիմա, երբ իմ մեջ ամեն ինչ սրվել է ու խոցելի դարձել, բոլորովին օտարացել եմ նրան, քանի որ երկար ժամանակ է, ինչ չեմ շփվել: Վերջին հանդիպումս Վայմարի մեծ Հերցոգի հետ պարզորեն ցույց տվեց, որ հաջողություն կունենամ միայն այն դեպքում, եթե բացարձակ ազատ լինեմ և ոչ մի պարտավորություն չունենամ որևէ մեկի, անգամ այդ ոչ սիրալիր Հերցոգի հետ: Չէ, չեմ կարող վերադառնալ, նորից քաղաքային կյանքով ապրել, անմտություն է վերստին տնավորվել, մանավանդ,

որ մի կարգին չվայելելով վերջին հանգրվանս քանդեցի իմ տանիքս՝ հրաշք դրախտում սիրով ու երախտագիտությամբ հիմնված: Օ, ոչ: Այստեղից մեկնելն ինձ համար նույնարժեք է մահվան:

Այսպիսի չապիացած վերքերով չեմ զորի փորձել իսկ նոր տուն, նոր հայրենիք հիմնել:

Սիրելիս, ես միայն մի ապեղանի ունեմ հոգիս բալասանելու համար, այն կապ չունի արտաքին երևույթների հետ ու բխում է էությանս խորքերից: Անդորր: Որոնման անդորր: Ցանկությունների դադար: Ազնիվ ու արժանապատիվ հաղթահարում: Վասն այլոց ապրելը՝ մխիթարություն է մեզ համար:

Հիմա դու գիտես միանգամայն լուրջ մտադրություններս՝ կապված իմ աշխարհընկալման ու ապագայի հետ: Դրանք ինձ հարազատ են, ինչպես և քեզ, քանզի դու ես իմ ամենամտերիմը: Թույլ տուր իմ ցանկության այս ավերակների վրա... Երջանկացնել քեզ...

Գիտես ինչ, կյանքում բոլոր պարագաներին ես երբեք աներես չեմ եղել, այլ միշտ շատ զգայուն: Այժմ առաջին անգամ ուզում եմ համառ լինել քեզ հետ կապված հարցերում: Խնդրում եմ քեզ, հանգստություն պահպանիր: Ես հաճախ չեմ այցելի քեզ, քանզի սրանից հետո ինձ պիտի տեսնես այն ժամանակ, երբ ես արտաքուստ խաղաղ ու հանգիստ լինեմ: Առաջներում, երբ տառապանքի տխուր պահերին փնտրում էի քեզ՝ մխիթարվելու համար, տագնապ ու տառապանք էի հաղորդում քեզ: Այլևս այդպես չի լինի: Եթե երկար ժամանակ ինձ չտեսնես, լռելյայն աղոթիր Աստծոն: Իմացիր, որ ես էլ եմ տառապում: Եթե գամ, համոզված եղիր, որ քեզ կբերեմ իմ էության լուսավոր ընծան, որն, անշուշտ, վաղ է մսխել մեկուսի, մանավանդ այդքան շատ ու կամովին տառապողի ձեռամբ: Հնարավոր է, որ շուտով, ձմռան սկզբներին, երկար ժամանակով մեկնեմ Ցյուրիխից, ներումը, որին օրերս սպասում եմ, կբացի Գերմանիայի դռները իմ առջև, ուր ես ժամանակ առ ժամանակ գնում եմ, և կհատուցվի այն, ինչը չեմ կարող ունենալ այստեղ: Այդժամ հանդիպելու հնարավորություն կունենանք՝

երկար ժամանակով: Ու նորից կվերադառնամ կացարանս, որն այնքան հաճելի է ինձ, որպեսզի հանգստանամ տանջանքներից ու դառնություններից: Մաքուր օդ շնչելը, նոր լիցք ստանալը գործս շարունակելու համար անհրաժեշտ նախապայմաններ են, այն տվել է ինձ բնությունը: Հնարավոր եք գտնում ունենալ երկնքի մի փոքր մասնիկ՝ ինչը և պահում է ինձ քեզնից հեռու, մի քաղցր մխիթարանք, այն խայծը, որ ունեմ ես:

Մի՞թե արածդ մեծ բարիք չէր: Մի՞թե ես չպիտի երախտապարտ լինեմ քեզ, այստեղ՝ երկրի վրա: Եվ մի՞թե ես չպիտի վարձահատույց լինեմ քեզ այն բոլոր տառապանքների ու զոհողությունների համար:

Փոքրիկս, վերջին ամիսներին իմ մազերը ծածկվեցին ճերմակով, ներքին մի ձայն կանչում է ինձ հանգստի, հանդարտության, որին ձգտում էր իմ կամքով իմ թռչող հոլանդացին: Դա հայրենիքի կարոտն էր, այլ ոչ թե սիրո կորքոտ հաճույքը: Միայն գեղեցիկ ու հավատարիմ կինը կարող է տալ նրան այդ հայրենիքը: Դատապարտենք մեզ գեղեցիկ մահվան, որը կթուլացնի ու կմեղմացնի այդ կարոտը, մեր բոլոր ձգտումներն ու ցանկությունները: Մեռնենք երանությամբ, հանգիստ ու լուսավոր հայացքով, ազնիվ պայքարի սուրբ ժպիտով: Եվ մեր գեղեցիկ հաղթանակից ոչ ոք ոչինչ չի կորցնի:

Ներիր թանկագինս, իմ սուրբ հրեշտակ:

ԲԻՍՄԱՐԿԸ՝ ՀԱՐՍՆԱՑՈՒ ԻՈՀԱՆՆԱ ՊՈՒՏԿԱՄԵՐԻՆ

Գերմանական հայտնի «երկաթյա կանցլեր» կոմս Օտտո Բիսմարկը (1815—1898) ամուսնացել է 1847 թ. բանաստեղծուհի Իոհաննա Պուտկամերի հետ, որն ազդեցություն ուներ Բիսմարկի վրա և ծանր հոգեկան վիճակից կարողացավ վերադարձնել կանցլերին պաշտոնական հավատքին: Մինչև ամուսնությունը երկու տարի անընդմեջ նրանք նամակագրական կապի մեջ էին:

Պոմերանիա, Երիքով,
ուրբաթ, 29 հունվարի 1847 թ.

ԱԶՆՎԱՓԱՅԼ ՕՐԻՈՐԴ ՖՈՆ ՊՈՒՏԿԱՄԵՐ

Իմ հրեշտակ,

Հաջողությամբ տեղ հասա, ամեն ինչ քննեցին ու վըշտացա, որ ինչպես միշտ այս անգամ էլ վաղ եմ եկել: Էլբայի սառույցը դեռ կարծր է ու ամեն ինչ կարգին: Օգտվելով ազատ րոպեներից այս անպետք հյուրանոցում, անպետք թղթի վրա գրում եմ քեզ այս երկու տողը: Եղբորս ու Մալվինային տեսել եմ մի կարճ պահ, երկուսն էլ հըրճվանքի մեջ էին տեսնելով ինձ հետ կատարված փոփոխությունները: Երեկ երեկոյան Բեռլինում մտա Բերնհարդի մոտ, բայց տանը չգտա, ու սարսափով տեսա, որ ոչ միայն չեմ բերել հայտնի երշիկեղենը, այլև Ֆերզինից մորաքրոջ նամակները, չգիտեմ ուր եմ թողել: Եթե դրանք մնացել են Ռեյնֆելդում անմիջապես ուղարկիր: Բերնհարդին գրավոր բացատրեցի, որ ես վատ միջնորդ եմ և, մորաքույրը այլևս չի օգտվի իմ ծառայություններից:

Հենց որ ջուրը իջնի (իսկ դեռ չի էլ սկսվել), կմեկնեմ նորից հյուսիս փնտրելու իմ ծաղիկը, ինչպես ասում է զարմիկս: Հենց որ հանձնեմ Ծենհաուզեն ավելի մանրամասն կգրեմ, այժմ սիրո մի քանի նմուշ. ձիերը սմբակներով խփում են հողին, խոխոռում ու ծառս են լինում, այսօր դեռ շատ գործ ունեմ:

Սրտանց բարևներ ձերոնց՝ այսինքն մերոնց: Ոտքից գլուխ քոնը:

Համբույրների մասին անհնար է գրել: Առողջություն:

ԲԻՍՄԱՐԿ

ԼԱՍԱԼԸ՝ ԵԼԵՆԱ ՖՈՆ ԴԵՆԻԳԵՍԻՆ

Ֆերդինանդ Լասալը (1825—1864 թ.) սիրահարված լինելով Բավարիայի դեսպանի դստեր՝ «դիվային» Ելենա Դենիգեսին և իմանալով, որ նա որոշել է ամուսնանալ Ռակովիցի հետ վերջինիս կանչում է մենամարտի և մահացու վիրավորվում: Լասալի բուռն խառնվածքն ու տիրական բնավորությունը արտացոլվել են Ելենային, իսկ ավելի ուշ ռուսազգի Սոֆիա Սոլնցևային գրած նամակներում:

Հուլիսի վերջը, 1864 թ.

...Արդյոք փառասեր եք, ի՞նչ կասեր իմ ոսկյա փոքրիկը, եթե նա վեց ճերմակ ձի լծված կառքով հաղթականորեն մուտք գործեր Բեռլին, որպես Գերմանիայի առաջին կին:

... Անասելի հիմարություն է տանջվել անտանելի քաղաքականությամբ, մարդկային բարությամբ ու տառապանքով: Դա լավ է, երբ մենակ ես ու ավելի հարմար զբաղմունք չունես: Ստիպված եմ, չէ հրաժարվել այդ բոլորից, ու մենք կգնանք հեռու-հեռու, ուր կկամենա իմ տիրուհին, իմ փոքրիկը, կապրենք միայն մեր երջանկության, մեր գործի ու սակավաթիվ բարեկամների համար:

ՄՅՈՒՆՀԵՆ, 20 օգոստոսի

Ելենա,

Գրում եմ քեզ ծայրահեղ հուսահատ վիճակում: Ռյուսովի հեռագիրը ինձ մահացու հարված հասցրեց: Դու, դու

կդավաճանե՞ս ինձ: Դա անհնար է: Ես դեռ չեմ հավատում այդպիսի խարդավանքի, այդպիսի սարսափելի դավաճանության: Հնարավոր է, որ քո կամքը մի պահ թուլացրել են, կոտրել, քեզ օտարել քեզանից, անհրաժեշտ է, որ դա լինի քո ճշմարիտ, իսկական կամքը: Դու չէիր կարող այդպես ծայրահեղորեն դեն նետել ամեն տեսակ ամոթ, սեր, հավատարմություն, ճշմարտություն: Դու պատվազրկում ու լլկում ես ամենայն մարդկայինը, սին է դառնում ամենալավ զգացմունքը, և եթե դու խաբել ես, եթե դու ընդունակ ես հասնելու թշվառության այդ վերջին աստիճանին՝ խախտել սուրբ երդումդ, փշրել նվիրված սիրտը, ուրեմն արևի տակ այլևս ոչնչի պետք չի հավատալ:

Քեզ տիրանալու համար դու ինձ տվեցիր բոլոր իրավունքները, պահանջեցիր, որ սկզբում փորձեմ պատշաճ ձևերը, հետո միայն տանեմ քեզ Վաբերնից, դու ինձ թե բանավոր, թե գրավոր երդումներ էիր տալիս, իսկ քո վերջին նամակում հայտարարում էիր, որ իմ սիրելի կինն ես, և աշխարհում ոչ մի ուժ չի կարող քեզ զրկել այդ իրավունքից: Եվ այն բանից հետո, երբ կապեցիր իմ սիրող սիրտը, որը տրվելով հանձնվում է ընդմիշտ, դու պայքարի հենց սկզբից, ընդամենը մի երկու շաբաթ անց, ծաղրանքով գլորում ես ինձ անդունդը, դավում ես ինձ, սպանում: Այո, քեզ կհաջողվի այն, ինչ չի հաջողվել ոչ մեկին, դու կարող ես կոտրել ու սպանել արի տղամարդուն, որին հաջողվել է դիմակայել ամեն տեսակի հողմերին:

Չեմ դիմանա այդ դավաճանությանը: Կոչնչանամ: Անհնար է, որ դու այդքան անազնիվ լինես, այդքան անամոթ, այդքան անհավատարիմ, այդքան բացարձակ խայտառակ ու անարժան: Դու կարժանանաս իմ սարսափելի անտերությանն ու բոլորի արհամարհանքին:

Ելենա, դա քո որոշումը չի, որ փոխանցել ես Ռյուտովին: Դա ստիպել են քեզ չարաշահելով քո բարի զգացմունքները: Դու ամբողջ կյանքում, լսիր թե ինչ եմ ասում,— կզղջաս, եթե համառես:

Ելենա, հավատա ինձ, ես այստեղից դիմում եմ ամեն միջոցի, որ հաղթահարեմ քո ծնողների դիմադրությունը: Ես հրաշալի միջոց ունեմ, որն անհետևանք չի մնա: Եթե

դա չծառայի իր նպատակին, ունեմ հազար ու մի այլ միջոցներ, բոլորին փոշի կդարձնեմ, եթե դու հավատարիմ մնաս ինձ, վերջապես իմ սերն էլ սահման ունի: Պայքարը նոր է սկսվել, վախկոտ:

Ես այստեղ, հասել եմ գրեթե անհնարին, իսկ դու մեկ ուրիշ տղամարդու կեղծավոր բառերին ես ականջ դնում:

Ելենա, իմ ճակատագիրը քեզնից է կախված: Բայց եթե դու կոտրես ինձ այդ երեխայական դավաճանությամբ, որը ես չեմ տանի, թող իմ վիճակը քեզ փոխանցվի ու իմ անեծքը քեզ հետ լինի մինչև մահ-գերեզման: Դա քեզ հավատարիմ, քո կոտրած սրտի անեծքն է, որի հետ այդպես անամոթաբար խաղացիր: Նա խփում է անվրեպ:

... Ուզում եմ և անպայման պիտի քեզ հետ խոսեմ առանձին: Ուզում եմ և պիտի անձամբ քեզանից լսեմ քո դատավճիռը: Միայն այն ժամանակ կհավատամ նրան՝ ինչ անհերևակայելի է:

Այստեղից ես կփորձեմ նորից տիրանալ քեզ, եթե ոչ կգամ Ժնև:

Իմ նշանը քո վրա է, Ելենա:

Ֆ. ԼԱՍԱԼ

ԵԼԵՆԱ ՖՈՆ ԴԵՆԻԳԵՍԸ՝ ԼԱՍԱԼԻՆ

Վաբերն, հինգշաբթի, երեկոյան 26 հուլիսի

. . . . . .

. . . . . Այժմ դուք Ձեր հրաշալի խելքով, փառասիրությամբ, որն ինձ դուր է գալիս, հասկացաք իմ որոշումը: Ես ուզում եմ լինել Ձեր կինը և այդպես էլ կլինի: Երեկ երեկոյան Դուք ասացիք՝ «Միայն ասացեք՝ «այո»: Շատ լավ, ահա և իմ «այո»-ն: Ես միայն երկու փոքրիկ պայման ունեմ: Ես միայն ուզում եմ այն ինչ Ձեր հնարավորությունների սահմանում է, իսկ Դուք իմ դիվայնն, հրաշալի բարեկամ, այնքան հնարավորություններ ունեք անելու ամեն

ինչ պատշաճի սահմաններում՝ մեզ արժանի և խելամտորեն: Դա նշանակում է, որ Դուք կգաք մեզ մոտ ու մենք ծնողներիս կտրամադրենք, որպեսզի համաձայնվեն:

Եթե ոչ, եթե նրանք մնան անողոք, անհողդողդ, երբ ամեն ինչ արած կլինենք, այնժամ մնում է Եգիպտոսը: Դա մեկն է իմ պայմաններից: Ահա երկրորդը՝ ես ուզում եմ և պահանջում, որ ամեն ինչ կատարվի շատ արագ: Քանի որ կարող եմ դիմանալ առավոտվա մառախուղին ու անձրևին և չհիվանդանալ, բայց մի շարք լարված, տանջալի, անորոշ օրեր՝ լեցուն տագնապալի տրամադրություններով, արդեն ես ապրեցի, այդքանն էլ, բարեկամս, իմ ուժերից վեր էր: Ես էլի պատճառ ունեմ այդպես շտապելու՝ չեմ ուզում, որ մեր մասին խոսեն ու ամեն մեկը իր կարծիքը հայտնի, մի բանի մասին, որ իրենց չի վերաբերում, ու ինձ այնպիսի վիճակների մեջ գցում, որոնցից կարելի է խուսափել: Եթե մեր գործը հաջողվի այնպես, ինչպես մենք ենք ուզում, այնժամ նրանք ինչքան ուզում են թող բացեն իրենց բերաններն ու չռեն աչքերը: Իմ միակ պաշտպանն ու նեցուկը այնժամ կլինեք Դուք, Ֆերդինանդ:

Ես գիտեմ, որ մեր դեմ ծառացած արգելքները շատ են, բայց և մեր նպատակն է մեծ, իսկ Դուք՝ հսկա ոգի, Աստծո օգնությամբ, կփոշիացնեք ժայռերը, որոնց ավազը անգամ ես իմ թույլ շնչով կցրեմ:

Ինձ բաժին է ընկնում դժվարագույնը՝ սառը ձեռքերով սպանել մի ջերմ, հավատարիմ սիրտ, որն ինձ էր նվիրված դեռ պատանության տարիներից, պիտի սառը էգոիզմով ջնջեմ գեղեցիկ անուրջները, որոնք կարող էին ազնիվագույն մարդու երջանիկ կյանքի հիմքը լինել:

Հավատացեք, որ դա ինձ համար շատ ծանր է, բայց հիմա ես ցանկանում եմ անել դա, հետևաբար անում եմ Ձեզ համար և թող ես նզովյալ լինեմ:

Հնարավորին չափ շուտ պատասխանիր, քանզի որքան շուտ իմանամ Ձեր ծրագրերը, Ձեր վերջնական որոշումը, ստանամ իմ տիրոջ հրամանն ու ցանկությունը, այնքան արագ կարող եմ սկսել իմ ծրագրերի իրագործումը:

Ե. Դ.

ԻԲՍԵՆԸ՝ ԷՄԻԼԻ ԲԱՐԴԱԽԻՆ

Հենրիխ Իբսենը (1828—1906) ամռանը գտնվելով Տիրոլում ծանոթացել է Էմիլիա Բարդախի հետ, որին հետո երբեք չի հանդիպել: Իբսենը իր «Սոլնեսում» պատկերել է հենց այդ ոսկեգանգուր աղջկան՝ Հիլդայի կերպարով:

ՄՅՈՒՆՀԵՆ, 7 հոկտեմբերի 1889 թ.

Ամբողջ հոգով շնորհակալ եմ, մեծարգո օրիորդ, Գոնսենսազից մեկնելուց մեկ օր առաջ ստացած սիրալիր ու հրաշալի նամակի համար:

Այնտեղ ամառվա թարմության մեջ ամեն ինչ այնքան թախծոտ էր, թե՞ ինձ էր թվում: Այլևս չկա արևը: Ամեն ինչ վերջացավ, ամեն ինչ չքացավ: Սակավաթիվ հյուրերը չէին կարող հատուցել ինձ դույզն-ինչ ուշացած ամռան համար: Ամեն օր գնում էի զբոսնելու: Այնտեղ ճանապարհաեզրին զրուցելու համար նստարան կա: Նստարանին ոչ ոք չկար ու ես անցա առանց կանգ առնելու: Մեծ դահլիճը նույնպես դատարկ ու անհույս էր: Հյուրերը, Պերեյրա ընտանիքը երեվացին միայն ճաշի ժամանակ: Հիշում եք աջ կողմի պատուհանի խորշը, հիշում եք պատշգամբ տանող դռան աջակողմյա պատուհանի լայն խորշը: Ինչ հրաշալի էր այնտեղ: Ծաղիկների շշմեցնող բուրմունքը դեռ զգացվում էր: Բայց ամենուր այնքան դատարկ է, այնքան լքված:

Եվ ահա մենք տանն ենք նորից, իսկ Դուք Վիեննայում: Դուք գրում եք, որ Ձեզ ավելի ազատ եք զգում հանգիստ ու երջանիկ, այնպես եմ ուրախանում Ձեզ համար: Սրանից զատ որևէ բան ասելն ավելորդ է:

Նոր ստեղծագործություն է ծնվում հոգուս մեջ: Ես այն կվերջացնեմ այս ձմեռ և կաշխատեմ կենդանի գույներով տալ ամառվա խանդավառ տրամադրությունս: Բայց նրա վերջը տխուր կլինի: Ես դա զգում եմ: Ժանրն է թելադրում: Արդեն ասել եմ Ձեզ, որ իմ նամակագրությունը հեռագ-

բային ոճի է: Այդպիսով, ընդունեք այս նամակը իբրև այդպիսին: Ամեն դեպքում Դուք այն կհասկանաք:

Հազար անգամ խոնարհումով՝

Ձեզ նվիրված բարեկամ՝ Հ. Ի.

ՄՅՈՒՆՀԵՆ, 15 հոկտեմբերի 1889 թ.

Ստացա Ձեր անուշիկ նամակը և հազար անգամ կարդացի:

Ինչպես միշտ նստած եմ գրասեղանիս մոտ: Ուզում եմ աշխատել, բայց չեմ կարողանում: Երևակայությունս մխիթարող է, բայց ինչ որ տեղ է սավառնում: Այնտեղ, ուր չպիտի լիներ աշխատանքային ժամերին: Ամառային տպավորություններից չեմ կարողանում ազատվել: Չեմ էլ ուզում: Ապրվածը նորից ու նորից եմ ապրում, անընդհատ: Այդ ամենը իրագործել ստեղծագործության մեջ դեռ հնարավոր չէ: Այժմ:

Իսկ կհաջողվի՞ ապագայում, չգիտեմ: Իսկ ցանկանո՞ւմ եմ, արդյոք:

Այժմ՝ ոչ:

Զգում եմ, գիտեմ:

Եվ այնուամենայնիվ, պիտի լինեի: Դա պիտի լինի, պիտի որոշվի: Բայց կլինի՞, հաշվի առնելով բոլոր հանգամանքները: Չեմ կարծում:

Կարո՞ղ է պատահել:

Այո, թանկագին օրիորդ, ներեցեք, Դուք այնպես հիանալիորեն գրել էիք Ձեր վերջին նամակում, չէ, չէ՝ անցյալ նամակում, Աստված մի արասցե: Հիշում եք, սիրելի օրիորդ, մի անգամ խոսում էինք «հիմարության» և «խենթության» մասին: Ավելի ճիշտ ես ինչ-ինչ բաներ էի ասում այդ մասին: Այն ժամանակ Դուք դաստիարակի դեր ստանձնեցիք ու Ձեր անուշ, ցածր, երգեցիկ, սրտահույզ ձայնով ասացիք, որ հիմարության ու խենթության մեջ մեծ տարբերություններ կան:

Իհարկե, դրա մասին ես առաջ էլ էի մտածում: Բայց

այդ պահը մնաց հիշողությանս մեջ: Քանզի անընդհատ պիտի տանջվեմ այդ առեղծվածից, հիմարություն, թե խենթություն էր մեր հանդիպումը: Կամ էլ դա այնքան էր հիմարություն, որքան որ խենթություն էր: Կամ էլ ոչ այս ոչ այն: Կարծում եմ, որ վերջինը ամենաճիշտն է: Պարզապես դա բնության պահանջ է: Ժամանակին և ճակատագրով, կարծում եմ, Դուք լավ եք հասկանում: Մտածեք այդ մասին, եթե կարիքը զգաք: Բայց ես չեմ հավատում:

Համաձայնեք:

Հազար անգամ բարի գիշեր,
Հավերժ Ձեզ նվիրված՝
Հ. Ի.

6 դեկտեմբերի 1889 թ.

Երկու հրաշք, հրաշք նամակ եմ ստացել Ձեզանից ու դեռ չեմ պատասխանել: Ինչ եք մտածում իմ մասին: Մինչև հիմա չեմ կարողանում հանդարտվել, որ մի կարգին, մանրամասն նամակ գրեմ: Այսօր երեկոյան գնում եմ թատրոն, որ ներկա լինեմ «Ժողովրդի թշնամի» ներկայացմանը: Իսկական տանջանք է այդ մասին մտածելը: Այդպես, առայժմ պիտի սպասեմ Ձեր լուսանկարին: Բայց ավելի լավ է սպասել, քան ստանալ ինձ չբավարարող դիմանկար: Բացի այդ Ձեր սիրելի, լուսավոր կերպարը այնպես կենդանի է իմ հիշողություններում: Ես հավատում եմ, որ այնտեղ կգտնեք առեղծվածային թագուհուն: Իսկ ինքը՝ առեղծվածը: Կարելի է այդ մասին երազել ու գեղեցկացնել, այդպես էլ կանեմ: Դա մի փոքր փոխհատուցում է անիրականանալի իրականությանը: Իմ երևակայության մեջ, ես նրան տեսնում եմ մարգարիտներով զարդարված: Իսկ Դուք մարգարիտ սիրում եք: Այդ հակվածության մեջ կա ինչ որ թաքուն, խորը բան: Համենայն դեպս, ի՞նչ: Այդ մասին ես հաճախ եմ մտածում: Երբեմն կարծում եմ, որ կապ եմ գտել: Հետո զգում եմ, որ՝ ոչ: Ձեր որոշ հարցերին կաշխատեմ պատասխանել հաջորդ անգամ: Ես էլ Ձեզ տալու շատ հարցեր ունեմ: Ներքուստ: Փնտրտուքի մեջ...

Ձեզ նվիրված՝ Հ. Ի.

ՔՐԻՍՏԻՆԱ, 13 հունվարի
1898 թ.

Սրտանց սիրելի Օրիորդ,

Ընդունեք անկեղծ երախտագիտություն Ձեր նամակի համար:

Գոսենսազյան ամառը ամենաերջանիկ, ամենագեղեցիկն էր իմ կյանքում: Հազիվ եմ համարձակվում մտածել այդ մասին: Բայց պիտի մտածեմ: Մշտապես:

Ձեզ նվիրված՝
ՀԵՆՐԻԽ ԻԲՍԵՆ

ՊՈՒՇԿԻՆԸ՝ ՆԱՏԱԼՅԱ ԳՈՆՉԱՐՈՎԱՅԻՆ

Ալեքսանդր Պուշկինը (1799—1837) ամուսնացել է մոսկովյան գեղեցկուհի Նատալյա Գոնչարովայի հետ 1831 թ., որի ծնողները սնանկացած ազնվականներ էին և դեմ էին նրանց ամուսնությանը: Տպագրվող նամակները Պուշկինը գրել է մինչամուսնական, սիրահարության տարիներին:

ՄՈՍԿՎԱ, մարտ 1830
(ձեռագիրը ֆրանսերեն է)

Այսօր տարեդարձն է այն օրվա, երբ առաջին անգամ տեսա Ձեզ այդ օրը... իմ կյանքում...

Որքան շատ եմ մտորում, ավելի եմ համոզվում, որ իմ գոյությունն անհնար է առանց Ձեզ՝ ես ստեղծված եմ Ձեզ սիրելու և ամենուր միայն Ձեզ հետ լինելու համար: Մնացածը միայն անհեթեթություն ու խենթություն է: Երբ հեռու եմ լինում Ձեզնից, ինձ հետամտում է կորուստը երջանկության, որով դեռ չէի զորել հագենալ: Վաղ թե ուշ ես ստիպված կլինեմ ամեն ինչ թողնել ու ընկնել Ձեր ոտքերը: Այն միտքը, որ երբևէ մի պատիկ հող կունենամ...-ում, անչափ ոգևորում է ինձ ու փարատում է թախիծս: Այնտեղ հնարավորություն կունենամ թափառել Ձեր տան շուրջը, հանդիպել, հետամուտ լինել Ձեզ...

ՄՈՍԿՎԱ, օգոստոսի վերջերը

Մեկնում եմ Նիժնի, առանց որևէ համոզվածության, թե ինչ՛ է լինելու: Եթե Ձեր մայրը որոշել է խափանել մեր հար-

սանիքը, և Դուք համաձայն եք հնազանդվել, այդ դեպքում ես պատրաստ եմ ստորագրել բոլոր՝ այն պատճառաբանությունների տակ, որոնք նա ներկայացնում է ինձ, նույնիսկ, եթե դրանք լինեն անչափ հանգամանալից, որչափ այն տեսարանը, որ նա սարքեց երեկ, վիրավորանքների տեղատարափ թափելով գլխիս: Գուցե ճիշտը նա է և ես եմ անիրավացի՝ կարծելով, որ ստեղծված եմ երջանիկ լինելու համար: Ամեն դեպքում Դուք միանգամայն ազատ եք, ինչ մնում է ինձ, ես ազնիվ խոսք եմ տալիս հավատարիմ մնալ Ձեզ և երբեք չամուսնանալ:

Ա. Պ.

ԲՈԼԴԻՆՈ, 11 նոյեմբերի

Մոսկվայի մուտքը փակ է, և ահա ես բանտարկված եմ Բոլդինոյում: Բարձրյալի օգնությամբ աղաչում եմ, թանկագին Նատալյա Նիկոլաևնա, գրեք ինձ, անգամ եթե չեք ուզում գրել: Ասացեք, որտեղ եք գտնվում, մեկնել եք Մոսկվայից: Որևէ այլ ճանապարհ չկա՝ Ձեզ բերող: Իսպառ կորցրել եմ արիությունս ու անելիքս չգիտեմ: Պարզ է, որ այս տարի (գրողի ծոցը գնար այս տարին) մեր հարսանիքը չի կայանա: Ճիշտ է, չէ՞ Դուք մեկնել եք Մոսկվայից: Կամովին ենթարկվել խոլերայի վտանգին, անմտություն է: Լավ գիտեմ, որ մշտապես չափազանցնում են խոլերայի ավերածությունների չափն ու մարդկային զոհերի քանակը, ժամանակին Կոստանդնուպոլսում մի ջահել կին ինձ ասում էր, որ խոլերայից մեռնում են հասարակ մարդիկ, բայց դա չի նշանակում, թե բարձր դասի մարդիկ պիտի արհամարհեն փրկաբեր նախազգուշական միջոցները, այլ ոչ թե պերճաշուք տեսքն ու պահվածքը: Այդպես ուրեմն, Դուք գտնվում եք գյուղում ու պաշտպանված եք խոլերայից, այդպես չէ՞: Ուղարկեք ինձ Ձեր հասցեն ու տեղեկանք առողջության մասին: Մենք դեռ կարանտինի մեջ չենք, վարակը դեռ չի թափանցել այստեղ: Բոլդինոն կղզու տեսք ունի ու շրջապատված է ժայռերով: Ոչ հարևան կա, ոչ էլ գրքեր: Եղանակը անտանելի է: Ժամանակս վատնում եմ թղթեր

սևացնելով ու չարանում եմ: Չեմ հասկանում, ինչ է կատարվում աշխարհում և ինչպես է իմ բարեկամ Պոլինյակը: Գրեք ինձ, քանի որ բոլորովին չեմ կարդում ամսագրերը: Ես դառնում եմ իսկական ապուշ, ինչպես ասում են՝ սրբանալու աստիճան: Ինչպես է պապը իր պղնձաձույլ տատիկով: Երկուսն էլ ողջ ու առողջ են, չէ: Հիմա իմ առջև փռված է քարտեզը, նայում եմ ու մտածում, թե ինչպես շրջանցեմ ու հասնեմ Ձեզ՝ Կյախտայով, թե Արխանգելսկով: Այնպես, որ բարեկամի համար յոթ վերստ շրջանցելը դեռ ոչինչ է, իսկ ուղիղ Մոսկվա գնալ նշանակում է յոթ վերստ կիսել, խմել և այն էլ ինչպիսին (մոսկովյան): Ահա, իսկապես որ վատ կատակ ստացվեց...

... Նետեք ինձ Ձեր մոր ոտքերը, սրտանց ողջունում եմ բոլորին: Ցտեսություն, իմ չքնաղ հրեշտակ: Համբուրում եմ Ձեր թևերի ծայրերը,— ինչպես ասում էր Վոլտերը,— ով անարժան է Ձեզ:

ՊՈՒՇԿԻՆԸ՝ ԱՆԾԱՆՈԹ ԿՆՈՋԸ

ՄԻԽԱՅԼՈՎՍԿՈՅԵ, 8 դեկտեմբերի

Ոչ մի կերպ չէի սպասում, չքնաղ էակ, որ կհիշեք ինձ, ամբողջ հոգով երախտապարտ եմ Ձեզ: Բայրընը իմ աչքում մի նոր հմայք ստացավ՝ նրա բոլոր հերոսները երևակայության մեջ ամփոփվում են անմոռանալի դիմագծերով: Ձեզ կճանաչեն իբրև Գյուլնարայի և Լեյլայի. Բայրընի իդեալն անգամ չէր կարող լինել այդքան աստվածայնորեն գեղեցիկ. Այդպես, Ձեզ ու միայն Ձեզ է նախախնամությունը ուղարկում ինձ մոտ, որ փարատի իմ միանձնությունը: Դուք իմ պահապան հրեշտակն եք, իսկ՝ ես ոչ այլ ին չեմ, քան անշնորհակալ մեկը, որ դեռ փորձում է նեղսրտել: Դուք մեկնում եք Պետերբուրգ, իսկ ես նեղվում եմ իմ արտաքսումից ավելի քան երբևէ: Գուցե այս նոր վիճակը ինձ հնարավորություն տա լինել Ձեզ ավելի մոտ: Չեմ ուզում

հույսեր փայփայել: Հիավատանք հույսին, նա մեզ այնպես է վերաբերվում, ինչպես իր գեղեցիկ— պառավ ամուսնուն: Իսկ ինչով է զբաղված Ձեր ամուսինը, իմ հեզ հանճար: Իմացեք, որ նրա մեջ ես տեսնում եմ Բայրընի թշնամիներին, ներառյալ նրա կնոջը:

Հ. Գ.— Նորից եմ վերցնում գրիչս, որ ասեմ՝ ես Ձեր ոտքերի տակ եմ, սիրում եմ Ձեզ ամբողջությամբ, որ նախօրեին սարսափելի բաներ ասացի, որ համբուրում եմ Ձեր չքնաղ ձեռքերը՝ հազարապատիկ համբույրներով, սպասելով ավելին, որ այլևս ուժ չունեմ, որ Դուք աստվածային եք և այլն:

ՊՈՒՇԿԻՆԸ՝ Ա. Պ. ԿԵՐՆԻՆ

Դուք ծաղրում եք իմ անհամբերությունը, Ձեզ առանձնակի հաճույք է պատճառում ինձ շշմեցնելը, ուրեմն ինձ կհաջողվի տեսնել Ձեզ միայն վաղը. լավ թող այդպես լինի: Բայց ես չեմ կարող զբաղվել միայն Ձեզնով: Թեպետ Ձեզ տեսնելն ու լսելը մեծ բավականություն է ինձ համար, բայց նախընտրում եմ գրել ոչ թե ասել: Ձեր մեջ հեգնանք ու կծու ծաղր կա, որ անհուսություն է ծնում: Ձեր ներկայությամբ համրանում եմ ու մի տեսակ նվաղում: Երևվի Դուք դև եք՝ կասկածի ու ժխտումի ոգին, ինչպես ասված է Սուրբ Գրքում: Վերջերս խիստ արտահայտվեցիք անցյալի մասին, ասացիք, որ ես փորձում էի չհավատալ յոթ տարիների ընթացքում... Ինչու: Երջանկության զգացողությունը այնքան լիարյուն էր, որ ես նրան չճանաչեցի, երբ նա իմ առջև էր: Մի ասեք ինձ այլևս նրա մասին: Ի սեր Աստծո: . . . . . .

. . . . . .

Թանկագին Էլեոնորա, Ձեզ հայտնի է, որ ես Ձեր հմայքի ուժի ազդեցության տակ եմ և պարտական եմ Ձեզ՝ սիրո հրայրքների համար: Ինձ բաժին ընկավ միայն մտերմական կապը, ճիշտ է չափազանց քնքուշ և մի քիչ էլ տակավին

անհաղթահարելի վախ: Եթե երբևէ այս տողերը կարդաք, գիտեմ թե ինչ կմտածեք. «Նա վիրավորվում է անցյալից, ահա թե ինչ, բայց և արժանի է, որ ես նրան նորից...» ճիշտ է, չէ:

Ինչևէ, եթե ես նորից գրիչ վերցնեմ, որ ինչ որ հարց տամ, բայց չգիտեմ թե ինչի... Այո... երևի բարեկամության մասին: Այդ խնդրանքը շատ գոեհիկ պիտի լիներ, ինչպես մուրացկանն է մի կտոր հաց խնդրում: Բանն այն է, որ ինձ պետք է Ձեր մտերմությունը... Դուք, ինչպես միշտ գեղեցիկ եք, այն օրվա հանգույն, Ձեր շուրթերը դիպան ճակատիս: Մինչև հիմա զգում եմ նրանց խոնավությունը և ինձանից անկախ դառնում եմ ուղղահավատ, բայց Դուք կլինեք... Այդ հրաշքը մոտենում հանց հեղեղ...

ԻՇԽԱՆ ՎՅԱԶԵՄՍԿԻՆ՝ ԿՆՈՋԸ՝ ԿՈՄՍՈՒՀԻ ԳԱԳԱՐԻՆԱՑԻՆ

Իշխան Պյոտր Վյազեմսկին՝ (1792—1878) պուշկինյան ժամանակաշրջանի բանաստեղծն ու քննադատը մասնակցել է Բորոդինոյի ճակատամարտին: Այս նամակները նա գրել է 1812 թ.:

...Հենց նոր ստացա նամակդ ու երկու կախազարդ սրբբապատկեր, որոնք, ինչպես խնդրել էիր կրեցի անմիջապես: Սիրելիս ես դրանք միշտ կկրեմ, կարող ես վստահ լինել: Կրկնում եմ խնդրանքս, որ հաճախ գրես, իսկ ես մեկնում եմ Մոսկվայից, այնպես որ ամեն փոստով նամակի մի սպասիր:

Իմ լռությունը թող չանհանգստացնի քեզ, բանակը այնքան մոտ է, որ թե մի բան պատահի անմիջապես կուղարկեն Մոսկվա, ինչպես շատերին: Հետո էլ՝ վատ լուրը շուտ է տեղ հասնում: Եվ այդպես, սիրելի իմ Վերա, աղաչում եմ, որքան հնարավոր է վստահիր բանականությանդ և մի տրվիր երևակայության սարսափին: Աղոթիր Աստծոն և՛

ինձ համար, և՛ քեզ, ամեն ինչ լավ կլինի: Գրկում եմ քեզ քնքշորեն, իմ համբույրով քեզ եմ ուղարկում հոգիս:

Կատերինա Անդրեևային և երեխաներին իմ ողջույնները:

24 օգոստոսի 1918 թ.

Սիրելիս այժմ ես մեկնում եմ, Դու, Աստված և պատիվս կլինեք իմ ուղեկիցները: Զինվորի պարտականությունները երբեք չեն խլացնի ամուսնու և մեր երեխայի հոր պարտականությունները: Ես երբեք չեմ նահանջի և չեմ էլ հարձակվի: Դու ինձ երջանկացնելու համար ընտրված ես երկնից և արդյո՞ք կցանկանամ քեզ դժբախտացնել: Ես կհամաձայնեցնեմ իմ պարտքը հայրենիքի ու քո առաջ: Մենք կտեսնվենք, ես համոզված եմ: Աղոթիր ինձ համար Աստծոն: Նա կլսի քո աղոթքը, իսկ ես նրան եմ ապավինում: Ներիր, իմ թանկագին Վերա: Ներիր, իմ սիրելի բարեկամ: Ամեն ինչ քեզ է հիշեցնում: Գրում եմ մեր ննջարանում, որտեղ բազում անգամ քեզ սեղմել եմ կրծքիս, իսկ այժմ այն լքում եմ առանց քեզ: Ո՛չ: Մենք այլևս երբեք չենք բաժանվի: Մենք ստեղծված ենք մեկ մեկու համար, մենք պիտի ապրեք ու մեռնենք միասին: Ներիր, իմ բարեկամ: Ինձ համար նույնքան դժվար է բաժանվել քեզնից այժմ, կարծես թե հիմա էլ այստեղ ես: Այստեղ՝ տանը կարծես թե դեռ քեզ հետ եմ, դու ապրել ես այստեղ, բայց ոչ դու ամենուր ինձ հետ ես: Դու իմ հոգում ես, դու իմ կյանքում ես: Առանց քեզ ես չէի կարող ապրել: Ներիր: Եվ թող Աստված լինի մեզ հետ:

30 օգոստոսի, ՄՈՍԿՎԱ

Ես Մոսկվայում եմ, սիրելի Վերա: Սարսափելի իրավիճակի մեջ էի, բայց փառք Աստծո, կենդանի եմ, վիրավորված չեմ, բայցևայնպես վատառողջ եմ մի փոքր, այդ պատճառով էլ վերադարձել եմ կազդուրվելու: Հազար անգամ շնորհակալ եմ նամակներիդ համար, որոնք մխիթարում էին դժբախտ պահերին ու որբացած սիրտս լցնում: Քեզա-

նից բացի ինձ ոչինչ չէր հետաքրքրում, իսկ զինծառայությունը հոգիս չի հուզում: Հոգիս մեռած է, դու, քո ներկայությունը՝ ահա նրա կյանքը, մնացածը օտար է հոգուս համար: Ֆյոդորը մի թեթև թևն է վիրավորել և գնում է Մոսկվա ոտքից ծանր վիրավորված իշխան Բագրատիոնի հետ: Նա խնդրեց, որ քեզ գրկեմ: Փառահեղ գործ արեցինք, մի լավ տվինք ֆրանսացիներին, բայց մեր բանակը ստիպված նահանջեց: Խնդրում եմ հասկանաս: Ի՞նչ կարող ես անել, կա՛ ճակատագիրը, որն առաջնորդում է, մեզ էլ մնում է պարել նրա երգի տակ: Ներիր իմ հոգու սիրեցյալ: Առողջություն, հույսդ դիր Աստծո վրա: Կատարինա Անդրևնային, երեխաներին գրկիր ու քեզ իմ փոխարեն համբուրիր հայելում: Ագրեպինային էլ իմ ջերմ բարևները: Ես նրան միշտ էլ սիրել եմ, իսկ քեզ գուրգուրելու համար, առավել: Հաղորդիր նրան այդ բոլորը: Խեղճ Պյոտր Վալունը սպանված է: Մեր ծանոթներից ահագին մարդ վիրավորվել ու սպանվել է: Դու ինձ պահպանեցիր: Ներիր, իմ պահապան-հրեշտակ:

ՕԳԱՐՅՈՎԸ՝ ԿՆՈՋԸ՝ Մ. ՌՈՍԼԱՎԼԵՎԱՅԻՆ

Նիկոլայ Օգարյովը (1813—1877) Պենզայում աքսորի տարիներին սիրահարվեց Մ. Լ. Ռոսլավլևվային, որը աղքատ ու որբ աղջիկ էր: 1836 թ. նրանք ամուսնացան: Բայց հետագայում բնավորությունների անհամատեղելիության պատճառով բաժանվեցին և քանի որ Օգարյովը տիպիկ «քառասունականներից» էր, պահպանեց կնոջ նկատմամբ բարեկամական ու մարդասիրական զգացմունքները, որոնք արտացոլվեցին նրա բանաստեղծությունում՝ «... Երախտապարտ եմ այն պահի համար, երբ հավատում էի ու սիրում...»

Գիտես, քո երկտողը ինձ ավելի հուզեց, ու մեծ հաճույք պատճառեց, քան տխրեցրեց պոռթկումդ: Բայց քո պոռթկումը բնական էր, և որպեսզի վերջ տրվի տարակարծու-

թյանը, ուզում եմ պատմել ամեն ինչ և պետք չէ այլևս անդրադառնալ դրան: Տասնհինգ տարեկանում ես երազում էի մաքուր ու երկնային սիրո մասին, ինչպիսին զգում եմ այժմ, տասնվեցում վառ երևակայությունս ստիպեց, որ սիրահարվեմ, բայց ես հուսախաբություն ապրեցի, որը քայքայեց սիրո նկատմամբ ունեցած հավատս: Տասնյոթ տարեկանում ես ուզեցի մերձենալ կնոջը և մերձեցա առանց սիրո. երկուսիս կողմից էլ՝ խայտառակ առուտուր անփորձ տղեկի ու հասարակաց կնոջ միջև: Դա անբարոյականության իմ առաջին քայլն էր: Մարդը ըստ բնության այնպես է ստեղծված, որ եթե մի անգամ լինում է կնոջ հետ, դրա կարիքը զգում է անընդհատ: Ասում են, որ դա անհրաժեշտություն է, բայց ես չեմ հավատում, համոզված եմ, որ մաքուր մարդը պիտի խուսափի պատահական կապերից, օտար սիրուց, եթե անգամ դա վնասի նրա առողջությանը: Բայց ես ագահորեն տրվեցի այդ խայտառակ կյանքին, երբեմն տանջվում էի, բայց ավելի հաճախ բթացնում էի խիղճս:

Մի՞թե դու կարող ես սեր համարել այն զգացողությունները, որ ունեցել եմ այն ժամանակ: Ո՛չ: Դա միայն հոգուս ճիգերն էին, որ ինչ-ինչ կերպ արդարացնեմ վարքիս նողկալիությունը: Ինձ չէր կարող բավարարել որևէ կին, նաև որը չուներ զարգացում, սեր՝ գեղեցիկի հանդեպ, իսկական սիրո բարձրունքներին հասնելու տենչ, այլ իջնում է անասնականի աստիճանի, հաճախ էլ միայն պատրանք ստեղծում, ինչ որ լավ բանի սպասում: Հեռանում էի, չկարողանալով զսպել արգահատանքս, հոշոտելով հոգիս հնարածին սիրով ու անտեղի խանդով: Այդ կանայք ինձ համար չէին:

Միակ կինը, որին կարող եմ սիրել դու ես, երդվում եմ, որ այդ սերը կլինի հավերժ, երդվում եմ ու հաշիվ տալիս ինձ, թե դա ինչ է նշանակում: Մարիա՜, մի՞թե դու կարծում ես, որ քեզանից առաջ եղել է մեկ ուրիշը: Ո՛չ, ես այն օրից, ինչ սիրում եմ քեզ ապրում եմ բոլորովին այլ կյանքով, ես վերածնվել եմ, վերցրու ինձ իբրև այդպիսին, առաջվանը գազանատիպ մեկն էր: Ոչ թե դու պիտի իմ ոտքերը ընկնես, այլ ես, դու հրեշտակի պես մաքուր ես, քո

պոռթկումը արտահայտում էր արհամարհանք, որը տածում են հրեշտակները դեպի մարդկային արատները: Ներիր ինձ, մի լքիր ինձ, սիրիր ինձ, առանց քեզ ինձ համար ամեն ինչ վերջացած է: Երդվում եմ, երբեք չեմ խաբի, քո հավատամքը... Եթե կարդաս գիրս, կներես իմ անցյալը և կգաս, կընկնես գիրկս, մաքրագործիր ինձ ու անցյալի մասին ոչ մի խոսք:

Քո կարծիքով ի՞նչ անեի այդ լրբիկին, ուղղակի դեն շպրտեի, դա շատ անմարդկային կլիներ: Մի՞թե չես հավատում քո Կոլյային: Նրա ներկայությունը ինձ համար էլ անհաճո է, բայց նա շատ ուրախ մեկն է, նրան դրամ ուղարկեցի և հենց դա էլ պետք էր: Ես նրան գցեցի խայտառակության գիրկը, գոնե ունեցիր կարեկցանքի զգացում դեպի այն չարը, որ գործեցի ես, ահա խնդրանքս:

1836 թ.

Ես երկրային երանություն ապրեցի, որը չեմ փոխի դրախտային երանության հետ, երանություն, որը մոռացության է տալիս իմ բոլոր մերձավորների տառապանքները, երանություն, որի համար պատրաստ եմ տալ իմ ապագան, Մարիա՝ դա մեր սերն է: Օ՜, սեր իմ, թող կորչեն բաժանման բառերը, որոնք խախտում են մեր միությունը, դեն նետենք ամեն չարը, որ չկորչի սերը, որ մնա մաքուր ու պարզ ինչպես առաջ: Փայփայենք, գուրգուրենք այդ ծաղիկը, այն ծաղիկը որի հայրենիքը երկինքն է: Մարիա, աչքերս լցվում են արցունքներով, երբ մտածում եմ, որ մենք խռոված ենք: Աստված իմ, մենք այդքան սիրում ենք միմյանց: Ծուտ շտապիր ինձ մոտ, չորացրու արցունքներս, ընկիր քո սիրեցյալի գիրկը, և թող մեր սերը համաշխարհային երանության հիմքը լինի:

Մարիա՜, ես թույլ էակ եմ, շատ բան պետք չի ինձ փչշրելու համար: Բայց իմ մեջ դեռ կա լավը, արժանի չեմ, որ նետվեմ ոչնչության գիրկը: Իմ սերը խորն է, Մարիա, ահա թե ինչու ինձ թվում է, որ ինչ որ բան արժեմ, միևնույն ժամանակ, դժբախտաբար, ինձ հիմարացնում է, հենց

այդ խորությունը, ամեն ինչում տեսնում եմ, որ նրան սպառնում են, այդ խենթության պահերին սիրտս արնաքամ է լինում: Եղիր համբերող ու կարեկից, անտեսիր խենթությունը, Մարիա: Եթե այսօր ես վիճում էի, դա նշանակում է, որ կարծիքս համընկնում է բարության իմ տեսակետին: Եթե սխալվել եմ, ներիր ինձ, սիրիր ինձ այնպես, ինչպես այն օրերին, երբ տվեցիր ինձ այս մատանին ու խաչը, որոնք դեռ կրում եմ: Թող որ երջանիկ լինեմ, թող որ երջանկացնեմ քեզ: Ճիշտ է ես եսասերն եմ, բայց ամուր եմ կառչել մեր սիրուն, քանզի այն իմ հոգու խորունկ կյանքն է: Առանց նրա ամեն ինչ դատարկություն է: Լավ քննարկիր, ինչ պիտի անես ու մտածես, որ իսկական սիրո ճամփից չշեղվես, իսկ ես կհարմարվեմ քեզ: Քո սերը ինձ համար շատ կարևոր է: Աստված իմ, բարության Աստված, ներիր ինձ: Ահա թե ինչպես եմ սիրում քեզ, Մարիա:

1836 թ.

23 ապրիլի, առավոտյան ժամը 4-ին
(հարսանիքից երեք օր առաջ)

Երեկ ես այնքան տխուր էի, այնքան: Ինչու: Չգիտեմ: Իհարկե դա խանդ չէր: Երբ շատ են հավատում, խանդն ավելորդ է: Բայց երկու միտք, երկու զգացմունք հուզում էին հոգիս: Ամբողջ օրվա ընթացքում քեզնից այնքան հեռացված էի զգում... Հետո էլ այդ մարդիկ, Մարիա, որոնք քեզ բարեկամներ էին կոչում, այնքան անհարիր են քեզ: Այդ տիկինը, որի ճակատին հիմարության կնիքն էր դաջված, այդ պարոնը կեղծ ու մանրիկ աչքերով, հաստ փորով, որը մարմնավորում էր միայն ֆիզիկական ախորժակների տիրոջը, սարսափելի զայրացնում էին ինձ: Աստված իմ, մտածում էի, միթե այս նյութականության մարմնացումը այսպես անպատժելիորեն մոտ է այն մաքուր ու սուրբ էակին, որին ես կոչում եմ՝ իմ Մարիա: Բարեկամս, այդ պարոնի խոսքերը վախեցնում են ինձ, դա էգոիզմ է, որը թերահավատություն է ծնում: Ասում եմ, որ այդ մարդը ինձ վա-

խեցնում է, որովհետև խելացի է: Մարդատյացության ալիքը պատեց ինձ ու անտիրապետելի վիճակում հայտնվեցի: Ես ստիպված էի հաղթահարել ինձ, որ կարողանամ մասնակցել զրույցին: Հենց դարձա տուն, մարդատյացությունը գլուխ բարձրացրեց, հիշողությանս մեջ արթնացավ իմ արատավոր անցյալի պատմությունը: Վերջապես գրգռված երևակայությունս կենտրոնացավ հենց արատին և միտքս սկսեց լողալ անառակության ճահճում: Այդ պահին ես արժանի չէի քեզ, Մարիա: Ներիր ինձ, պատճառը, երևի իմ մարմնական խանգարումն էր: Ծուտով հոգեկան թռիչքը փոխարինեց և հիմա ես նորից քոնն եմ մտքի վեհությամբ, հոգու մաքրությամբ ու անմեղսականությամբ, քո սիրո նկատմամբ իմ սուրբ կրքով: Այդ պատճառով աչքս ոչ մի վայրկյան չեմ փակել:

Վերջապես հանդարտավետություն տիրեց հոգումս: Հրաշք առավոտ է: Հազիվ երևաց արևը ու հարթավայրի տեսարանը անկրկնելի էր: Հիմա կարող եմ մտորել քո մասին ու անուրջներս պարուրել քեզնով:

Երեք օրից դու կդառնաս իմ կինը: Մարիա, երեք օրից մենք կպատկանենք մեկ մեկու անմնացորդ... մեր ճակատագիրը նույնն է լինելու: Գնանք, Մարիա, իրականացնելու այն: Զգում եմ, որ ինչ որ աստվածային բան է խոսում իմ մեջ, գնանք այնտեղ, ուր կանչում է այդ ձայնը: Եթե հոգիս այնքան ուժեղ է, որ քեզ սիրեմ, ուրեմն երևի կբավականացնի նաև, որ գնամ Քրիստոսի հետքերով, որ ազատագրեմ մարդկությանը: Քանզի քեզ սիրելը նշանակում է սիրել ամենայն բարին, Աստծոն, տիեզերքը, քանզի հոգիդ բաց է բարության առաջ, քանզի քո հոգին լրիվ սեր է: Այո, իմ սերը ինձ հպարտորեն վեհացնում է: Առանց հապաղելու շտապում եմ գալ ու գրկել քեզ: Մարիա, քո գրկում ես զգում եմ սիրո ու գաղափարների ողջ աշխարհում, ամբողջ ապագան, լի է վեհությամբ, քո գրկում ես զգում եմ ինձ վեհանձն, ինչպես մեր սերը: Ոչ ոք ի վիճակի չէ հասկանալ մեր սերը: . . . . . Նրանք չեն կարող հավատալ, որովհետև չգիտեն, թե ինչ է սերը: Թող նրանք դառնան նախանձի զոհեր:

Մեր սերը, Մարիա, իր մեջ կրում է մարդկային ազա-

տագրության հատիկը: Հպարտացիր: Մեր սերը մեր բարոյականության պահապանն է կյանքում: Մեր սերը, Մարիա, մեր երջանկության գրավականն է: Մեր սերը, Մարիա, անձնվիրություն է, ճշմարտություն, հավատա՝ մեր հոգիներում անթեղված: Մեր սերը, Մարիա, պատմություն է, որ կպատմեն սերունդները հաջորդաբար, սրբության պես կպահպանեն հիշողությունը մեր սիրո մասին:

Ես դա գուշակում եմ, Մարիա, քանզի ես գուշակ եմ. Աստված, որ ապրում է իմ մեջ, նախանշում է իմ բախտն ու ցնծում իմ սիրո համար: Ներիր: Եկ իմ գիրկը:

1836 թ.

18 հուլիսի, 1840 թ.

Ուզում էի գրել քեզ երեկ երեկոյան, բայց տրամադրություն չունեի, պառկեցի բազմոցին ու ժամը 10-ին քնեցի: Ուշադիր վերընթերցում էի նամակդ: Համենայն դեպս, դու մնում ես սիրելի, խելացի, բարի իմ փոքրիկ Մարիան: Բայց շատ ու շատ բաներ քո պատկերացումներում հիմնվում են հասարակության պայմանական, ֆանտաստիկ կյանքի վրա, այլ ոչ թե ներքին, խորը իրական մարդկային էության: Հաճախ դու անհետևողական ես քո համոզմունքներում և սիրտդ ու միտքդ վիճում են մի կողմից, իսկ սովորություններդ ու ճաշակդ՝ մյուս: Կրկնում եմ՝ երբեմն դա ինձ վիրավորում ու բարկացնում է, բայց ինձ ավելի ցավ է պատճառում, խղճում եմ քեզ, որովհետև դու կամովին հրաժարվում ես մարդուն բաժին ընկած ցավից:

Մաշա, այդ ամենը տանջում է ինձ, և ոչ ինձ համար ես դու զրկում քեզ լավագույն հաճույքներից: Հավատա, այն հակադրությունները, որ կան քո մեջ (եթե ազնվորեն դիտես) կարևորագույն... Բայցևայնպես, լավագույն մարդկային կողմերը, որ կան և՛ քո և՛ իմ մեջ այնքան ուժեղ են, որ թույլ չեն տա մեզ մնալ կնոջ ու ամուսնու գոհհիկ, ստորացնող դերում, այլ պիտի մնանք ընկերոջ, բարեկամի ու սիրեկանի դերում: Մտերմիկ հարաբերության մեջ

պետք չի միմյանցից նեղսրտել, այլ ազդել իրար վրա՝ ջերմությամբ ու սիրով:

. . . . . .

. . . . Ամուսնության սրբությանը չեմ հավատում, իսկ սիրո սրբությանը՝ հավատում եմ: Մեզ մոտ ամուսնությունը դարձել է խրտվիլակ, որ փախցնի մարդկանց, միայն կապանքներն ենք տեսնում: Իսկ իրական սերը շղթաներ չի հագնում, այլ ամբողջ հոգու էությամբ ընդամենը համակրիր... Հենց դրանից է ծնվում մտերմությունը այն մարդկանց նկատմամբ, որոնք մտերիմ են սիրելի էակին: Եվ ես երախտապարտ եմ Գալախովին այն հրաշալի վայրկյանների համար, որ ունեցել ես նրա հետ: Ամուսնական կապը խանգարում է ապրել, իսկ սերը արթնացնում է կյանքը, այն դարձնում է ներդաշնակ, լիարյուն, անսահման, լայնահուն: Եթե դու կարծում ես, որ իմ ու քո մեջ բացի ամուսնական կապից ոչինչ չի մնացել՝ վոնդիր ինձ, ուղղակի վոնդիր, ամուսինը լոկ որպես այդպիսին՝ անտանելի է: Բայց ես, Մաշա, ես լի եմ հույսով, ես խորապես համոզված եմ, որ սիրում եմ քեզ, որ հակադրությունները մեր միջև հնարածին են, որ դրանք պիտի փշրվեն մեր հոգիների վեհությամբ: Այդ հորդյան հանգույցը ես ի վիճակի չեմ քանդել, դրա համար չունեմ հանճարեղ կամք: Բայց ես կշարժվեմ քո ցանկությամբ՝ կկանչես՝ կգամ, կընկնես գիրկս՝ կընդունեմ, կքշես՝ կքաշվեմ մի կողմ, կվերադարձնես՝ կգամ: Ինչ կմտածեն մարդիկ, ճիշտն ասած, ինձ չի հուզում: Չէի ուզենա, որ նրանք քեզ այպանեն, ինձ՝ որքան ուզեն, ես լրիվ անտարբեր եմ:

. . . . . .

. . . Մաշա, Մաշա, եթե կարողանայիր մի փոքր թափանցել հոգուս խորքերը, կտեսնեիր, որ այդպիսի ինքնասիրությունը ինձ հատուկ չէ: Ո՛չ: Ես սիրում եմ քեզ որպես ընկերոջս, ընկերուհուս, երեխայիս, որին կուզենայի տալ աշխարհիս ամենահնարավոր երանությունը: ... Մաշա, եթե ես հրեշտակ լինեի, քեզ կդնեի թևերիս ու երկինք կտանեի: Բայց և իմ մեջ շատ կեղտ, ցածր ու խաբուսիկ շերտեր կան, և այնքան էլ լուսավորված չէ հոգիս, որ կարողանամ հաղթահարել այդ բոլորը հենվելով գոնե կամքիս վրա: Գուցե

դա է պատճառը, որ ինձ չես հավատում: Ես քո վրա ազդեցություն չունեմ:

«Այդ ամենը ծիծաղելի կլիներ,
Եթե այդքան տխուր չլիներ»:

Հաճախ եմ մտածում՝ ինչու եմ ապրում այս աշխարհում: Կնոջը երջանկացնել չկարողացա: Դրա պատճառով անձնապես նեղվում եմ ու տանջվում: Եթե հեռանամ նրանից ով հոգեհարազատ է ինձ, այնժամ ի՞նչ պիտի անեմ այս աշխարհում: Իսկ սիրելը՝ ցավ է: Ի՞նչ է իմ պոետական ու սոցիալական կոչումը՝ ոչինչ: Քիչ եմ դրան հավատում, թեպետ ուժեղ է ձգտումը: Բայցևայնպես, իմ մեջ կա ջերմություն, հոգու կրակ, ուժեղ ձգտումներ, հաճախ ապրում եմ այնքան լեցուն կյանքով, որ մի վայրկյանում բյուր կյանքեր եմ ապրում: Օ՜, ոչ ամեն ինչ չէ, որ կկորցնեմ: Քեզ հետ մենք կմնանք բարեկամներ, իսկ իմ հոգու ամենայն լավը կարտահայտվի բանաստեղծության մեջ:

Մաշա, Մաշա, սիրիր քո բանաստեղծին: Լսիր, անգամ եթե ես արժան չեմ սիրո, միևնույն է սիրիր ինձ: Լավ, հերիք է խաղալ այդ լարի վրա, շատ է ճնշում հոգիս: Արդյո՞ք մեղավոր եմ, որ այսօր այդքան տխուր եմ: Ամեն ինչ իմ թույլ բնավորությունից է, իսկապես որ հանդարտ հոգեկան ուժը պիտի հսկի նրան:

Ե՞րբ ես գալու: Ինձ համար ֆրակ ու սև ժիլետ կբերես, այսինքն լրիվ հանդիսավոր զգեստ: Այստեղ շաբաթ օրերը հանդիսավոր պարեր են լինում, անհագին մարդ է հավաքվում: Լաուրեն պարում է, արի, որ պարես նրա հետ, իսկ օրիորդ Լուբեն չի պարում, ես էլ նրա հետ կզրուցեմ: Այստեղ ուրախ ժամանց են անցկացնում, բայց տիկնայք ավելի շատ են, քան տղամարդիկ: Տիկնայք սիրում են պսակավորվել այդ երեկոներին: Զվարճալի է: Բեր ինձ համար գընդակներ, երեկ իմ ունեցածը կրակեցի, վերջացավ:

Շուտով կտեղափոխվեմ ներքևի հարկ ու կսպասեմ քեզ: Ցտեսություն, իմ անուշիկ ընկերուհի: Կարելի՞ է այդպես քեզ կոչել:

Դու ուշադիր եղիր Ելագինայի նկատմամբ, նա շատ զգացմունքային կին է, լուսավոր, կենդանի, մարդկային զգացմունքների տեր, նրա հետ կարելի է բարեկամանալ: Դատեր հետ՝ նույնպես:

Ցտեսություն: Համբուրիր Ստալինկային:

Համբուրում եմ քեզ ու գրկում: Եղիր իմ բարեկամը, սեղմիր ինձ կրծքիդ, տուր ինձ քո սիրտը, նա կջերմանա իմ սիրուց: Մնա՞ս բարով:

Բարևիր Ելագինային:

Մի փոքր նշում՝ սերը բացառություն չէ, այլ իսպառ նվիրվածություն...

ԲԵԼԻՆՍԿԻՆ՝ ԿՆՈՋԸ՝ Մ. ՕՐԼՈՎԱՅԻՆ

Վիսարիոն Բելինսկին (1810—1848) Մ. Օրլովայի հետ ամուսնացել է 1843 թ., որն աշխատում էր ինստիտուտում, որպես դաստիարակ: Ամուսնությանը նախորդած տարիներին նրանք նամակագրական կապի մեջ են եղել:

Երեկ պիտի որ ստացած լինեք իմ առաջին նամակը: Եվ գիտեմ, թե ինչպիսի անհամբերությամբ ու հուզումով էիք սպասում, գիտեմ ինչպիսի ուրախությամբ ու տագնապով լսեցիք, որ նամակ կա Ա. Վ.-ին և ինչպիսի դըժվարությամբ ձևացրեցիք, որ անտարբեր եք: Չէի կարող Պետերբուրգ հասնելուն պես Ձեզ անմիջապես գրել, քանի որ գիշերեցի կայարանում ու զայրացած էի: Առաջին նամակս գրված է հենց այնպես: Բոլոր օրերի ընթացքում քանի նա գնում էր դեպի Մ., մտածում էի, թե երբ կստանաք ու (ինչպես Դուք) տանջվում էի, միտքս հետամուտ էր ծույլ ժամանակին ու նրանից առաջ էր թռչում, ուրախությամբ էի դիմավորում երեկոն ու մտմտում՝ «մի օր էլ անցավ»:

Իսկ երեկ կարծես կրակված լինեի, հաշվելով թե երբ կըստանաք նամակս: Չեմ կարող տեսնել Ձեզ, խոսել Ձեզ հետ, մնում է գրել, աճա թե ինչու Դուք կստանաք երկրորդը՝ չհասցնելով ազատվել առաջինի տպավորությունից: Մտորումները Ձեր մասին ինձ երջանկացնում են, և ես դժբախտ եմ իմ երջանկությամբ, քանզի կարող եմ միայն մտածել Ձեր... Ամենաշքեղ երազանքը չարժե ավելին, քան ամենաաղքատիկ իրողությունը, իսկ ինձ սպասում է հարուստ իրողություն, ինչիս են պետք երազանքները, կարո՞ղ են դրանք ինձ երջանկացնել: Ոչ, քանի ինձ հետ չեք, ես կորսված եմ, ոչինչ չեմ կարողանում անել: Եվ բնական է, որ մտքերս, ցանկություններս, ձգտումներս, կենտրոնանում են միայն մի մտքի շուրջ... Դեռ չգիտեմ, բայց ներքին ձայնս հուշում է, որ շուտով... Օ, երանի թե առաջիկա ամսում կհանդիպենք...

Եղանակը Պետերբուրգում հրաշալի է, գարնանային: Գարունը ինձ հետ եկավ, քանի որ մինչ այդ անձրևներ էին ու ցուրտ: Հիմա երկնքում մի պատառ ամպ էլ չկա, արևի փայլը լեցված է ամենուր, այնքան տաք, որ կարծես ապրիլյան օր լինի: Երեկ մառախլապատ էր ու կարծեցի, որ եղանակը կփոխվի, բայց այսօր արևը նորից փայլում է, և պատուհաններն են բաց: Իսկ գիշերները... Թե իմանայիք ինչպիսի գիշերներ են հիմա: Երկինքը մութ-մութ է, բայց միևնույն ժամանակ փայլում է աստղավառ: Չկարծեք, որ եղանակի պատճառով ինձ չեմ հետևում: Ես թե ցերեկը, և թե երեկոյան հագնում եմ տաք վերարկու: Նաև այլ պատճառ էլ կա, դեռ Պ. չի հասել իմ իրերով լի արկղը: Ի-միջիայլոց ցերեկը կարելի է և այուրտուկով լինել, բայց երեկոյան ոչ, աճա թե ինչու ցերեկը վերարկու հագնելն անտանելի է: Ինձ թվում է, որ Մոսկվայում այժմ լավ եղանակներ են: Չմոռանաք դրա մասին գրել, մոսկովյան եղանակները ինձ համար մեծ նշանակություն ունեն: Երկինքն այնքան պայծառ ու լուսավոր է, և սիրտս էլ թեթև ու ուրախ:

Իմ բացակայությամբ ծաղիկներս փարթամացել են, և այնչափ ուրախացա, որ ծաղկել էր իմ դափնեվարդերից մեկը: Շատ եմ սիրում այդ բույսը, դրանցից երեք թաղար

ունեմ: Մի դափնեվարդը շատ-շատ բարձր է: Վերջապես Բոտկինը հազար ու մի թունոտ տհաճություններից ու հոգսերից հետո գնաց արտասահման: Սեպտեմբերի 4-ին, շաբաթ օրը: Ես ճանապարհեցի նրան մինչև Կրոնշտադ: Օրը հրաշալի էր և այնքան հաճույքով ծովեզրին մտածում էի Ձեր մասին: Բավականին տխրությամբ բաժանվեցի Բ.-ից: Կան լուրջ պատճառներ, որոնց մասին կիմանաք հետո: Անհամբերությամբ էի սպասում, թե երբ կտեղափոխվեմ բնակարանս, իսկ այժմ նեղվում եմ, որ պիտի գիշերեմ այստեղ: Հիմա էլ խորթություն եմ զգում: Իմիջայլոց դա կշարունակվի մինչև ես ինձ վերգտնեմ, այսինքն մինչև... Ձեր շնորհիվ... Մինչ այդ միակ մխիթարանքս պատերին ու նկարներին նայելն է, դրանք մտովի տեղից տեղ տեղափոխելը: Դա ինձ սարսափելի զբաղեցնում է:

Ասացեք, ե՞րբ Ձեզնից նամակ կստանամ: Սպասում ու չեմ հավատում, գիտեմ, որ կստանամ շուտով, բայց վախենում եմ հուսալ: Օ, մի տանջեք ինձ: Չէ որ Դուք գրել եք, որ կստանամ այսօր, վաղը, ճի՞շտ է, չէ՞:

Ցտեսություն, Աստված Ձեզ պահապան: Թող բարի հոգիները ցերեկը շրջապատեն Ձեզ ու շշնջան սիրո ու երջանկության բառեր, գիշերներին էլ պարուրեն անուշ երազներով: Իսկ ես, ես կուզենայի գոնե մի վայրկյանով տեսնել Ձեզ, նայել Ձեր աչքերին, գրկել Ձեր ծնկները ու համբուրել Ձեր զգեստի փեշը: Բայց ոչ ավելի լավ է երկար, երկար ժամանակ չտեսնվել, քան մի րոպեով ու հետո նորից բաժանվել, ինչպես արդեն մի անգամ եղավ: Ներեցեք ինձ, որ շատախոսում եմ, սիրտս այրվում է, արցունքներս եռում են, այդպիսի հիմար վիճակում հազար ու մի բան ես ասում: Զարմանալի բան է: Ձեր մասին երազելիս Ձեզ հետ ավելի լավ եմ զրուցում, քան գրելիս, կամ երբ Ձեզնից հեռու եմ լինում:

Տեսնես ինչպես է Սոկոլնի՛կին, նվիրական արահետը, կանաչ նստարանը, հրաշագեղ ծառուղին: Ինչ տխրությամբ է հիշվում այդ ամենը և որքան հրճվանք ու երջանկություն կա այդ հիշողության տխրության մեջ:

Վերջապես Դուք և Աստված խղճացիք ինձ: Ախ, թե իմանայիք ինչ է ինձ համար Ձեր լռությունը: Ձեր նամակին սպասում էի շաբաթ օրը ու չգիտեմ ինչու ինձ թվաց, որ շուրջ տաս օրից ավելի է, ինչ սպասում եմ: Արդեն հուսալքվել էի ու հազար ու մի հիմարության մասին էի մտածում՝ գուցե նամակս դեռ չի հասել, կամ հիվանդ եք, կամ արդեն սառել եք իմ նկատմամբ (կարող եք ծիծաղել, գիտեմ, հիմար եմ, Ձեր պատճառով այդպիսին դարձա): Չէի կարողանում աշխատել (առանց այն էլ ուշացել եմ, Ձեր մասին էի մտածում) վիճակս ծանր է, կյանքս նորից ներկվեց տխուր գույներով: Հետո էլ կիրակի օրվանից եղանակը փոխվեց, անձրևում է, ցուրտ է, իսկ եղանակը միշտ էլ շատ է ազդում ինձ վրա: Երկուշաբթի նորից ոչինչ չկար, սպասեցի մինչև ժամը 3-ը ու գնացի ճաշելու քաղաքի մյուս ծայրը, թեպետ անձրև էր տեղում: Հենց վերադարձա տուն, որոշեցի ինքս ինձ մխիթարել ու քսան րոպեի ընթացքում խփշտել տասից ավելի տանձ: Մտա ներս ու հյուրասենյակից տեսա աշխատասենյակիս գրասեղանին նամակի նման ինչ որ բան: Աչքերս շաղվեցին ու սիրտս նվաղեց:

. . . . . .

... Աստված իմ: Որքան տանջանքների վերջ դրեց Ձեր նամակը: Քանի անգամ եմ մտածել, եթե հիվանդության պատճառով է, ապա Աստված իմ, պահիր ու խղճա ինձ (կարծեմ թե առաջին աղոթքն էր կյանքումս), իսկ թե հենց այնպես, ներիր նրան, Աստված: Ես դարձել եմ անհամարձակ ու ամեն ինչից վախենում եմ, բայց ամենից շատ Ձեր հիվանդությունից: Ինձ թվում է, որ ես այնքան առողջ եմ, որ ծիծաղելի է հոգալ իմ մասին, իսկ Դուք, Աստված իմ, որքան ծանր անուրջներ, որքան մռայլ տագնապներ:

Հազար անգամ երախտապարտ եմ սքանչելի նամակի համար: Այն այնքան պարզ էր, զերծ ամեն տեսակ պաճուճանքներից և այնքան բովանդակալից: Հրապուրիչ՝ ինձ համար՝ քանզի նամակում ամփոփված Ձեր բնավորությունն էր, այնքան կենդանի, կարծես աչքիս առաջ

լինեիք, Ձեր բնավորությունը՝ հյուսված ազնվությունից, պարզությունից, արժանապատվությունից: Ձեր նկատողությունները՝ իմ այս ու այն գրվածքների մասին ես կարդում էի տառ առ տառ, դանդաղ, համեղ կերակուրներ սիրողի պես, որը բավականություն է զգում սիրելի ուտեստից:

Ես հնարավորություն եմ տալիս ավելի արտաբաց լինելու, որպեսզի ինձ առավել շատ այպանեք: Բայց թվում է, որ մի հարցում Դուք ճիշտ չեք: Ասում եք, որ ինձ վատ եք ճանաչում: Ձեզ լավ գիտեմ և Ձեր անպահանջկոտությունը հնարավորություն է տալիս դույզն-ինչ երևվակայել: Բացի դրանից, ինչպես ամեն մի ռուս մարդ, ես էլ եմ մտածում, որ ամուսնությունից հետո կարելի է ապրել քիչ ավելի շքեղ: Դա, իհարկե, հիմարություն է: Ես գիտեմ, որ Ձեզ ոչնչով հնարավոր չէ զարմացնել և ուրախացնել մանրուքներով, հիմարություններով, բայց ինձնից մի խլեք Ձեզ ինչ որ բաներով ուրախացնելու իրավունքը: Գիտեմ, Ձեզ համար անկարևոր է թե ինչ տեսակի աթոռի կնստեք, միայն թե նստելու բան լինի, բայց ես ուզում եմ, որ Ձեր աթոռը իմինից լավը լինի: Հիմարություն է, հասկանում եմ, բայց միթե այժմ ես հավակնում եմ խելոք լինելու: Գիտեմ, որ այն պահից հենց սկսեցի զբոսնել Սոկոլնիկիում, դարձա այնպիսի հիմար, որպիսին չէի եղել: Այժմ ինձ համար հասկանալի է այն ճշմարտությունը, որ հիմարներն են երջանիկ: Հանդգնություն չունեի մտածել, որ կարող եմ երջանիկ լինել, եթե հիմար չեմ ծնվել, քիչ էր մնում խենթանայի... Հաշիվ տվեցի, հա:

Այն, ինչ գրում եք բաժանման պահից, հասկանալի է ինձ, այդ ամենը այնքան բնական է, ճշմարիտ: Ձեր այն կարծիքի համար (չի կարելի հասարակությանը ի ցույց դնել զարդարուն տխրությունը) պատրաստ եմ համբուրել Ձեր ոտքերը: Իսկ, որ սկսել եք պարել, այնքան էլ արտովս չէ, հանկարծ կմրսեք ու կհիվանդանաք: Ագրաֆենա Վասիլևնան ճիշտ է նկատել, որ Դուք այնքան էլ անկեղծ չէիք, երբ խուսում էիք մեր ապագայի մասին: Ամեն անգամ, երբ ուզում էի խոսել այդ մասին լեզուս կապվում էր: Իհարկե դրանից ոչ մի օգուտ, բայց նման բաները մեզ ավելի

կմտերմացնեին: Թե չէ անընդհատ տանջում է այն միտքը, որ մենք այնքան էլ մտերիմ չենք, մանկանում ենք ու մի տեսակ գավառական իդեալիզմի գիրկն ընկնում:

Հարցնում եք առողջության մասին, Աստված գիտի, ասում եմ Ձեզ, որ չգիտեմ՝ կամ, թե չկամ: Կիրակի գնացել էի Կոմարովի մոտ ճաշի, մի քիչ հարբուխ ունեի, քանի որ վերարկուս լրիվ թրջվել էր: Համենայն դեպս մրսած հազը նախընտրելի է նյարդայինից: Հիմա ամեն ինչ անցել է: Հիմա պիտի ասեմ, թե ինչու եմ մեղավոր: Ահա թե ինչ, չկա մեկը, որի հետ կարող եմ խոսել Ձեր մասին, և դա ինձ համար իսկական տանջանք է: Ահա թե ինչու, Մարիա, Կոմարովան գիտի այն, ինչ չգիտեն Կոշերը: Ես նրա ամուսնուն ասացի, քանի որ չհամարձակվեցի Ձեր ողջույնը տիկնոջը հաղորդել: Եկա ու զգացի, որ նա մի տեսակ անհամարձակորեն է ինձ վերաբերվում: Ուզում է կատակել ու վախենում է: Այնժամ ես ինքս սկսեցի կատակել: Եվ ինչ: Խեղճը այնպես էր շփոթվել, կարմրել, որ նրա ամուսնու հետ սկսեցինք ծիծաղել, իսկ ես պարզապես հրճվանքի մեջ էի: Պատճառը հասկանալի էր: Ես, որ կարմրում եմ անգամ (ուրիշների համար) այս դեպքում հերոսաբար անամոթ էի, իսկ Մարիա Ալեկ.-ան իմ պատճառով տաքանում էր: Անցյալ կիրակի համենայն դեպս, մենք նրա հետ խոսեցինք և Ձեր և ինստիտուտի մասին: Ես ուրախ եմ, որ Կ-ները արդեն գիտեին, և ես սկսում եմ վարժվել ու չվախենալ...

Ես համաձայն եմ Ա. Վ.-ի հետ, որ Ձեր տնօրենի պարահանդեսին Դուք ամենալավիկն էիք: Մյուսները հնարավոր է ավելի թարմ էին, գեղանի, սիրունիկ, բայց միայն Ձեր դիմագծերն էին կատարյալ, ազնվազարմ ու արժանապատվությամբ լի: Ձեր գեղեցկության մեջ այնքան վեհանձնություն կա, որը հետևանք է խելքի ու խորը զգացմունքի: Դուք գեղեցկուհի եք եղել այդ բառի իսկական իմաստով, իհարկե, շատ բան է կորել, բայց պահպանվել է այն, ինչի համար Ձեզ կարող է նախանձել և ջահելությունը և գեղեցկությունը: Ես դա դեռ վաղուց էի հասկանում, բայց կյանքի փորձը լավագույն ուսուցիչն է: Գոնե ոչ վաղ անցյալում ուրիշների փորձից հասկացա, որ չարժե

կյանքը կապել որևէ գեղեցկուհու հետ, միայն դրա համար: Երկար կարելի է խոսել այդ մասին, բայց ոչ հիմա: Այժմ միայն կասեմ, որ Բ.-ն անչափ նախանձում է ինձ, ես էլ խղճում եմ նրան ու հասկանում, թե ինչու Մոսկվայում հաճախ էր կրկնում. «Ինչու նա 30 տարեկան չի»:

Ծատ կուզեի ասել, թե որքան եմ սիրում Ձեզ, խորը, ուժեղ, անչափ, որ Դուք իմաստավորեցիք իմ կյանքը ու շատ-շատ բաներ, որոնք Դուք առանց այդ էլ գիտեք: Բայց պիտի չասեմ, քանի որ նամակում դա հնչում է մի տեսակ գոեհիկ ու չի արտահայտում ցանկացածս: Հիմա եմ հասկանում, որ բանաստեղծը չպետք է սիրահարվի, ավելի լավ է գրի սիրո մասին: Հիմա եմ հասկանում, որ մենք կարողանում ենք խոսել այն ամենի մասին, ինչ ուզում ենք ու չունենք և չենք կարողանում խոսել այն բաների մասին, ինչով լի է մեր էությունը:

Ցտեսություն, Մարիա: Դուք խնդրում եք, որ չտանջեմ Ձեզ իմ նամակների երկար սպասումով, ահա պատասխանում եմ անմիջապես: Երբ ստանամ, անմիջապես (դարձյալ) կպատասխանեմ: Մշտապես այդպես էլ կանեմ:

ԱԼԵՔՍԵՅ ՏՈԼՍՏՈՅԸ՝ ԿՆՈՋԸ՝ ՄԻԼԼԵՐԻՆ

•

Կոմս Ալեքսեյ Տոլստոյը (1817—1875) Ս. Միլլերին հանդիպեց Պետերբուրգում և 1850 թ. ամուսնացավ, երբ վերջինս բաժանվեց առաջին ամուսնուց։

10 մայիսի 1852 թ.

Ուզում եմ խոսել քեզ հետ իմ մտորումների մասին: Աղոթքների ազդեցության տակ, մի երկու բառով, երկար դատողություններ չեմ անի՝ սիրտս լցված է...

Կարծում եմ, որ մեր կյանքում մշտապես միանում են ճակատագիրն ու կամքի ազատությունը, ու մենք ի վիճակի

չենք ճշտելու նրանց հարաբերությունները: Ժխտել կամքի ազատությունը՝ նշանակում է ժխտել Ակնհայտը, քանի որ Ի վերջո, եթե տունդ այրվում է, դու չես կարող ներսում մնալ, ելք ես որոնում դուրս գալու ու փրկվում ես: Եվ եթե մենք դա հասկանում ենք, ուրեմն ինչ որ չափով կարող ենք ազդել երևույթների, նաև մարդկանց վրա: Ամեն ինչից ամենազորեղը՝ ոգու գործողությունն է: Մարդկային ոգին ոչ մի ասպարեզում այնպիսի զարգացում չի ապրում, ինչպիսին... երբ մերձենում է Աստծուն: Խնդրել Աստծուն, որ նա Դժբախտությունը հեռացնի քո սիրեցյալից՝ անհեթեթություն չէ, ինչպես համոզում են որոշ փիլիսոփաներ աղոթքի մեջ տեսնելով միայն խոնարհումն Աստծուն, շփումը նրա հետ, շարժվելով նրա ներկայության զգացողությամբ:

Աղոթքը, առաջին հերթին ուղղակիորեն ուժեղ ազդեցություն է թողնում մարդկային ոգու վրա ու նաև նրա, ում համար աղոթում ես, որքան մերձենում ես Աստծուն, այնքան ավելի ես ձերբազատվում սեփական մարմնից, այդժամ մեր հոգին ավելի քիչ է կախվածության մեջ լինում տիեզերականից, նյութականից:

Ես գրեթե համոզված եմ, որ երկու միմյանց նվիրված մարդիկ, եթե նույն պահին աղոթեն Աստծուն, կարող են հաղորդակցվել առանց նյութական օգնության ու հեռավորության:

Դա ուղղակիորեն ազդում է քեզ հոգեհարազատ հոգու մտքերի ու ցանկությունների վրա: Այդ գործողությունը մշտապես արել եմ՝ ի նկատի առնելով քեզ, երբ աղոթում էի Աստծուն... Ինձ թվում էր, Աստված լսում է ինձ... Դու դա զգացել ես, և իմ երախտագիտությունը Աստծուն անսահման ու հավերժ է:

Հիմա մնում է պարզել աղոթքի թողած անուղղակի ազդեցությունը, հատկապես, երբ խնդրում ես, որ սիրելի մարդը անհաջողության չհանդիպի, օրինակ, եթե ճանապարհորդում է, կամ որ իրականան նրա ցանկությունները, եթե դրանք բարի են և այլն և այլն: Որպեսզի ժխտվի այդ անուղղակի ազդեցությունների գոյությունը, պիտի անհեթեթորեն ժխտել ճակատագիրը:

Հնարավոր է իմանալ, թե ինչ աստիճանի են կանխանշված մեր սիրելի անձնավորության կյանքի երևույթները:

Հնարավոր է, ես այնքան էլ հասկանալի չեմ արտահայտվում, բայց քո հոգին այնքան լավ է ըմբռնում այս ամենը, որ կզգա, թե ինչ եմ ասում: Վաղը նորից եմ գնալու Ցարսկոյե, հուսով եմ, որ կարող եմ բերել մի քիչ բարություն, ասելով ճշմարիտն այն ամենի մասին, ինչ կա մեր բարձր հասարակության մեջ:

Եվ թող Աստված պահպանի քեզ, թող մեզ երջանկացնի այնպես, ինչպես մենք ենք հասկանում, այսինքն՝ դարձնի մեզ առավել բարեսիրտ:

25 հոկտեմբերի 1853 թ.

Ես այնպիսի ներքին փոթորիկ ապրեցի, որ քիչ էր մնում գլուխս պատեպատ տայի: Պատճառը իմ վրդովեցուցիչ վիճակն էր... Մեր հոգու նախնադարյան վիճակը՝ հավատամքն էր առ Աստվածն ու բարին, որը մենք կորցնում ենք, առնչվելով սառը նյութի հետ, ուր և պարփակվում է մեր հոգին: Բայց հոգին չի մոռանում իր նախնական վիճակը, մինչև պարփակելն ու սառչելն այս վիճակում... Դա էլ սիրելու ցանկության պատճառ է դառնում, որ շատերին է տանջում, և երբ զգում են սիրո կենարար ուժը, հալվում են ու վերադառնում իրենց նախնական էությանը: Եթե մենք պարփակված չլինեինք նյութով, մենք կվերադառնայինք բնականոն վիճակին, որն է՝ Աստծոն անդադար աստվածացնելը, այն միակ վիճակը, որը զերծ է տառապանքներից: Բայց նյութը խանգարում է մեզ, սառեցնելով հոգին, այնքան ժամանակ, որ նա կորցնում է նախնական փափկությունն ու դառնում կարծրության մարմնացում:

Ժամանակ առ ժամանակ Աստված թույլ է տալիս, որ այս կյանքում մեր հոգիները մի փոքր ջերմանան ու հիշեն այն երանելի վիճակները, որ երբեմն ունեցել են մինչև սառչելը... և որին խոստացված է վերադառնալ մահից հետո: Այդպես լինում է, երբ մենք սիրում ենք կին արարածին, մորը և զավակին:

ԴՐԵԶԴԵՆ, հուլիսի 10, 1870 թ.

Ահա նորից այստեղ եմ, տխրում եմ տեսնելով նույն փողոցը, նույն հյուրանոցը, նույն սենյակը՝ առանց քեզ: Հենց նոր տեղ հասա, չեմ կարողանում պառկել մինչև քեզ չասեմ այն, ինչ արդեն 20 տարի կրկնում եմ՝ որ չեմ կարող ապրել առանց քեզ, որ աշխարհում դու իմ միակ գանձն ես, այս նամակի վրա արտասվում եմ այնպես, ինչպես 20 տարի առաջ: Արյունս սառչում է, երբ մտածում եմ, որ կարող եմ կորցնել քեզ ու մտածում, որ բաժանվելն հիմարություն է: Մտաբերելով քեզ, քո էության մեջ չեմ տեսնում մի փոքր ստվեր անգամ, միայն լույս ու երջանկություն...

Ես նրան ասացի (տիկին Պավլովային), որ դրամայի համար այուժե եմ փնտրում, որ միտք ունեմ նկարագրել մեկին, որն ինչ-ինչ պատճառներով իր վրա է վերցնում ուրիշի թվացյալ ստորությունը:

Նա ոգևորվեց, բազեի պես հարձակվեց այդ գաղափարի վրա, շուռ ու մուռ տվեց, բայց ոչ մի հետևության չհանգեցինք...

ԴՐԵԶԴԵՆ, 25 հուլիսի 1871 թ.

... Տխրում եմ, ձանձրանում, հիմար էի, որ կարծում էի, թե այստեղ, լավ եմ զգալու: Եթե ես գրական հաջողություն ունենայի կամ հրապարակում ինձ արձան կանգնեցնեին, միևնույն՝ կնախընտրեի նստել կողքիդ, բռնել ձեռքդ, նայել բարի, սիրելի դեմքիդ: Ինչ կլինի ինձ հետ, եթե մեռնես: Բայց և այնպես ավելի լավ է՝ դու առաջինը մեռնես, չէի ուզենա, որ ինձանից հետո տառապես...

Եվ անգամ երաժշտություն լսելն էլ առանց քեզ ծանր է. այն կարծես մեզ մերձեցնում է:

... Իսկ Կարլսբադում ավելի վատ է լինելու, ասում են այնտեղ այնքան մարդ կա, և բոլորը կուզենան, որ ես հաղորդակցվեմ իրենց հետ, ես էլ կնախընտրեի ապրել առան-

ձին, մի ոտով պրոֆեսորի հետ: Լավ, տանը քիչ եմ լինում, երբ վերադառնում եմ, Ծոպենհաուեր եմ կարդում, հաճախ համաձայն եմ նրա հետ, բավական հակադրություններ եմ գտնում, ինքն իրեն հակասում է ու հաճախ մտածում եմ ու ասում ինքս ինձ. «Հիմար, կարող էիր ծանոթանալ նրա հետ ու չծանոթացար»:

ՏՈՒՐԳԵՆԵՎԸ՝ ՊՈԼԻՆԱ ՎԻԱՐԴՈՅԻՆ

Իվան Տուրգենևը (1818—1883) 1847 թ. մեծ մասամբ ապրում էր արտասահմանում: Փարիզում բավականին մտերմացավ Վիարդո ամուսինների հետ: Հանրահայտ երգչուհի տիկին Վիարդոյի հանդեպ Տուրգենևը տածել է իդեալական քնքշությամբ լեցուն զգացումներ: Նա մշտաբար նամակագրության մեջ է եղել տիկ. Վիարդոյի հետ, երբ նա մեկնում էր հյուրախաղերի կամ էլ երբ գրողն էր բացակայում Փարիզից:

ՓԱՐԻԶ, հունիս 1849 թ.

Բարի երեկո: Ինչպես եք զգում Ձեզ Կուրտավենելում: Կարող եմ գրազ գալ, որ Դուք գլխի չենք ընկնի, որ... Համա տիպն եմ, գրազ եմ գալիս, որ Դուք հասկացաք հենց որ տեսաք նոտաթղթի այս կտորը: Այո, տիկին, թե բառերը, թե երաժշտությունը ես եմ հորինել, ազնիվ խոսք: Որքան եմ քրտնել, տքնել, քրքրել միտքս՝ անհնար է նկարագրել: Մեղեդին հղացա անմիջապես, հասկանում եք, ոգեշնչված էի: Հետո պետք էր փորձել դաշնամուրի վրա, գրառել... Չորս, թե հինգ սևագիր պատռեցի, և միևնույն է համոզված չեմ, որ գրածս անմիտ-հրեշավոր բան չի: Ինչ տոնով է դա: Մեծ ջանքեր պահանջվեց մինչև հիշողության մեջ հայտնվեցին այն մեղեդիների փշրանքները, ու գլուխս երևի դրանից սկսեց ցավել: Ինչ անհավոր աշ-

խատանք: Ինչ էլ լինի, դա Ձեզ մի քանի վայրկյան ուրախություն կպատճառի:

Ինչևէ, ես ինձ անհամեմատ ավելի լավ եմ զգում, քան եթե երգեի, վաղը առաջին անգամ դուրս կգամ: Խնդրում եմ, այն նոտաների համար, որ ես եմ գրել, բաս գտեք: Եթե Ձեր եղբայրը՝ Մանուելը տեսներ ինձ այդ նոտագրությունն անելիս, անպայման կհիշեր իր բանաստեղծությունը, որ փորձում էր գրել Կուրտավենելյան կամրջի վրա՝ ոտքերի ջղաձիգ շարժումներով, ձեռքերի թափահարումներով: Սատանան տանի, միթե այդքան դժվար է երաժշտություն գրելը: Մեյերբերը՝ հանճարեղ մարդ է:

ԿՈՒՐՏԱՎԵՆԵԼ, չորեքշաբթի

Տիկին, ահա երկրորդ առողջական տեղեկանքս:

Բոլորն իսկապես առողջ են, օդը Բրիում իսկապես առողջարար է: Այժմ տասներկուսն անց կես է, բոլորս անհամբեր սպասում ենք փոստատարին, որը հուսով եմ լավ լուրեր է բերելու:

Երեկ ավելի անհետաքրքիր էր, քան նախորդ օրը: Մենք լավ զբոսնեցինք, վերադարձանք ու սկսեցինք վիստ խաղալ: Հենց այդ պահին տեղի ունեցավ մի մեծ իրարանցում, ահա թե ինչ. մի մեծ առնետ մտել էր խոհանոց, իսկ Վերոնիկան, որի գուլպան այդ ամենակեր գգվելին արդեն կուլ էր տվել, փակել էր պատի անցքը փալաս փուլուսով, քարով, ու առնետը դժվարանում էր փախչել: Վերոնիկան վազելով գալիս է ու հայտնում մեզ այդ կարևոր լուրը: Մենք զինվելով փայտերով բարձրանում ենք վերև: Խեղճ առնետը թաքնվել էր ածուխի արկղի ետևում: Այդտեղից նրան քշում են, նա դուրս է պրծնում, Վերոնիկան ինչ որ բան է շպրտում, առնետը նորից է թաքնվում արկղի տակ ու չքանում: Բոլոր անկյուններում շարունակվում է փնտրտուքը, չկա ու չկա: Ամեն ինչ իզուր է անցնում: Վերջապես Վերոնիկան գլխի է ընկնում, որ պստլիկ արկղիկի ետևում է... դեն է քաշում ու մի պահ երևում է անպետքի պոչը, խորամանկը այնտեղ էր: Այն է պիտի հարվածեինք, բայց

կայծակնային արագությամբ անհետանում է: Դրանից հետո նա կրկին մեզ մոտ վերադառնում է և ապարդյուն: Բանն այն է, որ խոհանոցում շատ քիչ կահույք կա: Պայքարից հոգնած վերադառնում ենք նորից մեր վիստին: Եվ ահա մտնում է Վերոնիկան ունելիով բռնած իր զոհին: Կարող եք երևակայել, թե որտեղ էր թաքնվել առնետը: Խոհանոցի սեղանին դրված էր աթոռի վրա, Վերոնիկայի զգեստի թևքերից մեկում: Պատկերացրեք, որ մեր փնտրտուքի ժամանակ չորս-հինգ անգամ այդ զգեստին ձեռք եմ տվել: Միթե չեք հիանում այդ փոքրիկ գազանի քաջությամբ, սրատեսությամբ, արագաշարժությամբ: Մարդը նման վտանգավոր վիճակներում անմիջապես իրենց կկորցներ: Այն է, Վերոնիկան ուզում էր վերջացնել իր փնտրտուքը, նկատում է, որ զգեստը մի փոքր շարժվեց... Խեղճ առնետը արժանի էր, որ փրկեր կաշին...

Այդ վերջին տողը հիշեցրեց թերթում կարդացած տխուր հաղորդումը՝ ձերբակալվել են մի քանի գերմանացի դեմոկրատներ: Արդյոք Մյուլլերը նրանց մեջ է: Վախենում եմ նաև Հերցենի համար: Խնդրում եմ նրա մասին լուր հաղորդեք: Ռեակցիան իր հաղթանակներից բոլորովին հարբել և ցույց է տալիս իր ամբողջ ցինիզմը:

Այսօր եղանակը չափազանց հաճելի է, բայց հունիսին ինչ որ ուրիշ բան ես սպասում կաթնագույն երկնքի ու զեփյուռի փոխարեն: Մտածելով՝ շատ չի սառի:

Մենք հաշտվել ենք դրան... Թերթում տպագրված փոքրիկ հաղորդագրությունը այդ մասին ոչ մի պատրանք չի թողնում: Համբերություն: Ինչ երջանիկ պիտի լինեինք, եթե նորից տեսնվեինք:

Լուիզայի ու մյուսների համար մի փոքր տեղ եմ թողնում:

Հ. Գ.— վերջապես նամակ ստացանք: Փառք Աստծո, երեքշաբթի ամեն ինչ լավ է եղել: Աստծո սիրույն, պահպանեք Ձեզ: Բարեկամական բյուր ողջույններ Ձեզ և այլոց:

Ձեր՝ Իվ. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԿՈՒՐՏԱՎԵՆԵԼ, 19 հունիսի, 1849 թ.

Եղեգնուտը այլևս չկա: Ձեր առուները մաքրված են ու մարդկությունը ազատ շունչ քաշեց: Բայց դա հեշտ չարվեց: Մենք նեգրերի պես էինք աշխատում, երկու օր անընդհատ, ես էլ իրավունք ունեմ ասելու «մենք», քանի որ ինչոր չափով մասնակցեցի: Այ, թե տեսնեիք ինձ երեկ՝ լրիվ ցեխոտված, թրջված, բայց չափազանց գոհ: Եղեգները բավականին բարձր էին ու դժվար էր արմատահան անելը, ինչքան փխրուն էին, այնքան ավելի վատ: Վերջապես գործը արված է:

Արդեն երեք օր է, ինչ մենակ եմ Կուրտավենելում, և ինչ: Երդվում եմ, որ չեմ տխրում: Առավոտները շատ եմ աշխատում, հավատացեք, երդվում եմ, ապացույցները կներկայացնեմ Ձեզ . . . . . .

. . . . . .

Մեր մեջ ասած, Ձեր նոր այգեպանը մի փոքր ծույլ է, նրա մեղքով քիչ մնաց դափնեվարդի ծառերը չորանային, բոլորովին չէր ջրում, անգամ ծաղկանոցն է վատ վիճակում, իհարկե ես նրան ոչինչ չասացի, պարզապես սկսեցի ինքս ջրել ու քաղհանել: Այդ լուռ, բայց խոսուն ակնարկը տեղ հասավ ու ահա մի քանի օր ամեն ինչ կարգին է: Պարտիզպանը բավական շատախոսն է— բայց նրա կինը ջանասեր ու լավ տիկին է: Այս վերջին նախադասությունը բավականին անպատկառ է հնչում այնպիսի ծույլերի շրթներին, ինչպիսին ես եմ, չէ:

Դուք չեք մոռացել փոքրիկ սպիտակ աքլորին: Այդ աքլորիկը իսկական դև է: Բոլորի հետ կռվում է, մանավանդ ինձ հետ, դեմ եմ անում ձեռնոցս, հարձակվում է, կախվում ու ձգում եմ, որ ազատվեմ, չի պոկվում, քարշ է գալիս: Նկատել եմ, որ ամեն կռվից հետո մոտենում է ճաշասենյակի դռանը ու խելագար ճչոցով ուտելիք պահանջում: Այն, ինչը քաջություն է թվում, այդ աքլորի մեջ, կարող է լինել ընդամենը ծաղրածուի անպատկառություն, որը լավ գիտի, որ իր հետ կատակ են անում և ստիպում է դրա դիմաց վճարել: Օ, պատրանք, ահա, թե ինչպես են քեզ կորցնում.. Պ. Լամարթին երգեցեք այն...

Գյուղական կյանքի թոչնանոցի այս մանրուքները Ձեզ Լրևի ստիպեն ժպտալ: Ով պատրաստվում է Լոնդոնում կատարել Գուշակի արիան... Դա Ձեզ կթվա բավական հովվերգական... Այնուամենայնիվ, այն մանրամասները Ձեզ հաճույք պիտի պատճառեն: Պատկերացրեք, ինչպիսի ինքնավստահություն:

Ուրեմն Դուք որոշել եք կատարել Գուշակի դերը: Այդ բոլորով հանդերձ, Դուք դեկավարում եք ամենքին... Մի հոգնեք: Աղաչում եմ, հայտնեք ինձ Ձեր առաջին ելույթի մասին... Այդ օրը Կուրտավենելում կեսգիշերից շուտ չեն քնի... Ուզում եմ խոստովանել, որ սպասում եմ մեծ, շատ մեծ հաջողության: Աստված պահապան, թող նա օրհնի Ձեզ ու առողջություն պարգևի: Ահա, թե ինչ եմ խնդրում նրանից, մնացածը կախված է Ձեզանից...

Ուրբաթ, 20-ին

Ողջույն, հենց հիմա ինչ եք անում: Ես նստած եմ հյուրասենյակի կլոր սեղանի մոտ... Տանը թագավորում է խոր լռությունը, լսվում է միայն լամպի փսփսոցը: Իսկապես լավ եմ աշխատել այսօր, զբոսանքի ժամանակ ընկա ամպրոպի ու անձրևի տակ: Գիտեք, Վիարդո, այս տարի շատ են լորերը:

Այսօր Ժանի հետ խոսում էինք Գուշակի մասին: Նա ասում էր բավականին հետաքրքրական բաներ, այսինքն՝ թեորիան ամենալավ պրակտիկան է: Եթե դա ասվեր Մյուլերին, նա ետ կգցեր գլուխը, բացուխուշ կաներ բերանը, կբարձրացներ հոնքերը: Իմ մեկնումի օրը Փարիզից այդ խեղճի մոտ ընդամենը երկուսուկես ֆրանկ կար, դժբախտաբար ոչինչ չկարողացա տալ:

Լսեք, թեպետ օժտված չեմ քաղաքական պաթոսով, բայց մի բան ինձ զայրացնում է, դա՝ գեներալ Լամորիսերի հանձնարարությունն է իմպերատոր Նիկոլայի բնակության վայրի: Դա արդեն չափազանց է, չափազանց է: Խեղճ հունգարացիներ: Ազնիվ մարդ, վերջիվերջո չգիտի որտեղ ապրի, երիտասարդ ազգերը դեռ բարբարոս են, ինչպես իմ

թանկագին հայրենակիցները, կամ էլ, եթե ոտքի են ելնում, ուզում են քայլել, նրանց ճզմում են, ինչպես հունգարացիներին, իսկ հին ազգերը մեռում են ու վարակում այլոց, քանի որ արդեն իրենք փտել ու վարակված են: Այդ դեպքում կարելի է Ռոջերի հետ երգել. «Եվ Աստված չի անիծում այդ անհավատներին»: Լավ, կբավե: Հետո ով է ասում, որ մարդը պիտի ազատ լինի: Պատմությունը մեզ ապացուցում է ճիշտ հակառակը:

Գյոթեն, իհարկե, պալատական շողոքորթի ցանկությունից չէ, որ գրել է իր հանրահայտ բանաստեղծությունը...

Դա, իսկապես փաստ է, ճշմարտություն, որ նա ասել է լինելով բնության իսկական հետազոտող, այդպիսին էր նա:

Մինչև վաղը:

Դա չի խանգարում Ձեզ լինել անչափ գեղեցիկ... Գիտեք ինչ, եթե աշխարհում այսու-այնտեղ չլինեին Ձեզ պես էակներ, զզվելի կլիներ... Մինչև վաղը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 26 հոկտ. 1850 թ.

Թանկագինս, հրաշալի իմ մադամ Վիարդո, ինչպես եք: Արդեն տեղի ունեցավ Ձեր առաջին բեմելը: Հաճախ եք մտածում իմ մասին: Օր չկա, որ Ձեզ հիշեցնող նվիրական հիշողությունները չպատեն ինձ: Չկա մի գիշեր, որ երազում չտեսնեմ Ձեզ: Ձեզանից հեռու ես առանձնակի ուժով եմ զգում մեր բարեկամության սերտ կապը՝ Ձեր ընտանիքի ու Ձեզ հետ, երջանիկ եմ, որ զգում եմ Ձեր համակրանքը և անչափ տխրում եմ, որ հեռու եմ Ձեզանից: Երկնից համբերություն եմ խնդրում, ու որ շատ չհեռացնի մեր հանդիպման օրհնյալ պահը:

«Սովրեմենիկի» համար տրված աշխատանքս արդեն վերջացրի, այն սպասածից լավ ստացվեց: Դա հավելված էր «Զապիսկի օխոտնիկա»-յի համար, մի պատմվածք, ուր մի փոքր չափազանցված ձևով նկարագրել եմ ժողովրդական երգիչների մրցույթը, որին մի ամիս առաջ ներկա էի: Բոլոր ժողովուրդների մանկությունը նման է, և

իմ կրպիչների հիշեցրին ինձ Հոմերոսին: Հետո դադարեցի մտածել այդ մասին, թե չէ գրիչս վայր կընկներ: Մրցույթը սկսել էր ունենում ինչ որ գիներտանը, այնտեղ բավականին յուրօրինակ տիպեր կային, փորձեցի նրանց նկարագրել: Տեսեք, թե մեզ նման անհշան գրողներին ինչպիսի ձեռնափայտեր են պետք, որ կարողանանք քայլել:

Մի խոսքով, պատմվածքս դուր եկավ, փառք Աստծո:

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԸ՝ Ս. ԲԵՐՍԻՆ

Կոմս Լև Տոլստոյը (1828—1911) 1862 թվականին ամուսնության առաջարկ արեց մոսկվացի բժշկի դուստր Սոֆիա Անդրեևնա Բերսին: Մի քանի շաբաթից տեղի ունեցավ հարսանիքը ու նորապսակները տեղափոխվեցին Յասնայա Պոլյանա, որտեղ էլ Տոլստոյը գրեց իր «Պատերազմ և խաղաղություն», «Աննա Կարենինա» վեպերը, որոնք մեծավ մասամբ ինքնակենսագրական բնույթ են կրում:

Սոֆիա Անդրեևնա, ես անտանելի վիճակում եմ: Երեք շաբաթ ամեն օր կրկնում եմ՝ այսօր կասեմ, ու հեռանում եմ՝ տանելով հոգուս մեջ նույն տխրությունը, զղջումը, վախը, երջանկությունը: Ամեն գիշեր, ինչպես այժմ, հիշում եմ անցյալը, տանջվում ու ասում՝ ինչու չասացի, բայց ինչպես և ինչ: Ես վերցնում եմ այս նամակը, որ հանձնեմ Ձեզ, եթե հակարծ Ձեզ չհամարձակվեմ ասել ամեն ինչ: Ձեր ընտանիքը սխալ կարծիք ունի իմ մասին, կարծում են, թե ես սիրահարված եմ Ձեր քրոջը՝ Լիզային: Դա անարդար է: Ձեր վիպակը մտել է գլուխս, այն կարդալուց հետո համոզվեցի, որ ես, այսինքն՝ Դուբլիցկինը, չպիտի երազի երջանկության մասին, որ Ձեր բանաստեղծական սիրո պահանջները... որ ես չեմ նախանձում ու չեմ նախանձի նրան, ում կսիրեք: Ինձ թվում էր, որ կարող եմ ուրախանալ Ձեզնով, ինչպես երեխաներով:

Իվիցախներում ես գրել եմ. «Ձեր ներկայությունը ինձ անչափ հիշեցնում է իմ ծերությունը, և հատկապես Դուք»: Թե այն ժամանակ, թե այժմ ես խաբում էի ինձ: Դեռ այն ժամանակ ես կարող էի խզել ամեն ինչ ու գնալ իմ աշխատանքի մենավոր խուցը, տարվել գործով: Այժմ ոչինչ չեմ կարող ու զգում եմ, որ Ձեր ընտանիքում խառնաշփոթ եմ ստեղծել, որ անկեղծ, թանկագին հարաբերությունները Ձեզ հետ, որպես իմ սիրելի բարեկամի ու ազնվագույն էակի, կորսված են: Դուք ազնիվ մարդ, ի սրտե, առանց շտապողականության, Աստծո սիրուն, առանց շտապելու ասացեք՝ ինչ անեմ: Ինչի վրա ծիծաղում ես գլխիդ է գալիս: Մեկ ամիս առաջ ծիծաղից կմեռնեի, եթե ասեին, որ պիտի տանջվեմ, ինչպես այժմ, և երջանիկ տառապանք է այն հիմա: Ասացեք, ինչպես ազնիվ մարդ, ուզում եք դառնալ իմ կինը: Եթե ամբողջ հոգով, համարձակորեն կասեք՝ այո, ուրեմն լավ է, իսկ եթե մի փոքր կասկած ունեք, ասեք՝ ոչ: Աստծո սիրուն, լավ մտածեք: Ինձ համար սարսափելի կլինի ոչ լսելը, բայց ես այն նախազգում եմ, և ուժ կգտնեմ հաղթահարել: Բայց, եթե որպես ամուսին չեմ սիրվելու այնպես, ինչպես ես եմ սիրում, ապա դա սարսափելի կլինի:

Վ. ՍՈԼՈՎՅՈՎԸ՝ Ե. ՌՈՄԱՆՈՎԱՅԻՆ

Վլադիմիր Սոլովյովը (1853—1900) 1873 թ. ազգականուհի և հարսնացու Ե. Ռոմանովային գրել է մի շարք նամակներ, որոնցում զգացվում են նրա կրոնական, փիլիսոփայական հայացքները: Հետագայում նա հրաժարվեց սիրելի էակի հետ ամուսնանալու ցանկությունից:

ՄՈՍԿՎԱ, 25 հուլիսի 1873 թ.

Խղճա ինձ Կատյա, իմ թանկագին, իմ կյանք, դեռ չորս ամիս պիտի սպասեմ մինչև տեսնվենք:

Արդեն պատրաստվում էի մեկնել Պետերբուրգ ու ինքս

ինձ հարցնում էի, ինչու ես գնում այնտեղ: Այս ու այն գործերի համար: Բայց Պետերբուրգում ամռանը ոչ մի գործ հնարավոր չէ անել, ոչ մի անհրաժեշտ մարդ չես գտնի, բոլորն այնտեղից մեկնում են: Բայց ինձ հարկավոր է պարապել հանրային գրադարանում: Զմռանն այնտեղ պարապելը շատ հարմար է, ամռանն ո՞ւմ կգտնես: Մնում էր խոստովանել, որ գնում եմ տեսնելու իմ Կատյային, որ նրանից բացի ինձ ոչ ոք և ոչինչ պետք չի: Ասել դա այդպես ուղղակի՝ հիմարություն կլիներ: Ստիպված էի համաձայնություն տալ հայրիկի ծանրակշիռ փաստարկներին և նրա հետ մեկնել կիրակի օրը Պետերբուրգ (դեկտեմբերի 1-ին, երեկոյան ութն անց կես): Ինչ արած, համաձայնեցի և երևի թե ճիշտ արեցի: Եվ հիմա, երբ ամեն ինչ վերջացել է, զգում եմ ինչ անտանելի ծանր է ինձ համար այդ խոհեմությունը, քանի որ երբեք չեմ զգացել այսպիսի տրտմություն: Գիտեմ, որ դատարկ քաղաքում քեզ համար էլ է տխուր: Վաղուց կգայի, հաշվի չէի առնի որևէ բան, եթե հնարավոր լիներ և եթե դա քեզ չվարկաբեկեր: Այո, երևի թե մեր ճամփին այնքան էլ շատ վարդեր չեն ցանված: Դա այնքան էլ վատ չի՝ քանզի երջանիկ լինելը մի տեսակ ամոթ է, իսկ մեր դարում առավել: Անուրախ մխիթարանք: Իհարկե գոյություն ունի մտքի ներքին կյանք, որը անմատչելի է կեցության պատահականություններին, հոգեկան փոթորիկներին: Ես ոչ միայն հուսով եմ, այլև համոզված, ինչպես իմ գոյի մեջ, որ ճշմարտությունը (որը ես գիտակցում եմ), վաղ թե ուշ կգիտակցեն մյուսները, կգիտակցեն բոլորը: Եվ այնժամ իր ներքին ուժով այն կվերափոխի կեղծիքի աշխարհը, անձնական ու հասարակական կյանքի չարիքը, ժողովրդական զանգվածների տգիտությունը, բարձր դասի նողկալի անբարոյականությունը, ուժեղ պետությունների բռունցքի սպառնալիքը՝ խավարի այն վիհը՝ արյան ու աղետի, ինչում մինչև հիմա թպրտում է մարդկությունը: Այդ ամենը գիշերային ուրվականի պես կչքանա, քանզի արթնացող գիտակցությունը կլուսավորվի քրիստոսյան հավերժ ճշմարտությամբ, որը մինչև այժմ չի հասկացվել ու դրժվել է մարդկության կողմից: Եվ իր ամբողջ փառքով կգա Աստծո թագավորությունը, հոգեկան

հարաբերությունների թագավորությունը, մաքուր սիրո ու երջանկության, նոր երկնքի ու նոր երկրի, ուր ապրում է ճշմարիտը, բայց անկարող է, որ ողողմելի մարդն ապրի այդ ներքին մտային կյանքով՝ դեռ չկայացած այդ աշխարհում: Սիրտը իր օրենքներն ունի ու նորից անտանելի տրրտմությունը, բութ տառապանքը, այդ ամենը հաղթահարելն անհնար է դառնում ու դրանք՝ սովորական կյանքի ապտակներն ուղղվում են մեզ:

Իմ ուրախություն, իմ թանկագին, հոգեկան սպառվածության այս վայրկյաններին, թուլությունն ու հուսալքության րոպեներին միայն քո սերն է օգնում ու խրախուսում ինձ, հաճախ հիշեցրու նրա մասին, աղաչում եմ, դեռ լիովին չեմ հավատում, ներիր ինձ:

Հավերժ քո՝ Վլ. ՍՈԼՈՎՅՈՎ

Ափսոս իմ թանկագին Կատյա, որ սիրելով միմյանց մենք իրար լավ չենք հասկանում: Երևի ավելի շատ ես եմ մեղավոր, ինչ էլ լինի, կաշխատեմ պարզ խոսել: Կարծում եմ, որ դու չես կասկածում իմ սիրոն, մինչև հիմա չեմ էլ կարողացել կարգին թաքցնել այն, հիմա էլ դու բացախոսության հնարավորություն ես տալիս: Ես սիրում եմ քեզ այնպես, ինչպես կարող է սիրել մարդ էակը, հնարավոր է ավելի ուժեղ, քան պետք էր: Շատերի համար դրանով ամեն ինչ վերջանում է, սերը և այն ամենը... ընտանեկան երջանկությունը, նրանց կյանքի հիմնական հետաքրքրությունն է: Իսկ ես բոլորովին այլ խնդիր ունեմ, որն օրեցօր ինձ ավելի ու ավելի պարզ է դառնում, որոշակի ու խիստ: Այդ պատճառով անձնական ու ընտանեկան հարաբերությունները ինձ համար երկրորդական են: Հենց այդ էի ուզում ասել, երբ գրել էի քեզ, որ չեմ կարող լիովին քեզ նվիրվել: Բայց, ինչպես ենթադրվում է քո պատասխանից, իմ հանդեպ ունեցած վերաբերմունքը չի փոխվել: Այս խնդրի մասին որևէ մեկի հետ դժվար է խոսել, մանավանդ՝ անհնար, բայց և այնպես, սիրելի կնոջ մասնակցությունը քաջալերում և ուժ է տալիս այն դժվար գործունեությանը, ու կենաց պայքարին, որոնց աճպայման առնչվում է ամեն

լուրջ գործ: Այդ օգնությունը անփոխարինելի է ու միայն քեզանից այն կընդունեմ: Բայց դու գիտես, սիրելիս, որ մեր հարաբերությունները կախված չեն մեզանից ու մեր սիրուց:

Դու գիտես, թե ինչն է արգելում մեր միացմանը (թեպետ այսպես ուղղակի գրելն ինձ համար դժվար է, բայց ուզում եմ ցշել, որ ի նկատի ունեմ այն միությունը, որ սրբագրում է եկեղեցին, որևէ այլ բան նկատի չունեմ):

Վերացնել այդ արգելքները դժվար է, բայց և՝ հնարավոր: Համենայն դեպս, հարկավոր է օգտագործել բոլոր հնարավորությունները: Առայժմ առաջարկում եմ հետևյալը, մենք կսպասենք երեք տարի, այդ ընթացքում դու կզբաղվես քո հոգեկանի զարգացմամբ, իսկ ես կաշխատեմ, որ հիմնախնդիրս ապագայում իրականացնելու հնարավորություն ունենամ, հետո էլ ջանք չեմ խնայի հասնելու որոշակի հասարակական դիրքի, ինչը և կառաջարկեմ քեզ: Եթե դու համաձայն ես, կխոսենք հենց որ հանդիպենք:

Շատ բան ունեի քեզ ասելու, բայց բառերը գոհիկ ու համր են:

Մնաս բարով, սիրելիս, հավերժ քո՝

ՎԼ. ՍՈԼՈՎՅՈՎ

ԱՐՑՈՒՆՔԻ ԱՋՆՎՑՈՒՄ

ԵՂԻԱ ՏԵՄԻՐՃԻՊԱՇԵԱՆԸ՝ ՍՐԲՈՒՀՈՒՆ

Եղիա Տեմիրճիպաշեանի (1851—1908) նամակները* մեր գրականութեան եւ մշակոյթի մեծաշնորհ երախտավորի սիրոյ ու նուիրումի բյուրեղաձոյլ արտացոլումներն են՝ ուղղուած Սրբուհուն. «Իտէալին ուժովը չէ՞ որ Եղիա անձնատուր եղած է նամակագրութիւնով իր մոլեգին սէրը արտայայտելու ձեւին, մինչդեռ իր սիրուհին՝ այդ վարժուհի նրբազգաց աղջիկը, ամէն օր իր քովն էր, եւ կրնար բերանացի թարգմանել անոր ինչ որ իր հոգին կ'զգար...»:

I

Քաղցր բարեկամուհիս.

Առժամանակեայ Թաղական Խորհրդոյ նոր տնօրէնութեան համեմատ այսուհետև շաբաթն անգամ մը պիտի գամ իմ սիրելի թաղիս սիրելագոյն վարժարանն՝ ընդհանուր պատմութիւն միայն դասախօսելու համար: Տեղեակ էք անշուշտ այն տնօրէնութեան. կ'երեւակայեմ աշակերտուհեացս տրտմութիւնն, երբ իմացան թէ կիսով պիտի թողո՞ւմ զիրենք: Իսկ ես որքան տրտմեցայ, ես որ սակայն պարտէի գոհ ըլլալ՝ իմ զբաղմանցս յաճախութեան պատճառաւ՝ Թաղական Խորհրդոյ այն որոշումէն:

---

* Արտատպում ենք «Եղիա Տեմիրճիպաշեանի սիրային նամակները» (1886—1889), գրքից, Կ. Պոլիս, տպագր. Տէր Ներսէսեան, 1910, կազմեց. Հրանտ Նազարեանց):

Գրական աշխատութիւնքս օր աւուր կ'աւելնան. կրկին ուսոցս համար ունէի կրկին Հանդէս. յաւելուածոյ ուս մը չ'ունիմ, եւ չը գիտեմ թէ ո՞ւր եւ ինչպէս պիտի կրեմ Արեւելեան Տնտեսական Միութեան ամսաթերթն՝ ոյր Տնօրէնութիւնն ալ թախանձանօք յանձնուեցաւ ինձ: Չէի ծնած ես՝ ուսոցս վրայ թուղթ կրելու, գրիչ շարժելու, մելան լղելու համար. ծնած էի՝ եթերին երգաձայն բնակչաց նման՝ թռ՞ոցս վրայ տանելու արփուոյն շողն եւ ըմպելու երկնի՞ց շաղն եւ շարժելու համար գարնանային թերթից ու դիմաց փափուկ աղուամազն: Ես թռչուն ծնած էի եւ բուի նման խաներու մթին խուցերուն մէջ կ'անցընեմ իմ թանկագին կեանքս: Այն օրն—կամ մանաւանդ այն զոյգ մը ժամերն—ուր կուգամ Հասգիւղ, վերկենցաղութեան օր մէ ինձ համար: Հոն, այն բանաստեղծական միջավայրին մէջ, կը շնչեմ յաւէտ համասպրամեան օդ եւ կ'ըմպեմ նեկտար զովարար անմահարար. կը խօսիք դուք, դաս կ'ըսեն անոնք. ոմն կը գծէ, ոմն կը գրէ, այլ ոմն կը մրմնջէ, եւ ամենուդ մատանց տակ եւ ամենուդ շրթանց վրայ կը շրջի ե՞րգն, որ հոգւոյս մէջ մե՞ղր կը շինէ: Եւ կ'ուզեն՝ անգո՞ւթք՝ կ'ուզեն, որ աւելի ցանցառ այն մեղեդին արձագանք տայ հոգւոյս մէջ: Կը կապտեն յինէ միակ մխիթարութիւնն, որ ունիմ այս կալանաւոր կենացս մէջ. կը կապտեն մասամբ, այլ կապտում մ'էր դարձեալ, մեծ զրկանք մը ինձ համար:

Սակայն նոր Թաղական Խորհուրդն յանգէտս ինձ բարիք մը չ'ընե՞ր միթէ, պատրաստելով զիս այժմէն մշտընջենական բաժանման, որ պիտի հասնի վաղ կամ... Օր մը պիտի գայ, ուր չը պիտի կրնամ ընել՝ այլ միայն երազել այն դասարանն, յորում թռոցս դաշն բախումն ու մատաղ սրտից դաշնագոյն բաբախումն իրար մտիկ կ'ընէին. օր մը պիտի գայ, ուր անկարող պիտի ըլլամ բայց միայն յի՞շել այն զուգեակ աթոռակն՝ աշակերտուհեաց զուգեակ կարգի մէջտեղ, եւ վարժապետ եւ աշակերտուհիք, եւ դաստիարակուհի եւ դաստիարակ հրդեհի մը մէջ՝ ոյր բոցք անապատ եւ անմահ նիւթերէ կը սնանին...:

Օր մը, այո՛, յիշատակն եւեթ պիտի մնայ այդ ամենուն: Եւ ի՞նչ է կեանքն արդէն. ո՞չ ապաքէն յաջորդութիւն յիշատակաց, որպէս կայ տիւ եւ գիշեր կամ մթին ու զուարթագին

յիշատակներ. եթէ ամէն հարստութենէ ալ կապուինք, ոչ ոք կարէ խլել ի մէնջ յաւիտեա՜ն, Յաւիտեան... արդեօք իրա՞ւ յաւիտենականութեան մէ՞ջ ալ պիտի հետեւին մեզ յիշատակք: Հասգիւղի օրերն յաւիտենականութեան մէ՞ջ ալ պիտի վայելենք յիշատակա՜ւ: Ա՜հ, եթէ հոն ալ յիշատակօք, հառաչանօք, հեծեծանօք՝ պիտի ապրինք, լաւագոյն է կատարեալ մահն, անառուտ գիշերն. եւ զա՜յն արդէն ես ի բոլոր սրտէ կը ցանկամ— Նիրվանան:

II

ԻԾԱՏԻԷ, 20 Նոյեմբէր

Հոգեկցորդ բարեկամուհիդ իմ.

Այսօր վար իջայ եւ չը կրցայ գրել սիրելի սանուհեացս պատմութեան դասն: Ահա գիշեր է. ժամն երկունքն է, եւ առանձի՜ն եմ խցիկիս մէջ: Վայրենւոյ մը բերնին վայելուչ խօսք մ'է. սակայն պիտի ըսեմ թէ ոչինչ աւելի կը սիրեմ քան առանձնութիւնն, որ ինձ կը պարգեւէ իմ յիշատակներս, երէկի ու աւելի հին ժամանակի յիշատակներս, մանկութեան ու պատանութեան յիշատակներս: Ոսկի՜ շղթայ մ'է այն, որ ոլորանէն գրեթէ կը սկսի եւ գերեզմանին կը յանգի: Եւ այդ շղթայն՝ ոյր մէն մի օղակին վրայ թոչուն մը կը թառի՝ այդ դիւթական շղթայն առանձնութեա՜ն մէջ իմ աչացս կը փայլի: Եւ մա՞րդ էր որ չը սիրէի առանձնութիւնն: Եւ մա՞րդ էր որ գրիչ ձեռքս չառնէի այժմ ուրիշ բան գրելու համար՝ բայց եթէ նամակ առ Քեզ:

Միտքէս չէ՞ր անցներ որ մանկութեանս անցած վայրերուն մէջ երիտասարդութեանս մէկ գեղեցիկ մասն ալ պիտ՝ անցընէի. եթէ այն սանդուխներէն՝ ուր՝ իբրեւ ուսանող կ'ելնէի թեթեւաքայլ իբրեւ թիթեռնիկ՝ իբրեւ ուսուցիչ օր մը պիտ՝ ելնէի ծանրաքայլ, թէեւ հին բարեկամուհի մ'ինձ պաշտօնակից պիտ՝ ունենայի բարոյական որորանիս մէջ, թէ իրեն հաւասար սիրելի պիտ՝ ըլլայի մատաղ էակաց, որք պիտի դառնային տանջալի կենացս մխիթարութիւնն, տաղտկալի կենացս բանաստեղծութիւնն:

Այսօր տեսնելով պայծառ երկինքն ու պարզ օդն, ինձ ծանր եկաւ գործի իջնել, փափաք ունեցայ Հասգիւղ գալ, Քեզ ու սանուհիներս առնել ու շրջագայութեան ելնել, երթալ Քեաղատխանէ՝ ոյր դալար ափունք կարապնաթոյր կամուրջներով կը միանան, երթալ Զիլիհտար՝ Էյիւպ-Սուլթանին այն շարունակութիւնն— եւ ոյր շարունակութիւնն է թերեւս յաւիտենականութիւնն...:

Գիտէ՞ք, որ այս խօսքս նշանակութիւն ունի մասնաւոր. մօրս, հօրս, եղբօրս հետ այն տղմուտ առուակին մէջ օր մը պիտի խեղդուի (*), այո՛, եւ դեռ պատանեակ էի՛: Ժամեր կան, որ կը ցաւիմ թէ փրկուեցայ այն վտանգէն, թէ մահուանէ զերծայ՝ մահահանգոյն կեանք մը վարելու համար...: Այսպէս ապրեցայ, որպէսզի՝ արտասուօք հօրս եւ եղբօրս գերեզմաններն, որպէսզի ափով հող նետեմ այնքան սիրելեաց վրայ, որպէսզի չի տեսնեմ Օտեանն աքսորեալ և Վարժապետեանն անհիւնացեալ, որպէսզի չի տեսնեմ մահն ալ իմ հաւատքիս եւ իմ յուսոցս...:

Եւ սակայն դամբարանաց մէջ սահող այս կեանքն անհաւատի եւ յուսահատի՝ դեռ հրապոյր ունի: Ահա հարուստ յիշատակք որք զիս կը շրջապատեն. ահա գեղածիծաղ ճակատք՝ որք մռայլ հոգւոյս մէջ վաղ պիտի ցոլանան, երբ արտատրոփ վեր ելնեմ եկեղեցւոյ փողոցի Կրթատան այն սանդուխներէն՝ որոնք Արքայութիւն կը տանին...:

Աստուած ի՛մ, Աստուա՛ծ զոր կ'ուրանամ, այլ զոր կ'ըզգամ, մինչեւ ե՞րբ այն սիրոյ հեղհեղն հոսեցնես պիտի սրտիս մէջ: Սահանացդ մէջ սէր մնա՞ց. ամպոցդ մէջ հուր մնա՞ց: Երեսէդ ո՞ւր փախչիմ, ո՛ Տէր: Մարդկային ազգի կենաց չափ կ'ընդարձակե՞ս էութիւնս՝ որպէսզի սերունդք անհամար յի՛ս ապրին, յիս վառի՛ն, յիս սիրեն եւ յիս հեծեծե՛ն: Կ'ընդլայնե՞ս սիրտս աւելի քան զովկէանս, որպէսզի նոր աւազան բանաս անսպառ սիրոյն՝ որ թերեւս Քեզ

(*) Զիլիհտարէն անդին Զօպան-Զէշմէսի կ'երթայինք: «Այս ջուրին մէջ ծառի քէօքեր կան, պագի ահէմի խայրխնի չիտէ, խայրխը կը նստեցունէ» խօսքը նաւավարին բերանն էր եւ ահա անցա՛ւ նաւակն: Ելաւ տեղէն, Իզո՛ւր կը ջանար ազատել գայն. ջուրն նաւակին մէջ կը լեցուէր... Երկու ազնուական որսորդք բլրոյն ծայրէն բրդան և իրենց նաւակաւն եկան մեզ օգնութեան: Ա՛հ, մի՛ երթաք Զօպան-Զէշմէսի:

ծնունդ տուաւ քան Դուդ այնմիկ: Սակայն սէրն, որ մեր տառապանքն է ինչպէ՞ս երանութիւնդ կը կազմէ: Քու աչքերէդ շաղ ու շող կը կաթէ, ինչո՞ւ մերիններէն աղի արտասուք: Քու հանդերձդ արշալոյսն է. է՛ր անկարող ենք մենք թողուլ սեւ հագուստն: Այլ... զիս ապրեցո՛ւ, Տէ՛ր, չը կամիմ մեռանիլ. կամի՛մ, կամի՛մ տառապիլ...:

Ո՞չ ե ւՔեզ ցանկալի է տառապանքն, ո՛ բարեկամուհիդ իմ քաղցր:

III

ԻԾԱՏԻԷ, 26 նոյեմբէր

Սրբո՛ւհի.

Երբ այնպիսի անուն մը Դու կը կրես, է՞ր ես այլ անուն, է՞ր ես այլ մակդիր կը գործածեմ՝ Քեզ հետ խօսելով կամ Քեզ գրելով: Բայց զՔեզ կոչելէ յետոյ՝ ի՞նչ պիտի ըսեմ Քեզ, ի՞նչ պիտի հարցունեմ առ Քեզ. Ահա՛...:— Երբ ծրարդ ինձ տուիր վառարանին վրայէն, ես զայն ուրիշ հնոցի մը վրայ զետեղեցի՝ հնոց անշէ՛ջ. դեռ առաւօտ էր. խնդրեցիր յինէ զի կարդամ գիրդ առանձին: Ես մինչեւ առանձնութեան սո՛ւրբ ժամն, մինչեւ այն ժամն՝ ուր վաստակաբեկ ու յաւէտ արտաբե՛կ կը մտնեմ ստուերամած խցիկս, մինչեւ երեկոյեան ժամն՝ ամբողջ օր մը, ամբողջ դար մը կար: Նաւամատոյցն երթալով, մաղթեցի որ նախայարկն ոչ ոք գտնուէր շոգենաւուն մէջ, մաղթանքս ընդունելի եղաւ. ոչ ոք էր անդ: Ծոցէս անհամբեր հանեցի ծրարն. եւ երկու թուղթերն՝ որք ելան պահարանին մէջէն՝ զոյգ մը թեւեր ինձ թուեցան, եւ նախայարկին այն բոլորաձեւ լուսանցքներէն՝ յորոց կը թափանցէր լոյսն ինձ յաւէտ սիրելի՝ ներս մտաւ հուր հոգին որ Սրբուհի կը կոչուի. թեւերն իրեն յարեցան, եւ աչքերս այն հրային տեսլեան յառեցան:

Քանիո՛ն ըղձալի էր արտիս, քո՛յր իմ, որ մշտատեւ ըլլար այդ տեսլական կեանքն. իրական կեանքն անտանելի է հոգւոյս. սակայն տեսլական կեանքն ալ տեւական՝ անիրանալի է յաւիտեան: Պէտք է ցրուին վարդափայլ ամպերն, պէտք է փարատին քաղցր անուրջք, պէտք է զարթնու

մարդն, եւ խառնաճաղանճին մէջ գտնէ զինքն: Ո՜հ, որքա՜ն կը փոքրանայ, կը նուաստանայ մարդն իրական օրըստօրէական կեանց մէջ, մեր ոտից տակ տիղմ կամ փոշի, մեր շուրջ սեղանաւորի սեղաններ՝ ոյց վրայէն Մամոնայ դիքն ոսկեծիծաղ կը հեգնէ մեր ազատութիւնն. անարժան էականց առջեւ կը խոնարհինք, հալածեալ կամ անտեսեալ արժանաւորին գողունի ողջոյն մը հազիւ կրնանք տալ, հազիւ կը համարձակինք արտասանել մեր նախահարց անունն՝ երբ արդարութեան եւ վեհութեան համանիշ է այն:

Ի՜նչպէս կը տենչամ Նիրվանային: Գամիլ Տէմուլէն կը գրէր բանտին մէջէն առ իւր Լիւսին: «On est libre quand on dort; on n'a pas le sentiment de sa captivité»: Բայց այն եղկելի երիտասարդ ամուսինն իր Լիւսին անշուշտ կը տեսնէր երազին մէջ: Թերեւս երազք Նիրվանայի ծոցոյն մէջ ալ կը սպասեն անոնց՝ որք սիրեցին—մեզ նման...: Է՞ր այնքան կ'ատես ինչ որ այնքան ես կը սիրեմ—Նիրվանա՜ն: Ո՜վ կ'ըսէ թէ լուսինն՝ ում այս վայրկենիս անշուշտ յուզմամբ հայիս՝ յիշելով հոգեհատոր եղբայրդ՝ ո՞վ կ'ըսէ թէ լուսինն Նիրվանային ծոցն աւելի անոյշ չի պիտի ժպտի մեզ, աւելի քաղցր չը պիտի չողայ մեր ճակատաց վրայ. ո՞վ կ'ըսէ թէ գեղգեղաձայն սոխակք Նիրվանայի ստուերաց մէջ ալ չի պիտի որորեն մեր քունն եւ կամ չը պիտի զուարճացնեն մեր արթնութիւնն. ո՞վ կ'ըսէ թէ մեր պատուանդանն հոն ադամանդէ չը պիտ' ըլլայ. ո՞վ կ'ըսէ թէ գահերու վրայ չը պիտի գտնենք հոն հովուական կեանց երանութիւնն:

Ահա կեանքէս օր մ'ալ անցաւ, ահա ժամ մ'ալ անցաւ. իմ գիշերէս: Եւ ես զոհ եմ, քանզի անշրպետն՝ որ զիս կը բաժնէ Նիրվանայէս՝ աւելի կարճացաւ:

Մեծ վշտի մը վրայ կը խօսիս, այնքա՜ն փափուկ կերպիւ (եւ սովորական է Քեզ այդ փափկութիւնն), ինձ կը խօսիս մեծ վշտի մը վրայ՝ ոյր կը տեսնես հետքերն իմ «տխրագե՜ղ ճակտիս» վրայ: Ա՜հ, վիշտեր արդարեւ ունեցած եմ. այլ չեմ կրնար ըսել թէ ո՞րն է ամենէն մեծն. ա՛յն որ ամենէն փոքրն է թերեւս յաչս մարդկան: Եւ ես կը խորհիմ աւելի իմ ունենալիք վիշտերուս վրայ:

Անցեալ օր Բիւզանդ Քեչեան կը զարմանար թէ մտա-

ւոր ոյժս՝ նուաղելու տեղ՝ կ'ալելնայ. հապա արտիս հո՞ւրն, այն չ'աւելնա՞ր միթէ: Եւ մեծ վշտերուն աղբիւրն անտարակոյս հո՛ն է, արտին մէջ:

Ի՞նչ եղաւ այն վառարանն, ոյր շուրջ բազմած այս առաւօտ կը խօսակցէինք առանձին. անհիւն եւեթ մնաց հոն, իսկ բոց յաւիտեան՝ մեր արտից վառարանին մէջ: Ո՞վ գիտէ ի՛նչ սահմանեալ է մեզ: Բայց թէ ի՛նչ պատահի, թէ բաղդն ո՛ւր ալ զմեզ նետէ...: Ո՛հ, չեմ ուզեր վերջացնել: Գիշեր քարի՞:

IV

ԻՄԱՐԻԷ, 22 դեկտեմբեր

Քոյր իմ.

Այս երկու բառերն՝ երկու սեւ արեւներու նման՝ թանձրագոյն խաւարի մէջ թաղա՞ծ են սիրտդ: Չէի կամիր տեսնել այդ արեգականց արշալոյսն, այլ միայն իբրեւ նկարիչ: Սակայն յուսա՛մ թէ դու պիտի տեսնես իրենց վերջալոյսն, երբ աւարտես նամակս:

Առաջին նամակիդ մէջ բառ մը գործածած էիր—**մայրաբար**: Չէի կրնար ընդունիլ զայն, որովհետեւ երկուքս ալ կենաց նոյն եղանակին մէջ կը գտնուինք: Չը գիտեմ ճիշտ ի՛նչ կը կոչուի այդ եղանակն. այլ լա՛ւ. էր ինձ գերեզման մտնել քան այդ եղանակին մէջ...: Երբ երկինք վերցնեմ աչքերս և հոն ինձ երեւին սեւ, երկայն ամպեր, ինձ կը թուի թէ ճակտիս խորշումներուն պատկերն են. եւ կը փորձուիմ դանակն առնել ու խորշումներս գծել... Այսպէ՞ս կ'ուզէի դարմանել ամաց աւերն: Այլ մերթ կը մխիթարուիմ եւ կը կազդուրուիմ, խորհելով թէ հեռուստ այդ սեւ գիծերն՝ նաւոյին վրայ թեւատարած թռչնոց տպաւորութիւնն յառաջ կը բերեն...: Միամի՞տ եմ այսպէս խորհելով: Ա՛հ, իցի՛ւ թէ միամտութիւն աւելի պարգեւած ըլլային ինձ երկինք, մահկանացուին գերագոյն օժիտն է այն: Հանիս քոյր մ'ունէր, որ կը հաւատար կամ կը կարծէր թէ յօնքերն—իր յօնքերն—հրեշտակաց փետուրէն քաղուած էին. եւ երջանի՞կ էր: Ես ալ կը հաւատայի թէ հանիիս այն քոյրն հրեշ-

տակներէ սիրեալ եւ նպաստաւորեալ էր. եւ ես ալ երջանիկ էի յայնժամ: Աւա՜ղ, դժբախդութիւնն ինձ համար սկսաւ ա՛յն օրն, ուր գիտցայ թէ բնականօրէն բուսած էին հանիս քրոջ յօնքերն, այն օրն որ գիտցայ թէ յերկնից իջնող թըռչուններն ալ՝ մարդոց ու համայն անասնոց նման՝ հողմածին էին եւ թէ՝ առանց օդոյն երգ չը պիտի ունենային...:

Արդ, մարդ էակին սկզբան ու վախճանին, մարդոյն բնութեան ու բարեշրջութեան վրայ այնքա՛ն բան գիտնալէ յետոյ, ինչպէ՞ս չը պաշտեմ այն յորջորջումն, ինչպէ՞ս չը յեղյեղեմ այն զոյգ մ'անզուգական բառերն «Քո՜յր իմ»: Բարեբաստիկ ամոլ մը չէ տեսայ. տեսայ երիտասարդներ ու երիտասարդուհիներ, որք հառաչեցին ու հալեցան իրարու համար եւ ոյց սէրն արդէն սպառած էր՝ երբ նոյն պսակին տակ միացան իրենց գլուխներն: Այդ ճակատաց հպումն աղետաբեր է սիրոյն: Այդ. հպման մէջ խոյս կուտայ սէրն, որ յաւիտեան կ'արծարծուի շրթանց եւ այտից կցումէն: Ա՛յս է հաւատքս ամուսնութեան վրայ. կին բառն ինձ ատելի է, որպէս թիւն ատելի էր Լամարթինի: Իսկ ինձ համար հոմանիշ են **քոյր** եւ **սիրուհի, սեր** ու **Սրբուհի:**

Վախնամ թէ վէճն նորէն բացուի քու ու մտերմուհիդ միջեւ: «Սիրոյ վրայ խօսիլն» ըսուած է «սիրել է»: Սիրոյ վրայ վիճիլն ալ՝ կ'ըսեմ ես՝ սիրել է: Վիճեցէ՛ք, ուրեմն, քանի որ ես պիտ օգտուիմ այդ վիճաբանութենէն... Մինաս Չերազ բարեկամս՝ որ անհանգստութիւնս իմացած էր՝ երէկ այցելութեան եկաւ ինձ. մենք ալ վայրկեա՛ն մը սիրոյ վրայ խօսեցանք. «միշտ կը սիրե՞ս» ինձ հարցուց մտերիմս: Ժըպտեցայ: Չը գիտեմ ի՛նչ նշանակութիւն տուաւ այդ ժպտին: Ես ալ իրեն չը հարցուցի նոյն բանն. նախ հարցում մը՝ զայն ուղղողին վերադարձնել բնութեանս կամ սովորութեանս հակառակ ըլլալով, ապա, բոլորովին այդպիսի հարցում մ'աւերորդ դատելով alter eog իս համար: Սակայն, եթէ զսիրոյ կը խօսինք, առարկայի խօսք չըլլար մեր ընդ մէջ. սիրտս՝ մտերմիս համար գաղտնիք ունի, որպէս իր սիրտն՝ ինձ համար: Տրտմութեամբ մերթ ինքնին կը հարցնեմ սրա պատճառն. եւ չը գտնելով զայն ես առաւե՛լ կը տրտմիմ...: Եւ սրտիս գոյութեան վրայ կը տարակուսի՛մ...: Մտերմուհիդ՝ այս խօսքին պիտի բերկրի. իր անուանն արժանի պի-

տի հանդիսանայ կամ պիտի կարծէ...: Ա՛հ, վիճեցէք, վիճեցէք սիրոյ վրայ. մի՛ ըսէք թէ մարդիկ սէր չունին, կամ սիրտ չունին, քանզի մարդիկ ալ՝ որք արտաքուստ միայն կը տարբերին կիներէն՝ հակառակ սեռին պիտի վերադարձնէին տոկոսեօք այդ թշնամանքն...: Սիրոյներուն վրայ մի՛ վիճիք, սիրոյ վրայ վիճեցէք: Եւ մի՛ վիճիք սիրոյ գոյութեան վրայ, որ Աստուծոյ գոյութենէն աւելի ապացուցեալ է. վիճեցէք սիրոյ բնութեան վրայ. հարցուցէք «աստուածայի՞ն է, դժոխայի՞ն է»: Ատի մարդ չը գիտցաւ, եւ սակայն ամէն մարդ ատի կը հարցնէ: Թուղթս հատաւ. անսպառ է սէրս ու սէրդ՝ Եղիա:

V

1887, ԻԺԱՐՏԻԷ, 10 յունվար

Այս իրիկուն շոգենաւին մէջ Գալուստը տեսայ. հարցուցի «Հիւրերնիդ մեկնեցա՞ւ»:— «Մեկնեցաւ, ու Սաթենիկն ալ հետը տարաւ:» Գոհ եղաւ սոյն հաստատական պատասխանէն: Հինգշաբթի, ձիւնը տեսնելով, յիշեցի զքեզ. «Այս օդով ինչպէ՞ս պիտի գայ մինչեւ Հասգիւղ», հարցուցի ինքնին. եւ ես ինձ պատասխանեցի իսկոյն. «Զեան վրայէն թռչնոյ մը նման պիտի թռչի, եւ իւր սիրելի եւ իմ սիրելի սանուհեաց համբոյրներովը պիտ՝ ջեռնու»: Նոյնպէս գոհ եղայ հօրաքեռ աղջիկս ալ ընկերացեր է քեզ. պէտք է նա՛ ալ կենաց կռուին վարժուի. պէտք է նա՛ ալ քաջութիւն սորվի կամ մանաւանդ ի հանդէս ածէ իր քաջութիւնն: Ես գրեթէ ատելութիւն ունիմ այն աղջկանց կամ կանանց դէմ ոյց կեանքն իր հեշտ ու զուարթ երեւութովն եւեթ ծանօթ է: Երկու սեռէ տանջուողներուն, մարտնչողներուն համար սէրս անտարակոյս նուազ պիտ՝ ըլլար, եթէ կենաց պայքարին մարտիկներն մին ալ ես չը լինէի: Այսօր **Երկրագունտի** (*) գրասենեակը վատցա՛յ. վառարանին մէջ ոչ

(*) Ա՛հ, պիտի կործանի **Երկրագունտն**, այնչա՛փ կը զղջամ որ անցեալ տարի չընդունեցայ Ասիական Ընկերութեան Տնօրէն Ժողովոյ Ատենապետութիւնն, երբ այնքան թախանձանօք ինձ առաջարկուցեաւ ընդհ. ժողովոյն մէջ:

միայն կրակ չը կար, այլ եւ մոխիր ալ չը կար. Յուլիս ամսուան մէջ ո՛ւր կը կենար, հոն կը կենայ միշտ մեր **սաճ մանկան**—որ ինքն ալ կարծես կը մսի՞: Քանի մը հիւրեր եկան. շուտ փախան. ես դիմացայ, դիմացայ, մինչեւ որ յանկարծ՝ սառելու երկիւղէն համակուած՝ դուրս նետուեցայ սենեակէն ընդարմացած ձեռքս հազիւ կարողանալով փակել երկաթէ դուռն: Ես կը փափաքէի, որ հարկադրուած ըլլայի գիշերն այլ նոյն սենեակին մէջ ննջել, առանց անկողնի, առանց վերմակի, առանց կրակի, առանց կանթեղի, եւ յուսահատ՝ մարդասիրական այցելութենէ: Ո՞հ կը պաշտեմ թշուառները. եւ եթէ փափաք մ'ունիմ, որ հաւասարի յետին թշուառութեան ենթարկուելու տենչիս, բոլոր աշխարհի թշուառաց օգնել կարենալու փափա՞քս է: Միայն այս անկեղծ տրամադրութեամբք օժտեալ ըլլալուս համար կ'ընդունիմ այն փառաւոր մակդիրները զորս նամակագիր միոյն մէջ ինձ շռայլած էիր: Ուրիշի նկատմամբ արհամարհելի, ատելի, խորշելի էակ մըն եմ...:

Այո՛: Երբ հոյակապ շէնք մը տեսնէ մարդ ի՛նչ կը զգայ.—Հիացում: Այդ ես ալ կը՝ զգամ. այլ ինձ կը թուի թէ հիացումս պիտ՝ աճի, երբ կապուտակ ծուխ մը տեսնեմ նոյն շէնքին վրայ, երբ տեսնեմ բոցերն՝ որք կատաղի ոգիներու նման յարձակին ճարտարապետական հրաշակերտին վրայ եւ իրարմէ յափշտակեն իր հիւթեղ հրաշագեղ անդամներն, ոյց ամբողջութիւնն նազելի կնոջ մ'իրանին արտափայլումն էր գոգցե՞ս: Նորածնի նօնօշիկ մանկան մ'ի տես ինչ զգացում կը ծնի սրտիս մէջ.—ցնծութիւն, զորով, անձնուիրութիւն: Իսկ ես ցմահ կը տրտմիմ խանձարուրի մ'առջեւ, կ'անիծե՞մ լոյսն, որ զայն աչացս կը յայտնէ. կ'անիծե՞մ աստղերն, որոնք մանկան մայրն ըղձալի համատեղել իւր արգանդի, պտղոյն ուլն կամ ճակատն. ես ալ կ'ըղձամ, որ երկու գայլեր իրարմէ խլեն այն գիրգ մարմինն, որ գրկախառնութեանց հեշտաւէտ հրովն է զանգուած, որ շրթանց շփումէն արտայայտուած կայծն է, որ թերեւս օր մը Տանդէ մը պիտի խանդավառէ կամ Պոնաբարդ մը պիտի խոնարհեցուցանէ: Ի՞նչ զգացում կ'ունենայ երիտասարդն, երբ խումբ մը կուսանք շնորհագեղ եւ ամօթխեած դիմաւորեն զայն՝ դաշտի մը կամ դրախտի մը մէջ.—Սէր այդ կուսա-

նաց միոյն համար: Ա՜հ, ես, որ շատ ժամանակէ ի վեր ծեր եմ արդէն, մոլեգին կրիւք կը բոցավառիմ, կ'ուզեմ ակռաներս իրենց մարմնոյն մէջ անցընել, կ'ուզե՜մ իրենց բերնին մէջ աւազ լեցնել, կ'ուզե՜մ իրենց ծիծերուն ծայրին լուցկիքս վառել եւ իրենց խիտ գիսակն հրդեհել՝ ամենո՜ւն ալ, այո՜...:

Հո՜ւր, հրդեհ: Իմ մեծագոյն տանջանքս ա՜յդ եղած է— հուրս: Հուր հոգեկան, հո՜ւր նիւթական, ամենուրեք զայդ գտնել կը տենչամ: Կը հարցնես ինձ թէ սիրտ ունի՞մ.— Չը գիտեմ. հուր. ահա ինչ որ ունիմ: Եւ ես կը զարմանամ, որ իմ հուրս անկարող է հալեցնել սառերն, որք կը մարմարեն հողն այս առաւօտէն իվեր: Գիշեր կը գրեմ քեզ, պիտի մակաբերես զայն արդէն յաւէտ կամ նուազ կոր գիծերէն զորս նամակիս տողերը կը կազմեն: Չէ համարձակեցայ նամակիս վրայ դնել անունդ, եւ նամակիս ներքեւ իմ անունս:

VI

ԻՄԱՏԻԷ, 11 Յունվ. գիշեր

Առ բարեկամուհին.

Մաներկրորդի մը մէջ կարդացի՝ ինձ չը գրած երկար նամակդ: Նամակաթղթոյն սպիտակութեան հաւասար սպիտակ տառերդ այնքա՜ն նուրբ եւ այնքա՜ն որոշ էին: Ծերմակ թուղթի վրայ ճերմակ մելանի գործածութեան գաղտնիքն ինձ անծանօթ գոլով, սովորական եղանակով՝ սեւ մելանով՝ կը գրեմ քեզ, տրտնջալու համար կծու յանդիմանութիւններէդ, վերջին նամակիդ պատասխանն յապաղելուս պատճառաւ: Սրտիս փափաքն՝ էր հանապազօր գրել քեզ: Գիտնալով, որ սրտիս փափաքներուն խիստ քիչերն յագեցնելու կարող ըլլամ՝ նիւթական ծանր զբաղմանց պատճառաւ, զիս կը յանդիմանես—դատա՜րկ պահարանովդ: Հանճարեղ ես, այլ անգո՜ւթ ես:—Քենէ աւելի անգութ իմ բաղդը է միայն, որ զիս կը դատապարտէ փորձ սրբագրել, երբ ես ամենմանուած էի գործ արտադրել...:

Գիրէս յառա՜ջ կը հասնիմ քեզ:

VII

ԻՄԱՏԻԷ, 27 փետրվար

Ժամ երեքն է. մայրիկս գնաց ննջելու եւ ես կը սկսիմ երազե՛լ: Ահա Հասգիւզ եմ. դպրոցի սանդուղներէն վեր կ'ելնեմ. Թիրեաքեան էֆէնտին դէմս կ'ելնէ. ի՜նչ... դժբաղդութիւն: Բարեբաղդաբար վար կ'իջնէ եւ ես վեր կ'ելնեմ: Գանձապետն ինքն է, բայց Գանձն իմ քովս է: Ամիսն ինձ ոսկի մը կուտայ, ես մէկ միլիոն ոսկիի երջանկութիւն կ'առնեմ իրմէն: Իրմէն ինչո՞ւ ըլլայ. Հասգիւղէն, Ս. Ներսէսեան աղջկանց վարժարանէն: Եւ ահա հոն եմ. Ս. Ներսէսեան բարձրագոյն դասարանին մէջ. դէմս կայ քառակուսի մեծ սեւ տախտակ մը, գիշերուան պէս սեւ, անդունդին պէս սեւ. բայց եթէ տեղ մը կայ, ուր ամենէն աւելի հեռու կը գտնուիմ անդունդէն, ուր ամենէն հեռու կը գտնուիմ գիշերային մթութենէն, հոն, այն սեւ տախտակին դէմն է: Հոն կը կանգնիմ. հոն կը բազմիմ, եւ կը յիշեմ Թիրեաքեան էֆենտին. նա շուկան է, ես դրախտն եմ. գոհ է որ ամիսն ոսկիէ մը աւելի չը տար ինձ, գոհ եմ, որ մէկ միլիոնի երջանկութենէն նուազ չեմ վայելեր շաբաթն: Երբ նա կանգուն ի ձեռին կը չափէ եւ կը հաշուէ, ես կը մոռնամ չափ ու թիւ: Ես կը մոռնամ թէ այնքա՜ն մղոն հեռու կը գտնուիմ արդէն, ես կը մոռնամ տարիներու թիւն որք գլխոյս վրայէն անցան, սեւ մազերս եւ ոսկի անուրջներս խլելով ու տանելով անդարձ . . . . . :

Ահա հասա՛ւ, ահա հասա՜վ: Ո՞ւր կը թաքչի արդեօք. կը լրտեսէ զուարթութիւնն: Այն ինչ կը փթթի ժպիտն աչացս մէջ, եւ ահա՜ կուգայ տրտմութիւնն՝ արտասուաց մէջ խեղդել զայն: Կը լսեմ բերկրութեան ողորմագին աղաղակն. ի զո՞ւր, ոչինչ կարող եմ ընել. ոչինչ կը ճանչեմ Տրտմութենէն հզոր, անդիմադրելի՜: Կ'ողողէ հոգիս, կը պարուրէ մարմինս. զոգցես սեւամորթ պարիկի մը գրկախառնութիւնն է, հուրիի մը կամ հրեշտակի մը գրկախառնութենէն աւելի հեշտաւէտ արբուցիչ...: Այլ կը մոլորիմ դարձեալ. Գիշեր բարի՜, Սրբո՜ւհի: Ա՜հ, Նիրվանայի ծոցն արթննայի՜

. . . . . .

Ի՞նչ օր էր այն, Սրբո՛ւհի: Այդ գեղեցիկ սիրայուշիկ աւուրք պիտի կրկնուի՞ն գամելիազարդ կամ մանիշակազարդ: Եւ օ՞ր մը, միացնելով բայն ու գոյականն, **ի՞նչ օրեր** պիտի ձայնարկենք, եթէ տակաւին ձայն ունենանք:

Բայց եթէ մեր ձայնն ալ նուաղի, միթէ բնութիւնն հոն չէ՞ յաւէտ. միթէ հոն չե՞ն առուակք եւ անտառք, ալեակք եւ տերեւք իրենց թափառիկ, մելամաղձիկ ձայնով, այո՛, պիտի ձայնեն ու կրկնաձայնեն «ի՞նչ օրեր...»:

Եւ որքա՛ն երջանիկ ենք, որ եթէ մէկ քանին մեր ետեւ ունինք, դեռ բազում գեղանեան օրեր ունինք մեր առջեւ, ոյք պիտ՚անցնին, ո՞վ գիտէ ուր,— թէեւ ես կ՚ուզէի, որ ի Հասգիւղ անցնէին: Հասգի՛ւղ, ի լուր այդ անուան սիրտս կը տրոփէ: Երբ սիրտս կորսնցնեմ, կ՚աղաղակե՛մ, Հասգիւղ, եւ տրոփիւնք կուգան հաստատել սրտիս գոյութիւնն:

Եւ երբ լսեմ Հասգիւղ անունն, նախ ի՞նչ կը յիշեմ, գիտե՞ս: Թերեւս ըսես «գիտեմ ո՞վ կը յիշես»: Չը գիտես, Սրբուհի, չը գիտես թէ կը յիշեմ մեր... էշն: Ի՞նչ յարում է զոր մարդ ունի կենդանեաց: Հէ՞գ եղբայրս ... եւ ես, այն իշուն շուրջ կը դեգերէինք, մեզ համար տեսարան մ՚էին իր շարժուն ականջք զորս կը տնկէր, երբ խոտ կերած ժամանակ իրեն մօտենայինք. կից կ՚ուտէինք, այլ կը սիրէինք մեր էշն: Երբ նստած գտնէինք զայն ախոռին մէջ մինաւորիկ, խոհուն, այլ ժպտուն յաւէտ, կը հրճուէր. երկիւղիւ կը մօտենայինք կենդանւոյն եւ կը փայփայէինք իր երեսն: Եւ ահա Խրիստոն կուգար, հայտէ՛ մեր էշն առջին կը ձգէր ու պօստան տոլապիին կը կապէր. կ՚աղաչէինք որ չը կապէ աչքերն ալ. քիչ մը կ՚անցնէր, կ՚աղաչէինք Խրիստոյին, որ ալ քակէ հանէ խեղճ կենդանին. «Յոգնեցաւ» կ՚ըսէինք: Եւ մեզ համար անգութ մարդ էր պարտիզպանն, որ կը թողուր ժամերով պօստան տոլապիին շուրջ դառնալ մեր սիրելի բարեկամն...:

Ի՞նչ է այս յարումն զոր ունին մարդիկ առ կենդանիս, եւ ոչ միայն մանկունք, տղայ, մարդիկ, այլ չափահաս մարդիկ ալ. Արաբին սէրն իր ձիուն համար, Պայրընի սէ՞րն

իր իշուն... ի՜նչ կ'ըսեմ, իր շունին համար: Մենք շուն ալ ունէինք, աղուորիկ կատու ալ, աղաւնիներ ալ, հաւեր ու վառեակներ ու ձիեր ալ. բայց նոյն իշուն նայուածքն ինձ խանդաղատանք կ'ազդէր: Դպրոցէն վերադարձիս՝ անհամբեր ախոռն ուղղակի կը վազէի. չեմ ամաչեր խոստովանելու զայս, մանաւանդ կարդալէ յետոյ Վիգտոր Իւկոյի մէկ սքանչելի հատուածն՝ ուր կը հաստատուի խոնարհ չորքոտանւոյն մարդոց վրայ առաւելութիւնն իբրեւ բարեսրտութիւն, մանաւանդ կարդալէ վերջ Բոլ Հէյդի **Աւանակն:** Ա՜հ, միայն **Վերթեր** կարդացած ժամանակ այնքան ջերմ արտասուք թափած եմ, որքան, երբ ընթերցայ գերման սիրուն վիպասանին այն փոքրիկ-մեծգլուխ-գործոցն՝ **Աւանակն:** Իմ իշուս վրայ ալ լա՜ցի միանգամայն:

Եւ գիտե՞ս, Սրբո՛ւհի, ո՞ւմ հետ կ'ուզէի երես երեսի հանգչել տապանին մէջ. ո՛չ քեզ հետ՝ որպէս տեսած ես խորհրդաւոր երազիդ մէջ,— այլ իմ իշո՜ւս հետ...:

IX

ԻՄԱՏԻԷ, 10 ապրիլ

Սրբուհի,

Կը թողում այն աշխատանքն, որ ինձ ամենէն անհաճոյ է, եւ կը սկսիմ հոգւոյս հաճոյագոյն աշխատանքն: Գուշակեցիր, որ թող բառարանի սրբագրութիւնն՝ առ քեզ թուղթ գրելոյ համար: Գրելու համար քե՜զ թուղթ բողոքոյ:

Մերթ հեռուէն դաշոյն մը տեսնելով արեգակ կը կարծէ մարդ. ասի անբացատրելի չ'է: Բայց անբացատրելի է ինձ համար, երբ իմ նամակս դաշոյն քեզ կը թուի. թուի՜լն ալ խո՜սք է, դաշոյնի գործ կը կատարէ սրտիդ համար: Սրտիդ վէրքերը երէկ խօսքերուդ մէջ կ'արիւնէին (եւ թերեւս ա՜յն արիւնն է, որ կը ցոլար իմ եւ աշակերտուհեացս դիմաց վրայ՝ որք հակապատկեր մը կը կազմէին մարմարեան դիմացդ հետ). եւ ահա նամակիդ մէջ ալ կը գտնեմ թանձր արիւն սրտի: Սովորականէն հակիրճ գրած էիր նամակդ. եւ գիտե՞ս, որ դեռ այնքան լաւ ապացուցած չէիր սէրդ առ իս: Սակայն, այո՛, անբացատրելի կը մնայ ինձ թէ նամակս ի՜նչպէս կրցած է վիրաւորել զքեզ: Վիրաւորուա՞ծ ես, բան-

զի ես զիս թշնամանած էի թղթոյս մէջ, այլ ես, քո՛յր իմ, ես զիս անարժան կը գտնեմ հրեշտակի մը սիրոյ, որ բնագաւառն է անմահութեան: Ես սիրելի էշ մ'ունէի, մանկութեանս օրերուն անբաժան ընկերն. երբ զիս առ յաւէտ թողուց, լացի՝ որպէս կուլայ սերոբն, որ ընդ միշտ կը բաժնուի իր նժոյգէն: Դիտա՞ծ ես, Սրբուհի, մեծ հոգիներն, խորունկ էութիւններն աւելի կը յարին կենդանեաց քան իրենց նմանեաց (երկու սեռէ ալ): Ինչո՞ւ չես ներեր, որ հասարակ այլ ոչ ընդհատ խորին էութիւն մը՝ որպէս եմ ես՝ յարիմ ու յարեալ մնամ իշու մը: Եթէ շիրմին մէջ դեռ գիտակցութիւն պիտի ունենայ մարդ, հոն չէի ուզեր հանգչիլ իմ երկրպագած էակներէս ո՛չ միոյն հետ. ո՛հ, կ'ուզէի գերեզմանին մէջ երես երեսի հանգչիլ Վիշտին հետ, որուն միայն թերեւս պարտիմ Քնարս. իսկ եթէ՝ հակառակ աղերսանացս՝ Վիշտն, իմ շրթանցս զլանար իր աստուածօրէն տժգոյն այտերն, եւ թևոցս զլանար իր ճառագայթներէն նուրբ հասակն ի վայելումն յաւէրժ ի գերեզմանին, յայնժամ, այո՛, կ'ուզէի իմ Հասգիւղի իշուս, իմ մանկութեան անմոռանալի բարեկամիս հետ երես երեսի ննջել ի գերեզմանին:

«Քնարն» ըսի. կա՞րճ եկաւ այդ բառն Երկարագոյն համանիշն յիշեմ, **բանաստեղծութիւն:** Վշտին, այո՛, պարտիմ բանաստեղծութիւնն, որ իմ կեանքս է, որ զիս սիրելի, կացուցանէ գերագոյն էակաց, որ եւ քեզ սիրելի կացոյց զիս, ո՛ Սրբուհի, ճառագայթ մը նման նուրբ, լուսատարր, երկնային Սրբուհի: Քնա՛ր... տիղմն եմ ես եւ ճառագթով կը սնանիմ, ճառագայթ կը ծծեմ: Ա՛հ, գթութի՛ւն, ճառագայթալիր թղթակցութիւնէդ զիս երբէք մի՛ զրկեր, Սրբուհի:

X

ԻՄԱՏԻԷ, 27 մայիս

Սրբուհի՛,

Որքան երախտապարտ ըրիր զիս կիրակնօրեայ այցելութեամբդ: Մեր մտերմութիւնն օր աւուր աւելի կ'ամրապնդի: Եւ ոչինչ աւելի կ'ամրապնդէ մտերմական կապերն...

քան հիւանդութիւնն: Մարմնոյ տկարութիւնն երեւան կը հանէ սրտին բոլոր զօրութիւնն:

Իմանալով տկարութիւնս, աւելի կը յուզուիս, քան թէ զիս տեսնէիր քաջառողջ. եւ սրտին զօրութիւնն ո՞չ ապաքէն յուզման սաստկութենէն կը չափուի: Կը մտածեմ կամ կը զգամ թէ, առ Քեզ ունեցած սէրէս աւելի թերեւս իմ տկարութիւնս է, որ զիս համակրելի կը կացուցանէ Քեզ: Քանզի նոր չէ տկարութիւնս. երբ այս անգամ ի Հասգիւղ նորէն իրար հանդիպեցանք, տկար էի արդէն, կուրծքս տկար. կը գուրգուրայիր վրաս, եթէ հնար ըլլար՝ մազերովդ ու մարմնովդ պիտի ծածկէիր պատուհաններուն ճեղքերն, որոնցմէ մեր դասարանին մէջ կը սողոսկէր քամին:

Ո՜չ, դու զիս երեւակայական հիւանդ չ'էիր կարծեր. դու գիտէիր թէ Արծրունի և Քեաթիպեան զիս երկար ատեն դարմանած էին, քանզի զիս հիւանդ գտած էին: Իրաւ է, որ իրական հիւանդութենէս զատ ունիմ հիւանդութիւն մ'ալ. սակայն անի երեւակայական չէ, այլ բարոյական: Դու զիս այդ կրկին հիւանդութեանցս համար կը սիրես: Եւ սիրոյդ անշուշտ առաւել արժանացայ նոր հիւանդութիւն մ'ալ ստանալով, որ փարատելու վրայ է, այլ որ հետք պիտի թողո՜ւ վրաս...: Խելագարութեան սկզբնաւորութիւն մ'իսկ չէր թերեւս ունեցածս. մտաւոր տարապայման յոգնութեան եւ բարկութեան առթած հիւանդային վիճակ մ'էր, զոր անփոյթ չեղայ դարմանել տալ. եւ միայն ինձ կը թուի թէ տրտմութիւնս ապշութեան թեթեւ հանգամանք մ'առաւ: Այսուհետեւ, ա՜հ, կրո՜ղս կը տեսնեմ, երբ հայերէն հանդէս տեսնեմ: Ո՜ւր երթամ, իմ ասպարէզիս մէջ այնպիսի մարդօց կը հանդիպիմ որք զիս շահագործել կ'ուզեն: Մեծագոյն բարերարս պիտ՝ ըլլար այն անձն, որ այս տագնապալի կացութեանս մէջ յանկարծ զիս ուրիշ ասպարէզ մը փոխադրէր: Չեմ կրնար բացատրել որքա՜ն զզուեցայ, որքա՜ն զզուցեայ այս ասպարէզէն:

Երբ ի Գատրքէոյ գերմարդկային ջանքերով զիս ազատեցին մահուան թմբիրէն, պահապան զինուոր մը՝ ազնիւ անձ՝ քաղցր ձայնիւ հարցուց թէ ինչո՜ւ ծով նետուեցայ... Պատասխան տուի. «Զի կեանքէն զզուած էի, եւ յաւէտ

զզուած եմ կեանքէն...:» Իմ այս տրամադրութեանս մէջ անփոփոխ՝ ինձ հետ այսպէ՞ս վարուելու են...:

Ա՜հ, ի՞նչ կ'ուզեն ինէ. ինչո՞ւ զիս չեն հասկնար. ինչո՞ւ զիս կը հալածեն. ինչո՞ւ զիս չարաչար կ'աշխատացնեն եւ չարաչար կը խաբեն...: Պաղտատլեան տպարանն երեք վայրկեան հազիւ կրցի կամ ուզեցի մնալ այսօր. հազիւ երեք ժամ ալ կրցայ կենալ **Երկրագունտի** գրասենեակն, ու շուտ տուն վերադարձայ. կատարեցի սակայն պարտքս, գործքս, սրբագրեցի—առանձին—**Երկրագունտի** փորձերն. սկսաւ գլուխս ծանրանալ: Դարձիս՝ քացախով բաւական յաղթեցի: Նոր շիշ մ'էր քացախի. քիչ մալ հերացդ խուրձին վրայ կաթուցեցի, զի թուեցաւ ինձ թէ քու ալ գլուխդ կը ցաւի՝ առ համակրանաց:

Յ. Գ.— Քու Վ....իդ ըսէ, կ'աղաչեմ, որ մեր երկուքին մէջտեղ չը մտնէ—բայց միայն մտիկ ընելու համար:

XI

ԻՄԱՏԻԷ, 8 Յունիս

Եթէ ոչ նոյն օրն, այլ նոյն ժամն է յորում այցելեցի քեզ՝ հինգշաբթի: Հասգիւղի տուներն այնպէ՞ս են, պարտէզի դուռ ալ ունին: Մեր տան ալ փողոցի դուռն հիմա չի բանիր, ու նոյնպէս ձեր դուռն ալ: Բայց ինչ անհուն տարբերութիւն այն երկու տանց միջեւ. մեր տունն՝ յիշատակնե՞ր այժմ հոն կը բնակին. իսկ այն տան մէջ, ոյր զանգակն եւ կամ ուսնակն անցեալ օր զարկի, կը բնակի կամ կը բունի էա՞կ մը, որ ունի յիշատակի մը վսեմութիւնն այլ, որ ունի նաեւ ինչ որ յիշատակին կը պակսի—կենդանութիւնն: Ո՜չ սակաւ ինչ ե՞ւ քեզ կենդանութիւնն այն օր կը պակսէր, Սրբուհի: Կենդանութիւնն, արեան իսկութիւնն, այտիցդ վրայ եկած էր՝ գոգցես առյաւէ՞տ խոյս տալու համար... ո՜հ, ո՜չ, դիմացդ սպիտակութիւնն եւս առաւել ի վեր հանելու համար. կը նմանէիր **Ռափայելի** դիւցազնուհւոյն. եւ տեղն ու տուն ալ այնքա՞ն կը նմանէին այն երկնային վիպասանութեան մէջ նկարագրուած հիւանդադեղ հոգեհրաւէր սիրավայրին...:

Եւ անցաւ երազն, անոյշ, անասելի, անդառնալի՜.— քանզի չեմ մաղթեր անշուշտ քեզ վերստին հիւանդանալ (յուսամ ապաքինեցար) երկնասքանչ տեսարան մ'ընծայելու համար բանաստեղծի մը, որ սիրտն այնքա՜ն մանրաբաժին ցրուած է տիեզերաց մէջ մինչ զի լանջացն ետեւ, որ սրտին գտնուած տեղն այսօր լցուած կը համարի ցուրտ զգացմամբն...:

Այլ դու սիրտ պիտի գտնես վերագրեալ պարբերութեան առաջին նախադասութեան մէջ: Չը գիտեմ, ա՜հ, չը գիտեմ, ո՜Սրբուհի, չը գիտեմ ի՛նչ եմ, ի՛նչպէս եմ, ի՛նչ ունիմ, եւ ի՜նչ չունիմ: Բայց թէեւ չունենալս քա՜ջ գիտեմ, եւ յաւէտ կը նախանձիմ այն արարածոց, որք փետուր ունին եւ մեր գլխոյն վրայ սաւառնելով հոլաթեւ կ'արգահատին թերեւս մեր վրայ, զի փետուրն՝ ազատութեան խորհրդանշան՝ գործիք ենք ըրած մեզ գիտութեա՜ն: Անտուն, անհանդերձ, անգործիք, եւ անգործ յաճի՜լ արարչութեան մէջ, ո՜գեղանսեհ արարած...:

Չունի՞ն իրենց անուրջներն անո՜նք ալ: Անո՜ւրջ, իրենց բոլոր կեանքն անուրջ է: Կը թռչին, կ'երգեն բոլոր իրենց կեանքն, որ հողէն վեր կ'անցնի, թերթերու մէջ, դալարեաց մէջ, օդոց մէջ, ճառագայթից մէջ, փայլականց մէջ, ջուրց վրայ, հովանեաց տակ, մարդկան իղձից եւ երկրի օրհնութեանց ընդմէջ...:

Չեմ ուզեր շարունակել, ի՜նչ ալ ըսէ հրեշտակային Վ.....դ: Չեմ ուզեր այլ եւս խօսիլ ա՛յն երանութեան վրայ զոր չունիմ. Եւ քանզի ապերջանի՜կ եմ, օր մը պիտի խօսիմ քեզ այն դժբաղդութեանց վրայ, որք կ'ուզէի թէ յաւելնային իմ միւս դժբաղդութեանց վրայ...:

Հինգշաբթի՜:

XII

ԻԺԱՏԻԷ, 24 Յունիս

Սրբուհի,

Շաբաթ Պէօյիւքտէրէ կ'երթայի. շոգենաւին մէջ քացախ կար գրպանս, այն քաղցր ճաբոնական քացախն՝ որ ան-

դրագոյն արեւելեան բուրմանց հետ անդրագոյն արեւելեան երազներ ալ կը բերէ: Պահ մը գրպանէս հանեցի սրուակիկս, հոտոտեցի, եւ վերստին գրպանս դրի: Լաւ չէի գոցած սրուակին բերան, եւ սրտիս վրայ բան մը կը զգայի. կ'այրէր կուրծքս հեշտօրէն: Ի՞նչ ազդեցութեամբ էր, կը հարցնէի ես ինձ: Եւ կուրծքս կ'այրէր, կ'այրէր հեշտօրէն: Ի՞նչ ազդեցութեամբ, գոգցես փափկագոյն կուրծքի մը ճնշմամբ: Մոռցած էի սրուակն, եւ յիշեցի նամակն. յիշեցի նամակդ, զոր կուրծքիս վրայ Պէօյիւքտէրէ կը տանէի՝ Պէօյիւքտէրէի լուսնին լուսով անգամ մը զայն կարդալու համար: Ձեռքս ծոցս դրի. ձեռքս ալ սկսաւ այրիլ. մատանցս տակ եկաւ սրուակիկն, եւ մոռցայ նամակդ: Ի՞նչ է մարդս. յողդողդ կ'անուանենք զայն, կը մեղանչենք: Տկար էա՞կ մէ, տպաւորութեանց ենթակայ, տպաւորութեանց խաղալիկ, արտաքին առարկայից ստրուկ: Իմ բոլոր կամօքս, իմ բոլոր սրտովս ինչո՞ւ պիտի մոռնայի նամակդ.—վասնզի մարդ էի:

Եւ իբրև մարդ, օր մը մին կը յիշեմ, օր մը միւսն: Նորավէպի մը մէջ միոյն համար **միայն** կը հառաչեմ, ուրիշ նորավէպի մը մէջ միւսոյն համար **միայն:** Եւ դու, այնքան ճանաչող մարդկայինն բնութեան, դու, այնքան խորագէտ կամ խորիմաստ, կը յուզուի՞ս, «երկրորդական դեր»ի խօսք կ'ընես: Կրնամ զքեզ օր մը մոռնալ, Սրբուհի՛, կրնամ տարի մը **չյիշել.**—քանի որ մարդ եմ: Սակայն, ո՛չ, քեզ նման էակ մը՝ որքան ժամանակ, որ իրմով զբաղիմ՝ չը կրնար երկրորդական անձ մը լինել ինձ համար: Պայրընի նման կրնայի զքեզ ինձ սիրելի անասունէ մը վար դասել, այլ միշտ աստուծոյ մը կամ աստուածուհւոյ մը վար դասել, զքեզ պիտի նկատէի: Անասունն, այո՛, ա՛յն միայն բոլորանուէր մարդոյս կը յարի. կինն՝ որքան ալ աստուծուհի եւ իբրեւ աստուածուհի՝ օր մը կուգայ, որ զքեզ կ'անտեսէ՛: Կը յիշեմ Վ...դ, կը յիշեմ թէ կանայք մարդոց համար կ'ընեն նոյն բանն. եւ նամակիդ սկիզբն ես իսկ ինքզինքս ամբաստանեցի, ես իսկ խոստովանեցայ տկարութիւնս: Այլ թէ երկու սեռերն ինչ ալ ընեն իրարու համար, պէտք է խոնարհին, պէտք է ծնրադրեն անասնոյն առջեւ...: Ի՞նչ որ կ'ընէին արդէն նախնի ժողովրդոցմէ ոմանք ի մասնաւորի:

Արտասուք մը թնկած էր նամակիդ ծոցն, արտասուք սիրոյ, արտասուք Նղիային համար, արտասուք հայհոյիչին համար: Ու Յաւելագրոյդ մէջ ապաչաւ յայտնած էիր, եւ նորէն անշուշտ պիտի յայտնես՝ նամակիս ընթերցմամբ՝ այն արտասուոյ կաթիլին համար: Ամէն բան ետ կրնայ առնուիլ, պատկեր մը, հերաց խուրձ մը, յիշատակ մը, խոստում մը, թերեւս համբոյր մ'իսկ. իսկ արտասուքն, ո՛չ, անի ետ չառնուի՞ր: Ես արտասուքդ ունիմ, եւ ապարէզ կը կարդամ քեզ, որ կորզես զայն նամակիդ ծոցէն, արտիս խորէն: Ի՞նչ, այն կաթիլն արդէն գետ մ'եղաւ, որ էութեանս ընդմէջէն կ'ընթանայ: Ի՞նչ կրնաս ընել այդ գետին դէմ: Լաւագոյն չէ՞ հիանալ իր ընթացքին, ժպիտ մ'արձակել իր գոգն, որ անկորուստ կը պահէ ամէն ինչ, որ ի քէն է, զի եւ ինքն իսկ է ի քէն:

Օրացոյցիս մէջ ընթերցայ թէ վաղ Թարգմանչաց տօն է: Եւ երէկ Մէզպուրեան վարժարանն, ու քննութեան էի գացած՝ իմացայ թէ սոյն ազգային մեծ տօնին պատճառաւ փակ պիտի մնան բոլոր վարժարանք: Ուստի ուրբաթ պիտի տեսնուինք: Կը ներփակեմ լուսանկարս, որ աւելի քահանայի մը կը նմանի քան «Նիրվանայ քուրմ»ին, որպէս կը կոչէ զիս Զերազ: Դու ալ չպիտի սիրես այդ պատկերն, այլ պիտի սիրես, պիտի սիրե՞ս

ՏԷՄԻՐՃԻՊԱՇԵԱՆՆ

Այս նամակին տակ գրուած է կանացի նուրբ գիրով. «Ահ, այո՞, այո՞, այո՞, այո՞, յաւիտեա՞ն»:

Ս.

XIII

ԻՃԱՏԻԷ, 2 Յունիս

«Ահա թէ ի՞նչ է սիրել ու սիրուիլ...»:

ՍՐԲՈՒՀԻ

Սրբուհի,

Երէ՞կ, ինչպէ՞ս մեկնեցայ վարժարանէն, ինչպ՞ս տուն եկայ: Հեկեկանաց արտասուալիր երաժշտութիւնն ետեւէս

եկաւ մինչև նաւամատոյց, մինչեւ կամուրջ, մինչեւ տուն, մինչեւ քուն. զի քնոյս մէջ ալ անշուշտ պիտի լսեմ, հանապազօր ու յաւիտեան պիտի լսեմ այն անխօս հրաժեշտի աղեկեզիկ ձայներն՝ արտասուօք թացեալ ու թափանցեալ...:

Ա՜հ, շատ անգամներ որոշեցի կափարիչ մը դնել սրտիս, շա՜տ ջանացի մարել «այն հուրն, որ զիս կը լափէ»: Արդեօք պիտի յաջողի՞մ այս տարի: Այս՝ տարիքին մէջ, երեսուներեւկեցամեայ հասակին մէջ Լորտ Պայրընն կը գրէր իր վերջին նուագին սկիզբն.

Il est temps d'étouffer l'ardeur qui me dévore...

Պէ՜տք է ընեմ այդ բանն, եւ ժամանակն յոյժ նպաստաւոր է:

Անհա կը բաժնուիմ սիրելի սանուհիներէս, եւ կը զգամ—մանաւանդ վերջին երկու գրոցդ ընթերցումէն յետոյ—թէ պիտի բաժնուիմ սիրելի սանուհեացս եւ ինձ ամենասիրելի Սրբուհիէն . . . . . :

Ես երբ գաւաթ մը կոտրեմ ակամայ, կը տխրիմ. եւ կամաւ Արարիչն սրտեր կը կոտրէ՜ ...: Պահեցի ա՜յն թաշկինակն, որով երէկ դպրոցն արտասուքս սրբեցի. սո՜ւրբ արտասուք սիրոյ...: «Տարտղնեցա՜ւ այն բոյնը.» կը գրէր Օտեան էֆէնտին. աշակերտուհիք մէկ կողմ, վարժուհին միւս կողմ, վարժապետն ուրիշ կողմ. այսպէ՜ս պիտի ըլլայ...:

Կը թողում գրիչս եւ ձեռքս կ'առնում Ս. Գիրքը, մխիթարութեա՜ն Գիրքը. Սաղմոսը կը բացուի, եւ կը կարդամ, «Ապաքէն որպէս ի պատկերի շրջի մարդ, սակայն ի զուր խռովի. գանձէ եւ ոչ գիտէ ում ժողովէ. իսկ արդ՝ ո՜վ է համբերութիւն իմ, եթէ ոչ դու: Տէ՜ր, կամ կար զօրութեան իմոյ՝ թէ ոչ ինքն»:

Ու երբ այն անձնաւոր, մխիթարիչ ու զօրացուցիչ Աստուածը կը պակսի մարդուն, ի՞նչ պէտք է ընէ մահկանացուն, տառապեալ ամայացեալ մահկանացուն: Ամայացեալ Եղիան. այո՜, զի ո՞վ պիտի բնակի յիս յետ այսորիկ. ո՜չ ոք, յիշատակներ: Ես ո՞ւր պիտի բնակիմ յետ այսորիկ—ոչ ուրեք, պատկերի մը մէջ: Որպէս ի պատկերք պիտի շրջեմ...:

Որորի ձա՜յն մը...: Որորն ինչո՞ւ քանի մը ժամ կը քնացնէ միայն: Բոլոր տիեզերքին մէջ արդեօք չը կա՜յ կին մը որուն որորն յաւիտեան քնացնէ...: Քնացի՜ր, մանկիկ, ալ

մի՛ ապրեմնար. նրա. ոչ բան ունիս, մանկի՛կ, ո՞հ, մի՛ մեծնար քնապիր, մանկի՛կ, քունն անճառ ու անվախճան Նիրվանային...:

Եւ որոր ըսելով և որոր լսելով իմ ալ աչա քունս եկաւ... քնացի՛ր, Սրբուհի՛, քնացի՛ր ... հայելով անխօս պատկերի՞ն...:

XIV

ԻՃԱՏԻԷ, 7 Սեպտ.

Սեպտեմբե՛ր,

Թերեւս ամէնէն գեղանոյշ ամիսն, ո՞ Սրբուհի: Սիրական երաժշտութիւնս ինձ կը բերէ, հովուն յօրինած հոգենուա՞գ երաժշտութիւնն անտառակին դողդոջուն տերեւոց վրայ: Ի՞նչ հմայիչ զօրութիւն է այն, աշնանային հովուն զօրութիւնն, ամէ՛ն օր անթիւ թերթեր կը քշէ կը տանի, կը տանի հրապոյրներն անտառակին, ու մեր հոգւոց խորերէն ալ անոորոգելի՞ հառաչներ կը խլէ կը տանի: Եւ սակայն... աշնան կը սպասենք, կը սպասենք յափշտակիչ անագորոյն հողմոց: Այն սօսափիւնին մէջ սիրտ կա՛յ, սրտի ձայն կայ, սրտից ձայներ կան... ու շատ բնական է բացատրութիւնն այդ երեւոյթին. որքա՞ն սրտեր հողին տակ, ուրկէ տերեւն՝ նման մարդոյն՝ կ'առնու իր սնունդն. որքա՞ն սրտի մասնիկներ օդին մէջ, որ ծնօղն ու պահողն է հողմին: Եւ սրտեր՝ այսպէս ի տիեզերս սփիւռ, կը սկսին մեզ հետ խօսակցիլ, երբ ծաղկունք կ'անհետանան երկրէն եւ ամպեր կ'երեւնան երկնից մէջ: Սրտերն այն ժամանակ կը խօսին մեզ ի խորոց գերեզմանին:

Մտիկ ըրէ՛, Սրբուհի... Օտեանին զոր կը յիշես ինձ՝ Օտեանին ձայնն է, նորա սրտին, որ աւելի զգացումներ ունէր քան անտառ մը չ'ունի տերեւներ. զգացումնե՞ր, այո՛, անհամար են սրտին մէջ, երբ սիրտն՝ Օտեանի մը սրտին տակ դրուած է: Թերեւս բոլոր այդ զգացմունք՝ ոյց չը գիտենք բոլորին ալ անուններն՝ ի մի միակ զգացում կը բովանդակին...: Եւ մենք նոր վարդին ու նոր սոխակին չը պիտի սպասենք՝ մրմնջալու կամ գոչելու համար—Սէ՞ր: Այս

մահաբոյր եղանակին մէջ ալ՝ սէ՛րն է որ զմեզ կը համակէ. անկեալ տերեւն եւ անկնող տերեւն՝ նոյն երգն ունին որք իրարու կը համապատասխանեն մեր ոտից տակէն ու մեր գլխոյն վրայէն. նո՛յն երգն հարուստ յոգնական, հոգեխոս, զոր աշխարհի աղմուկին մէջէն ալ միշտ կը լսենք՝ երբ հարկադրուինք մեր քաղցրիկ առանձնարանէն հեռանալ ու քաղաք իջնա: Սէր եւ տրտմութիւն: Գարնան ալ մեր բաժինն է այն, աշնան ալ:

Փոխուէ՛, կ'ըսեն ինձ բազումք, մայրս՝ բազմաց բազմաթախանձն. ու պէտք է՞ր լսէի մօր խրատուն, մօր թախանձանց: Իմ զուարթութիւնս իր կեանքն ըլլար պիտի: Ա՜հ, իմ անհուն զգայնութեանս մէջ, ի՜նչ անզգայ էակ եմ սակայն...: Եւ քեռայրդ ալ քեզ կ'ըսէ, շատ մը բաներ. անի կ'ըսէ քեզ «փոխուած ես:» Զգացո՞ւմն է թէ տրտմութի՛ւնն, որ քեզ նոր եկաւ. ոչ մին անշուշտ, ոչ միւսն—որովհետև ես երկուքն անջատ չեմ կրնար ըմբռնել իրարմէ: Միայն թէ տրտմութիւնդ նոր հանգամանք մը ստացաւ, Նիրվանատենչ երիտասարդի մը հետ հաղորդակցութեան մտնելով սիրտդ խորդգած: Զուա՞ր է Վ...դ: Ո՜հ, շա՜տ հեռու ենք. աշխարհ մը՝ վայրենի Իսկիւտարին ու հմայիչ Հասգիւղին միջեւ:

XV

Երկուշաբթի ՎԱՐԴԱՎԱՌ, յիշատակ մեռելոց

Այլ ինչո՞ւ տենչամ մահուան, երբ այսպէս կը սիրուիմ եւ այնպիսի՜ էակէ: Զը գիտեմ՝ թէ սիրտ մ'երբէք այնքան ամբողջովին դրուա՞ծ էր թուղթի վրայ. չը գիտեմ՝ սէրն երբէք այնքա՜ն սաստկութեամբ արտայայտուա՞ծ էր: Այն ի՜նչ նամակ էր: Ա՜հ, պէ՜տք է հնչէ բաժանման ժամն, որպէս զի զգանք թէ որքան կը սիրենք: «Մնաս բարով»: Այսպէս ինձ ըսիր վերջին դասախօսութեանս օրն, երբ դասարանէն, եւ ի դասարանին առանձին մնացին դասատուին ու դասատուն, Արբուին եւ Եղիան, որ բողոքելով մնաս բարովիդ դէմ, մրմնջեց. «Կը փափաքիմ տեսնուիլ ուղեւորութենէդ յառաջ. կրկի՜ն տես:» Ու զղջացիր, զի հուսկ

ողջոյն ասուած Էլիր Եղիային. լացիր այն գիշերն. ի՞նչ կ'ըսեմ, լացիր այն վայրկեանին իսկ՝ ուր դասարանին մէջ միանակ մնացիր, երեկոյեան ստուերներուն մէջ, առանց այն Եղիային զոր սիրեցիր եւ զոր աշակերտուհիքդ կ'արտասուէին անգին: Գնացիր, արտասուքդ իրենց արտասուաց խառնեցիր, եւ ձեր արտասուօք նուիրագործեցիք այն տունն որքան չեն նուիրագործած զայն օրհնութիւնք քահանայից եւ քրտունք սանուհեաց ու խնամակալուհեաց: Ես իսկ երջանիկ եմ, որ առթեցի զայդ նուիրագործում. ես, այո՛, զի ես սիրտդ զարթուցի, ես վերցուցի սրտիդ կափարիչն՝ ըստ բացատրութեանդ: Մտերմութիւն մ'ունէինք հնուց. զայն հալեցուցի եւ ի սէր փոխարկեցի, որպէս զի տառապիմ ես ու տառապիս դուն ալ, Սրբուհի՛: Ի՞նչ, քեզ նման էակ մը, որ ակնարկովն աշխարհ մը կարող է ստեղծել եւ գրչին ծայրովն հոգիներ դղրդել, քեզ նման էակ մը պիտի ապրէ՞ր հասարակ մահկանացուի մը նման, պիտի մնա՞ր սովորական հոգերով ու սովորական հրճուանքներով: Ո՛չ: Ես արգահատեցայ քեզ այն աննշան անյոյզ կեանքին համար, զոր դուն կը վարէիր, եւ զքեզ սիրեցի. ես հիացայ վրադ՝ յատկութեանցդ համար զորս կը ճանաչէի եւ յատկութեանցդ համար զորս կը գուշակէի, եւ զքեզ սիրեցի. ես ուզեցի բազմապատկել երազներս ու ցաւերս, եւ զքեզ սիրեցի. ես ուզեցի թանձր ե՛ւս առնել հոգւոյս մոայլն, եւ զքեզ սիրեցի. ես ուզեցի որ... Ա՜հ, միթէ գիտե՞մ ամէն ինչ որ ուզեցի, ամէն ինչ որ պիտ' ուզեմ... բայց բան մը գիտեմ հաստատապէս. ա՛յն թէ յաւիտեան այս աշխարհի մէջ չը պիտի համակրիմ այն անձանց որք կը հետամտին երջանկութեան. աշխարհս իր աշուններով, իր վերջալոյսներով, իր գերեզմաններով աւելի հրապուրիչ է, քան իր վարդերով ու վարդագոյն աւօտներով, ու սոլթանաբնակ ալհամպրաներով: Երջանկութի՞ւն: Բայց երջանկութիւնն երեժկտուք ունի, մինչ սէրն հառաչանք ու հեծեծանք: Եղկե՛լի էակ այն, որ այլեւս պատճառ չունի հառաչելու, հեծեծելու:

Երէկ եկա՞ր Պէրպէրեանի հանդէսին. բեմին վրայէն, բեմէն վար, զքեզ փնտռեցի, չը տեսայ: Այլ եւս հինգշաբթի չը կա՛յ... բայց արձակուրդէն յետոյ, թերեւս. որովհետեւ՝ որպէս յայտնեցի քեզ՝ վերջնապէս մերժողական պատաս-

խան տուի Հայրենիքի խմբագրապետութեան առաջարկին համար: Պատասխանս յուսահատեցուց Եուսուֆ պէյն, եւ չեմ կարծեր, որ ստանձնէ սոյն ծանր գործին— **Արեւելքի** հետ մրցումն:

Այսօր Գուզկունճուք եկայ, շնորհաւորելու համար Վարդենիքի տօնախմբութիւնն: Սիրտ չունին. հօրաքոյրս հիւանդ, Մ...ն հիւանդանոցն, իր քույրերն յուսահատ, Գ...ն անյայտ. եւ երկու կողմս մէյմէկ ուրուական, Պէյլիկճեանին ու Պէշիր Ֆուատին ուրուականներն: Ալիկիէրիի նման գոգցես մտած էի **տրտմաթախիծ քաղաքն...:** Ու յիշեցի թէ այն սենեակին մէջ, երբեմն, հանգուցեալ Պեյլիկճեանին հետ վիճաբանութիւններ ունեցած էիր այնպիսի խնդրոց վրայ, որք կը լուծուին միայն դաշոյնի կամ ատրճանակի հարուածով, որք կը լուծուին կը հալին միայն Արնաւուտքէօյի հոսանքին մէջ՝ ջուրին ու կապարեայ գօտիին ցրտութեամբ...: Քոյրդ ինչպէ՞ս է: Վ...ն ինչպէ՞ս կը մխիթարուի տարակայութենէդ: Ե՞րբ զքեզ վերստին պիտի տեսնէ՝ ԵՂԻԱՆ:

XVI

Սրբուհի,

Չը գիտեմ ամսուն քանի՞սն է այսօր. բայց գիտեմ, որ դեռ երկու օրեր կան—երկու դարեր—Հասգիւղ գալու: Ուրեմն մինչեւ այն օր՝ խօսակցինք քեզ հետ քչիկ մը: — Տունն եմ՝ երկու օրէ: Երբ Պօլիս իջնեմ, մինչեւ իրիկուն բան մը չեմ լսեր, մինչ ամեն ոք կը խօսի, մինչ ամեն ինչ կը գոռայ շուրջս—իսկ երբ մնամ ի տան, որքա՞ն բան կը լսեմ, որքա՞ն ձայներ ու խօսքեր, ծիծաղաշարժ կամ սրտաշարժ: Երէկ՝ աշխատած պահուս՝ բաւական խնդացի. մեր քովի տունն էրիկ մարդ հիւր մ'էր եկեր, բարձրաձայն կը խօսէր. կ'ըսէր թէ այժմու երիտասարդաց նման ուսեալ չէր, թէ «վեշտասան մեշտասան չը գիտեր» ելն.: Ինչո՞ւ եկած էր այդ մարդն. արդեօք աղջիկտե՞ս եկած էր, եւ ինքզինքն եղածին պէս կը ներկայացնէր որպէս զի պատրանք չը կրէր աղջիկն ապա, որպէս՝ աւա՜ղ՝ կը կրեն այնքան աղջկունք: Մարդիկ ընդհանրապէս կ'երեւին ինչ որ չեն հիմայ: Հին բացատրութիւն մը համարիս թերեւս. որով-

հետեւ քեզ իմ անձս յայտնեցի. քեզ իմ անձս իբրև սատանայ մը յայտնեցի՝ մինչդեռ հրեշտակ մը զիս կը կարծէիր ցայցօր: Ա՜հ, թերեւս հրեշտակ եմ ծնած. սակայն սատանի դերն որքա՜ն հրապուրիչ է: Տասնեւիններորդ դարուս մէջ մարդու մեծ վարպետն է բնութիւնն. եւ ատեն ատեն, ո՜հ, քանիս՜ն խոովիչ է բնութիւնն: Եթէ հանդարտ լճի մը շուրջ ապրէի, հրեշտակի պիտի նմանէի, այլ տեսայ մռայլ ովկէանոսն եւ իր դառն ալիքն ըմպեցի. ճանչցայ Պայրընն, եւ զայն իմ խորանիս վրայ դրի պաշտեցի...: Ու ամէն անգամ, որ այս բաներուս վրայ խօսիմ. չը գիտեմ ինչո՛ւ կը յիշեմ Օտեան էֆէնտին...:

Այսօրուան լսած խօսքերս ու ձայներս ալ պատմեմ: Առտուն էր. դեռ չէին լռած սոխակներն. իշուն ձայնն՝ իբրեւ գերագոյն ներդաշնակութի՜ւնն՝ լսելի կը լինէր երբեք երբեք, ամէն ձայնիդ կը տիրէր, եւ սիրտս՝ որպէս միշտ՝ ի խոր կը յուզէր. կը յիշէի՞ Հաւգիւղս: Եւ ահա ձայն մը աւելի բարձր, աւելի վսեմ, լսուեցաւ: Աստուծո՛յ ձայնն ի՜նձ համար իշուն ձայնէն աւելի վսեմ է. միթէ Աստուա՞ծ իջաւ Իւսկիւտարի բարձանց վրայ եւ խօսեցաւ: Ո՜հ, ո՛չ, խենդ մը... ո՛չ մեր Մ...ն, հէգ Մ...ն հիւանդանոցն է. եւ լաւագոյն վիճակի մէջ է: Մեր դրացեաց մին խենդեցաւ այսօր: «Քա՛, մի՛ վախնար, ի՞նչ կը վախնաս կոր, էշէ օղլու էշէ՞կ:» Այսպէս կ'աղաղակէր մեր դրացին. սափրիչ է կարծեցի թէ առկայ կը քաշէ: Սակայն մտածեցի թէ այդ պարագային մէջ մեղմիւ պիտի խօսէր, մանաւանդ առանց հայհոյանաց. ընդհակառակն կը պօռար: Դիւահար եղայ: Խե՜ղճն, ինք ալ դիւահար էր: Ծարունակեց գոչել «Մոմ վառեցէք, Աստուածամարը կուզէ կոր. Հոռո՜փ, մոմ վառէ. Հոռոփ Աստուածամարը խենդեցեր է. էշէ օղլու էշեկ..» եւ խօսքն յանկարծ երգի կը դարձնէր. ի՜նչ երգ. հէյամօլայի եղանակն, որ կը քաղցրանար խենդին շրթանց վրայ...:

Ա՜հ, թո՛ղ սիրելի սանուհիներդ, թո՛ղ սիրելի սանուհիներս նորէն Տէր-ողորմեա ըսեն...: Որքա՜ն յուզեց զիս նամակիդ այն կտորն, ուր կը գրես թէ աշակերտուհիներդ հիւանդիս համար Տէր ողորմեա ըսել խորհած են. ազնի՛ւ, ընտի՛ր հրեշտակայի՛ն էակներ, կը զգան թէ ի՜նչ սիրով կը սիրեմ զիրենք, եւ ինձ հետ կը տրտմին, եւ ինձ հետ կը

բերկրին։ Ես եւս յուզուեցայ, երբ դու ալ **քու հիւանդիդ** համար աղօթելու կը պատրաստուէիր՝ ըստ գրոյդ։ Իսկ յուզումս չափ չունեցաւ, երբ նամակիդ վերջն հասայ, ուր զիս կ'երդմնցնես, որ ծով նաւակ չը նստիմ։ Հոն վիպական, սիրայինն, երկնայինն շեշտ մը կայ, որ թափանցեց հոգիս։ Կը խոստանամ, խոստանամ, ո՜ սէր իմ։ Այլ դուն փոխարէն ի՞նչ կը խոստանաս ինձ. կը խոստանա՞ս ինձ ներել այն վշտերուն համար, զորս փափուկ սրտիդ առթեցի եւ պի՜տ առթեմ... քու յանցանօքդ, այնպէս չէ՞։ Կը յիշեմ, օր մը, գրեցիր ինձ, որ Ալֆրէտ տը Միւսէի վրայ խօսիմ. եւ ես՝ ի պատասխանի՝ Ալֆրէտ տը Միւսէի պէս խօսեցայ, նուազ իր հանճարովն անշուշտ։

Հինգշաբթի՜։

XVII

ԻՇԱՏԻԷ, 8 հոկտեմբեր

Սրբուհի,

Քեզ միշտ հաճոյքով պիտի գրեմ, այլ եւ միշտ տխրութեամբ, աւա՜ղ։ **Աւաղ** ոչ ինձ համար անշուշտ, այլ քեզ համար, քանզի կը փափաքէիր, որ տարբեր Մուսայէ մը ներշնչուէի։ Յոյժ կը ցաւիմ, որ տարիէ մ'իվեր վրդոված եմ սրտիդ անդորրն։ Եթէ այն աշուններէն մին՝ որք մահաշշո՜ւնջ կ'անցնին գլխոյս վրայէն՝ զիս ալ հողմավար թերթին հետ տանէին ու մութ փոսին մէջ նետէին, անշուշտ կ'արտասուէիր վրաս, բայց սուգդ յաւիտենական չէր ըլլար. զի մեր շրթունք իրարու չհպան դեռ, եւ սիրոյ արտասուքն, ո՜հ, քառեակ այտից կազմած փոսին մէջ չը լճացան դեռ։ Հոգեկան սիրոյ մեծութիւնն ո՞վ կրնայ պատմել. սակայն ո՞վ կրնայ պատմել. սակայն ո՞վ կրնայ ժխտել հպման հեշտութիւնն՝ որ կը հատանէ թերեւս սիրոյ թեւերն, այլ որ կաթնաւէտ լոգարանի մէջ կը վերանորոգէ զայնս։ Եթէ վախճանիմ, Սրբուհի՛, այո՛, կ'ազատիս ինէ, զի կը տանջեմ այժմ զքեզ...։ Կը զգամ թէ սիրուիմ ի քէն. եւ վերջին նամակիս առթած թուզումն, որ զքեզ խոնարհեցուց աչացդ, իմ աչացս ե՛ւս առաւել բարձրացուց զքեզ...։ Էր կը յուզուիս,

երբ մանուկան վրայ կը խօսիմ, ո՞վ է որ իր սիրած էակին հանգստանալն չը ցանկար. մահն ինձ համար հանգիստ մը պիտ՝ ըլլայ. եւ դու կամի՞ս, որ տանջուիմ ու տանջեմ զքեզ: Երբ այլեւս չ՚ըլլամ երկրի վրայ, կրնաս մխիթարուիլ՝ դասելով զիս ի շարս այն սիրավէպերու դիւցազանց, որոց օր մը համակրեցանք, որոց վրայ ուրիշ օր մը լացինք, զորս ուր ուրեմն մոռցանք: Եւ միթէ գոյութիւն ունի՞մ ես. միթէ վիպայինն, երեւակայական էակ մը չէ՞նա՝ որ օր մը Մելանիա կը կոչուի եւ օր մը Եղիա: Ա՜հ, մոռցի՜ր զիս: Արդէն կը մտաբերեմ հրաժարիլ վարժարանէն. քանզի, երբ կը մտածեմ թէ մէկ ոսկւոյ ամսաթոշակս ստանալու համար... նամակ գրելու է նորէն ամէն ամիս, թերեւս քանի՛ մը նամակ: Ատկէ ծանր բան չը կայ ինձ համար. դրամ ուզելու համար բերան ծռե՞լն՝ ատի կը սպանանէ զիս: Կը փնտռեմ արդեն Թիրեաքեանն, որովհետեւ այդ միակ անիծե՞ալ ոսկին կարեւորութիւն ունի իմ հաշուեկշռոյս մեջ...: Ինչո՞ւ այնքան աչքի լոյս թափեր ենք, ինչո՞ւ մազերնիս ճերմկցուցեր ենք...: Զուարճալի՜ գէթ տրտմութեան այս նիւթական պատճառներն...: Բախտն այսպէ՞ս վարուելու էր ինձ հետ, որ **խառա սէվտա** ունիմ, որ ամէն օր անձս ոչնչացնել կը մտաբերեմ: Գիշեր բարի. չը գիտեմ ինչ գրեցի: Լաւ մը քնանայի՜:

XVIII

ԻՄԱՏԻԷ, 7 նոյեմբեր

Սրբուհի,

Դեռ այսօր կը գրեմ նամակիդ պատասխանն, եւ չը գիտեմ ե՛րբ պիտի կրնամ գալ Հասգիւղ: Այս առաւօտ դասիս ժամերուն Գատրգիւղ էի, մօրաքրոջս տունն, ուր էր նաեւ Օհան էֆէնտի Պաղտատլեան: Վաղը նշանտուքի պիտ՚ երթանք ի Պատրիարքարան:— Պիտի ջանամ ուրբաթ դասի գալ:— Չը պիտի զարմանաս, երբ յայտնեմ թէ մերժեցի Կեդրոնական վարժարանի գրականութեան դասը, զոր առաջարկեց ինձ սոյն կարեւոր հաստատութեան

խնամակալաց ժողովուն Ատենապետը. կը յիշես թէ երկու տարի առաջ բողոք բարձի հրապարակաւ ընդդէմ խնամակալութեան, որ վարժապետութեան միակ ներկայացուցիչ մ'ընդունած էր իր ծոցին մէջ, Մինաս Չերազը: Բարոյական մահուան դատավճիռս ես իսկ տուած պիտ' ըլլայի, խնամակալութեան առաջարկն ընդունելով այսօր: Չէի ուզեր վշտացնել Էսայեանն ու Չերազն. եւ բաւական վարանեցայ որոշումս տալէ յառաջ: Միայն մօրս համար զոր կը փափաքէի աւելի հանգիստ ապրեցնել—կը միտէի այդ բարոյական մեծ զոհողութիւնն ընել: Այլ ի՞նչ նիւթական վարձատրութեան փոխարէն.— տարին 30 ոսկիի փոխարէն: Ութսուն երկու աշակերտներէ բաղկացեալ երկու դասի գրականութիւն ուսուցանել, ամէն անգամ սրբագրելու համար ութսուն երկու շարադրութիւն գրպանդ դնելով. եւ ընդունի՞լ տարին 30 ոսկի: Շաբաթն երկու ժամ միայն դաս, այո՛. բայց պէտք է առ նուազն 24 ժամ զոհել սրբագրութեանց: Ժամը քանի՞ կուգայ. հաշուէ: Անհաւատալի կը թուի թէ Պէրպէրեանի նման ուսուցիչ մը յանձն առած է սոյն պայմանօք դասախօսութիւն:

Գրաստ ու գրագէտ նոյն նշանակութիւնն ունին մեր ազգին համար. ծառա եւ վարժապետ նոյն յարգն ունին մեր մեծատանց համար... բայց ես որոշած եմ յարգել տալ ինքզինքս ատոնց. Պէրպէրեան նոյնն ուխտած է, եւ ազդու դաս մը տալով առ խնամակալութիւն՝ հրաժարած է Կեդրոնական Վարժարանէն: Խեղճ Չերազս. հլու գործիք եղաւ մե՜նծ աղաներուն: Կլատրստոնի եւ Անարասիի հետ տեսակցող Չերազը, **Գրական Փորձերու եւ Ազգային Դաստիարակութեան** հեղինակը եռանդալի ու հանճարալի այն կարգի պատանին՝ բոլոր օրը կառավարչութիւն կ'ընէ, հուրը մարեր, մոեա մը դարձեր է...:

Բայց ես օր մը բերկրառիթ, բայց ես օր մը մխիթարական բան մը՞ պիտի ունենամ քեզ հաղորդելու, մի՞շտ պիտի հեծեմ կենաց գորշ կամ մթին պատկերներ պիտ' որոնեմ ու քեզ ներկայեմ. քեզ՝ որ աշնան մէջ կը լրտեսես երկնից ժպիտն եւ զայն թղթակցութեանց մէջ կը լուսանկարես Եղիային համար. քեզ, որ Եղիային աններդաշնակ անունն իսկ իբր երկվանկ մեղեդի մը կը համարես, եւ

այդ անուան նկատմամբ հակառակ կարծիք ունեցող մէկ սիրել էակիդ դէմ կը վշտանաս եւ իրմէ հեռանա՞ս։ Հասուն միտք մը մատաղ մնաց միամիտ վիճակին վերածե՞լ. Քրիստոս չը կրցաւ ընել այդ հրաշքն. այլ սէրը կ՚ընէ զայն։— Այլ միթէ Է...ն իրաւունք չունէ՞ր, որ կ՚ըսէր թէ կոյր է սէրն։ Ի՞նչ ձիրք ունիմ Սրբուհի, այդքան սիրոյ արժանանալու համար։ Քանիներ ըսած են ինձ թէ զիս կը սիրէն. քանիսե՞ր՝ ըսելէ աւելի ապացուցած են իրենց սէրն։ Եւ ես զիս քննելով՝ գտած եմ թէ աւելի խորշելի, քան սիրոյ արժանի էակ մ՚եմ։ Միա՞յն... յուսահատութեան վայրկեաններուս, երբ յեկին հայած եմ՝ կոչելով մահուա՞ն հրեշտակն, եւ ահագին անբարբառ ամպի մ՚իտես՝ ըսած եմ. «Գլխոյս կը նմանի. վսեմ է այդ ամպը։» Ի՞նչ կը խորհիս...։ Թերեւս... ամպ մ՚ալ դու կը դիտես այս պահուս յերկինս, եւ զի՞ս կը յիշես թերեւս։ Եւ թերեւս կ՚ըսէր միաձայն. «Ամէն մարդ լուսնին կը նայի. միթէ ամպն աւելի յանկուցիչ չէ՞։ Մարած հրաբուխներ միայն ունի պայծառ Լուսինն. իսկ սեւ ամպին ծոցը կը թաքչին հուր ու փոթորիկ ու սարսափ։ Ամպն աւելի վտեմ է, քան զլուսին։ Մենք ամպին կը նայինք։»

Գիշե՞ր բարի քեզ։

XIX

ԻՄԱՏԻԷ, 1 դեկտեմբեր

Սրբուհի՛,

Թուի իմն՝ ինձ ակամայ կը գրես ժամանակէ մը հետէ։ Զը պիտի շարունակեմ թղթակցութիւնս, որպէս զի չը նեղուիս, քանզի պարտիմ ինձ խնայել քեզ իբրև ամենափափուկ էակի։ Ե՛րբ սրտէդ գայ, յայնժամ գրէ, եւ եթե սրտէդ թշնամանք կամ անէծք ելնէ, նորէն գրէ, քանզի ադյու ոչինչ պիտի կորուսանես սրտիս մէջ։ Միայն թէ ակամայ բան մի՛ գրեր ինձ։

XX

ԻԾԱՏԻԷ, 15 հոկտեմբեր

Սրբուհի,

Վերջին նամակդ մատեան մ'է, ընդարձակ բազմազան մատեան մը, որ իր վիպական մասն ունի, բարոյական մասն ու քննադատական մասն: Եւ յաւէտ կը հիանամ այն փափկութեան վրայ, որով կը քննադատես կեանքն ու արարքն. ի զո՞ւր են սակայն ամէն քննադատութիւնը, որքան բարձրէն ալ գան ու որքան փափուկ հոգիէ. կը գործեմ անգիտակից զօրութեան մը նման, կ'ապրիմ տարերքի մը նման: Վա՜յ անոնց որք ինձ հետ կենակցութեան դատապարտուած են, որք ինձ հետ յարաբերութեան հարկադրուած են: Դժգոհ է ամէն մարդ ինէ, եւ անոնք ամենէն դժգոհ՝ որոնք ամէնէն աւելի զիս կը սիրէն: Այսպէս դո՞ւ...:

Քանիցս կարդացի նամակիդ առաջին երկու երեսներն, որոնց հոգեբուղխ երաժշտութիւնն ապաքէն կը գերազանցէ Տէմիրճիպաշեանց երեկոյթին մէջ, յետին յուզմամբ ունկընդրուած երաժշտութիւնդ: Ա՜հ, սէրն...: Ու դեռ շատ անգամ պիտի կարդամ այդ էջդ: Բայց «այլեւս չի պիտի գրես ինձ, այլեւս չը պիտի սիրես զիս»: Մաղթելի էր, որ կարենայիր, քանզի սիրոյ փոթորիկներուն մէջ, ա՜հ, կը փնտռուի այն կեանքն, որ սրտի մակերեւոյթին վրայէն կը սահի խաղաղ անխռով...:

Քու կեանքդ, դժվա՜ր է, քու կեանքդ. կայ ի քեզ վիպական Սրբուհին, եւ կայ բարոյական Սրբուհի՜ն, պարտուց դերին: Պա՜րտք, ի՜նչ անախորժ բառ. համանիշ են իրեն աշխատանք, արտասուք՝ որ դառնութիւն չունի, մտածութիւն՝ ոյր առարկան այտ չունի. մայր մը, հայր մը, քոյր մը կամ եղբայր մը, պէ՜տք է տքնիլ անոնց համար, պէ՜տք է մեքենայի գործ կատարել, պէտք է զրկուիլ ու զոհուիլ. ի՜նչ արձակ ու տափակ բան: Եւ սակայն ինչո՞ւ համար խոստովանութիւնդ՝ զոր մասամբ կը մակաբերէի՝ կարդալէ յետոյ զքեզ փնտռեցի, Սրբուհի՛, որպէս զի քեզ երկրպագանէի՜: Բայց անգամ մը կարդացի այդ խոստովանութիւնն եւ

հինգ անգամ Տէմիրճիպաշեանց երեկոյթին նկարագրութիւնն, ուր վիպային Սրբուհին կը բարբառի կամ կը դաշնակէ: Վ...դ կարդացի՞ր այդ նկարագրութիւնն. եթէ ոչ, օր մը զայն ես պիտի կարդամ ձեր տունն:

Հրաժարականիս շարժառիթն երկուք չէ. Տաղտկալի է, ծանր է ինձ դրամ խնդրել: Ամեն անգամ, որ ամսականս խնդրելու համար նամակ գրեմ, պիտ՛ անիծեմ ա՛յն օրն ուր ոտք կոխեցի վարժապետական ու գրական ասպարէզին մէջ, ես ինձ դէմ պիտի զայրանամ ու պիտի լամ: Արդ, մի՛ վշտանար, եթէ հրաժարիմ: Իմ փափաքս էր շաբաթն երկիցս գալ Հասգիւղ, այլ եթէ անգամ մ'իսկ չը գամ, սիրտս պիտի գայ հոն հանապազօր, եւ զիրար տեսնելու առիթներ պիտի կրնանք գտնել: Ի կրկին տէս...:

XXI

ԻՇԱՏԻԷ, 29 դեկտեմբեր

Երկրագունտն երէկ աւարտեցի. այսօր կ'ելնէ մամլոյ տակէն: Հանգիստ եմ այսօր՝ որպէս ոք որ դիւցազնական աշխատութիւն մ'է կատարած: Եւ արդարեւ՝ այն պայմանաց մէջ յորս կը կատարուի՝ կարի դժուարին աշխատութիւն մ'է փորձերու սրբագրութիւնն. եւ երբ այդ պայմանաց վրայ յաւելուս սրբագրողին խառնուածքն, հոգեկան վիճակն, ելն, յայնժամ իրօք դիւցազնական աշխատութիւն պիտի համարիս ամենադոյզն աշխատութիւն մը: Սիրել, հայեցողական հանդարտ կենաց կամ ծայրագոյն տագնապայոյզ կենաց համար համակրութիւն ունենալ, եւ զբաղիլ փորձերո՞ւ սրբագրութեամբ, մեքենային մօտ՝ որ կը ճռնչէ, տառերու արկղիկներուն մէջտեղ՝ որք փեթակի մը երեւոյթն ունին, այլ միա՛յն երեւոյթն, ոտիցդ տակ ձեռագիրն՝ ոյր վրայ կը գուրգուրար հեղինակն ու գլխոյդ վրայ մամլոյ տակէն նոր ելած նամէտ **ֆորմաներն**՝ որք կախուած են չորնալու համար եւ որք կոչուած են թերեւս վերստին թրջիլ անանուանելի՞ աւազաններու մէջ: Ծանր ու ծանրատաղտո՞ւկ գործ առ մեզ՝ հեղինակի կամ խմբա-

գրապետի գործն: Երբ երկասիրած պահուդ յիշես տպարանն, ո՞հ, գրիչդ, թռի՞չդ կը կասի: Երանի՞ անոնց, որք միայն կը կարդան կամ որք միայն կը գրեն իրենց համար, առ առաւելն մտերմի մը, մտերմուհիոյ մը համար:

Բայց ամենէն աւելի երանելի արարածք ասոնք են անոնք ապաքէն, որք միայն կ'ուտեն և կը մարսեն: Անասնական կամ մեքենական շրջանակէն արտաքոյ չիք երանութիւն: Կիրակի մեր սիրելի Մ...ին հետ այս նիւթին վրայ կը խօսէինք: Միայն թէ... այդ հէ՞գ երիտասարդին հետ բաղդատելով՝ քանիո՞ն երջանիկ ենք մենք: Իր սահմանն իր սենեակին դուռն է գրեթէ. իր յուսոց հետ վերածուեցան իր երազներն. և առողջ այտ մը չը մօտենար իր շրթանց, թէև այնքան սուրբ ըլլան բարոյապէս: Սպիտակ թել մ'իսկ չունի դեռ մօրուքին մէջ, և իր սրտին մէջ կը տիրէ յաւիտենական ձմեռն: Ահաւասիկ վիճակ մը, զոր երեւակայելով իսկ կը սոսկայ մարդ: Եւ երբ այդ վիճակին դատապարտուած է սիրելիդ... Ի՞նչ երանելի, ցանկալի վիճակ է մերն՝ համեմատութեամբ:

Նոր տարին կը հասնի: Միմեանց մենք բարեմաղթութիւններ կ'ընենք, և պատճառ մը չունինք չը հաւատալու մաղթանաց կատարման: Սակայն տարաբաղդ Մ...ին համար՝ հրաշիւք միայն կրնայ բարեփոխութիւն մը տեղի ունենալ իր ներհին մէջ: Եւ Մ... շատ իմաստասէր է հրաշքի հաւատալու համար: Խորհի՛նք, Սրբուհի, խորհինք՝ իր մանկութեան հաւատքն իր հոգւոյն վերադարձնելու, քանի որ կարող չենք իր մարմնոյն վերադարձնել պատանեկութեան առողջութիւնն... Եւ եթէ կարենայինք այդ գիտն ընել, ի՛նչ անկշիռ ծառայութիւն պիտի մատուցանէինք առ մարկութիւն: Քանինե՜ր, որք կամէին վերադառնալ, որք կամէին հաւատալ, որք կամէին տալ այն արտասուքն, որ կը զօրացնէ, որ կը բուժէ հոգին ու մարմինն իսկ յաճախ: Երբ գտնենք այն ցանկացեալ համադեղն հոգւոյն, յայնժամ կ'ընդունիմ կենացս համար բոլոր բարեմաղթութիւններդ յաւէտ սրտագին:

1888, ԻՄԱՏԻԷ, 14 յունիս

Սրբուհի,

Բաւական ժամանակ է՝ չենք գրած իրարու: Մեր ը՛ն-դմէջ թղթակցութիւնն հաճոյք մ'է կամ սրտի պէտք մ'է: Պարտքեր ունեցանք կատարելու, և սիրտք մեր անկարող եղան տալ իրենց պիտոյքն: Ի՞նչ պարտքեր, ի՞նչ հարկեր, դո՛ւ մանաւանդ: Մեր հիւանդն հիւանդանոցն է, նոյն վիճակին մէջ գրեթէ, քու հիւանդդ ո՞ւր է..... Մէկ հատիկ քոյրդ,— քանզի մեր սիրելիները զորս հողուն կը յանձնենք՝ մէկ հատիկ կը թուին մեզ ու մէկ հատիկ քոյրդ, որուն հետ մեծցած էիր մտաց ու սրտի հաղորդակցութեամբ,— զայն յանձնեցիր խե՜լ մը քոյրերու, ոյք համայնից քոյր կ'անուանեն զանձինս, և այդու պատճառաւ իսկ ոչ ուրուք են քոյր, քոյր և ոչ ումեք... Այդ քոյրերուն մէջ իր քոյրը փնտռեց, և մենէ յառաջ՝ հէգ մանկամարդ կին՝ ինքն իր վրայ ողբ կարդաց «Հէգ Ե.....»:

Հիմա չը գիտե՞մ ով աւելի երանուհի է... Քոյրդ երբ կ'ապրէր ու դեռ հիւանդ չէր, յայնժամ, այո՛, դուն քան Ե....ին երանագոյն էիր, Սրբուհի, քանզի գերիվեր էիր աշխարհէ, քանի ոամկօրէն այլ ճիշդ բացատրութեամբ «աշխարհ մտած չէիր»: Երբ քոյրդ հիւանդացաւ, երբ մանաւանդ իր հիւանդութիւնն անդարմանելի վճռուեցաւ, երբ աշխարհէ հեռացաւ հիւանդանոցին մէջ մեկուսացաւ, թէեւ կը տրտնջար, այլ արդէն երանագոյն էր, քան զքեզ: Հիմա՝ եղկելի՜ Սրբուհի... Արդարեւ աշխարհ չես մտած, այլ սեւ քօղի մ'ընդմէջէն այլեւս պիտի տեսնես զաշխարհ: Եւ եթէ թողուս երբէք դու սեւ հագուստդ, առաւօտ մը պիտի տեսնես Արշալոյսն՝ հագած է քու թողած սեւ հագուստդ. այդ ստուերն զտիեզերս պիտի ծածկէ՞:

Այլ... վայրկեաններ պիտի ըլլան, կենացդ մէջ պիտի պատահին շա՜տ վայրկեաններ ալ, ուր սեւազգեստ տըրտմաթախիծ էակ մը քեզ իբրեւ լուսապայծառ գեղածիծաղ հրեշտակ մը պիտ՜ երեւի՜: Բնութիւնն այդ հսկայագործութիւններն ունի: Բնութի՜ւն, անի՜ միայն գիտէ նորոգել

մեր սիրտն: Իր տրտմութիւններն անշուշտ ունի բնութիւնն ալ, և իր ողբերգութիւնն ալ ոյք անտառաց կամ անդնդոց խորերէն կը հասնին մեզ՝ յաճախ խռոված են մեր հոգւոյն խաղաղութիւնն: Այլեւ բնութիւնն ինքը միայն գիտէ. ինք միայն կարող է խայտացնել թախծեալ հոգին: Օրէնքն է այս: Ցոռի կամ բարի, պիտի կրենք զայն առ հասարակ, մինչեւ որ յանզգայս մեր արտեւանանց վրայ ծաղրանայ մե՜ծ ստուերն Նիրուանայ...

XXIII

ԻՇԱՏԻԷ, 24 օգոստոս

Պատուհանին առջեւ նստած, կը յիշե՞ս, ո՞վ անմոռանալի Սրբուհի: Կը յիշես Հասգիւղն, անմոռաց այն Հասգիւղն: Ամայի Հասգիւղն, որ սակայն լի է միշտ, ուր եղերգք միշտ կ'երգուին, ուր եղերգութիւնք միշտ կը կատարուին: Զմեռն ի Բերա, ամառն ի բարձր Պոսֆոր կամ ի Բոսինքիրոս կը զուարճանայ բարձր դասն. այլ բարձրագոյն ստեղծմունք, նախասահմանեալ էակք, գերազանց հոգիք, անդ, ի Հասգիւղ, կ'ապրին լաւագոյն կեանքն, հծծելով ու հիւծելով, գարնան առաջին գեղգեղանքներուն ի լուր, տխուր, աննշան մահաշշուկ նուազներուն ի լուր՝ տխուր, խօլ զուարթ, բոց ու հուր, միշտ հակառակելով բնութեան, միշտ գզուեալ ի բնութենէն, միշտ դժգոհ ու միշտ...

Ինձ կը թուի, թէ Հասգիւղ ես, Սրբուհի՜... Կը մտնեան դպրոցին օրերն: Հովն ալէ պիտի, պարտէզին տերեւներն, այն դասարանը բերէ պիտի, ու դուն, որ այն դալկահար թերթից վրայ կը կարդաս աղեկեզիկ բառեր անտես և անհաս էակաց ձեռօք գրուած՝ պիտի յուզուիս, պիտի զգաս արտասուքներն, որք կը վազեն վեր՝ յաչացդ հոսելու ու թերթ ու դասարան ողողելու համար. և դու պիտի ձեռքերդ, ո՜չ կամքդ աչքիդ պիտի տանիս, որպէս զի թումբ կազմէ արտիդ և չը յորդէ այն և չը մխիթարուիս: Ա՜հ, ի՜նչ դառն է կեանքն. քանիո՜ն անըմբռնելի: Սակայն պէտք է ապրինք. պէտք է ապրիս, Սրբուհի՛:

Միայն անէութեան հաճոյք կրնան գերազանցել այս հաճոյք-տառապանքներն. այլ ո՞վ գիտէ, թերեւս Նիրուանան չէ մեզ սպասողն, ո՞վ գիտէ, թերեւս երանաւէտ հոգւոց անվիշտ այլ անզուարճ անտանելի կեանքն է այն: Յայնժամ ի՞նչ տանջանք. Ապրի՛նք. մի լսեր Ռաֆայէլի մոգիչ ձայնն, որ հեկեկէ «մեռնի՛նք»:

Ու քեզ բառ մը չունիմ շնորհակալեաց՝ սքանչելի ընծայիդ համար. բառ մը շնորհաւորութեան անուանդ տարեդարձին առթիւ: Քանզի ես այսպէս և քանզի դու կը հասկնաս զիս...

XXIV

1889 թ.

Սրբուհի,

Ի՞նչ թիւրիմացութիւն եղած է: Խաչկեան կիրակի Իսկիւտար եկայ զքեզ հոն գտնելու հաւաստեօք. տունէդ այնպէս ըսած էին, թէ շաբաթ երեկոյ մեկնած էիր Հասգիւղէն: Անհամբեր եմ Հասգիւղ գալ: Կը տագնապիմ: Թէեւ.... է՞ր ծածկեմ... չար ոգին, որ էութեանս խորհրդաւոր խորութեանց մեջ կը թաքչի՝ մեծ գոհութիւն պիտի զգար, եթէ անյայտ եղած ըլլայիր: Զը գիտես որքան կը տանջէ զիս ոգին չար, զոր քեզ կամ ընդ իս կը տանիմ: Ցերեկն երբ սաստկապէս յուզիչ լուր մը չառնում կամ տարօրինակ դէպքի մ'ականատես չը լինիմ, երիկամանցս խորն՝ երեկոյին՝ խուլ ձայն մը կը սկսի որոտալ, մութ ու մեռելայարոյց ձայն մը՝ դիւաց արշաւանքի մը ձայնին նման: Հուսկ ապա բառերն որոշ-որոշ կը լսուին. երկաթեայ բառեր, հրաշէկ երկաթի բառեր յանդիմանութեան, որոնք զիս կը պատուհասեն աշխարհի տափակութեան, մարդկային կեանքի միօրինակութեան համար: Մարդ մը, սիրեցեալ մը, պաշտեցեալ, անյա՞յտ եղած է, բնաւ հետք.— Ալէմտազին ամբողջ, անծայրածիր անտառն, ամբողջ այրած է. ու «Պայրընի Վարդենին» տժգոյն՝ բոցոյ գոյն զգեցած է պահ մը և ապա աճիւն դարձած յաւիտեան.— Բոինքիրոյին գագաթէն, սոճեաց զմրուխ-

տին մէջէն յեղակարծ իմն արտացայտած կեդրոնական հուրն երկրագնդին եւ մեծ կղզին՝ իր մեծաւաքանչ **վիլլաներով**՝ ալեաց, անդնդոց տակ է խորասուզուած.— Կալաթա-Գուլէսին փլած է՝ փապուղոյն կքմամբ, ու դարաքանդակ իր քարերն՝ արեան հեղեղներէ վարեալ՝ գլորած են որոտաձայն Ոսկեղջիւրի ծոցն.— Հոն, ուր Պոնտոս կ'ընդհատի Միջերկրականին, Սարայ-Պուրնուին առջեւ Գրզ-Գուլէսիի շուրջ, ալեաց անլուր գուպար մ'է կատարուած, որում նուագք ալ են մասնակցած ու ծովն իր փրփուրներն նետած է մինչեւ նոճեաց կատարն, ու ճերմակ փրփուրք ծովուն՝ ոսկի վանդակներէ ներս են թափանցած և սպիտակագոյն մարմնոց հետ հեշտագին ոգորումներ ունեցած եւ հրեղէն էակներ իրենց ցրտագին եռացման մէջ սառեցուցած.— Էիւպ-Սուլթանի բազմադարեան դամբարանաց խոնաւութենէն ծնած ու սնած գէջ ճիւաղ մ'անդրջրհեղեղեան Պահարիյէյէն Գարազան կենդանի կամուրջ է կազմուած եւ իր շուրջ ծաւալած խաւարն անկարող են ի բաց փարատել արփենի ճաճանչք ու նշոյլք ամենալոյս համաստեղութեանց.— Քեազրահանէի գետակէն անդիմադրելի յուշկապարիկ մ'ելեր է, որ դիւթական այն վայրաց բոլոր այցելուներն յանկուցանելով Զաղլազանի ջուրց մէջ կը խեղդէ.— Էյֆէլի աշտարակին կատարն հրեշտակ մ'երեւցած է՝ ի ձեռին փող ահագին, որ կը գուժէ վախճանն էից ու աշխարհի:

Ա՜հ, մեծահարուստ ոք ըլլայի, ու թերթ մը հրատարակէի, որ այնպիսի լուրեր ստեղծէր գէթ, եւ գոհ ըլլար չար ոգին, որ յիս կեալ և զիս չի տանջէր այլեւս չար ոգիս անխնայ: Բայց ի՞նչ եղար, Սրբուհի, շաբաթ գիշեր ո՞ւր գացիր, իրօք եկար արդեօք Գուզկունճուգ ու թաւուտներու տակ թաքցուցիր եթերային մարմինդ. կամ թերեւս Հասգիւղի գերեզմանն՝ ելար այցել, մեռելոց ոգիներուն հետ խօսակցիլ. դամբանաց հոգոցնել՝ բանաստեղծին նման թէ ի՞նչ կ'ընեն հոգիներն կամ մարմիններն ոյք իրենց կը յանձնուին, կամ հարցնել դամբանաց թէ ինչո՞ւ կը մաշեցնեն, կ'իրացնեն տակաւ ու հուսկ ուրեմն կը ջնջեն կենդանի ձեռաց հետքն ի վերայ մեռելոց հանգստարանին: Իրօք անյայտ չեղար, Սրբուհի՛, երբ Հասգիւղ գամ զքեզ հոն

չը՞ պիտի փնտռեմ. հոն կամ այլուր. զքեզ պիտի՞ գտնեմ Ներսէսեան վարժարանի մէջ, միշտ նոյն, միշտ համակիր ինձ կամ միշտ սիրահար իմ անծանօթ հանգամանացս, իմ անարտայայտ հրապուրանացս. զքեզ պիտի գտնե՞մ յաւէտ փափուկ, յաւէտ բարձրախոհ, յաւէտ սպիտակ արտաքուստ **էլիոդոբ**ի մը նման ու ներքուստ հուր հրաբուխ, բոց ու բորբոք յաւիտեան: Յաւէտ ի քէն պիտի ընդունի՞մ ազնուաբոյր այն գիրերն, ոյք արտիդ թերթերն են քան թղթի գրեալ թերթեր. անէծքդ յաւէտ ճակատագրի՞դ պիտի ուղղուի և երբէք ինձ. երբէք չը՞ պիտի թշնամանես զիս, ինձ դէմ երբէք չը՞ պիտի հայհոյես. երբէք չը՞ պիտի մոռնաս Եղիան. այդ յեղյեղուկ հոգւոյն յարեա՞լ պիտի մնաս յաւիտեան. յաւէտ հրեշտակային համբերութեամբ պիտի տանի՞ս իր յիմարութիւնը:

Եթէ կատաղի շան մը նման ոլոքէդ ալ բրցնէ, դեռ ժպիտով ու համբոյրներով ու վարդից փունջերով պիտի վարձատրե՞ս իր վայրագութիւնն: Ընդէ՞ր չես ուզեր բժշկուիլ հաւատքէդ, թէ յիս Աստուած մը կայ. ո՛չ. յիս Աստուած մը չունիմ. և կամ յիս դեռն հզօրագոյն է, քան զԱստուած:

«Խե՛նդ տղայ»,— կ՚ըսեմ ես ինձ, երբ կը մտածեմ, թէ բերկրանքս անհուն պիտի լինի, երբ չորեքշաբթի տեսնեմ վերստին զքեզ ողջ առողջ ի Հասգիւղ:

XXV

ԻՄԱՏԻԷ, 31 մարտ

Սրբուհի,

Բաւական ժամանակէ հետէ գրչիս ներքև եկած չէ անունդ, ամփոփում կրկին բառիցն գերագոյն՝ Սիրոյ և Սրբութեան. անունդ զոր կը մրմնջեն սակայն իմ շրթունք կամ կը մրմնջեն կոհակունք, որժամ հակառակ պատուէրիդ՝ թեթև լաստի մը յանձնեմ գանձս և անդնդոց վրայ ծփամ ծայրախորհո՞ւրդ...:

Ծայրախորհո՞ւրդ մակդիր յարմար, մակդիր յարմարագոյն անտարակոյս բարեկամիդ համար: Եւ դու, որ զիս կը

յանդիմանեմ ծայրագոյն կամ ծայրայեղ խորհրդոցս համար, յաւէտ պիտի պատասխանեմ քեզ, կամ բանիցդ ի լուր պիտի կողկողիմ յաւէտ-ո՞չ ապաքէն քեզ նման էակաց հանդիպումն է, որ կ'արժանացնէ զիս մակդիրներու ծայրագոյնին 'ի բարին և ի չարն...

Զքեզ կը թշնամանե՞մ միթէ, դիւային դե՞ր կ'ընծայեմ քեզ, հրեշտակահոչակդ ի համայնից: Եւ ընդէ՞ր ոչ. ընդէ՞ր վարանիմ եւ ընդէր խղճամ. քանի որ Չարն՝ աստէն կենաց գլխաւոր հրապոյրն է ինձ համար, քանի որ հրեշտակաց թևերու ստուերն ինչ ոչ ունի «թանձրաթախիծ», քանի որ կող մ'է կորզեալ՝ կինն, արդիւնք աւազակութեան աստուածային, հաստատութիւն եւ ամբաստանութիւն Արարչին, բարիք պարգևեալ չարեօք, չար իսկապէս և աստուածապէս էր քեզ ի մասնաւորի չարն անմատոյց համարիմ, Սրբուհի: Ո՞չ ապաքէն այսու բացառութեամբ զքեզ թշնամանած պիտի լինէի:

Յանգէտս սակայն թշնամանած կամ խոցած եմ զքեզ՝ թուի՝ յընթերցումն տալով քեզ **Ատոլֆն.** Ո՞վ է, ի՛նչ ունի Ատոլֆ: Վշտի դիւացազուն մ'է և կամ վշտի պարտեալ մէ նա անշուշտ: Այդպիսի տպաւորութիւն մը թողած է յիս. այդ պատճառաւ տուի քեզ այդ վէպն: Հոլով ամեր առաջ կարդացած ըլլալով զայն, չեմ յիշեր որոշ կերպիւ կամ մանաւանդ գրեթէ բնաւ չեմ յիշեր՝ թէ ինչ ծագում ունեցաւ և ի՛նչ բարեշրջում կրեց սէրն այդ գրքին դիւցազանց: Ուստի **Ատոլֆի** ընտրութիւնն պէտք չ'է վերագրուի խորհրդոյ մը կամ թաքուն ինչ խորհրդոյ, ինչ որ այս պահուս քեզ կը զբաղեցնէ փափկագին անձիդ նկատմամբ, առողջութիւնդ է այն. նաեւ հրատարակումն Նիրուանայի նամակիդ, որ կը զգամ, թէ իր պարունակութեան,— այլ ոչ իր ոգւոյն, հակառակ ազդեցութիւն յառաջ բերած է ու պիտի բերէ (քանզի հատուածդ այդ յաւէտ պիտի կարդացուի): Ինչ որ իբրև եղծ մը գրեցիր Անէացման վարդապետութեան, զքեզ ահա քրմուհի կը կացուցանէ Նիրուանայ կամ անդրանկափառ քրմուհին զքեզ կացուցանէ Նիրուանայ: Բերկրանքս անպատում է. կինն ահա կը նուիրագործէ Չարի գործն, ում նուիրած եմ անիծապարտ իմ գրիչս:

Երանութիւն կը զգամ այն յուսոյն մէջ, թէ մերժելէ հեռի

գնրագանց տիտղոսն այն քրմուհուոյ, նուրիական ու լղական պաշտօնդ պիտի կատարես Դպրութեանց տաճարին մէջ, յորում կը պատարագէ խորհրդազգաց երկրպագուդ՝ ԵՂԻԱՆ:

XXVI

ԻՃԱՏԻԷ, 21 յունիս

Սրբո՛ւհի,

Տարօրինակ բանաստեղծի յիմարակա՞ն տենչե՞րս... պէտք է՞ր , որ բաւական իմաստով առնուիր զայնս, և տրտմագին բանիւքդ կեղեքէիր սիրտս, զոր պատառ-պատառ կ՚ընէ հազն անողոք հէք մօրկանս...

Երկուշաբթի կատղեցաւ մօրս հազն, և երկու օր վայրկեան մը չը կրցայ հեռանալ քովէն. այս գիշեր գրեթէ մինչեւ լոյս հազաց. առաւօտուն մեղմացաւ հազն: Եկան բժիշկներն ալ՝ Փէշտիմալճեան քւ Սեղբոսեանն ի միասին, և զիս յուսադրեցին: Գիշերն յուսահատած էի մօրս բժշկութենէն, և հոգեկան վիճակս անկարագրելի էր:

XXVII

ԻՃԱՏԻԷ, 10 հոկտեմբեր

Սրբուհի՛,

Վիշտ՝ առաջին բառն եղաւ, զոր անցեալ օր արտասանեցիր՝ տեսնելով զիս: Յետոյ գիր մը տուիր ինձ, զոր յոյժ նեղուեցայ՝ չը կրնալով իսկոյն կարդալ, քանզի վշտի արտայայտութիւն կը սպասէի գտնել այդ գրոյն մէջ ալ: Ծոգենաւ չը մտած ընթերցայ նամակդ: Յանոսի նման՝ կրկին ունէր երես այն, մթին՝ մին ու պայծառ՝ միւսն: Եւ գոհ եղայ յոյժ. եթէ համակրութեանս անարատագոյն մասն անդունդին կամ մութին համար է, գլխովին անհամակիր չեմ լուսոյն կամ լուսահանդէտ զուարթութեան: Մանաւանդ երբ լոյսն ստուերով կը շղարշի, երբ

յաւելուածոյ հրապոյր մը փոխ կ'առնու լոյսը մութէն, երբ լոյսն այնպէս հոգւոյս անյագ սնաբաղձութիւնը կը գգուէ, լուսոյն ե՛ւս առաւել կը յարիմ յայնժամ և չը գիտեմ, թէ այ՛ն աւելի կը սիրեմ, սեւ խաչափա՞յտն յոգնախօս սուրբ ստուերաց յատակին վրայ, թէ սեւ խաչափայտն ի լուսահոծ լանջս անդ սիրատարփ աղջկան...

Անիծեա՞լ խաչն. ահա նորէն գրչիս տակ եկաւ, անտարակոյս քանգի ուսիս վրայ է այն յաւիտեան: Կը հարցնես ինձ, թէ վիշտ չունի՞մ, որ այլեւս չեմ խօսիր քեզ անձիս վրայ, չեմ խօսիր քեզ՝ մտերմուհւոյն՝ ներքին կեանքիս վրայ: Վի՞շտ, Սրբուհի՞, եւ միթէ ուրիշ բան ունի՞մ ես. և միթէ ուրիշ բան ունի՞ս դուն:

Օր մը, **Արեւելքի** խմբագրատունն էի. խմբագրաց մին ի Բերա ներկայ գտնուած էր liseuse de penséeի մը ներկայացման կամ նիստին. և կը հարցնէր ինձ, թէ հայերէն ի՞նչ պիտի կոչէինք այդ արուեստագէտն կամ արուեստագիտուհին: **Խոհընթերցիկ**՝ պատասխանեցի: Բառս ընդունուեցաւ ու գործածուեցաւ: Բառս ընդունին կամ ո՛չ, **Յաւընթերցիկ** մ'ես դու, ցաւած սի՛րտ, տառապեալ հոգի՛, որ վիշտ գրելու, դիմաց վրայ վիշտ կարդալու համար գերավարժ աչքեր ունիս: Աւաղելի՜ քրոջդ ծաւի աչկունք քեզ չը պիտի վայլէին. վիշտ ընթերցող վհուկի մը՝ սեւ աչեր կը վայելեն, եւ վիշտ կարդալէն ե՛ւս քան զեւս կը սեւնան տառապանաց վհուկին աչկունք:

Կ'ուզե՞ս, որ բան մը ալ քեզ յայտնեմ, ինչ որ ամէն շաբաթ (կամ ըսենք՝ ամէն ուրբաթ, չարչարանա՞ց օր) կը կարդաս վշտապատում ճակտիս վրայ, վշտահամակ հոգւոյս խորն: Ո՜հ, ինձ խնայէ՜, Սրբուհի: Քոյդ յաւիտեան.....

Յ. Գ.— Այլեւս դուն ուրեք կը տեսնեմ մեր խորհրդաւոր Խաչկեանն. այլ սակայն յաճախ աչացս առջեւ կուգայ խոնարհասէր գլուխն այն, զոր ծակող զոյգ սրաշող աչքերէն ցայտող կայծակունք չեն բնաւ խոնարհասէր. երկնից կայծակին հակառակ ուղղութեամբ կը վազեն, գոգցես գտնել և լափելու, լգելու համար ՈՐ ԷՆ յաւէրժ ոսոխն ՈՉ ԷԻՆ, անողոք ախոյեանն Նիրուանային: Այդ տղան, երբ առաջին անգամ տեսայ Կեդրոնական վարժարանին մէջ, հասա-

ռակ մահկանացուէ վար բան մը մ'երեւցաւ ինձ. և այժմ անմահից դասէն ալ գերիվեր էակ մ'ինձ կը թուի: Խաներու մթութեան ու խորանին խորախորհուրդ ստուերաց մէջ իրեն կը հետեւիմ երեւակայութեամբ, կ'աներեւութանայ, մութին հետ կը նոյնանայ, այլ ահա երկնաձիգ բեկբեկ արոյ մը նման կայծակ մը, զուգեակ զուգահեռական երկնաձիգ կայծակունք՝ կը մատնեն իր ներկայութիւնն. հոն, աչացս տակ, սուրբ տաճարին ստուերաց մէջ, թաքուն, կը դաւադրէ անո՛ր դէմ, որ Է, ԱԻՄին դէմ կը դաւադրէ, որպէս զի հաստատէ Նիրուանայի թագաւորութիւնն:

Երկու կիրակի յաջորդաբար դրական անձանց հետ՝ ոյք այցելութեան եկած էին ինձ՝ բանաստեղծադրական անձդ առարկայ եղաւ՝ երկար մեր խօսակցութեանց: Նախորդ կիրակին Սիմոն Գաբամաճեանն եկած էր ի ծաղկաքաղ, աշնան եղանակին համար շատ գունագեղ և հեշտաբոյր ծաղիկներ քաղեց գրադարանէս, ուր մասնաւոր մասունքանուէր տեղ մը գրաւած են գրութիւնքդ: Գաբամաճեանի Հատընտիրն, այս երկրորդ հատորն յոյժ ճոխ պիտի ըլլայ,— չը պիտի ըսեմ մանաւանդ քու հատուածոյդ պատճառաւ՝ փափկագոյն համեստութիւնդ չը վիրաւորելու համար: Այս կիրակի ալ Մամուրեան եկաւ Պէրպէրեանի հետ. երեսին գովեստներ ըրի շատ մը, սակայն գգուելու տեղ խոցեցի թերեւս այդ ամենամեծ գրական անձնաւորութիւնը. շատ աւելի յաջողակութեամբ ըրի **Արեւելեան Մամլոյ** խմբագրապետին ներբողն անցեալ օր ի Կեդրոնական վարժարան իր այցելութենէն յետոյ, երբ բարձրագոյն դասու տղայք՝ խնդրեցին յինէ՝ դաս խօսելու տեղ՝ խօսիլ մեծանուն հիւրին վրայ. յանպատրաստից բանախօսութիւն մ'ըրի, յորում անտարակոյս պիտի ձախողէի, եթէ ներկայ ըլլար բանախօսութեան առարկայն: Ես յաւէտ ձախող եղած եմ անձ մ'երեսն ի վեր գոված ատենս: Հարցուցի Կիրակի, թէ կը ճանչնա՞յ զքեզ. յիշեց և յայտնեց, թէ տեսնուեր էք անցեալ օր ի Հասգիւղ:

Սրբուհի,

Գերագոյն փափկութեամբ մը կամիս, որ վախճան տամ թղթակցութեանս, զի թերեւս առողջութեանս կրնայ վնասել սա: Կամքդ թող ըլլայ: Զքեզ չէի յիշեր միայն՝ քեզ թղթած պահուս: Այսուհետեւ ալ այնպէ՛ս պիտի ըլլայ, և յաւիտեա՜ն....

ՏԻՐԱՆ ՉՐԱՔԵԱՆԸ՝ ՎԵՐԺԻՆԻՆ

Տիրան Չրաքեանի (1875—1921) նամակները՝ յղուած Վերժին Պէյազեանին, աներևակայելի ու տոչորուն սիրոյ արտայայտումներ են: 1919 թ. փետրուարին չորս լեցուն տարիների սիրահարութիւնից յետոյ բանաստեղծը նշանուում է Վերժինի հետ: Սէրը եւ կատարելութիւնը բնորոշ են ոչ միայն Չրաքեանի այս մի քանի պատառիկներին, այլև ողջ ստեղծագործութեանը, որը մենք տակաւին չենք յայտնաբերել:

Ա

Երեկվընէ ի վեր չեմ գիտեր այս քանիերորդ նամակն է, զոր կսկսիմ քեզի գրելու: Ամենքն ալ պատռեցի առանց լմընցնելու: Տրամադրութիւնս այնչափ մեծ է եւ այնպէս կրճնշե վրաս, որ միտքս իր ազատ գործունէութիւնը կորսնցուցած է: Խոստովանիմ քեզի, որ այս տրտմութեան պատճառը միայն դուն չես, որուն կրնգտիմ յուսահատօրէն, առանց քեզի ինքզինքս պակաս, թերի, անհասկանալի զգալով, հապա նաեւ աղքատութիւնը: Իսկ միւս կողմէն աշխատութիւնս կիսատ մնացած խիղճս կտանջէ ինծի, կցուցնէ ինծի, թէ որքան տկար է կամքս,

* Նամակներն արտատպում ենք «Ամենուն տարեցոյց»-ից (1927թ., էջ. 278—285), (Ծ. կ.)

որքան գերի եմ իմ թշուառութեան: Որովհետեւ թշուառութեանս գիտակցութիւնը վերցուցէր է ինձմէ ամէն մտաւոր ազատութիւն, զոր բան մը չի կրնար ջնջել, եթէ ոչ վիշտը: Անշարժ կը նստիմ, հազիւ կը կարդամ, հազիւ կը գծագրեմ: Եվ փոխնիփոխ իմ վիշտերս կհալածեն զիս: Կարծես թէ մոլութիւններ են: Դուն իմ մեծագոյն մոլութիւնս եղեր ես. ամէն մտածումի ետեւն ես եւ սխալ է ըսել թէ անկեղծօրէն այսինչ բանին վրայ կխորհիմ: Անպատճառ միտքս, ներսէն, քու վրադ կխորհի, անընդհատ, ինքզինքին վրայ մտածելու պէս, որովհետեւ խառնուած ես ինքզինքիս, եւ առանց քեզի ամբողջ չեմ, այլ պակաս եմ, կէս, անիմաստ: Ինչ գործ ունիս իմ թշուառ հոգիիս մէջ, որ ոչինչ կրնայ ընել քեզի: Սակայն միթէ ես չեմ պատճառը, երբ խենթի պէս քու վրադ կմտմտամ, գիշերները երբեմն ծունկի եկած բազմոցիս առջեւ՝ որուն վրայ կիյնամ, իբրեւ թէ քու առջեւդ ըլլայի, խեղճ գլուխս ծունկերուդ դրած: Ալ իմ միտքիս մէջ էական տարրը եղած ըլլալուդ պատճառը չէ մի, որ այն գինովութիւնս է, որուն մէջ կմնամ երկար ատեն, գլուխս բազմոցիս բարձին, եւ աշխատելով իրացնել դէմքդ, իմ հոգին խառնել, պատկերացնելով անոր անբացատրելի անուշութիւնը իմ ներսիդիս, յաւիտեան հոն կառչեցնել ուղեղով զքեզ, եւ չէ մի որ ալ յաջողեր ես այս խինդ ու զորեղ ջանքիս մէջ: Այո, մոլութիւն մը ես, վերացնող մոլութեան մը հեշտալի տառապանքը, որ կհալեցնէ զիս, որ ամէն մտածումիս մէջն է, տակն է, ետեւն է եւ չի թողուր ինծի ուրիշ բաներով զբաղիլ: Ոչ սակայն կարծածիս չափ հեշտալի չէ այս տառապանքը, թէեւ ես իսկ ուզեմ անկէ չզրկուիլ: Իմ թշուառութիւնս կթունաւորէ կոր քենէ զգացած երանութիւնս, եւ կթելադրէ ինծի՝ ինքզինքս հեռացնել քենէ: Ներէ այս խօսքերուն. ես չեմ կրնար իրապէս հեռանալ քենէ, որովհետեւ չեմ կրնար ես իմ էութենէս հեռանալ: Ինչ տանջանք զքեզ սիրել այսքան, եւ փախչիլ ուզել, քանի որ անօգուտ եմ քեզի: Խիղճս լեցուն է ասանկ վիշտերով, որոնք կամ իմ թերութենէս կուգան, կամ բախտէն, եւ քենէ զգացած երջանկութիւնս՝ երբ նայիմ քեզի շուտով կփոխուի անհուն տրտմութեան: Եւ յուսահատօրէն կմտա-

ծեմ քու վրադ, իմ միակ յուսահատութիւնս, իմ անջնջելի տրտմութիւնս: Չեմ գանգատիր քեզի բնաւ. եւ հոս է սէրը. չեմ գանգատիր, քանի որ առանց այս տառապանքին՝ կարելի չէ զքեզ սիրել, դուն որ Տրտմութիւնն ինկ ես: Իմ ներշնչումս, իմ կեանքս, այս տրտմութիւնն է միայն, որ զիս ազնուացնելու կարող է: Անցած գիշեր գացի Պեյլէրին պարտէզը, եւ լուսնկայ՝ին կեցայ ճիւղերուն տակ այն ծառին, որուն մէջ, որուն շուրջ զքեզ տեսեր էի գիշեր մը. ախ այն տեսիլը... Նոյն դիրքով կեցայ հոն, աչքս երկինքին ու մութ ճիւղերուն, անընդհատ քեզի խորհեցայ, եւ այս ճիգը պատճառ եղաւ, որ ծունկերս դողդղալ սկսին: Աղօթելու պէս մնացի հոն, աչքս տարտամ, լուսնկայ գիշերին մէջ քու յիշատակիդ յառած, ծծելով, շնչելով զայն... Եւ այս տենչը, դէպի քու անձդ ունեցած յոգնեցնող ձգտումս ուրիշ բան չէ բայց եթէ իրապէս ազնուանալու, բարձր ու լաւագոյն ըլլալու ըղձանք մը, որ արժանի ընէ զիս քեզի, տառապանքներուս եւ ազնվացումիս աղբիւրին:

ՏԻՐԱՆ

Բ

Հիւանդ եղած ատենդ մանաւանդ, երբ ինձի կըսես, որ գամ նորէն քովդ նստելու, զգացած ուրախութիւնս չի բաւեր, որ չմտածեմ, թէ ոչինչ կարող եմ ընելու զքեզ աղէկցնելու համար: Երբ եկուր կըսես ինձի, ես տրտմութեամբ կը մտածեմ առողջարար ազդեցութիւն մը ընելու անկարողութեանս վրայ: Քեզի կը նայիմ անհուն անուշադրութեանդ միշտ ծարաւ, եւ աչքերէս, որ կը խմեն քու գեղեցկութիւնդ, չեն կրնար փոխարէն քեզի վերանորոգող ուժ մը դրկել: Ու միշտ սենեակէդ կը մեկնիմ անօգուտ: Որքան կուզէի, որ իմ ներկայութեանս զգացած լքումդ վերածուէր իրիկունը խաղաղ քունին, որ կը փախչի տրտում աչքերէդ: Որքան կուզէի, որ ջղային տկարութեան տխուր բաբախումները, զոր կուրծքիդ մէջ երբեմն գուցէ կը զգաս իմ գալուս համար, փոխուին իմ գալուստովս այն բարեբեր ոյժին, որմէ զուրկ պառկեր ես գունատ, բայց ամէն ատենէն աւելի գեղեցիկ եւ անբա-

լաստիկի։ Ու կը զարմանամ, որ կը կանչես զիս, թէեւ սաստիկ կը փափագիմ զքեզ տեսնելու, անընդհատ տեսնելու, ամբողջ կեանքիս մէջ, մանաւանդ անկէ ալ անդին։ Անցեալ օր ինքզինքս կը դատապարտէի կոր քու վրադ ազդեցութիւն ընել փորձելուս համար։ Թող ես չտեսնեմ այդ ազդեցութիւնը, թող ան ինքնին կատարուի յամրաբար, անձայն, բայց ապահով։ Եթէ ես հիւանդ ըլլայի եւ դուն գայիր, պէտք չկար, որ ինծի «աղէկցիր» հրամայէիր. ես պիտի աղէկնայի արդէն։ Ես չունիմ այն ազդեցութիւնը, զոր դուն կրնաս ունենալ իմ վրաս, որովհետեւ դուն իմ թերութիւններէս զերծ՝ մաքուր էակ մըն ես. կուզեմ, որ անանկ մնաս, զիս քու գերիդ, երկրպագուդ ընելու համար։ Կաղանդի գիշերը, ձեր պարտէզին պատին ետեւ, մութին մէջ ծունկի եկայ...։ Քեզի չէի ըսեր ասիկա, եթե չմտածէի, թէ որչափ իմ խիղճս անարժան է քեզի, տառապանքներով չարչըրուած սրբուհիս, մշտնջենաւոր տրտմութեամբ լեցուն կոյսս... Եւ ես, որ քեզի կերկրպագեմ, ես, որ քեզի ունեցած ներշնչումներս գրական էջերու մէջ խունկ կընեմ քեզի, ես՝ մութին մէջ քու գաղափարիդ ու յիշատակիդ առջեւ ծնրադիր՝ իմ կեանքիս ու սրտիս տրոփիւնը քեզի կը սպասեմ, ե՞ս պիտի ըլլամ քու վրադ բարերար ազդեցութիւն ընող...

ՏԻՐԱՆ

Գ

Ըսել է, որ եթէ ցաւերուդ ու տառապանքիդ մեծութիւնը պատճառ չըլլար, որ կանչել տաս զիս ու մատնես ինքզինքդ, դեռ պիտի տառապէի... դուն որ օդին չափ պէտք ունէիր իմ արտաշնչումիս, որ մորթես կը գոլորշանայ՝ իբրեւ հիացում ու պաշտում քեզի համար, իբրեւ քեզի համար բարձրացող աղօթք մը մշտնջենաւոր։ Քեզի պէս խրոխտ ու դժգոհ հոգիի մը երազը եղած ըլլալս կապշեցնէ զիս։ Ես պէտք է որ իմ կեանքս քեզի սպասեմ, չէ թէ դուն քուկինդ ինձմէ կամ, ծածկէ ինձմէ թէ քու կեանքդ իմ շունչէս,իմ նայուածքէս կը սպասես։ Ես՝ նկարագիրով խրոխտ, սնափառ, տիրապետող աւելի յոռի կըլլամ քու սէրդ գիտնալով։ Իմ դիրքս քու քովդ, աստուածուհիս, երկրպագութիւնն է,

եւ ոչ թէ աթոռին վրայ խրոխտ նստուածք մը: Իմ նայուածքս դէպի անհուն անուշութիւնդ պաղատանքն է, արցունք է, եւ ոչ գթոտ ակնարկ մը: Իմ զգացումս գոհունակութիւնը պէտք չէ ըլլայ, այլ յուսահատութիւնը: Որովհետեւ իմ այս վիճակս է, որ խունկի պէս ազնիւ պիտի ընէ զիս քու առջիդ յուսահատ գոլորշացումով սպառելու եւ աստուածացնելու համար զքեզ: Ահ, միշտ վեր եղիր ինձմէ, եւ թող ինծի համար զգացած սէրդ ու չարչարանքդ՝ ներողամտութեան, գութի, համակրութեան փոխուին ինծի յայտնուելու ատեն: Եւ թող որ նայիմ քեզի, իբրեւ անհասանելի երջանկութեան մը ետեւէն, որ անընդհատ կը փախչի ու կը վերանայ: Այն ատեն պիտի լամ, եւ արցունքը պիտի լուայ զիս ու պիտի ազնուացնէ: Դուն իմ բացակայութեանս կուլաս, եւ պէտք չէ իմ ներկայութեանս լաս (քանի որ իմ սնափառութիւնս արժանի չէ այդքան երջանիկ վայելքի, եւ հպարտացնող զգայութիւններէ պէտք է որ փախչիմ), իսկ ես քու առջեւդ կուլամ մանաւանդ, աւաղ, շատ քիչ անգամ,— ինչպէս սակայն պէտք է ըլլայ երջանկութիւնը, շատ քիչ անգամ,— եւ այն ատեն արցունքի կաթիլները քու երկնային գեղեցկութեանդ անյագենալի հրապոյրին համար լուռ օրհներգներու պէս կը ցնդին քու արտաշնչութեանդ մէջ, որուն կարօտ եմ, զգալու եւ ապրելու համար:

ՏԻՐԱՆ

Դ

Երեկ խնդացինք քեզի հետ, Վերժին, նշանած բառին վրայ, ու դուն ինէ աւելի խնդացիր. Հիմա ալ կը խնդա՞ս կոր արդեօք... որովհետեւ ալ չեմ խնդար կոր ես, եւ մտածելս, թէ նշանածս ես, իմ երկինքս, զիս կը յուզէ հիմա՝ սիրտս տարօրինակ ուրախութեամբ մը ուռեցնելով, խոհուն ու շուարած լռութիւններուս մէջ: «Նշանած» բառը, որ անչափ աղուոր չի հնչեր, որչափ ֆրանսերէն՝ ֆիանսէ, կրնայ հնչել քաղցրագոյն դառնակցութեամբ, եթէ նշանածները տարփաւորներ են: Հարկ չկայ զայն հնչելու՝ անոր անուշութիւնը վայելելու համար: Մտածէ միայն, թէ

նշանածդ եմ, ես, որ առանց ալիանսին քու նշանածդ էի արդէն: Կեանքին ընկերութեան օրինադրած կանոններէն դուրս մեր իսկ գիտակցութենէն անկախաբար իմ սիրտս նշանած էր քու սրտիդ, իմ անձս նշանած էր քու էութեանդ եւ մեր հոգիները ճակատագրուած էին իրարու, որովհետեւ գերագոյն ներդաշնակութիւնը աստուած պատկառելի, երկրպագելի խորհուրդը բոլոր ներդաշնակութեանց, արդէն զմեզ սահմաներ էր իրարու, իրարու համաձայն թեռի ստեղծելով զմեզ, որպէսզի զիրար ամբողջացնէինք: Ալիանսը զոր պիտի ծախու առնեն մեր մատերուն համար միայն մեր էութիւններուն, բնաւորութեանց ու տենչանքներուն մէջ ստեղծուած էր մեր գոյութենէն ի վեր եւ այն կատարելութիւնը, զոր կը զգամ զքեզ շնչած ատենս, կատարելութիւնն է «ալիանս»-ին, որ չէ թէ կը կապէ զիս քեզի, այլ զիս քեզի կընդխառնէ, կազմելու համար երանաւէտ ամբողջութիւնը, լուսաւոր, զոր մեզի բերուելիք չեմ գիտեր քանի այեաթ ոսկեայ օղակները չէին կրնար արտադրել եթէ բնութեան, մեծ ու երկրապագելի բնութեան ադամանդէ կապը դրուած չըլլար իմ ծնրադրութեանս ու քու դշխոյութեանդ միջեւ, ոչ թէ իբրեւ կանոն մը, պայման մը, այլ իբրեւ օրէնք մը, բնական ու երկնային, քանի որ դուն Տրտմութեան ու Քաղցրութեան իշխանուհին ես, մինչ ես գեղեցկագէտ, բանաստեղծ, յուսահատ երիտասարդ եմ խնկալի բագինիդ առջեւ առ յաւէտ ծնրադիր: Ասիկա օրէնք է, ասիկա կանոն չէ, սովորութիւն չէ: Զքեզ պաշտելէս աւելի բնական բան չկայ. եւ այս մեծ, կատարեալ բնակութիւնը համարժէք է բնական մեծ օրէնքներուն հետ, այսինքն այնքան անխուսափելի, այնքան ճշմարիտ եւ անվրէպ է, որ կեանքը ծնի, քայքայումը յաջորդէ հաւաքումին, եւ նոր հաւաքումը հին հաւաքումին, ամէն ինչ փոփոխուի ու կատարելագործուի: Ահ, ինչ անդիմադրելի «ալիանս» բնապէս իրարու սահմանուած ըլլալը եւ փոխանակ հաւանականութեան, հաճութեան կապերու բնական օրէնքով իրարու կապուած ըլլալը, այսինքն իրարու նկատմամբ պակաս, անիմաստ ըլլալը, եւ իրարու ընդխառնուած կատարելացումը: Վերժին, իմ յուսահատութիւնս, աչքերս լեցուն, ու տեսողութեան տարտամութեամբ մը ինքզինքս

կորսնցուցած, քու անհուն անուշութեանդ մէջ ինքզինքս կորսնցուցած, կըսեմ, որ նշանածս ես դուն... Աստուած իմ, միթէ ծիծաղելի բան է նշանածս ըլլալդ, եթէ իմ դիցուհիս ես, եւ տժգոյն ու գեղեցիկ Տրտմութիւնս:

Ահա կը ճաշակեմ ես— Եղիպտին բառով կը քմաճաշակեմ այս միամիտ բառին պարունակած խորունկ ու ճերմակ երկինքը: Եւ երեկ կը խնդայի կոր վրան... Օհ, ամէն ինչ կրնայ խորունկնալ, եւ ամէն ինչ կրնայ շփոթիլ երկինքին հետ, եթէ հոգին ուզէ տեսնել անոր մէջ պարունակուած ճշմարիտ ու գեղեցիկ ու ազնիւ էութիւնը. ամէն բան: Եւ դուն, ով հրեշտակս, միթէ այդքան հրեշտակ ըլլալուդ համար չկրցար երեւակայել ինչ նշանակութիւն որ կրնար պարունակել «նշանած» բառը գոնեթիկ սովորութեանց ծանօթութենէդ անկախաբար: Քու սիրոյդ քով շատ աշխարհիկ բառ մըն է այս, բայց քու սէրդ պետք է ընդխառնուի այս աշխարհիկ բանին, որ անհրաժեշտ է սիրային կեանքին: Եւ սէրը, որ ամէն ինչ կազնուացնէ, նոյնիսկ զիս, սէրը շքեղ տեսակէտ մը պէտք է ըլլայ այդ «գոնեթկութիւն»-ներուն կարծեցեալ դատարկութեան ու տգեղութեան նայելու համար, եւ ահա ամէն գոնեթկութիւն կրնայ մինչեւ քու սէրդ բարձրանալ, եւ ես երեկ իրիկունքնէ ի վեր որքան տարբեր եմ: Մտքէս անցած չէր «նշանած»-դ ըլլալ եւ երբ եղայ, չկրցայ մէկէնիմէկ վայելել այս կացութիւնը: Հիմա կը ճաշակեմ զայն, երեւակայելով քու երկնաւէտ ստուերդ, որ իմ նշանածս է ալ... Միթէ իմ սէրս այնքան խախուտ ու դեգերող է, որ կարծեցեալ «գոնեթկութեանց» հանդիպումէն դողդոջէ, այնքան քիչ լուսաւոր ու պայծառ, որ ատնոց «տգեղութենէ» պղտորի՞: Միթէ սիրոյ բարձրութեան պայմանը հեռու ըլլալն է միամիտ սովորութեանց պարզութենէն, անիմաստութենէն եւ ինչո՞ւ չես ուզեր խորհիլ, թե քու կամ իմ տարփանքս բարձր սէր մըն է, վասնզի բանաստեղծական խառնուածքներու սէրն է, այնքան բնական ու մարդկային, որքան գեղագիտական ու գիտակից,— թէ շատ նուրբ ու անզգայարանական է, վասնզի յետին աստիճան նրբացած ջիղերու սէրն է,— թէ խորին սէր մըն է, վասնզի բարեկամութիւն մըն է, որուն սկիզբին թուականը կերթայ կորսուիլ քու մանկական ուշադրութիւններուդ պատ-

կառուցութեանը մէջ եւ իմ պատանեկան անփոփոխութեանս ժամանակին համակրութեանը մէջ, որով շրջապատած եմ խանդաղատական անունդ։ Ալ մի խնդար «նշանած» կամ «ալիանս» բառերուն վրայ... անոնք միամիտ ու պարզ, ու նոյնիսկ գեղեցիկ խորհրդանշանումներ շատ աւելի խորին, կնճռոտ ու ուժգին զգացումներու, ալ թող անուշութիւն մը ունենան քեզի համար, անուշութիւններու կատարելութիւնս, ինչպէս ինծի համար խորթութիւն մը ունին, զոր դեռ չէի կասկածեր բնաւ, զոր քու սէրդ ցուցուց ինձ այսօր, արցունքոտ աչքերուս լուսաղօտութեանը մէջէն։

Քոյդ ՏԻՐԱՆ

Ե

Կեանքիս մէջ առաջին անգամն է, բնականաբար, որ այս վիճակը կը զգամ կոր։ Զգացածս սակայն երջանկութիւն մը չէ, ընդհակառակն իմ սիրոյս կամ քուկինիդ տեւողութեանը վրայ տարակոյս մը, քան վստահութիւն մը, ինչ որ պէտք էր, որ ծնէր ասանկ պարագայի մը, այսինքն ամուսնութեան ապահովութենէն։ Ամուսնութիւնը բնականաբար կը նշանակէ, թէ սէրը պիտի տեւէ, եւ նուիրագործում մըն է սիրոյ։ Բայց իմ զգացածս թէեւ գոհունակութիւն, բայց միանգամայն տարակոյս մըն է, ափսոս։ Իմ նշանածս եղար, ուրեմն ալ պիտի զրկուիմ այն տառապանքներէն, որոնք զիս բանաստեղծ կընեն, կամ որոնք կը գրգռէին իմ բանաստեղծութիւնս, եւ որոնք զիս կազնուացնէին կարծես անմատչելի նկատուած գոյութեանդ ետեւէն հառաչել տալով ինծի, ուստի ջանալ տալով արժանի ըլլալու, նկարագրով ու մտքով, քու շնորհիդ ու կուսութեանդ։ Ալ այդ տառապանքները կրնան դադրած նկատուիլ։ Ճակատագիրը զմեզ վերջապէս կը սահմանէ իրարու, եւ եթէ իմաստասիրաբար խորհիս, կը տեսնես, որ անհրաժեշտ էր այս բանը, նախ քանի որ եղաւ, յետոյ՝ անկարելի էր, որ ուրիշ կերպ ըլլար։ Ուրիշ կերպ. եւ ինչ կրնայիր երեւակայել, որ ըլլար այդ ուրիշ կերպը։ Կրնայի՞ր ծնողքիդ մտածելու կերպերը վեր ի վայր փոխել, զքեզ շրջապատողներուն մտածելու եղանակը դարձնել մերինին, եւ մանաւանդ կրնա՞ս երեւակայել, որ յաւէտ պիտի կրնայիր

կոյս մնալ, եւ ես յաւիտեան ծարաւ քեզի... Մեր վերացական սէրը կը հաւատաս, որ յաջող էր տեւել բնականէն անդին: Որովհետեւ սէրն աւելի կամ նուազ վերացականութեամբ կը սկսի, եւ աւելի կամ նուազ դրականութեամբ կը վերջանայ: Եւ միթէ երբոր կը համբուրես զիս, իսկապէս վերացական կը մնաս. ո՞չ ապաքէն օր մը պիտի գայ, որ ալ չյագենաս անով: Ահ այն օրը... երբ պիտի զգաս, որ սէրը՝ մենէ աւելի զօրաւոր իր բնական ու աստուածային ընթացքը պիտի ընէ, ի՞նչ արժէք կրնայ ունենալ վերացական, կուսական, անմարմնական տարփանքդ: Չեմ պաշտպաներ ամուսնութիւնը, բայց քեզի պէս չեմ ըսեր, թէ խայտառակ է ան. մենք ենք, որ զայն բարձր կամ խայտառակ պիտի ընենք. եւ սիրոյ մէջ—պայմանով որ սէր ըլլայ—խայտառակութիւն չկայ: Միթէ ցնորեցուցիդ յափշտակումի մը մէջ անհետիլը, երկու թերի էակներու ներդաշնակ ու մէկ ամբողջի մը, երջանիկ ու յաւիտենապէս կոյս ամբողջի մը վերածուիլն ինչ կրնայ ունենալ խայտառակ: Քու իմ էութեանս հետ ընդխառնումովդ արտադրուած կատարեալ էակը (որ մենք ենք, մենք պիտի ըլլանք կոյս ու գերազանց էակ մը պիտի ըլլայ, եւ սիրոյ առաջին նպատակն այս է, սիրոյ քաղաքակրթական ու բանաստեղծական նպատակն այս է: Ամէն ինչ պիտի անհետի շուրջդ. իմ շուրջս ալ տիեզերք պիտի չմնայ. իմ յափշտակումս, իմ ճառագայթարձակ ծաւալումս, երբ քեզի միանամ՝ քու անհետացումդ իմ խանդաղատանքիս անհուն գաղջութեանը մէջ, եւ քու խնկացումդ իմ զգայարանքներուս անյագութեանը մէջ պիտի ջնջեն ամէն գոյութիւն մեր շուրջը, որոնք իրենց կը հրաւիրեն մեր ուշադրութիւնը, եւ զմեզ իրարմէ անջատ ու թերի կընեն: Մեր ամբողջացումին հիացումը պիտի ողորմէ մեր միտքը: Ինչ երանութիւն, մտային ինչ պայծառութիւն ու գերազանցութիւն պիտի ըլլար կուսութիւնը, եթէ ան կեղծ վիճակ մը չըլլար մարդերու մէջ, սիրողներու մէջ... Սէրը մահն է կուսութեան, նոյնիսկ համբոյրներով միայն, նոյնիսկ իրեր ուշնչութեամբ միայն կը գոհանայ այն: Եւ հաւանէ դադրելու հրեշտակ ըլլալէ, կին ըլլալու համար առանձին, եւ ինծի հետ մէկտեղ՝ աստուածուհի ըլլալու համար սա-

կայն: Հանճար է, աւելի քան հանճար է սէրը, երբ իր նպատակին կը հասնի, եւ երբ կը ցնորիս... Միթէ շա՞տ առաջ կերթամ, եւ այսպէսով չե՞մ ժխտեր յագեցումը: Կը մոռնամ յագուրդը, որ, կըսեն, պիտի յաջորդէ գինովութեան եւ խաղաղութիւնը, որ պիտի հետեւի տենդին: Եւ այժմէն իսկ, երբ ինքզինքս նշանածդ կը կոչեմ, չէ՞ մի որ տառապանքները կը թուին դադրիլ այլեւս. չէ՞ որ Հալքիի ծառերուն տակ առջիդ գալարուող յուսահատութիւնս ալ զմայլելի ու տենչալի հիշատակ մը կը սկսի ըլլալ:

...Քու կուսութիւնդ՝ անձնական կատարելութիւնն է, ամուսնութիւնն ալ՝ ամոլին կատարելութիւնը:

Քոյդ ՏԻՐԱՆ

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԸ՝ ԵԱՆԻԻՆ*

Ռուբէն Սեւակը (Ռուբէն Չիլինկիրեան, 1885—1915) գերմանուհի Եաննի Ապպէլի (1890—1967) հետ ծանօթացել է 1907 թ. շուեյցարական լեռնային ամառանոց՝ Շամբերիում: Ամուսնացել են 1910 թ.: Մինչ ամուսնութիւնը եւ հետագայում Ռ. Սեւակը բազում նամակներ է գրել Եաննիին, որոնց չընչին մասն ենք միայն տպագրում: Եաննի Սեւակը եղել է յայտնի դերասանուհի, ֆրանսերէն լեզուով տպագրել է բանաստեղծութիւնների մի քանի ժողովածուներ:

ԵԱՆՆԻ ԱՊՊԷԼԻՆ (ՍԵՒԱԿ)

Իմ պաշտելի սիրելիս.

Վերջապէս մեր տունն եմ: Վարը՝ հիւրասենեակին մէջ: Հայկանոյշ քոյրիկս կ'երգէ եւ քնարով կը նուագակցէ ինքն իրեն: Դուրսը՝ մեր հօրենական տան դիմացը, վաղեմի մայր եկեղեցիի մը հոչակաւոր աւերակներն են, հին-հին դարերու եւ մեռած մարդոց ամբողջ խորհուրդովը օծուն: Աւելի հեռուն անծիր, ոսկեգոյն, անհունութիւնը խմող, հմայնքներէ գինով, պայծառութեամբ ծանրերեր դաշտերու

* Ռ. Սեւակի բոլոր նամակները արտատպում ենք Ռ. Սեւակ «Երկեր», («Սովետ. գրող» 1985 թ.,) հատորից: Նամակները (ֆրանսերէնից թարգ. մանել է բանաստեղծ Աբրահամ Ալիքեանը). մենք հարկ համարեցինք տալ դասական ուղղագրութեամբ (ծ. կ.):

համապատկերը կտարածուի: Քիչ մը աւելի անդին հորիզոնն է, որ կփախչտի երազի մը նման եւ յաւերժօրէն կմխայ, ինչպէս վիթխարի բուրուառի մը մէջ։ Այստեղ, վարը՝ շատ վարը՝ իրենց կատարին վրայ վաղնջական Սիլիւրին կրող ժայռերու ստորոտին, բոլորովին խորքը, անսահման ծովն է, որ կփշրուի եւ անցած ժամանակներու հին յիշատակ մը կմռնչէ: Եւ ամենուրեք՝ երկինքին մէջ, որ կարծես կմեռնի, երկրին վրայ, որ կարծես կապրի, քաղաքին մէջ, որ կարծես կերազէ՝ յարատեւող երջանկութեան մը, զուարթութենէն աւելի քաղցր տրտմութեան մը, մտածումէն աւելի խորունկ անհոգութեան մը շունչը կայ... Եւ այս տեսարանին, այս հմայքին, այս վիթխարի երազին, այս հին ժամանակին, այս տխուր քաղցրութեան ընդմէջէն ես կմտածեմ էակի մը մասին, որ կարենայ իր անձին մէջ մարմնացնել այն ամէնը, այս ամէնը, ինչպէս **կենդանի Արեւելքի** բուն հոգին, որուն աչքը կարենայ ցոլացնել մեր մայրամուտները, որուն ձայնը կարենայ արձագանքել մեր մռնչուն ծովին, որուն հասակը կարենայ ներկայացնել մեր հեթանոս արձաններում խոհուն գեղեցկութիւնը, որուն շրթունքներն ըլլան քաղցրօրէն տրտում, եւ որուն շարժուձեւը կարենայ խորհրդանշել մեր արեւելեան գոյութեան երեկի, այսօրուայ եւ վաղուայ բովանդակ կեանքը... Ես կը մտածեմ այդ էակի մասին եւ կհամբուրեմ զայն հեռուէն... Աստուած գիտէ... Արեւելքի, անոր ամբողջ խորունկ պարզութեամբ, անոր ամբողջ իմաստութեամբ միամիտ...

Կեանքը: Արեւմուտքի մէջ այս բառին առջեւ կդնեն խոշոր **հարցական նշան մը** (՞), իսկ Արեւելքին մէջ՝ **կախման երեք կէտեր անմռունչ (...):** Ահա տարբերութիւնը: Մինչ այնտեղ կպոռան, կփնտրեն, կփիլիսուիայեն, կվազեն, մենք՝ արեւելքցիներս, կերազենք... Քանզի գիտենք, որ կեանքի միակ ճշմարտութիւնը իր Մահն է վերջնական... Եւ որ ամէն ինչ անօգուտ է, բացի Երազէն, գուցէ...

Ահա այսպէս, Եաննիս, ես քեզ կսիրեմ իմ Երազովս եւ կախման երեք կէտերովս անմռունչ... Ի զուր իմ աչքերուս մէջ մթին հարցական նշան մը պիտի փնտրես... Պիտի այնտեղ գտնես միայն իմ Հաւատքս քեզի հանդէպ, եւ իմ Սէրս քեզի հանդէպ, եւ իմ Կեանքս քու մէջդ... Եւ կկարծեմ,

թէ մեր սիրոյ մեծ գրքին եւ աշխարհի միւս բոլոր սէրերուն միջեւ կայ միայն մէկ տարբերութիւն. այն, որ ոչ մէկ հարցական նշան գոյութիւն ունի այնտեղ... Այնտեղ ամէն ինչ գեղեցիկ է եւ ճշմարիտ եւ արեւելեան...

Համբոյր մը քու ՌԻԻԲԻՆՍԷՆ

Սիրելի Եանին, քեզի կը ուղարկեմ **Իպսէնի՝** հիւսիսի մեծ մտածողին, հզօր գործը: Անոր ընթերցումը **կամքի** գիտակցութիւնը պիտի զօրացնէ մէջդ: Պէտք չէ հապճեպ կարդալ: Ծնորհակալ եմ **Բաքոսուհիին** համար, որ հոյակապ բացիկ մըն էր, մինչեւ հիմա ուղարկածներէդ լաւագոյնը: Քանի մը օրէն ինձմէ կը ստանաս թանգարանային բացիկներուս փոքր, գեղեցիկ ալպոմը: Ահա ցանկը.

Գեղեցիկ դպրութիւն. (կանաչ) կանաչ-կարմիր-կանաչ: Վլոցի ուսանողներ.

Յոֆինկենցիներ. (ճերմակ) կարմիր-ճերմակ-կարմիր. զուիցերական-ֆրանսական:

Սթելլա. (ճերմակ) կապոյտ-ճերմակ-կապոյտ: Մեքենագէտ ուսանողներ:

Յունիս 17, 1915

Սիրելիս,

Երեքշաբթի հասայ Զանղրը: Ճամբորդեցի վեց օր: Շատ հանգիստ եմ: Բժ. Տինանեանին հետ նոյն տան մէջ կապրիմ: Տան առջեւ պարտէզ կայ եւ անտառ: Մի մտահոգուիք ինձի համար: Ծնորհքն Աստծուծոյ քիչ ատենէն արդարութիւնը կվերականգնուի եւ մենք միասին կըլլանք: Միշտ գրեցէք ինձի:

Իմ հասցէս.

Բժ. Չիլինկիրեան

Զանղրրը:

Կրնաք ֆրանսերէն գրել, բայց հասցէն՝ թրքերէն:

Բժշկութեան մասին գիրք մը ղրկեցէք ինծի: Կհամբուրեմ երախաները:

Ձեր ամուսինը՝ ՌՈՒԲԷՆ

Երեքշաբթի
3.8.1909

Սիրելի Ճշանաձս,

Երեկ քեզի նամակ մը եւ բացիկ մը ղրկեցի: Այսօր ահա Պոլսոյ թրքական թաղէն ասիական բացիկներու շարք մը քեզի: Հոն պիտի տեսնես մեր շուներն ու մեր թուրքերը: Հոն պիտի տեսնես **Մեծ Ճուկան,** քաղաքի մը չափ ընդարձակ, եւ վերը, անձրեւի ու ձիւնի դէմ, քարէ պատերով եւ մարմարէ կամարներով փակուած փողոցները: Այնտեղ է, որ կծախեն արեւելեան գոհարեղէնն ու հնութիւնները: Հոն պիտի տեսնես դէպի հրդեհը վազող թուրք ջրհակիրները: (Բայց զինուորական ջրհակիրներ ալ կան): Եւ **Ճահ Զատէ** փողոցն իր սքանչելի մարմարէ քեօշքով, ուր ջուր կը խմեն ձրի: Եւ **Թրքական սրճարանը,** ազգային տարազ հագած իր յանձնակատարներով, որ բարբարոս կերպարանք ունին, բայց իսկապէս հիանալի սիրտ: Հոն ալ պիտի տեսնես **Լազերուն պարը,** զոր հետաքրքրասէրներու ամբոխ մը կը դիտէ: (Լազերը թրքական փոքրիկ ցեղ մըն են, շատ ուժեղ եւ շատ գեղատեսիլ): Դեռ հոն պիտի տեսնես երկու մելամաղձոտ եզ լծած հինաւուրց կառքով **թրքական հարեմի գբօսանք մը:** Եւ այս ամէնը քեզի գաղափար մը պիտի տայ, թէ ինչ բան է ասիական Պոլիսը: Քանզի նորօրինակ քաղաք մըն է ան: Այնտեղ կարելի է գտնել Եւրոպայի ամենաարդիական նորութիւններն ու Ասիայի հնագոյն բարքերը: Այնտեղ արեւելեան հազուագիւտ բաներուն քովիկը կարելի է սքանչանալ փարիզեան ճարտարապետութեան, բոլոր երկրներու

գեղեցկութիւններու եւ ամենահրաշալի հրաշքներուն վրայ։ Ես կեանքիս մէջ շատ քաղաքներ եմ տեսած, բայց երբեք ոչ մէկ քաղաք այնքան հետաքրքրական է, այնքան բարձրարուեստ, այնքան լայնատարած, այնքան **ուրախ**, ինչքան Պոլիսը։ Եւ ինչ ալ ըսեն, հաւատալէ չեմ դադրիր բնաւ, որ այստեղ է **աշխարհի ամենահանգիստ** ժողովուրդը։ Հակառակ ջարդերուն, հակառակ խժդժութիւններուն, հակառակ ամէն ինչի, այստեղ ամենաչար մարդը սիրելի բան մը ունի։ Ամէն ոք, նոյնիսկ յանձնակատարը, որ հանդարտօրէն իր հինգ սանթիմնոց սուրճը կը խմէ, քիչ մը երազ ունի իր աչքերուն ետեւ։ Իսկ այդ երազը Արեւելքն է ամբողջ։ Այստեղ ուրիշ փիլիսոփայութիւն մը կծփայ ուղեղներուն մէջ. **ճակատագրապաշտ** փիլիսոփայութիւնը։ Ամենուր կը հանդիպիս Ուժի մը հետքերուն. անսահման ու բարի ուժի մը, որով ժողովուրդները կապրին խաղաղօրէն։ Այդ ուժը ճակատագրապաշտութիւնն է, իսկ այդ ճակատագրապաշտութիւնն ալ անոնց կեանքն է բովանդակ։ Ասոր համար է թերեւս, որ տրտմութիւնը անոնց ուրախութեան իսկ մաս կը կազմէ։— Բայց այսքանն արդէն հերիք է Պոլսոյ մասին։ Հիմա քիչ մըն ալ քեզմէ խօսինք։ Դուն, սիրելիս, կը կարծես, թէ իմ ծնողներս ատելութիւն ունին քեզի դէմ, դուն կը վախնաս անոնցմէ, կը դողաս, նոյնիսկ մտածելով անոնց մասին։ Կը հարցնեմ քեզի, թէ ինչո՞ւ է այդ վախը։ Ուրեմն կը մոռնաս, որ անոնք **իմ** ծնողներս են եւ ունին նոյն արիւնը, ինչ որ ես, եւ **նոյն բնաւորութիւնը**։ Արդ, կրնա՞ն քեզ ատել։ Ոչ, Եանին, հանդարտէ, անոնք շատ կը սիրեն քեզ եւ կը կարծեն, **թէ** դուն լաւագոյն հոգին ես, որ կրնայ արժանի ըլլալ **իրենց** զաւկին։ Եւ մեր ապագայ ամուսնութիւնը կարգադրուած, վերջեցած գործ է։ Այլեւս ոչ մէկ կասկած։ **Իսկ միակ** կասկածը... դուն ես, քանզի միշտ կը կասկածիս, **ատիկա** քու հիւանդութիւնդ է։ Դուն բնաւ պէտք **չէ արտասուես**։ Բայց եթէ կուզես, որ ծնողներս քեզի նամակ **մը գրեն**, կրնամ սխալիս։ Քանզի նախ անոնք հայերէն **գիտեն միայն**, եւ յետոյ մեր բարքերը քիչ մը **խիստ են**. **մեր ծնողներ**ը նամակ, բան չեն ղրկեր, նախքան **պաշտօնական ըլլա**-

տուքը, բայց ինձի կը թոյլատրեն թղթակցիլ քեզի հետ, եւ ասիկա արդէն **բաւական բան է:** Ես իրենց ցոյց կուտամ քու լուսանկարներդ, նամակներդ, բացիկներդ. անոնք գոհունակ կը ժպտին: Եւ անշուշտ, անգամ մը որ ամուսնանանք, դուն կը տեսնես, որ **աշխարհի լաւագոյն ծնողներն** են անոնք:— Այստեղ կը վերջացնեմ նամակս, հազար անգամ համբուրելով քեզ եւ ողջոյններս յղելով հայրիկին, մայրիկին եւ Միննային:

Նշանածդ՝ ՌՈՒԲԷՆ
Օգոստոս 3, 1909

Սիրելիս, պաշտելի նշանածս,

Ահա ստացայ մեծ կարեւորութիւն ունեցող նամակդ: Չեմ ուզեր բացէ ի բաց գրել քեզի. դուն արդէն գիտես իմ պատասխանս, քանզի քաջ ծանօթ ես բոլոր մտքերուս: Լաւ լսէ, Եաննի: Ես երբեք հին գլուխ մէկը չեմ. շատ կը սիրեմ թատրոնը, բայց պիտի չուզէի, որ իմ կինս նուիրուէր այդ կեանքին: Շատ լաւ կը հասկնամ, որ ամէն մէկն իր կոչումն ունի եւ իր տաղանդը, մարդ կամ արուեստագէտ կը ծնի, կամ վաճառական: Բայց արուեստագէտ ըսելով, միայն դերասան չենք հասկնար. արուեստագէտ է բանաստեղծը, արուեստագէտ է քանդակագործը, արուեստագէտ երաժիշտը, նկարիչը, երգիչը եւ այլն: Իսկ դուն **արուեստագէտի այս բոլոր ձիրքերը միաժամանակ ունիս.** շատ լաւ կրնաս խորունկ բանաստեղծ ըլլալ, հմուտ քանդակագործ, հոչակաւոր երաժիշտ կամ վարպետ երգչուհի: Դու արուեստի ասպարէզին վերաբերող ամէն բանի ձիրք ունիս: Սակայն երբ կուզես երեսիս պոռալ, թէ դուն միայն դերասանուհիին ձիրք ունիս, այն ժամանակ ես կը պատասխանեմ քեզի, թէ չարաչար կը սխալիս... Ոչ, բնաւ չէի ուզեր հաւատալ ատոր: Ես քեզ աւելի լաւ կճանչնամ, քան դուն: Գիտեմ քու խորութիւններդ, սրտիդ խորշերը, գաղտնիքները, մթութիւններդ. ես քեզ կատարելապէս կը ճանչնամ, Եաննիս:

Շատ կուզեմ, որ դուն թատերական արտասովոր հակումներ ունենաս: Ես իրօք **մեծապէս հիացած եմ,** որ դուն շատ-շատ բան կը հասկնաս թատրոնէն եւ գիտես ճշտօրէն քննադատել: Ասիկա ցոյց կուտայ ինծի, որ դուն բնաւ սովորական աղջիկ մը չես: Եւ ասիկա ուրիշ ոչինչ ցոյց կուտայ:

Այո, ես թատրոն շատ կը սիրեմ եւ շատ յաճախ կերթամ թատրոն: **Երբեք** չեմ մտածած դերասան ըլլալու մասին... Եւ եթէ դուն ալ թատրոն շատ կը սիրես, քեզի կմնայ աւելի յաճախ երթալ: Եւ լմնցաւ-գնաց...

Բացի անկէ, անկեղծ ըլլալու համար ըսեմ, թէ դուն արուեստի ասպարէզին վերաբերող ամէն բանի ձիրք ունիս, բայց դերասանուհիի՝ բնաւ, բնաւ, բնաւ... **ճշմարիտ դերասանուհի է ան, որ կարտայայտէ առանց զգալու** (կուլայ առանց տխուր ըլլալու, կը ծիծաղի նոյնիսկ տխուր սրտով, կը սիրէ առանց այդ մասին մտածելու), **մինչդեռ դուն կարտայայտես զգալով** (լալու ատեն տխուր սիրտ ունիս, ծիծաղելու ատեն՝ ուրախ եւ չես կրնար սիրահար կնոջ ձեւեր առնել առանց մէկնումէկը սիրելու): **Դուն բնաւ դերասանուհի չես, դուն բանաստեղծ ես:** Ահա թէ ինչ կուզեմ ըսել քեզի, առանց հաճոյախօսութիւններու:

Յամենայնս դէպս, եթէ կը սխալիմ համոզմանս մէջ, եւ եթէ դուն իրօք կրնաս որեւէ **բան արտայայտել առանց զգալու զայն** (կամ վայրկենաբար զգալով), այն ժամանակ ատիկա կըլլայ շատ դաժան հարուած մը սրտիս, քանզի ես կունենամ այն ողորմելի կասկածը, թէ գուցէ ինծի համար քու բոլոր ըրածներդ ուրիշ բան չէին, եթէ ոչ դերասանուհիի մը յաւերժական տեսարանը... Աւաղ, Եանի, ինչ կընես, ինչ կընես ինծի...

Երեկ Հրանտին հետ կը խօսէի դիտաւորութիւններուդ մասին: Աչքերը արցունքով լեցուեցան: «Ա՞ն ալ...»,— ըսաւ ինծի: Եւ ես չէի գիտեր՝ ինչ պատասխանեմ...

Քու՝ ՌՈՒԲԷՆ

Օգոստոս 20, 1909

Պոլիս

Իմ շատ աղուոր, թանկագին Եանինիս եւ սիրելի բարեկամուհիս,

Այս իրիկուն, երազիս մէջ, քեզի հետ էի: Ես շատ քիչ անգամ երազ կը տեսնեմ: Իմ քունս սովորաբար հանգիստ է, անխառով, ժպտուն: Հազիւ թէ ամիսը անգամ մը երազ տեսնիմ, եւ իմ երազներս միշտ ալ երազանքներ են քաղցր ու երկար, ինչպէս իտէալական ու մաքուր ուրիշ աշխարհի մը մէջ. ես երբեք սարսափելի ու մռայլ երազ չեմ տեսած: Ինծի կը թուի, թէ ասոր պատճառը մարդու հոգեյատակն է, քանզի, հակառակ իրական կեանքի բոլոր ցաւերուն, իմ հոգիս միշտ խաղաղ է, յոյսերով օրօրուն, պատրանքներով սնած, իտէալէն յափշտակեալ, մոգական աստղերով լուսաւորուած, թարմ, հեզահամբոյր...

Ուրեմն, երեկ իրիկուն քեզի հետ էի: Հիմա պիտի չը կրնամ վերարտադրել այն ամէնը, զոր դուն ըսիր ինծի, զոր ես ըսի քեզի երեկ իրիկուն մեր փոքրիկ սենեակին անվրդով կիսախաւարին մէջ.. Միայն կյիշեմ, որ երկար ու անվերջ ու անորակելի բաներ կըսէիր ինծի կիսաձայն, եւ կը յիշեմ նաեւ, որ ես կը լսէի քեզ, հաւատարիմ, ժպտուն, ինչպէս անկարելի դիւթանքի մը մէջ... Եւ գիշեր էր, հեշտագին, եւ շոյիչ ու տաք գիշեր մը, մեծ Արեւելքի Հազար ու մէկ գիշերներէն մէկը... Եւ արբեցուցիչ կախարդանքն էր բաներու, զոր անհնար է արտայայտել: Եւ գեղեցկութեան անհամար, պաղպաջուն աստղերու բիւրաւոր երգերն էին լռելեայն: Եւ ծանրերեր հեշտանքն էր, որ կիջնէր Արեւելքի արտասովոր անհունութեամբ երկինքէն: Եւ աներեւակայելի շքեղութեան գիշերային հեքիաթն էր, ուր կը ննջէր անզուգական Վոսփորը... Այն ժամանակ մենք, դուրս գալով մեր փոքրիկ սենեակէն, կը քալէինք գիշերուայ եւ երազի մէջ, եւ կը քալէինք անծըպտուն, եւ մեր շունչը տոգորուն էր հազարաւոր քաղցրութիւններով, զոր չէինք ըսեր իրարու... Այն ժամանակ, օ, սիրահարի երազներու աստուածային պատրանք, այն ժամանակ ես զգացի, որ կը քալեմ միս-միանակ՝ գիշերուայ եւ երազիս մէջ, եւ որ դուն անհետացած ես, ինչպէս ոսկէփոշիի մը մէջ, ինչպէս ճառագայթի ու լոյսի յափշտակութեան մը, ինչպէս դէպի իտէալը սլացած ճախրի

մը մէջ... Եւ ես կը քալէի միս-մինակ, միս-մինակ, եւ ոտքերուս տակ այնքան տխուր էր երկիրը, այնքան տխուր... Բարեբախտաբար... Քանզի երազ էր միայն...

Քու նշանածդ եւ բարեկամդ՝ ՌՈՒԲԷՆՍ
Սեպտեմբեր 30, 1909
ՊՈԼԻՍ

Սիրելի եւ հմայիչ բարեկամուհիս, ահա երկու օր է լուրի կտոր չունիմ քեզմէ, սակայն միանգամայն կը ներեմ քեզի, քանի որ երկար ատենէն ի վեր ես այնքան ծոյլ եղայ քեզի նկատմամբ: Ուրեմն դուն կատարելապէս իրաւունք ունիս: Դուն պէտք է պատժես զիս, քանզի ես երես առած մանուկ մըն եմ (չափազանց երես առած), եւ լաւ է, որ ժամանակ առ ժամանակ թեթեւ պատիժներ կը ստանամ (ահ, շատ թեթեւ, առանց ատոնց կը վիրաւորուէի...):

Բայց այս ամէնը, Եաննի, այս ամէնը պարապ խօսք է միայն եւ զուարճալի շաղակրատանք: Դուն պիտի չը հաւատաս անշուշտ, որ ես արժանի եմ պատիժներու, այնպէս չէ՞: Ատիկա չափազանց կըլլար... Օհ, ոչ... Դեռ պէտք չէ սկսիլ պատիժներու գլուխը. այն ժամանակ ի՞նչ պիտի ընենք աւելի ուշ, ամուսնութենէն ետքը, սիրոյ 20, 30, 50, 80 տարիներու ընթացքին... Ի՞նչ կըսես, պզտիկ ծոյլ բզէզիկ...

Վերջացնենք այս անհոգ պատմութիւնները: Ես քեզի գրելիք ուրիշ գործ մը ունիմ, շատ աւելի կարեւոր: «Այդ ի՞նչ գործ է»,— պիտի հարցնես ինծի... Էհ, ուրեմն, այդ գործը **զինուորականութիւնն** է: Քանի մի օրէ ի վեր կաշխատիմ, որպէսզի անցագիր մը ձեռք բերեմ Զուիցերիա մեկնելու համար: Աչքերուս մէջ կը նային եւ «Զաւակս,— կըսեն ինծի,— դուն աղուոր զինուորական մը կըլլաս, պէտք է ըլլաս, դուն չես կրնար մեկնիլ...»:— «Բայց, սիրելիս, ես բժիշկ եմ, հիւանդանոցը գործեր կան, պէտք է մեկնիմ, դասեր ունիմ, նշանած ունիմ...»:

Օհ, ինչպէս կը ժպտին...

Բայց այս ամէնը զուարճալի չէ, բնաւ: Քանզի յոյժ յոգնեցուցիչ է ինծի համար: Ես գրասենեակէ գրասենեակ կը վազեմ, կը բողոքեմ, արդարութենէ եւ օրէնքէ կը խօսիմ, կը պահանջեմ: Բայց որո՞ւ կրսես: Միեւնոյն պատասխանը կուտան ինծի, թէ ես «շատ աղուոր սպայ մը» կըլլամ:

Սակայն վստահ եմ, որ անցագիր մը ձեռք կը բերեմ եւ անպայման կը մեկնիմ ծովային թղթատարութեան «Սաղալիէն» շոգենաւով, որ Պոլիսէն դուրս կուգայ հոկտեմբեր 21 1909 եւ ութ օրէն կը հասնի Մարսէյլ: Ուրեմն՝ բարի ճամփայ: Դեռ երեք շաբաթ կը մնամ հոս, Թուրքիա:

Սիրելի Եանինի, թերեւս այս բոլորը ոչինչ կրսեն քեզի: Թերեւս այս նամակս կը ձանձրացնէ քեզի: Թերեւս դուն լաւագոյնս սեպէիր, որ ես քեզի գրէի Կապոյտ սիրոյ եւ Վարդագոյն համբոյրներու մասին: Թերեւս ուզէիր հեշտագինօրէն նուաղիլ տաքուկ թեւերուս մէջ... Թերեւս, ահ, դեռ ինչքան «թերեւս»-ներ: Եւ, Եաննիս, դուն կատարելապէս իրաւունք ունիս, կատարելապէս, կատարելապէս... Բայց ի՞նչ ընել: Պիտի ուզէի քեզ գրգռել տխուր առանձնութեանդ մէջ: Պիտի չուզէի քեզ նեղացնել, փճացնել ջիղերդ, ունայն հառաչանքներով վառել սիրտդ... Ես քեզ այնքան կը սիրեմ, այնքան կը խնայեմ, այնքան կը պաշտեմ, սիրելիս...

Երջանիկս կըլլայի, եթէ այս շատ պարզ եւ շատ հասարակ բառերուն մէջ կարենայիր խորունկ սէր մը տեսնել քեզի հանդէպ, իմ պաշտելի Եաննիս... Ուրախ եղիր:

Քու յաւիտենական ՌՈՒԲԷՆԴ
Հոկտեմբեր 2, 1909
Կ. ՊՈԼԻՍ

(1909 թ., աշուն)

Սիրելի Պզտիկս,

Այս առաւօտ ստացայ նամակդ: Կարդալով, մեծապէս զարմացայ, որ չեմ ստացած երկու երկար նամակներդ, ինչպէս եւ Լոզան դրկուածները, որոնցմէ միայն մէկը հա-

սաւ։ Կյուսամ, որ շուտով կունենամ բոլորն ալ եւ այն ատեն կը պատասխանեմ երկարօրէն։

Սիրելի Եաննի, ահաւասիկ ոչ միայն երկու ամիս կը մնայ մեր տեսութեան։ Այնքան քիչ է, եւ այնպէս երկար... կը նախանձիմ սակայն քեզի, քիչ մը, պզտիկս... Սիրոյդ մեծութեանը մէջ եւ զգացմունքներուդ բարձունքէն՝ կը բաւարարուիս հիանալով եւ ժպտելով տիրոյդ... Սիրելիս, որքան մաքուր ես եւ որքան իտէալական, եւ ինչպէս գիտես պզտիկ բառերը, որ սիրտս կը յուզեն եւ կը գտնես յուսադրիչ խօսքը՝ որ փղձկելու կը մղէ հոգիս, խոովիչ նամակներուդ վրայ։

Այնքան քնքոյշ է հոգիդ, նայուածքդ այնպէս երազուն, որ կարելի է տեսնել սիրոյ նամակներուդ ընդմէջէն։

Եւ սակայն այնպէս վերացական եւ այնպէս ամպային ես նոյն ատեն, որ դժուար է հաւատալ կատարեալ իրականութեանդ եւ պէտք է հարց տալ, թէ իրապէս գոյութիւն ունի՞ս դուն։

Եւ սակայն դուն կաս։ Եւ կաս ինծի համար...

Ինծի համար, ինծի, միայն իմս... ինչ ահագին եսասիրութիւն՝ ուրիշի մը հոգիին տիրացած ըլլալու զգացում։ Զգալ, թէ աշխարհի վրայ, միլիոնաւոր մարդոց եւ անասնոց այս գիւղերուն մէջ կայ հոգի մը, որ քեզի կը պատկանի, որ պիտի ուզէր զոհուիլ քեզ համար, որ կրնայ հասկնալ քու մոայլ ներաշխարհդ, կրնայ սիրել կարճատեւ գոյութիւնդ, ինչ հարստութիւն, ինչ բախտ, ինչ երջանկութիւն։

Այսպէս ուրեմն, քաղցր բարեկամուհիս, մենք երկուքս ալ ունինք մէկս միւսս ունենալու սիրայինն այս եսասիրութիւնը։ Դուն իմս ես, եւ ես՝ քուկդ։

Աշխարհի մէջ ոչ ոք կայ, որ կարենայ խառնուիլ մեր գործին։

Ես քու ստրուկդ եմ, եւ այսուհանդերձ դուն անգութ տիրուհի մը չես։ Քեզի կը պատկանիմ, կրնաս գուրգուրալ կամ փշրել զիս։

Ինչ լաւ է երկուք ըլլալ եւ միայն մէկ անձ կազմել։

Սիրելի Եաննի, այս պզտիկ թուղթիկ տողերը գրելով քեզի, դոյզն յաւակնութիւնը չունիմ խորացնելու մեր սի-

ոոյ քննութիւնը: Ահ, ոչ: Այս սէրը չափազանց գեղեցիկ է իր մասին խօսուելու համար. եւ չափազանց խորունկ՝ կարենալ վերլուծելու համար: Եւ արդէն որքան խօսինք այդ մասին, խօսելու փափաքը կաւելանայ:

Ահա, աւելի քան երկու տարի է, որ կը խօսինք մեր սիրոյն շուրջ, կը նկարենք ու կը նկարագրենք եւ դեռ չէ վերջացած: Վճիտ բիւրեղ մըն է անհամար երեսներով:

Կարելի է դիտել իւրաքանչիւր երեսը, եւ որ կողմէն ալ նայինք, վսեմ է: Եւ յատկապէս այդ է մեր սիրոյն մեծութիւնը: Մինչ ուրիշ մարդոց սէրը գեղեցիկ է միայն միակ կողմով մը, մերինը հաւասարապէս գեղեցիկ է բոլոր կողմերով: Զգացական գեղեցկութիւններու անծայր եւ մոգական համայնապատկեր մը, ուր երբեք չենք յոգնիր մանգալէն: Հոն ամէն անկիւն գեղեցիկ է:

Իզուր պիտի փնտռուի այնտեղ փշոտ մացառներու անկիւն մը, քանի մը մոայլ տեղեր, արիւնի հետքեր: Նման ոչինչ պիտի գտնուի այնտեղ, այլ միայն վճիտ գեղեցկութիւնը: Իրագործուած դրախտն է...

Եւ մենք երջանիկ ենք, այդ դրախտը իրականացուցած ըլլալնուս համար:

Կը ժպտի՞ս, Եաննի: Կըսես, թէ դեռ «շատ հեռու է մեր այդ սիրելի դրախտը»:

Ինչ փոյթ... երկու տարիէն աւելի է, որ կը քալենք դէպի այդ դրախտը:

Մեզի ինչ դժուարութիւնները, վատութիւնները, այլոց չարութիւնները:

ՌՈՒԲԷՆ

Յունուար 27, 1910

Ամենազօր նշանածս, Եաննի, Եաննիս,

Հինգշաբթի իրիկուն է, եւ ես Օլտ-Ինտիա եմ, համերգի: Երբ իրիկուն է, եւ երաժշտութիւն կայ, ինծի համար աւելի մեծ հաճոյք գոյութիւն չունի, քան առնել գլուխս ձեռքերուս մէջ եւ երկարօրէն մտածել քու մեծ սիրոյդ

մասին, որ կը պարուրէ ու կը պարապնդէ զիս իր ոսկեղէն պատմուճանին մէջ... Ահ, քու Սէրդ, Եանինս... Քու Սէրդ, որ կը շոյէ, եւ կը գրկէ, եւ կը բուրէ, եւ..., եւ կը սպանանէ յաւերժօրէն, յաւերժօրէն...

Երեկ իրիկուն կը կարդայինք Լամարթինի «Կրացիէլլան», որ ֆրանսական «Վերթերն» է, բայց անհունօրէն աւելի քաղցր: Ան սիրոյ մը պատմութիւնն է, պարզապէս: Բայց ինչքան շատ երանգներ, ինչքան փոքրիկ, զմայլելի մանրամասնութիւններ, ինչքան կեանք եւ ինչքան երջանկութիւն: Կը կարդայի, եւ դանդաղօրէն տաք արցունքներ կը հոսէին այտերս ի վար... «Կարելի՞ է միթէ: Կարելի՞ է միթէ,— կը հարցնէի:— Այսքան քաղցրութիւն, այսքան լոյս, այսքան գրգանք...»:

Բայց յետոյ, երբ ձեռքէս ձգեցի գիրքը, նախանձի տարտամ զգայութիւն մը յառնեց հոգիիս մէջ: «Ասիկա մի՞թէ աւելի իտէալական է, քան մեր սէրը»,— կը հարցնէի ինքզինքս... Եւ ակամայ աչքերս դարձան դէպի քեզ, ձեռքս երկարեցի եւ դիմանկարդ առի անկողնիս մէջ, զայն սեղմեցի կուրծքիս. գգուեցի, շրթներովս, հպեցի խոնաւ աչքերուս, եւ այն ատեն դուն, քու լուռ խորհուրդիդ մէջ, կարծես սարսռացիր եւ յուշիկ հծծեցիր ինձ. «Ոչ, սիրելիս, մեր սէրն է ամենէն իտէալականը...»:

Օհ, այո: Եւ այնատեն է, որ ես մտածեցի, թէ այդ գիրքը թուղթ էր միայն, եւ այդ սէրը՝ երեւակայութիւն, իսկ երեւակայութեան մէջ կարելի է երազել ամենահեշտագին բաները...

Մինչդեռ մեր սէր թուղթ չէ, ոչ ալ երեւակայութիւն... Բայց այնուամենայնիւ... Կարելի՞ է երեւակայել սէր մը աւելի իտէալական, քան մերը... Եւ մեր սէրն այնքան է իտէալական, որ երեք տարիէ ի վեր ես կը հարցնեմ ինքզինքիս. «Կարելի՞ է միթէ: Իրականութի՞ւն է այս, թէ՞ յաւերժական Երազ, որ չափազանց իրական է իրական ըլլալու համար...»:

Կարելի՞ է պատկերացնել աչքեր աւելի սիրազեղ, քան քուկիններդ, ձեռքեր աւելի կսկծագին միացած, քան քուկիններդ, շրթունքներ աւելի խոլօրէն դողդոջուն, քան

քուկիններդ, արցունքներ աւելի տաք, քան քուկիններդ...

Եւ կարելի՞ է երազել սէր մը աւելի սիրատոչոր, քան մերը, վէպ մը աւելի վիպային, քան մերը, խորհուրդ մը աւելի խորհրդաւոր, քան մերը, նուիրում մը աւելի նուիրական, քան մերը, զգայութիւն մը աւելի զգացական, քան մերը, իտէալ մը աւելի իտէալական, քան մերը:

Եւ ըսել, որ մենք վէպ մը չենք...

Ինչպէ՞ս կարելի է երկրին վրայ այսքան քաղցրօրէն սիրել, Եաննի:

Ինչպէ՞ս: Ինչպէ՞ս: Ինչպէ՞ս... Ըսէ ինծի: Ես ինքս չեմ կրնար հաւատալ, չեմ կրնար հասկնալ...

Կապրինք: Կերազենք... Սիրելիս, օգնէ ինձ, ես կը մեռնիմ առանց քեզի:

ՌՈՒԲԷՆ

ՇԱՄԲԵՐԻ, փետրուար 12, 1919

Քաղցր Եաննիս,

Եւ հիմա թափուր է սրահը...

Համերգը վերջացաւ, պարահանդէսն աւարտուեցաւ, զոյգերը գացին...

Կարխարդական լամպերու պայծառ լոյսին տակ, սեղանին առջեւ նստած, մեղմիւ կը տրոփեցնեմ գրիչս թուղթին վրայ:

Չեմ գիտեր, թէ ինչ կուզեմ ըսել քեզի: Միայն կը զգամ, որ պէտք է բաներ մը ըսեմ քեզի, խօսիմ հետդ, պարպեմ սիրտս...

Եւ այնքան ըսելիք բաներ կան... Օհ, սիրելիս, այնքան բաներ, այնքան բաներ, եւ բաներ այնքան անուշ, այնքան տարապայման, այնքան քնքուշ, այնքան ցնորեցուցիչ:

Այս առաւէտ. մութնուլուսոյ, դուրս եկան պանդոկէն եւ լոութեան ու ձիւնին մէջ ուղղուեցայ դէպի Խաչելութիւնը: Խաչելութիւնը մեր սիրոյ... Գեղեցիկ իրիկուն մը...մենք հանդիպեցանք վերը՝ խորհրդաւոր գագաթին վրայ: Իրար ճանչցանք մէկ նայուածքով եւ սիրեցինք... Յետոյ փոթորիկ մը պլլուեցաւ մեզի, նետեց մեզ վար, բաժնեց իրար-

մէ... Երեք տարի է ահա, որ մենք կը ճգնինք մագլցիլ դէպի գագաթը:

Տարի մը ևս ալ, եւ մենք կը հասնինք գագաթին, կը հաստատենք այնտեղ մեր սիրոյ բոյնը: Եւ յետոյ հոն կը սիրենք զիրար, կը դողանք իրար վրայ, կը ննջենք այնտեղ... Եւ ոչ փոթորիկը—ոչ Մահը այլեւս չեն կրնար մեզ բաժնել...

Սիրտս, կիսովին տխուր, կիսովին երջանիկ այս երազներով լեցուն, ուղեղս, կիսովին խաւարչտին, կիսովին լուսաւէտ այս մտածումներով ծանրացած՝ լուռ ու մունջ, մեքենայօրէն կը քալէի խորունկ ձիւնին մէջէն, գլխահակ, նոյնիսկ չը համարձակելով նայիլ (չճանաչնալու համար զանոնք) դէպի պատուհաններն այն փոքրիկ ամառանոցին, որ մեր օրրանն եղաւ ժամանակին...

Այսպէս բարձրացայ մինչեւ Խաչելութիւնը... Վեր առի գլուխս գոհութիւնս յայտնելու համար երկինքին, երկիրաղածօրէն հանեցի գլխարկս եւ երկար, երկար ատեն մնացի հոն, կանգնած, սրսփուն, շրթներս հպած սառուցիկ քարէ այն մեծ խաչին, որ վերէն, անշարժ, կիշխէր գոլորշուտ հորիզոնի անսահմանութեան վրայ..

Օհ, այդ լեռները, ձիւները, գագաթները, ապառաժները, ամպերը, անտառները, սառցադաշտերը, անդունդները...

Յետոյ, ճզմուած ու արիւնոտ սրտով վար իջայ... Եւ ապա, վախով ու տրտմութեամբ, գացի դէպի ամառանոցը, որ ձիւնածածկ էր ամբողջովին: Բոլոր պատուհանները գոց էին: Եւ քու պզտիկ պատուհանդ (ուրկէ ատենօք սեւ ժապաւէն մը իջաւ վար, որպէսզի կապէ իմ ճաւատագիրս քուկինիդ...), եւ իմ պզտիկ պատուհանս (ուր ատենօք շրթունքներս հանգչեցան քու խուսափուկ, խուսափուկ ու դեռ խոյս տուող մազերուդ վրայ), երկուքն ալ՝ գոց: Բախեցի դուռը: Ոչ ոք, ոչ ոք: Կարծես գերեզման մը ըլլար...

Ետքը մտայ փոքրիկ ամառանոցէն ներս, ուր ծունկի եկայ աղօթելու, գրեթէ ակամայ...

Յետոյ ամբողջ օրը՝ տխրութիւն, մորմոք, սէր, երազներ... Եւ յետոյ՝ պարահանդէս, ուր չպարեցի... Ու հիմա թափուր է սրահը... Եւ ես կուլամ...

Համբոյր ՇԱՄԲԵՐԻԷՆ՝ ՌՈՒԲԷՆ

Իմ հրեշտակային Եանինիս,

Որոշեցի. ես Էրֆուրտի մէջ չեմ ամուսնանար։ Անհագին դժուարութիւններ կան Բրուսիոյ մէջ, եւ այս բոլոր դժուարութիւնները միանգամայն ապուշ են ու աւելորդ։ Հիմա, անմիջապէս, մեծ ու ճերմակ թուղթի մը վայ գերմաներէն շատ մաքուր կը գրես, թէ կը փափաքիս ամուսնանալ Ռուբէն Զիլինկիրեանին հետ Լոզանի մէջ։ Պէտք է ստորագրես, յետոյ թուղթը տանիս Էրֆուրտի Քաղաքացիական վիճակի պաշտօնականին կամ քաղաքագլուխին, որ պէտք է նոյնպէս ստորագրէ ի վաւերացումն քու ստորագրութեան։

Բացի ասկէ, հայրդ ու մայրդ (երկուքն ալ) պէտք է գերմաներէն ուրիշ վկայագիր մը գրեն ու ստորագրեն, թէ իրենք համաձայն են, որ դուն ամուսնանաս։ Եւ յետոյ Քաղաքացիական վիճակի պաշտօնեան կամ քաղաքագլուխը պէտք է նոյնպէս ստորագրէ։

Այս ամէնը պիտի կատարուի մէկ օրուայ մէջ։

Յետոյ այդ երկու վկայագիրներն ու քու ծննդեան վկայականդ կուղարկէք ինձ։

Եւ ես այդ բոլորը իմ թուղթերուս հետ կյանձնեմ Լոզանի Քաղաքացիական վիճակի պաշտօնականին։

Ես այստեղ խօսած եմ։ Ամէն ինչ կարգադրուած է։

Ոչ մէկ դժուարութիւն չեն տար։

Միայն այս ամէնը, թերեւս, երկու ամիս մը քաշէ։ Քանզի դուն Զուրիցերիայի քաղաքացի չես։ Կարեւոր չէ։ Թերեւս նոյնիսկ մէկ ու կէս ամիս քաշէ։ Ինչ փոյթ, Էրֆուրտի մէջ, վստահ եմ, 5—6 ամիսէն աւելի կտեւէր...

Հիմա պէտք է անյապաղ ուղարկել ինձի այդ թուղթերը։ Անյապաղ, անյապաղ...

Ես Էրֆուրտի մէջ չեմ ամուսնանար։ Վերջացած է, վճռուած։

Իսկ եթէ, Լոզանի մէջ քաղաքացիական ամուսնութենէն ետքը, ծնողներդ ուզեն մեզ խաչ ու խաչվառով կարգել Էրֆուրտի մէջ, բնաւ դէմ չեմ։ Աւելի լաւ...

Ուրիշ գրելիք չունիմ։

Յամենայն դէպս, եթէ ծնողներդ որոշեր են մեր ամուս-

նութիւնը, պէտք է անյապաղ ինձի դրկեն այդ երեք թուղթերը: Եւ պէտք է գիտնան, որ ես երբեք չեմ փոխեր Լոզանի մէջ ամուսնանալու որոշումը:

Այս բոլորի համար իմ յոյսը դրած եմ քու արիութեանդ, եւ խոհեմութեանդ, եւ կորովիդ վրայ:

Եւ յուսով եմ, որ 2—3 օրէն կունենամ այդ երեք անհրաժեշտ թուղթերը:

Կը սիրեմ քեզ...

Կը պաշտեմ քեզ...

Կը համբուրեմ քու հազար ու մէկ գեղեցկութիւններդ:

Ցտեսութիւն:

Քու յաւիտենական սիրահարդ՝ ՌՈՒԲԷՆ

Երկուշաբթի, փետրուար 19, 1912,
իրիկուայ ժամը 5

Սիրելի պզտիկ գանձս,

Մի սաստեր. գիտեմ, որ յոգնած էի, ուստի եւ ծոյլ: Սակայն եթէ քուէարկէմ այն բոլոր ճամբաները, զոր մենք կտրեցինք անցած երկու օրուան ընթացքին, դուն անպայման կներես ինձի: Ուրեմն, հինգշաբթի իրիկունը, կայարանին մէջ քեզմէ բաժնուելէ յետոյ, մենք յաջորդաբար երեք պանդոկ այցելեցինք (կէսգիշերէն ետքը, երկու յարմար մահճակալ գտնելու համար): Յաջորդ օրը, առաւօտեան ճամբայ ելանք քաղաքը դիտելու: Տեսվլեթեանը կըսէր, թէ ինքը կը ճանչնայ քաղաքը, եւ թէ ինձի կը մնայ միայն հետեւիլ իրեն: Եւ այսպէս, վաղորդեան ցուրտի եւ մշուշի մէջ ժամ մը քալելէ ետքը մենք մեզ գտանք... գերեզմանատան մէջ, փոխանակ կենդանաբանական պարտէզին, ուր կուզէինք երթալ. ի դէպ, աւելի ուշ գտանք զայն... կայարանին ճիշտ քովիկը: Այնուհետեւ պզտիկ, լաւ ճաշարան մը փնտրեցինք մեր բերանը պատառ մը բան դնելու համար: Յետոյ յաջորդաբար փնտրեցինք, գտանք ու այցելեցինք Միւնթեր գեղեցիկ մայր եկեղեցին: Քաղա-

քապետարանը: Թանգարանը (ուր հիացմունքով դիտեցինք Պէօքլինի սրահը). խեղճուկրակ թէյարան մը (որ, կարծեմ, միակն էր Պալի մէջ), քանզի փողոցէն անցնող ամէն զոյգ կանգ կառներ մեր ցուցափեղկին առջեւ հիանալու համար կարկանդակներու գեղեցկութեան վրայ), յետոյ՝ մեծ գարեջրատուն մը (ուր Տեօվլեթեանը անգամ մըն ալ յիշեց Համպուրկի Էրիքսոն գարեջրատունը), պաւարական ճաշարան մը, ուր բաւական անպէտք ընթրիք մը ըրինք, յետոյ՝ մեծ վարիեթէ մը, իսկ գիշերը՝ նոյն պանդոկին մէջ: Բայց դեռ այս չէ բոլորը: Լուսանկարչական թանթիկներ եւ ճախարակներ գնեցինք, զետեղեցինք զաւնոնք, նկարներ հանեցինք, եւ... Տեօվլեթեանը լուսանկարել ձեւացուց ինչ-ինչ մարդիկ, որոնք լրջօրէն կը կայնէին գործիքին առջեւ...

Յաջորդ օրը ոտքի կելլենք ժամը վեցին (ժամը վեցին դեռ մութ է), կը մեկնինք Պեռն, ուր ընդհանրապէս նոյն բաները կը նենք. ստեպղին կը նետենք արջերուն, կայցելենք մայր եկեղեցին (որուն ձիաւորը վար է ինկած), Քաղաքապետարանը եւ շատ ուրիշ տեղեր: Կէսօրին իշխանավայել ճաշ մը կը նենք (երեւակայէ, խորոված վառեակներ) Քոռներհամի մէջ, հսկայական տակառով, որուն վրայ մենք անգամ մը միասին եղանք: Ճաշէն ետքը շրջագայութիւն մը կը կատարենք: Քուրթերի՝ պեռնական Ալպեաններուն վրայ բացուող անհուն տեսարանով փոքրիկ բարձունքի մը վրայ: Յետոյ՝ նորէն թէյարան (Պեռնի մէջ շատ թէյարաններ կան, նոյնիսկ՝ պզտիկ Օլտ-Ինտիա մը): Անկէ ետքը կայցելենք ֆետերալ պալատը, վերէն վար կը դիտենք Միջազգային փոստատունը (հինգ ցեղերով), որ գլուխ գործոց մըն է: Հազար անգամ կը չափչփենք կամուրջները, կը պտտինք գետափին, չարաչար կը յոգնինք: Յետոյ կը կարդանք գերմաներէն ազդագրերը, ուր ծանուցուած է, թէ այս իրիկունն իսկ Վիւաթորը հասած է վիեննական սրճարանը: Տեօվլեթեանը կը ասէ, թէ վարիեթէի խումբ մըն է այդ եւ այլն: Վիեննական սրճարանը գտնելու համար կը վազվզենք ամենուրեք, վախենալով, որ կուշանանք եւ այլն: Կհասնինք. վիեննական

սրճարանը ծակուռ մըն է, իսկ Վիլթորը՝ պարզապէս գերմանական գարեջուր մը (Սալուատորի տեսակէն), մինչդեռ մենք կը կարծէինք, թէ երգիչ-պարողներու խումբ մըն է: Խեղճերս: Այնքան յոգնած էինք, փոշեթաթաւ, այնքան անօթի: Աղջրած կաղամբի ապուրով մը կը գոհանանք... (մինչդեռ կէսօրին պահանջած էինք վեց լաւագոյն ճաշարաններու խորտկացուցակները, որպէսզի տեսնէինք, թէ ուր կարելի է առօք-փառօք ուտել): Ծոգեկառք կը ցատկենք ու կէսգիշերին կը հասնինք տուն: Կը կարծէի, թէ որեւէ բան կը գտնեմ քեզմէ. բան չկար: Բոլորովին թափուր սենեակը տեսնելով, տխրեցայ, շատ տխրեցայ: Յաջորդ օրը՝ երկար նամակ մը քեզմէ: Ինչքան ուրախացայ: Աստուած իմ, որ դուն ողջ-առողջ տեղ ես հասեր: Կափսոսաս, որ վերջին պահուն լաւ չես համբուրած զիս: Մի ափսոսար. դուն զիս բաւական պինդ համբուրեցիր, նոյնիսկ ակամայ կծեցիր, բան մը, զոր էս աւելի ուշ զգացի... Առաւօտուն լաւ նամակ մը ալ քեզմէ, ինչպէս նաեւ քու սիրալիր ծնողներէդ նամակ մը, որուն համար շնորհակալութիւնս կայտնեմ եւ ջերմագին բարեւներ կուղարկեմ իրենց: Ստացայ երեք ճախարակները, կը սպասեմ միւս երկուքին: Տասնվեց լուսանկար կը ղրկեմ հասցէիդ. քեզի պահէ լաւագոյնները, միւսները տուր բարեկամներուդ: Կրնամ ուրիշներ ալ ղրկել քեզի, միայն գրէ: Դուն պէտք է ինծի ներես, եթէ ամէն օր չկարենամ գրել քեզի. պէտք է շատ խնայողութիւններ ընեմ կարենալ ապրելու համար այն դրամով, որ կը մնայ ինծի այս ճամբորդութենէն յետոյ: Մանաւանդ որ երեկ ոստիկանութիւնը նորէն 14 ֆրանք տուրք պահանջեց ապահովագրեալ նամակով: Այս վոցիները չեն կրնար ապրիլ... առանց կողոպտելու մարդիկը: Ես լաւ եմ՝ ոչ չափազանց տխուր, ոչ չափազանց ուրախ, եւ այն ներքին բերկրանքն ունիմ, որ քեզ... գիրցած պիտի տեսնեմ... Հազար քաղցրիկ համբոյր՝

ՔՈՒ ՌՈՒԲԷՆԴ:

Տեսվլաթեանը կը բարեւէ քեզի եւ ծնողներուդ. շնորհակալութիւն կը յայտնէ բացիկիդ համար:

Անուշիկ գանձս,

Ծնորհակալ եմ նամակներուդ համար, զոր երկու օրը մէկ, առտուն կանուխ, կանոնաւոր կերպով կը ստանամ: Ծնորհակալ եմ նաեւ ծննդեանս օրուան առթիւ ըրած ընտրներուդ համար: Դուն պզտիկ գանձ մըն ես, որ շատ կը սիրէ իր ամուսինը եւ կուզէ հաճոյք պատճառել անոր, հակառակ ամէն ինչի,— սիրելիս, կարծես հետդ տարած ես փողկապի այն գնդասեղը, զոր անցեալ տարի ծննդեանս օրուան առթիւ ծնողներդ նուիրեցին ինծի եւ որու մարգարիտը իյնալու վրայ էր: Կը խնդրեմ, վերանորոգել տուր զայն: Ի զուր փնտրեցի նաեւ սեւ գաւազանս, որպէսզի վերջապէս զօդել տայի (երրորդ անգամ ըլլալով) կոտրրուած արծաթը, բայց չգտայ: Եթէ կը յիշես, թէ ուր ենք դրած զայն, գրէ ինծի յաջորդ նամակիդ մէջ:

Ահա այսօր երկրորդ շաբաթն էր, որ մեկներ ես քովէս: Զարմանալի է, չէ՞: Եւ մտածել, որ կան տարուայ կէսը երբեմն նոյնիսկ տարիներ շարունակ իրարմէ բաժնուած ապրող մարդիկ: Իրօք սիրահարնե՞ր են անոնք...

Կուզես կարծիքս գիտնալ այն քանի մը կարասիներու մասին, զոր կը փափաքին տալ քեզի: Սիրելիս, վարուէ ուզածիդ պէս, մեր ճաշակները նման են իրար. այդ կարասիներուն մէջ դուն ինձմէ աւելի պիտի ապրիս (քանի որ ամբողջ օրը տունը պիտի ըլլաս), այնպէս որ կրնաս որոշել ըստ քու ցանկութեանդ:— Իսկ գալով դաշնամուրին, եթէ իսկապէս այնքան խարխլած է, որ դուն չես ուզեր նուագել զայն, ուրեմն իրօք որ չարժէր ահագին դրամ վճարել Էրֆուրտէն Լոզան եւ Լոզանէն Պոլիս փոխադրելու համար: Աւելի լաւ կըլլայ (ինչպէս կըսես) ծախել զայն եւ այդ դրամով Ցաքեքէն դաշնամուր մը վարձել:— Բայց շատ աւելի կարեւոր հարց մը կայ, զոր կուզէի այսօր գրել քեզի, եւ որու մասին շատ երկար եմ մտածած: Դուն գրեր էիր, թէ ծնողներդ կուզեն Զուիցերիա ապրիլ, սքանչելի գաղափար, աւելի լաւ է, որ Լոզան գան, որովհետեւ չկայ աւելի տխուր բան, քան օտար երկրի մը մէջ իրենց տունը միս-միանակ ապրող ծեր ամոլ մը (մտածէ Տամատ-

ներու մասին. դրամ ունին, կահկարասի ունին, բայց կը տառապին այն պատճառով, որ չափազանց մինակ են...): Եւ յետոյ մենք յաւիտեանս Եւրոպա մնացողը չենք. օր կուգայ (եւ այդ օրը հեռու չէ, թերեւս), երբ կերթանք Պոլիս, այնտեղ ապրելու եւ այնտեղ մեռնելու համար: Այն ատեն յանախակի կը մտածես քու խեղճ, միայնակ ծնողներուդ մասին եւ կը զղջաս, որ ըստ բաւականին երկար ու քնքշօրէն չես ապրած հետերնին ողոքելու համար անոնց ծերութիւնը (որովհետեւ ես ալ յանախակի կը մտածեմ ծեր ծնողներուս մասին, շատ աւելի յանախ, քան կը կարծես):

Այն օրը սքանչելի ամառանոց մը տեսայ: Սըքրեթիան ծառուղիին վրայ, աներեւակայելի տեսարանով՝ պարտէզ, յարմարութիւններ, բոլորովին նոր, շատ գեղեցիկ եւ այնքան ածան: Բայց երկուքիս համար չափազանց մեծ էր: Կարելի է միասին ամառանոց մը վարձել, եւ մենք անոնց քով փոքրիկ յարկաբաժին մը կունենանք: Կը կիսենք առտնին ծախքերը եւ այլն: Շատ ալ յարմար կըլլայ մեզի համար, որովհետեւ, երբ ես գործի տեղ մը ունենամ, Լոզանէն դուրս գտնուող բնակարանի մը մէջ ամբողջ օրը մինակ մնալը վտանգաւոր է երիտասարդ կնոջ մը համար: Եւ տխուր է նաեւ: Եւ յետոյ, շատ յանախ, հիւանդի վրայ հսկելու համար, պէտք է որ ես հիւանդանոցին մէջ պառկիմ, այն ատեն բոլորովին մինակ ի՞նչ պիտի ընես Լոզանէն դուրս եղող ամառանոցին մէջ: Մինչդեռ եթէ ծնողներդ երկրորդ յարկին վրայ ապրին, չափազանց յարմար կըլլայ: Եւ յետոյ գիտես, որ քանի մը ամիս ետքը մօրդ կարիքը շատ պիտի զգաս, որովհետեւ չեմ ուզեր քեզ հիւանդանոց ղրկել: Մէկ խօսքով, երկարօրէն խորհելէն ետքը, եկայ այն եզրակացութեան, որ միակ միջոցը այդ է:— Կը խոստանանք լաւ վարուիլ հետերնին: Վերջապէս, կրնաս այս կապակցութեամբ խօսիլ անոնց հետ եւ անմիջապէս ինձ գրել լրջօրէն:

Կը հարցնես ինծի. «Լաւ անցուցի՞ր ծննդեանդ օրը: Աւելի շուտ տխուր անցուցի զայն: Քանի մը օրէ ի վեր քիչ մը գլուխս կը ցաւի՝ աննշան դժբախտութիւն: Միայն ճա-

շելու համար է, որ տունէն դուրս կելլեմ, եւ այդ է իմ ամբողջ պտոյտս:

Կը շտապեմ, որ շուտ հասնիմ Պալի վերջին՝ 6.40 մեկնող շոգեկառքին, այս իրիկունն իսկ առաքելու համար այս նամակը: Ցտեսութիւն, գանձս, հազար-հազար անուշ համբոյրներ կուղարկեմ քեզի: Իսկ ծնողներուդ՝ բիւր ողջոյն:

Քո՝ ՌՈՒԲԷՆ

Այս բոլոր լուսանկարները քաշուած են մեր գործիքով:

Փետրուար 26, 1912, երկուշաբթի

Սիրելի պզտիկ Եանին, իմին աղուոր կինս,

Ահա երկար ատեն ի վեր քեզի խոստացուած նամակը: Եւ որպէս սկիզբ կուզեմ քեզի ըսել, թէ անկեղծօրէն շատ գոհ եմ, որ դուն այնքան ալ յաճախ չես գրեր ինծի, որովհետեւ այդ ցոյց կուտայ, որ լաւ կզուարճանաս: Ալ աղէկ. կրցածիդ չափ օգուտ քաղէ երիտասարդութենէդ եւ երբեք մի մտածեր, որ այդ ձեւով վիշտ կը պատճառես ինծի. այդպէս մտածելը շատ յիմարութիւն կըլլար: Ես ինքս չեմ կրնար ըսել, թէ կը զուարճանամ, բայց մեծապէս չափազանցել կըլլար ըսելը, թէ կը ձանձրանամ: Այնքան լաւ կը զգամ զիս իմ տանս մէջ, որ միայն ուտելու համար դուրս կելլեմ եւ անմիջապէս ետ կը վերադառնամ: Տասը օրուայ մէջ երկու անգամ եմ դուրս ելած գիշերը. անգամ մը ժողովրդական տան համերգին եւ անգամ մըն ալ Փրիմրոզ երթալու համար: Չեմ կրնար ըսել՝ աւելի համերգի՞ն, թէ թատրոնին մէջ ձանձրացայ, բայց կրնամ անկեղծօրէն ըսել, որ աւաղեցի դրամս եւ երեկոս:

Իսկ եթէ հարցնես, թէ ամբողջ օրը ի՞նչ կընեմ տունը, դժուար թէ կարենամ պատասխանել. գիտեմ, որ շատ կը կարդամ, կը գրեմ քիչ մը, կարգի կը բերեմ հին բանաստեղծութիւններս, կը հանգստանամ (եւ ինչպէս...), կը զուարճանամ միս-մինակ, քառասուներորդ անգամ ըլլալով

կը լսեմ՝ Տեօվլեթեանի ողբերգակատակերգական պատմութիւնները (եւ միշտ նոյն յուզաթաթաւ շարժուձեւերով), կը դիտեմ հին լուսանկարներդ, կը նայիմ լեռներուն (որոնք շաբաթէ մը ի վեր այնքան գեղեցիկ են), կը լսեմ թռչուններուն երգն ու գարնան զարթօնքը, ձեռք կառնեմ ամիսներ շարունակ դարակիս մէջ անպատասխան մնացած նամակները: Մէկ խօսքով, կօգտուիմ արձակուրդիս վերջին օրերէն, քանզի կը կարծեմ, թէ շուտով տեղ մը կունենամ արդէն: «Հապա իրիկո՞ւնը,— կը հարցնես ինծի,— ժամը վեցէն եօթը ի՞նչ կընես»: Այսպէս ուրեմն. պէտք է որ անգամ մը բանալիին անցքէն տեսնես, թէ ինչ լաւ տնարար է քու պարոնդ: Ան ամէն օր կը փոխէ խորտկացուցակը: Երեկ չէ առջի օրը արքայավայել ապուր մը եփեց բրինձով, կարագով, հաւկիթով եւ կիտրոնի քանի մը կաթիլով: Երեկ ձուածեղի գլուխ-գործոց մը պատրաստեց կարագով, ոռքֆոր պանիրով՝ վեց հաւկիթ, շերտ-շերտ ուղեղ եւ... դեռ ուրիշ բաներ, զոր չեմ համարձակիր ըսել: Այս իրիկուն անհուն արուեստով եւ ուշադրութեամբ կաթնով եփելու վրայ է ահա: Ինչպէս կը տեսնես՝ շատ ալ ժամանակ չունի ձանձրանալու, թող ատոր ապացոյցն ըլլայ այն արտակարգ իրողութիւնը, որ ան իրար վրայ երկու կիրակի Արսլանեանեց տունը ոտք չէ դրած. երեկ երկու անգամ հանդիպեցաւ անոնց (Օրշիի եւ Սեն Ֆրանսուայի վրայ) եւ բարեւ չտուաւ, ինչ որ, ի վերջոյ, սոսկալի ջղայնացուց զանոնք. կարծեմ, պարզապէս այնպէս ձեւացուց, թէ չի նկատեր զիրենք: Քեզ աւելի զարմացնելու համար ըսեմ, որ դարձեալ շնորհակալական երկար նամակ մը ստացայ Տամատէն (օրացոյցի մէջի իր լուսանկարին համար), քանի որ իր առաջին նամակին չէի պատասխանած: Ահա թէ ինչու այսօր նամակ մը ղրկեցի, ներփակելով լուսանկար մը (երկուքս), եւ գրեցի, որ չորրորդ յարկէն եւ մեր պատշգամբէն բարեւներ կուղարկենք Ժնեւ, եւ կը կարծեմ, թէ այս բանը արցունքի գետեր պիտի հոսեցնէ խեղճ տիկին Տամատի աչքերէն, եւ անոնք, պատմելով մեր սիրոյ պատմութիւնը, այդ բոլորը պիտի ցոյց տան Ժնեւի գերմանացի՝ հիւպատոսին... որ միշտ կը պաշտպանէ զիրենք լրտեսներու դէմ...

(—«Եւ մանրիկ արցունքով) «եւ խոնաւութեամբ» մանրուքներու դեմ»— կըսէ Տեօվլեթեանը...):

Մի նեղանար, որ այս թուղթին վրայ կը գրեմ քեզի, տպագրական թուղթը իրօք որ բնաւ յարմար չէ սիրային նամակի համար: Այստեղ կաւարտեմ նամակս, բայց երբեք՝ ամենաքաղցրիկ համբոյրներս։ Այն օրը մոռացայ շնորհակալութիւնս յայտնելու քեզի անդրավարտիքին համար, զոր կազմ ու պատրաստ գտայ պահարանիս մէջ, եւ որ հրաշալիօրէն կը վայելէ ինծի: Եւ ճաշակելու համար անդրավարտիքին (իմ անդրավարտիքիս) եւ գիշերանոցին ամբողջ հաճոյքն ու... հանգստաւէտութիւնը, ժամը ութին իսկ անկողին կը մտնեմ եւ կը կարդամ մինչեւ կէսգիշեր: Ոտքի կելլեմ առտուայ ժամը եօթին ու կէսին, որպէսզի քու դեռ փակ կոպերուդ դրկեմ բարի լոյսի համբոյրս... Ջերմագին բարեւներ մայրիկին ու հայրիկին:

Քու՝ ՌՈՒԲԷՆ

Տեօվլաթեանը արդէն իսպառ մոռցեր է իր Հայկանոյշը: Երջանիկ արարած:

Չորեքշաբթի

Եանինի սիրելիս,

Շնորհակալ եմ նամակիդ համար, սակայն իրօք ինձ ցաւ պատճառեցիր անքնութեամբդ եւ գիշերային տաղտուկներովդ: Բայց դուն արձակուրդի գացիր, որպէսզի հանգստանաս ու թարմանաս. քու կողմէդ շատ դաժան բան է ձանձրանալու մտքերով տարուիլը: Եւ սակայն չեմ կրնար հաւատալ, որ իսկապէս այդքան վատ կը զգաս ու կը նիհարիս: Երեկ իրիկուն երազ տեսայ (ես, որ երբեք երազ չեմ տեսներ). դուն այնքան գեղեցկացեր էիր, այնքան սիրունիկ էիր դարձեր վարդագոյն աղուոր այտերով, ինչպէս ատենօք, գիշերօթիկնոցին մէջ, կյիշե՞ս...

Կիրակի իրիկուն թատրոն գացի. վերին պատշգամբն էի: Երկու թատերակ կը ներկայացնէին: Պեռնշթեյնի «Յանկարծահողմը» եւ Շաթրիանի «Բարեկամ ֆրիցը»: Ձիս յատկապէս հիացուց առաջինը, որ գլուխ-գործոց մըն է, ինչպէս,

առհասարակ, Պեռնշթեյնի բոլոր թատերակները: Ռեմին սքանչելի կը խաղար, բայց զիս շատ վշտացուց այն իրողութիւնը, որ ան չէր խաղար իր Ժիլտա կնոջ հետ (ինչպէս ատեն մը, սիրային դերերուն մէջ): Պէտք է ըսել, որ հայկական երեկոյթէն ի վեր այդ խեղճ Ժիլտան հայտագիրին վրայ բնաւ չերեւաց: Եւ յետոյ ամուսինը (ինծի կթուի, թէ սինլքորի մէկն է) սիրոյ ընտիր տեսարաններ կը խաղայ դ'Ասիլուային հետ (որ հաւանաբար անոր խելքը տարեր է իր պճնագեղ արդուզարդով): Այս առթիւ ի՞նչ պէտք է մտածէ իսկական կինը: Նողկալի կեանք... Վաղը իրիկուն նորէն թատրոն պիտի երթամ Օքթաւ Միրպոյի «Գործը գործ է» թատերակը դիտելու: Նորէն Ռեմին դ'Ասիլուային հետ...

Մայրիկս տաքուկ բարեւներ է ղրկած քեզի եւ խնդրած է, որ քեզ համբուրեմ իր կողմէն... Ինչքան բարի է մայրիկը: Բայց եթէ կարելի ըլլար, այնքան կուզէի անգամ մը համբուրել քեզ իմ կողմէս...

Շաբաթ օրէն ասդին ահռելի վճիռ մը եմ կայացուցած, պիտի ըսէի նոյնիսկ՝ հերոսական: Կռահէ, թէ ի՞նչ: Այսպէս ուրեմն, վերջնականապէս ձգած եմ ծխելը... Ահա չորս օր է՝ ոչ մէկ գլանակ չեմ առած ձեռքս... եւ ասիկա ոչ միայն Առողջութեան պատճառով...

Ներփակ կը գտնես Տամատի մէկ բացիկը, որով շնորհակալութիւն կը յայտնէ մեր լուսանկարին համար (պատրշգամբի վրայ): Անկէ զատ, հայերէն երկար նամակ մը եմ գրած ինծի ըսելու համար, որ եթէ մենք փափաքինք Լոզան մնալ, իրենք կուզեն վերադառնալ... Խեղճ մարդ. յամենայն դէպս տխուր բան է...

Լեւոնի քսանչորսամեայ երէց եղբայրը (որդեգրեալ եղբայրը) մեռեր է քսանորս ժամուայ ընթացքին: Շուտ, ցաւակցական բացիկ մը կամ նամակ մը գրէ իրեն (նաեւ ծնողներուն ու քրոջը). Լ. Ազնաւուրեան, Միտան, Աղեքսանդրիա (Եգիպտոս):

Բացի անկէ, կը ղրկեմ բացիկ մը, որ քեզի հասաւ մեկնելէդ օր մը ետքը... Ներէ ծուլութեանս համար: Կայ նաեւ կնքուած գերմաներէն նամակ մը (հարսանեկա՞ն, թէ՞ նշանտուքի, կամ ասոր նման բան մը), չեմ գիտեր՝ որմէ, եւ զոր բացեր եմ շատոնց:

Այնուհետեւ, մեր փոքրիկ գործիքով քաշուած լուսանը-կարներէն քանի մի նմուշ կուղարկեմ: Յուսով եմ, որ պիտի... ապշիս...

Գալով ուտելուս, ըսեմ, որ մսեղէնի այդ ամբողջ սնունդակարգը սոսկալի գէշ անդրադարձաւ վրաս: Հիմա վերադարձեր եմ սիրելի պանիրիս. իրիկունը միայն հաց ու զուիցերական պանիր կուտեմ:

Ինձի կը թուի, թէ հազար ըսելիք ունէի քեզի տակաւին, բայց քանի որ ձեռքս դեռ նոր հասած նամակիդ մէջ այնքան անհամբեր կերեւաս, ուստի կը փութամ կարելւոյն չափ շուտ հասնիլ կայարանին դուռը...

Սիրելի Եաննի, իմ շատ աղուոր Եաննիս, գեղեցիկ գարուն է այստեղ, գեղեցիկ երկինք մը կայ մեր վերեւ, գիշերը՝ գիսաւոր աստղեր, սէր կայ օդին մէջ, իսկ, եթէ ես այս բոլորի մասին երկար չեմ գրեր, գիտցիր միայն, որ շատ երկար, շատ յաճախ, շատ քնքշօրէն եւ նաեւ շատ անհամբերութեամբ կը մտածեմ: Ահ, կը սիրեմ քեզ, իմ գանձս, կուզէի ունենալ քեզ, ունենալ, ունենալ. կուզէի սիրել քեզ, սիրել քեզ...

ՌՈՒԲԷՆ

Շորեքշաբթի իրիկուն

Եաննի, գանձս,

Հիմա չեմ գիտեր՝ ինչո՞ւ միշտ կըսես, թէ կը մոռնամ քեզ: Այլեւս այս մասին մի խօսիր ինձի, կաղաչեմ: Արդէն ըսեր եմ քեզի, որ սէրն ինձ համար մեծ, լուրջ, յաւիտենական բան է: Անիկա միակ զգացումն է, որ մեզ կը մօտեցնէ աստուածներուն: Թեթեւ սէրը, սէրը, որ կը մոռնայ, այլեւս սէր չէ իմ աչքիս, այլ զուարճանք: Կրնայ ըլլալ, որ երբեմն կը ծուլանամ քեզի գրելու համար, բայց չեմ ուզեր, որ այդ արարքիս մէջ սիրոյ մոռացում տեսնես: Սակայն մինչեւ հիմա շաբաթը առնուազն երեք նամակ եմ միշտ գրած. եթէ դուն աւելի քիչ կը ստանաս, հաւանօրէն կը կորսուին: Եւ յետոյ շատ լաւ կրնայի բացիկներ գրել քեզի ամէն օր: Վըստահ եմ, որ բացիկը չափազանց քիչ է քեզի համար: Դուն

կուզէիր, որ ես առտուն սկսիմ քեզի գրել եւ աւարտեմ կէսգիշերին, այնպէս չէ՞, պզտիկ բզէզիկ: Հապա աշխատանքը: Քանզի պէտք չէ մոռնաս, որ ես ամէն օր ժամը ութէն մինչեւ 12-ը հիւանդանոցն եմ (եւ սոսկալի օգուտ կը քաղեմ անկէ): Իսկ յետմիջօրէները՝ կը կարդամ: Շատ քիչ դուրս կելլեմ՝ վարի նպարավաճառին քով վազելու չափ միայն (միշտ պանիրի սենդակարգ...): Կրնայի շատ լաւ բաներ գրել գիշերը, բայց այդ անիծեալ Տեօվլեթը չուզեր վերջակէտ դնել իր համպուրկեան պատմութիւններուն եւ ապագայի ծրագիրներուն, ուր երթալով աւելի ու աւելի կը խրի: Հազիւ կրցայ երկու-երեք փոքրիկ բանաստեղծութիւն գրել՝ պարապ բաներ: Բայց միշտ կը մտածեմ քու վրադ, եւ Աստուած գիտէ՝ ինչպէս: Օրերը կը հաշուեմ եւ յուսով եմ, որ այդ բանը տեղի կունենայ ապրիլի մէկին, այնպէս չէ՞: Բայց քանի որ գիտեմ, որ դուն ալ շատ անհամբեր ես, ուստի չեմ ուզեր քեզ աւելի ջղայնացնել: Ներփակ կուղարկեմ այն երկու բացիկները, զոր Լեւոնն է ղրկած քեզի, նաեւ ինձի հասցէագրուած երկու նամակները: Կը գրէ, թէ իր քրոջ հետ Լոզան պիտի գայ մայիսին (այս անգամ արդէն անտարակոյս,— կըսէ): Կը գրէ նաեւ, թէ իր մայրիկին կողմէ սքանչելի նուէր մը պիտի բերէ քեզի, բայց չուզեր, որ այդ մասին առաջուց ըսեմ քեզի (կը տեսնես, որ ես կըսեմ այնուամենայնիւ, իսկ ինչո՞ւ ոչ):— Եւ յետոյ խորհուրդ տուի Թագուորին, որ անմիջապէս Պոլիս տանի իր եղբայրը. աւելի լաւ է, որ իրենց տան մէջ մեռնի այդ խեղճ տղան: Ահա այն ամէնը, որ կրնամ գրել այսօր: Վաղը չէ միւս օրը աւելի երկար կը գրեմ քեզի եւ գեղեցիկ լուսանկարներ կուղարկեմ: Կը համբուրեմ քեզ շատ մեղմ, շատ մեղմ, մեղմ, մեղմօրէն...

Քու ՌՈՒԲԷՆԴ, ցկեանս:

Իմ սիրելագոյն կինս,

Այսօր կիրակի է. ոչ աղէկ, ոչ գէշ, այսինքն՝ գարշելի եղանակ: Ծանրաչափը շատ ցած է. քիթիս մէջ կը զգամ... (Ես շատ գիտական քիթ ունիմ): Առաւօտուն ժամը եօթէն առաջ ոտքի ելայ, սոսկալի ցուրտ էր: Գլուխս գնաց կար-

դալով այնպիսի պատմութիւններ, որոնք բնաւ չէին հետաքրքրեր զիս: Ժամը տասին Ազնիւը եկաւ Պիպիին հետ քու հասցէդ առնելու (ան շատ է զգացուած, որ գրեր ես իրեն): Հարցուց նաեւ, թէ ինչու իրենց այլեւս չենք այցելեր: Ես ըսի, թէ քիչ մը անհանգիստ եմ (եւ ասիկա մասամբ ճիշտ է): Տասներկուքը քառորդ անցած Օրշի իջայ: Ժամը մէկին ճաշեցի. շատ անհամ կերակուր մըն էր (այն օրէն ի վեր, որ այս ճաշարանին մէջ զզուելի աղցան մը կերցուցին ինծի, այլեւս ախորժակով չեմ ուտեր. ի դէպ, գինիին տեղ Ռոմանելի ջուր կը խմեմ): Տուն վերադարձայ եւ ձանձրոյթս սանկ-սանկ երկարաձգեցի մինչեւ այս պահը՝ իրիկուայ ժամը հինգը: Եւ ահա հիմա, գրիչը ձեռքս առած՝ քեզի կը գրեմ: Խոստացեր էի հետաքրքրական նամակ մը ղրկել քեզի, սակայն... միշտ չէ, որ կրնաս ուզածդ ընել: Պիտի հարցնես, թէ ինչու այդքան տաղտուկ կը զգամ այսօր: Պատճառն այն է, որ Թագուորը (մուշտակի վաճառականը) Լեյզէնէն գալով, պէտք է այցելէ ինծի: Որքան կատեմ այսօրինակ արարածները, այնքան կը տեղան գլխուս: Եւ մտածել, որ երկրիս երեսին ապրող մարդոց մեծագոյն մասը նման արարածներն են... Օհ, ինչ տխուր է ապրիլ կեանքը այսքան արձակունակ աշխարհին մէջ: Եւ ինչքան քաղցր է ունենալ նազելի կին մը եւ պզտիկ, մենաւոր օճախի մը մէջ ամբողջ աշխարհ մը ստեղծել: Ինչպէս կը տեսնես, եւ աւելի ու աւելի մանուկ կը դառնամ: Եաննի, աւելի ու աւելի կը յամառիմ մեր փոքրիկ Տաճարն ունենալու երազիս մէջ (դուն գիտես, այն, որ մենք ծրագրեր ենք արդէն): Եւ հիմա, երբ վերջապէս հասեր է գործնական կեանքին, դրամին, տիտղոսներուն, դիրքին, ապագային վրայ մտածելու ժամը, հիմա աւելի քան երբեք երազող կը զգամ ինքզինքս: Գործնական կեանքը կը զգուեցնէ զիս, մարդիկ սոսկում կառթեն ինծի, կուզէի մէկ բան միայն. Երջանկութիւն եւ Արեւ (գիտես, Փեբոսը...): Կը յիշե՞ս, դուն ինծի կառաջարկէիր վեց ամիս միասին ապրիլ, վեց ամիս՝ առանձին (թատրոնի սիրոյն): Ես քեզի կըսէի, թէ ատիկա անկարելի է ինծի համար: Եւ ինչքան իրաւունք ունէի: Ահա ամիս մըն է միայն, որ բաժնուած ենք իրարմէ, եւ որքան գէշ մը կը զգամ ինքզինքս... Եւ ինչպէս կը հաշուիմ օրերը, որ կանցնեն զիս քեզմէ... Եւ

ինչքան մինակ եմ, մինակ, մինակ, աՀ, եթէ գիտնայիր... Ի՞նչ արժէք ունի կեանքը: Եթէ ճշմարտապէս կը սիրենք զիրար, եթէ կրնանք այսքան քիչով երջանիկ ըլլալ, Աստուած իմ, ինչո՞ւ չըլլանք... Ի՞նչ գիտենք, որ դեռ երկար պիտի ապրինք (ես ինքս բնաւ վստահ չեմ արտի այս հիւանդութեամբ, զոր շատոնց ունիմ արդէն): Ինչո՞ւ: Ուրիշներուն հաճոյք պատճառելու համար: Իսկ որո՞նք են այդ ուրիշները: Եկուր, Եաննիս, ես քեզ երջանիկ, երջանիկ կը դարձնեմ: Ես գաղտնի գանձեր ունիմ, կախարդական աշխարհներ, անհուն բաներ, Հազար ու մէկ գիշերներու երազներ, քեզի կուտամ այդ բոլորը եւ միշտ աւելին կունենամ... Կը սիրեմ քեզի, գանձ, դուն միակ էակն ես, որ իրօք ընդունակ է անկեղծօրէն եւ յաւերժօրէն զիս սիրելու... Կը սիրեմ քեզ, հոգիս... Կարօտագին կը ղձամ տեսնել աչքերդ, կը ղձամ նայուածքիդ մէջ կորսուիլ, կը ղձամ գգուել քեզ, ունենալ, տրուիլ քեզի, սարսռալ սէրէն, ապրիլ եւ զգալ, որ կապրիմ... Սիրելիս...

ՌՈՒԲԷՆ

Հինգշաբթի իրիկուն

Եիրելի Եաննի,

Գիշեր է: Օլտ-Ինտիայի թէյասենեակին մէջ եմ հիմա. Սիրայինն երազներու ժամն է: Նուագախումբը «Բանաստեղծն ու գիւղացին» կը նուագէ: Իսկ ես կը մտածեմ քու վրադ... Ահա այն ամբողջ անհրաժեշտ պայմանը, որպէսզի դուն կարենաս երեւակայել այս իրիկուայ իմ գոյութենական հոգեվիճակս...

Սիրելիս: Այս բոլորը լաւ է անշուշտ: Բայց կայ բան մը, որ կը պակսի: Նամակներդ: Այսօր գրեթէ տասը օր է, որ ես ոչինչ եմ ստացած քեզմէ: Բացարձակապէս ոչինչ: Ի՞նչն է պատճառը: Ազնիւ խօսք, բան չեմ գիտեր: Եւ սակայն շատ երջանիկ կը զգայի զիս, գիտնալով, թէ միայն ծուլութիւնը արգելք կըլլայ գրելուդ: Ամենայն անկեղծութեամբ ըսէ ինծի՝ արդեօք ունի՞ս ուրիշ պատճառ մը, որ կը բռնէ գրիչդ...

Երեւակայէ, Եաննիս: Ահա տասը օր է արդէն: Եւ դուն

ցպահանջ տող իսկ չես գրած իմ բացակայութեան ժամանակ:

Երեւակայէ մէկը, որ ծարաւ է եւ մէկ շաբաթ շարունակ ոչինչ է ստացած իր ծարաւը մարելու համար: Բայց կարելի է մեռնիլ այսպէս... Եւ ես վստահ եմ, որ եթէ իմ տեղս դուն ըլլայիր, սիրոյ դառն յանդիմանութիւններ կը տեղայիր շուտով... Բայց, ինչպէս կը տեսնես, ես երկար համբերութիւն ունիմ, եւ այնքան սիրելի է ինձ ամէն անգամ քեզի ներելը:

Իմ պաշտելի կուռքս, քաղցրագոյն բարեկամուհիս, վերջին յոյսս եւ առաջին երջանկութիւնս, դուն, Եաննիս, բարի եղիր ուրեմն ինծի հանդէպ եւ եթէ նոյնիսկ լուրջ զբաղումներ կամ բոլորովին ուրիշ պատճառներ ունենաս, գէթ սիրոյ երկտող մը գրելու չափ բարի եղիր: Երբեք աւելորդ չըլլար...

Գալով ինծի, ես շատ լաւ եմ, միայն քիչ մը յոգնած, ճամբորդութեան պատճառով: Արդէն ձգեցի անցեալ տարուայ սենեակս (որովհետեւ հեռու էր հիւանդանոցէն) եւ հիմա Թամարէն ամառանոցն եմ, շատ լաւ կահաւորուած գեղեցիկ ընդարձակ սենեակի մը մէջ: Ուրեմն դուն պէտք է նամակներդ հասցէագրես այսպէս. «Ռ. Զիլինկ, Թամարէն ամառանոց (պր. Ռոժիւիի տունը), Ուրս հրապարակ, Լոզան»:

Յոյս ունիմ, որ այս հասցէն երջանկութիւն կը բերէ ինծի եւ որ այս տարուայ թղթակցութիւնը շատ աւելի յաճախակի կըլլայ:

Ընդունէ ամենատաքուկ համբոյրներս նուրբ շրթներուդ: Բիւր բարեւ սիրելի ծնողքիդ:

Քու յաւիտենական ՌՈՒԲԷՆԴ

Շաբաթ

Սիրելի, շատ սիրելի Եաննի,

Հիմա ինչպէ՞ս պէտք է ներողութիւն խնդրել քեզմէ ծուլութեանս համար: Երեկ խոստացայ գրել եւ ոչինչ գրեցի: Տառապեցա՞ր այս լռութենէն: Ծա՞տ: Քի՞չ: Գիտեմ միայն, որ ես չափազանց տառապեցայ քեզ սպասցնելուս համար:

Սակայն ուրիշ բանի անցնինք, այնպէս չէ՞: Ի՞նչ կուզէի ըսել քեզի: Շատ մը բաներ, յամենայն դէպս: Բայց գրեմ ըստ կարգի:— Նախ, ինծի նորէն գրեցին, թէ կուզեն զիս Սիլիւրիի եւ շրջակայքի պատգամաւոր ընել, սակայն այն պայմանով, որ ես նախապէս երթամ եւ այս ու այնտեղ քանի մը բանաստեղծութիւն կարդամ: Ես դեռ չեմ պատրաստած, բայց ըստ էութեան կը կարծեմ, թէ լաւագոյնը կտրականապէս մերժելն է: Ցայժմ մենք ապրեցանք ըստ բաւականին աղքատ, բայց եւ այնպէս ըստ բաւականին երջանիկ: Ինչո՞ւ փոխել մեր կեանքը, ինչո՞ւ մէկէնիմէկ նեւոուիլ անծանօթին գիրկը: Ճիշտ է, որ ամսական 1. 200 ֆրանքը լաւ բան է, բայց ես չորս տարի յետոյ միշտ կրնամ պատգամաւոր ըլլալ:— Լաւ ես ըրած Արսլանեաններուն գրելով: Կը կարծեմ, թէ անոնք քիչ մը սրդողած են, որովհետեւ քու մեկնելէդ ասդին ես իրենց տունը ոտք չեմ դրած: Եւ վաղն ալ, կիրակի, միտք չունիմ երթալու: Կուզեմ հեւոիոտն պըզտիկ շրջագայութիւն մը կատարել, քանզի պէտք է օգուտ քաղել այն իսկապէս սքանչելի եղանակէն, որ կընէ հոս քու մեկնելէդ ի վեր. կարծես Ֆրանսիայի Հարաւն ըլլայ, Նիսը:— Ես մանաւանդ ուրախ եմ, որ դուն պիտի գաս: Ուրեմնն ե՞րբ տեղի պիտի ունենայ այդ երջանիկ ժամանումը: Մի՞թէ կուզես ճամբորդել ծնողներուդ հետ, մի՞թէ կուզես բերել մեր կահոյքը: Եւ ի՞նչ կահոյք: (Այնուամենայնիւ, պարապ-սարապ բաներ պէտք չեն): Իսկ ե՞րբ պէտք է ես հրաժեշտ տամ իմ սենեակիս: Հա՞րկ է, որ զբաղիմ գողտրիկ բնակարան մը փնտրելով: Ո՞ր ատենի համար: Ահա բազմաթիւ հարցեր, որոնց կրնայիր պատասխանել, եթէ ժամանակ ունենայիր:— Զարմացնելու հասար քեզ, թէ ինչ կարելի է ընել քիչ մը համբերութեամբ, քեզի կը ղրկեմ երկու լուսանկարներ, որոնցմէ պզտիկը քաշուած է քու փոքրիկ գործիքովդ: Սքանչելի են, չէ՞, կարծես նկար ըլլան: Բայց աւելի լաւ լուսանկարներ եմ քաշած, զոր միշտ կը պահեմ ծոցագրպանս բարեկամներու ցոյց տալու համար: Եւ արդէն իսկ ես քիչիկ մը վարկ կը վայելեմ, եւ բոլորը կուզեն սենեակս գալ լուսանկարուելու, բայց ես չեմ ուզիր, որովհետեւ այդ բանը, այնուամենայնիւ, ծախսի դուռ է ինծի համար: Միայն երեկ լուսանկարեցի Քոչարեանը: Մե-

ծապէս գոհ մնաց, այնքան գոհ, որ ինքն ալ 50 ֆրանքանոց գործիք մը պիտի գնէ... Ահա թէ ինչու ես իրաւացի էի, երբ կըսէի, թէ մեր ապագայ Եանինի ամառանոցին (ներողութիւն, Եանինի տաճարին) մէջ պէտք է սեւ սենեակ մը ունենանք... Հիմակուրնէ իսկ մեր պաշտելի Փեբոսը լուսանկարել փորձելու հաճոյքը կը վայելեմ... Թէպէտ, ճիշտ է, որ կարելի չէ լուսանկարել Արեւը... Ես առաջուց վստահ եմ, որ քեզի եւ անոր հետ հիանալի, հիանալի բաներ պիտի գլուխ բերեմ... Համբուրէ զայն իմ կողմէս: Չես գիտեր, թէ ինչքա՞ն երջանկացուցիր զիս, անոր մասին խօսելով ինծի: Նա՞մակդ ընտանալէս ի վեր գաղտնի բերկրանք մը, աստուածային բան մը կը թափանցէ տակաւ հոգիէս ներս, եւ միայն ու միայն քու մասիդ մտածելով հանդերձ, չեմ դադրիր մտածելէ երկուքիդ մասին...

Շատ ուրախ եղայ նաեւ, որ հայրիկդ թանկարժէք իրեր է նուիրեր քեզի: Հայրիկդ շատ բարի է եւ շատ կը սիրէ քեզի: Ոչինչ՝ այնքան հմայիչ է, ինչքան գեղեցիկ, թանկարժէք իրերով աղուոր ու երիտասարդ կինը (եւ ոչինչ այնքան տգեղ է, ինչքան շքեղ, թանկարժէք իրերով տգեղ կինը): Դուն հետզհետէ աւելի պերճաշուք, աւելի հարուստ, աւելի մեծ տիկին կը դառնաս, եւ ես քեզ աւելի ու աւելի կը սիրեմ: Կը պաշտեմ քեզ, թանկագինս: Դուն ամենաիդէալական պզտիկ կինն ես, զոր ես երբեւիցէ ճանչցած եմ:

Միշտ քու՝ ՌՈՒԲԷՆ

Մարտ 1

Օ, իմին աղուոր կինս,

ամենապաշտելին, ամենահմայիչը, ամենասիրազեղը պզտիկ կիներուն մէջ: Եթէ հիմա գիտնայիր, թէ ինչքան կը սիրեմ քեզ եւ ինչպէս կը տառապիմ քու բացակայութենէդ: Եւ եթէ գիտնայիր, թէ ինչքան սիրատոչոր ու բարի պիտի ըլլամ քու վերադարձիդ: Եւ եթէ գիտնայիր նաեւ, թէ որքան կօրհնեմ այս կարճ բաժանումը... Մեծ գեղեցկութիւնները մեծ լեռներ են. երբ մարդ այդ լեռներուն վրայ է, այնքան ալ չի նկատեր անոնց մեծութիւնը. պէտք է որոշ տարա-

ծութիւն մը, կարենալ դատելու համար անոնց վսեմ գեղեցկութեան մասին: Իսկ ես ճամբորդի մը նման եմ, որ հեռուէն դատելէ ետքը վեհանիստ գագաթն մը բարձրութեան մասին, պիտի ուզեր դարձեալ ըլլալ անոր վրայ եւ այս անգամ արդէն աւելի լիաթոք ու աւելի խորունկ շնչել այդ կատարի զովասուն օդը... Դուն զիս կը հասկնաս, այնպէս չէ՞, քաղցրիկս: Եւ նաեւ կը ներես ինծի, եթէ երբեմն քիչ մը պաղ (քիչ մը ծեր, թերեւս), քիչ մը մտախոհ եմ երեւցած քեզի: Պատճառն այն է, որ սառնօրէն դատող այս ճակտին տակ բոցեր կան, կրակներ, գաղտնի կայծեր, որոնք պիտի ուզէին վայրկենապէս հրոյ ճարակ դարձնել իմ ամբողջ էութիւնս... Եթէ գիտնայիր, թէ ինչքան կը սիրեմ քեզ իմ մէջս...

Մարտ 2

Թանկագին Եաննի,

Այն օրը, առտուն, Ազնիւր եկաւ հարցնելու, թէ դուն հիւանդ չե՞ս արդեօք: Ես պատասխանեցի, թէ դուն 4—5 շաբաթով Էրֆուրտ ես մեկնած: Քեզի ջերմագին կը բարեւէ, խեղճ աղջիկ: Բացիկ մը գրէ իրեն եւ հատ մը ալ՝ Արսլանեաններուն: Ես անոնց չեմ այցելած տակաւին: Ներէ, որ այն օրը ոչինչ ըսած վառեակիդ մասին: Խնդիրն այն է, որ դեռ չէի կերած զայն (միշտ իմ գէշ տրամադրութեանս պատճառով, որ երեք օր տեւեց... Ինչպէս Լոզանի հիւսիսային հողմերը...): Երեկ, շաբաթ, սքանչելի արեւ մը կար հոս: Տեսվլեթեանին հետ պզտիկ նաւակ մը վարձեցինք եւ կեսօրին ճաշակեցինք վառեակը (1 ֆր. 35 տնտեսելու համար): Վառեակն իսկապէս հիանալի էր, սրտի մը պէս: Երբեք այդքան համեղ բան չէի կերած... Վերադարձիդ, երբ մենք մեր տունն ու տեղը ունենանք, դուն ինծի յանձնակի այդպիսի պատուական վառեակներ պիտի կերցնես, այնպէս չէ՞... Բայց դարձեալ ու միշտ կըսեմ, թէ լաւագոյն վառեակը, զոր ես պիտի ուզէի անոյշ ընել ամբողջ կեանքիս մէջ (եւ երբեք չկշտանալ անկե), դուն պիտի ըլլաս, իմ հրեշտակ Եաննիս: Ստացա՞ր երեք մեծ լուսանկարով եւ ներփակ նամակով ծրարը: Երբ Լոզան գաս, ես քեզի համար սքանչելի

լուսանկարներ կը պատրաստեմ, որովհետեւ այնքան լաւ սորվեցայ նկարել:

Քու՝ ՌՈՒԲԷՆ

Եանգի գանձս,

Կը գրեմ քեզի Օլտ-Ինտիայի, ուր Տեօվլեթեանի հետ եմ: Օրն ի բուն վազվզեցի պզտիկ, յարմարաւէտ բնակարան մը գտնելու համար: Նման բան չկայ: Այո, կան բնակարաններ, բայց կամ բանուորական տուներու մէջ, կամ չափազանց հեռու, կամ չափազանց սուղ: Բայց վերջապէս գեղեցիկ բան մը գտայ, Սրբրեթիան ծառուղի (բարձրաշխարհիկ), թիւ 1, երրորդ յարկ: Անկիւնի նոր տունը, ուր կապրէր Ահարոնեանը: Շատ մաքուր տուն մըն է, պատուարժան բնակիչներով, սուրբ Ֆրանսուայի, հիւանդանոցի եւ Շաղլիի քովիկը, միեւնոյն ժամանակ՝ հանրակառք: Երկու մեծ պատշգամբ, հիասքանչ տեսարան, ամբողջ օրը՝ արեւ: Միայն ահա թէ ինչ: Ամբողջ բնակարանն ու սանդուղքի վրայ բացուող դռներով երկու բոլորվին առանձին սենեակները վարձողը ծեր մայր մըն է իր զաւկին հետ: Ըստ անոնց, այս բոլորը շատ ու շատ է իրենց համար, ուստի իրենք պիտի ապրին դուրսի երկու առանձին սենեակներուն մէջ, իսկ մենք, միանակ, պիտի զբաղեցնենք ամբողջ բնակարանը (այսինքն՝ անկիւնը, ընդարձակ պատշգամբով շատ մեծ սրահը, լայն պատշգամբով նոյնպէս մեծ ննջասենեակը, կահաւորուած, լուսաւոր ու մեծ խոհանոցը, բոլոր յարմարութիւններով լոգարանը, աշխատասենեակը): Էլեկտրականութիւն եւ գազ: Մէկ խօսքով՝ ամբողջ բնակարանը: Եւ ամսական 45 ֆրանք, այսինքն՝ ածանէն ալ ածան: Իրենք պիտի ապրին բնակարանէն դուրս գտնուող երկու սենեակներուն մէջ, որոնք պզտիկ, առանձին բնակարան մը կը կազմեն: Միայն մայրը իրաւունք պիտի ունենայ գալու մեր խոհանոցը (քանզի իրենք խոհանոց չունին): Բայց մենք բոլորովին մենք մեզի կըլլանք: Միայն թէ պէտք է շուտ պատասխան տալ՝ այո թէ ոչ: Ես ըսի, թէ ինքս համաձայն եմ, բայց պէտք է հարցնեմ կնոջս կարծիքը: Հիմա պատասխանելու կարգը քուկդ է: Հոն կը մտնենք ապրիլ 15-ին: Ամատեանը

կը ճանչնայ զիրենք, ապրեր է անոնց քով, եւ զիս կը վըստահեցնէ, թէ շենք շնորհքով մարդիկ են։

Ուրեմն՝ պատրաստէ մեր կահոյքը։ Բայց չեմ ուզեր, որ նոր դաշնամուր գնես։ Լոզան բեր հին դաշնամուրը... այստեղ աւելի սուղ կարելի է ծախել զայն, քան էրֆուրտ, եւ այդ դրամով կարելի է աքանչելի դաշնամուր մը վարձել։

Պէտք է վերջացնեմ նամակս։ Ժամը վեցն է, եւ արդէն իսկ կը սկսին աւլել սրահը։ Հազար համբոյր։ Կը սպասեմ պատասխանիդ։

Քու ՌՈՒԲԷՆԴ, ցկեանս

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

Շուշանիկ Մատակյանը (1877—1944) Վարպետի Սանդուխտ մորաքրոջ թոռնուհին է: Ունեցել է գրական հակումներ: Դարասկզբին «Հորիզոն» թերթում Շուշանիկ Տեր-Միրաքյան և Ազալիա ստորագրություններով տպագրել է հոդվածներ:

1893, մարտի 28, ԷՋՄԻԱԾԻՆ

Սիրելի՜ քույրիկ,

Ի՞նչ գրեմ— արցունք, տանջանք, վիշտ, հեծծանք... Թառամեցան ծաղիկները, հանգան կայծերը, ձմեռն եկավ. բուք-բորան, մառախուղ, մռայլ, անապատ, անապատ առանց օազիսի. ո՞ւր է երկինքը, աստղերը, ծիածանը, արշալույսը. ո՞ւր է, ո՞ւր է անդրանիկ սերը, սերը պղատոնական, մաքուր, անարատ, կուսական... Ո՞ւր է, ո՞ւր...

Ես լալիս եմ, ես տանջվում.

Я вновь один, и вновь кругом
Всё та же ночь и мрак унылый,
И я в раздумье роковом
Стою над свежею могилой:
Чего мне ждать, к чему мне жить,
К чему бороться и трудиться.
Мне больше некого любить,
Мне больше некому молиться!...

Այո՜, քույրիկ, այո՜, ես էլ ո՜չ ոքին չեմ սիրում, ոչ ոքի համար էլ չեմ աղոթում...

Սակայն, ով գիտե, կարող էի երևակայել, որ այն, այն

---

* Նամակներն արտատպում ենք Ավ. Իսահակյանի «Երկերի» (վեց հատորով) 6-րդ հատորից («Հայաստան» հրատ.) Երևան, 1975):

ծաղիկը,— որի բուրմունքից արբեցած ես ապրում էի,— թառամում է. ոչ, ոչ, չէի կարող, միթե կարող էի, միթե կարող էի չսիրել «նորան»:

Երբ ես հուսահատ, երբ ես մոայլ, երբ ես հիասթափված դիմում էի դեպի կորուստ, ո՞վ ինձ ձեռք տվեց, ով ինձ մխիթարեց, ո՞վ ինձ քաջալերեց, ո՞վ ինձ հույսեր խոստացավ. «Նա՛», «նա՛»:

Երբ ես հոգնած կյանքից, երբ ես զզված գոյության անմիտ կռվից, երբ ես մեռցրել էի հավատս թե դեպի մարդը և աշխարհը, ով ինձ նոր աշխարհ տվեց, ով ինձ իդեալներ տվեց, ով երկինքն ու երկիրը արտումս իջեցրեց. «Նա», «նա»...

Երբ կյանքը իմ աչքում դատարկություն էր, խաղալիք էր, երբ աշխարհը կրքերի և զվարճությունների օրորոց էր, երբ աշխարհը ճահիճ էր, մարդիկ՝ գորտեր, ով ինձ ոգևորեց գիտության անվամբ. «նա», «նա»...

«Նա», «նա», «նա»՝ իմ փրկիչս էր...

Օ, «նա» այժմ» տանջվում է, դեռ արև չտեսած գոլորշիանում է...

Օ, «նրա» օրերը, երկնային օրերը համրած են:

Եվ ես օրհնում եմ «նորան»...

Բայց ես, ես ինչ անեմ. ես ապրել եմ ուզում, ապրել. ապրել, ինչու չգիտեմ...

Ես չեմ ուզում այսպես կորչել, ոչնչանալ, ապրել եմ ուզում հանուն գիտության, գիտության, միայն գիտության համար ապրել, և իմ կյանքը գիտության համար նվիրել. ես գիտության, անմահ գիտության զինվոր եմ ուզում լինել...

Այսուհետև սիրո ոչ շող ու ցող, ոչ բույր ու թույր...

Խաբուսիկ աշխարհ, խորամանկ դիմակ...

Ախ, եթե ես կարողանայի աղոթել աստծուն, հավատալ աստծուն՝ երջանիկ կլինեի...

Եվ միթե կա երջանկություն աշխարհի մեջ. ոչ, ոչ, նա ինքնախաբեություն, ինքնամոռացություն, եսականություն է... Ախ, ես թշվառ եմ, ես ապերջանիկ, չկարեկցեք ինձ վերա. ես փոքրոգի չեմ, ես հաղթված չեմ կյանքի կռվից: Չկարեկցեք:

Իմ վիշտը, իմ վերքը, իմ երգը, թող ձեզ չգրավի, թող ձեզանից ևս արցունք չքամե... Միթե ձեր վարդերը կարող են պսակ լինել ինձ. չեմ կամենում... չեմ, չեմ...

Իմ արցունքները կարող են ինձ համար բուսցնել «նորա» նվիրական շիրիմից փշեր և մամուռ, և այդ ինձ բավական է որպես պսակ, որպես հաղթական...

Դուք ուրախացեք, դուք ապրեցեք, դուք սպասեցեք դարձյալ. կյանքը դեռ ժպիտ տալիս է ձեզ համար, ինձ՝ ոչ...

«Նա» ձեզ համար մեռնում է, բայց ինձ համար՝ ոչ. «նա» միշտ կենդանի կմնա և իմ սրտում, իմ երգերում, և իմ աղոթքներում՝ ավելի մաքուր, ավելի սուրբ... իսկ գաղտնի տանջանքով ավելի շուտ կհասնեմ կյանքի նպատակին՝ գերեզմանին, քան դուք... և հավիտյան «նա» սիրում և օրհնում է ինձ և ես՝ «նորան»:

ԱՎԵՏԻՔ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ՋԱՎԱՀԻՐ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ

Վարպետի այս նամակներն ուղղված են Լևոն Շանթի ապագա կնոջը՝ Ջավահիր Ներսիսյանին, որի հետ մտերիմ հարաբերությունների մեջ է եղել:

1901, մարտի 11 ՎԻԵՆՆԱ

Գիշերը ժամը 3-ին եմ գրում. այս գիշեր էլ չեմ կարող քնել. մինչև այժմ արթուն էի և «Ավետարան» էի կարդում, Հիսուսի հետ էի խոսում. հոգնեցի, վեր կացա, շորերս հագա և հիմա էլ քեզ հետ եմ խոսում, դուստր Հիսուսի... Օ, երևի պիտի զարմանաս, որ ես կրոնական եմ դարձել. ոչ, սիրելիս, ես անհավատ եմ, չեմ ճանաչում աստված, և այդպես էլ կմնամ միշտ. բայց Հիսուս իմ հոգումս միշտ կմնա որպես հիվանդների և վշտացյալների սրտանց ցավակից.— «Եկեք ինձ մոտ ամենայն վշտացյալներ և բեռնավորներ, և

ես կհանգստացնեմ Ձեզ»: Ոչ ոք այդպես անկեղծ չի կանչում թշվառին. ում ձայնը առավել վեհ է, քան նրանը... Ոչ մի ուրիշի... Նա ինքը տանջվող մարդ էր և հարգում էր տանջանքը... Գիտությունը ասում է, որ տանջվող մարդիկ վերջը միստիկ են դառնում, մթնում է նրանց ուղեղը... Թող ասե. բայց իմ ուղեղս վառված է հազար ու մի արևներով, և այդ է պատճառը, որ այրվում եմ ես... Ես պիտի գնամ իմ ճանապարհով՝ բեռնավորված համաշխարհային վշտի ծանրությամբ. այդ բաժին ընկավ ինձ: «Մի վիշտ հազար ուրախություն արժե,— ասում է Դանթեն. և ես կտանեմ իմ վիշտը,— ես չեմ փոխի այն՝ ամբոխի հրճվանքի և տոփանքի հետ. թող երբեք իմ դեմքիս վրա ժպիտ չծաղկի, և հույսը թող չծագե իմ հոգում. սիրո ծիածան, վարդեր պետք չեն ինձ... Աշխարհի մոայլը տվեք ինձ, և վարդերի փշերը. ես կփաթաթվեմ մոայլով և կպսակվեմ փշերով... ու կգնամ իմ ճանապարհով-տանջվողներ, հուսահատներ, զարկվածներ շատ կան, և ես նրանց մոտ կգնամ, մի բարի խոսք, մի կաթիլ ջուր տալու համար:

Ով է բախտավոր աշխարհում.— այս դժվար հարցին մի մեծ մարդ պատասխանել է այսպես. «Նա է բախտավորը, ով լավ ստամոքս ունի և վատ սիրտ...»:

Ես չեմ ուզում այդ բախտավորությունը, և թշվառությունը նվիրական է, և թշվառ լինել, կնշանակե ավելի բախտավոր լինել...

Իմ թանկագին Ջավահիր, ես տանջում եմ քեզ անշուշտ. ես այս գիտեմ, որովհետև, եթե գիտենամ, որ դու անտարբեր ես դեպի իմ տանջանքները, հիարկե որ ոչ մի տող նույնիսկ՝ չեմ գրի. բայց ես չեմ ուզում քու սերը դեպի ինձ (ի) չարը գործածել: «Աղբյուրի շատ բխելը կտրվելու նշան է»— ես էլ սիրտս բանամ, վերջացնեմ,— այլևս քեզ հետ գործ չեմ ունենա. մեր ճանապարհները կհեռանան,— ես դեպի անապատը, դու—դեպի կյանքը:

Վստահ կարող եմ ասել, որ ես ինձ չեմ ապանի. սրանից ծանր տանջանքներ թեկուզ պատահին,— ես պիտի տանեմ: Ես խոսք ունեմ ասելու մարդկանց. սրտիս դժոխային հնոցներից դուրս եկած, բովված խոսք, որ ծանր, ծանր երկաթի պես պիտի ընկնի մարդկանց խղճի մեջ. մարգարեա-

կան կոչումն եմ զգում մեջս. կայսերներից և առյուծներից չեմ վախենում. իմաստության օձը արտումս՝ ես կգալարվեմ մարդկանց շարքերի մեջ, կխայթեմ չարիքի գարշապարը,— և ի վարձ այդ ամենի, կախաղանի վրա բարձր և վեհ կը-ճոճամ, որ ոտքերիս տակ ամբոխը խռնվի, սողա, դողա...

Եվ ես կհեռանամ կյանքից, կյանքի վայելքներից. պետք չեն դրանք. ամեն մի վայելքը հազարավոր զոհերի տանջանքով է լինում. ես չեմ ամուսնանա. բացի այն, որ չեմ ուզում, այլև վրաս բարոյական պարտք կա չամուսնանալու. ես ծնունդ եմ ջղային հորս, իսկ իմ որդին ժառանգապես ավելի ջղային պիտի լինի. ես անիծում եմ հորս. բայց որ-քան պիտի անիծե իմ որդին ինձ, ինձ, որ իմ հորից ավելի կրթված ու զարգացած եմ համարվում, անշուշտ: Ես ես պի-տի մնամ մենակ,— մենակ երկրի մեջ, բայց բյուրավոր թըշ-վառների հետ միասին.— ուրիշ կերպ չեմ կարող հաշտվել կյանքի հետ. կյանքը ինձ շպրտում է դեն, ես նրա խորթ որդին եմ, բայց կոչում եմ զգում մեջս, մարգարեի կոչում. և խոսք ունիմ ասելու.— պիտի ապրեմ, պիտի չմեռնեմ:

Ուզում էի երկար նամակ գրել, մեծ թուղթ վերցրի, բայց հոգնում եմ. երևի պիտի քնեմ մի քիչ. առավոտ պիտի գնամ բժշկի մոտ. միջոցներ ձեռք կառնեմ ոչ միայն Վենետիկ գնալու, այլև մինչև արևելք, Պաղեստին ճամփորդելու. պի-տի Հիսուսի ման եկած վայրերը շրջեմ, պիտի Հորդանանի ջուրը խմեմ և Երուսաղեմի դաշտերի շուշանը հոտոտեմ...

Վերջացնում եմ նամակս.— խնդրում եմ ներողություն, որ քեզ հոգնեցնում եմ. երևի մի քիչ նախանձում եմ քու առողջության վրա, որ չեմ ուզում քու հանգստությունը. ով գիտե— մարդու հոգին առհասարակ շատ եսական է...

Ընդունիր կարոտալի բարևներս, իմ անգին քուրիկս,— քու Ավետիք:

«1901» 11 մարտի, ՎԻԵՆՆԱ

1901, հունիսի 6, ՎԵՆԵՑԻԱ

Անմոռաց Զահավիր,

Նամակներիդ մի քանի կետերին ի պատասխան գրում եմ.—

Արդեն Վենեցիա ինձ ամեն մի ժամ մնալը բանտի պես տաժանելի է. և շոգ է, և չափազանց մոայլ եմ, և էլ չեմ լողանում (ջուրը տաք է, վատ է ներգործում ջղերիս վերա),— բայց փողի եմ սպասում ու չեմ ստանում. ստացած օրը հենց դուրս կգամ:

Եթե չհասա ամսվավերջին՝ դու գնա, բալամ, դու ճամփեդ գնա. կամ եթե շոգից չես վախենում՝ Վենեցիայով արի (Ժենից մինչև այստեղ ||| կլաս 36 ֆր. այստեղից Վիեննա 25 ֆր.: Իսկ Ժընևից Վիեննա ||| կլ. 38 ֆր., ուրեմն տարբերությունը 20—25 ֆր. այստեղով գալուս. բայց Աստված ոչ անե ես մինչև ամսվա վերջը մնամ. շոգուց կխելոռիմ):

Իմ դրությունը այժմ, քան երբևիցե, անորոշ է, կրիտիկական և հուսահատ. ես նկատում եմ, որ կատարյալ հերոս եմ— դիմանալու, համբերելու, տանջվելու մեջ. ոչ թե քաջություն և ազնվություն. ստրկի պես տանում եմ կյանքի շղթաները, բեռը:

Իսկի չգիտեմ ինչ եմ անելու. ամբողջ բախտս կախված է հիվանդությանս ընթացքից. եթե լավի նշաններ նկատեցի մի քանի ամսվա ընթացքում, արտիս ուրախությունից կրկընակի կլավանամ... Թև կառնեմ ու կթռնեմ. ինչ էլ որ լինի ձմեռը կլինեմ մոտդ, Ժընև, ուր որ լինես, իսկ եթե դրությունս մնա նույնը կամ դեպի ավելի վատը դարձավ, այն ժամանակ միշտ մնաս բարև. էլ ոչ մի նամակ, էլ ոչ մի բարև. գլուխս, հիմար, գիժ, անիծած գլուխս պիտի առնեմ ու անհետ-անդարձ կամ կորիմ երեսեն, կամ պիտի առանձնանամ մի անկյուն, մի վանք, մի կղզի (Սևան) և նվիրվեմ փիլիսոփայության և մետաֆիզիկայի, որ մոռանամ ինձ, կյանքը, ընկերների, հեղափոխություն, հայրենիք, ազգ...

Ուրիշ ելք չունեմ,— հոգիս է հիվանդ, հոգեկան հիվանդ եմ, հիպոխանդրիկ-մելանխոլիկ-նեվրասթենիկ. այս տեսակի հիվանդների մեծ մասը կամ խելագարվում են կամ ինքնասպան լինում, և երևի իմը դեռ այդ աստիճան չէ հասել:

Ամբողջ արտով ատում եմ ինձ, մեր ընտանիքին, մի շարք ընկերների, մի ահագին քանակության հեղափոխականների, հայոց ազգի մեծամասնությանը և մարդկությանը. սիրում եմ մոայլ ժայռերի իր (ենց) թունավոր օձերով, ձյունապատ լեռները իր(ենց) կուսական մաքրությամբ, ծովե-

ը՝ իրենց մրրիկներով, անապատները՝ իրենց վայրի փշերով ու ծակող ծաղիկներով և կղզիները՝ իրենց լռությամբ։

Այժմ ես վախենում եմ, որ դու սիրահարվես վերաս և հետո շատ տանջվես. ինչքան կուզես ինձ սիրիր, ազատ ես, բայց սեր, սիրահարության մտքերդ հեռու պահիր։ Քու վերջին նամակներից ես վախենում եմ, և ինձ դատապարտում եմ, որ այդպես մոտեցա քեզ, նամակներ գրեցինք իրար։ Հանցանք է ինձ համար ամուսնությունը և անազնվություն աղջկա խաբելը, այլանդակ սերունդ թողնելը. Օհ, ինչքան կցանկանայի որդիներ ունենալ, առողջ, առողջ, բայց ես ինչ եմ,— ոչինչ, ոչինչ. անիծված լինեն ինձ ծնողները, իրենց հաճույքի համար ես եմ տառապում,— զայրացած եմ հորս գերեզմանի դեմ և մորս նույնիսկ չեմ ուզում տեսնել. երազումս տեսնում եմ և հետը չեմ խոսում... Բայց որ մայրս վաղը մյուս օր մեռնի՝ ես ցավից, վշտից եթե չխելագարվեմ, հիվանդությունս կրկնակի պիտի աճի. դրությունս անհուն, անհուն հուսահատական է. ժամերով մտածում եմ ու ելք չեմ գտնում, ինձ չեմ հասկանում, և ուղեղս բորբոքվում է, պայթելու դրության հասնում. և մոլորվում եմ... աչքերս սառել, մնացել են երեսիս վրա՝ դիակի աչքերի պես, երբեմն ծերունու պես, մահապարտի պես՝ մահս այնքան մոտիկ եմ զգում, որ դագաղի, գերեզմանի մոտից անցնել վախենում եմ. մեռել որ պատահում եմ, սարսափում եմ. թվում է ինձ, որ ես եմ մեջը, կամ վաղը ինձ են տանելու։

Դու ճամփեդ գնա, և հետ մի նայիր. իմ անունը իսպառ մոռցիր, և մեռած համարիր. ու խնդրում, աղաչում եմ քեզ, հազար անգամ աղաչում եմ՝ ինձ էլ նամակ մի գրիր. ինչ օգուտ, ինչ օգուտ. իզուր պիտի տանջվիս. գնա կյանք մտիր, ուրախացիր, վարդեր քաղե, սիրիր, համբույր տուր, համբույր առ, հուսավառ աչքերով նայիր ապագայիդ վերա. թող մեռելները հանգչին իրենց քարերի տակ, և տանջվողների արտերը օրեցօր ջարդվին. աշխարհի պատմությունն է այդպես. մարդիկ հրճվում, պարում են մեռելների գերեզմանների վերա. դու հանգուցյալ եղբորդ հո ինձնից շատ չէիր սիրում, բայց ոնց մոռացար նրան, և նրանից հետո որքան ուրախ, լիակուրծք ծիծաղում էիր. Երթաս բարև,

երթաս բարև, ուր որ լինես՝ արևդ կանաչ լինի. երբեք չտըխրիս. արցունքի կարոտ մնաս. միշտ առողջ լինիս և խաղաղ քնիս. փորձանքից ազատ մնաս. չխաբվիս և չխաբես. մաքուր սիրես, մաքուր սիրվիս. բայց ամենից առաջ ինձ մոռացիր... Նույնիսկ լավ կլինի, որ էլ չպատահինք իրար. շուտ գնա. և Վենեցիայով մի արի. քեզ շատ եմ ուզում տեսնել, բայց և շատ եմ վախենում. Օֆ, ինչեր եմ գրում, դու ուրտեղից ինձ պատահեցար. օֆ, կորի գնա, գնա, հեռացիր, աչքիցս գնա. էլ դու չկաս ինձ համար.

Ա. (վետիք)

(Հ. Գ.) Նամակ չգրես, առանց բանալու հետ կուղարկեմ:

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ՇՈՒՇԱՆԻԿ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

(1904)

Նորից վեր եմ առնում գրիչս, թաթախում եմ հիվանդ, արյունոտված սրտիս մեջ և գրում եմ քեզ, Շուշիկ, մի քանի տող, գրում եմ ես՝ Ավետիք Իսահակյանս:

Ինչու եմ գրում, ինչ է ստիպում ինձ գրել.— սիրել— ես քեզ չեմ սիրում, ատել— ես քեզ չեմ ատում. բայց դու իմ հոգում կաս՝ որպես մի ծանր երազ, որպես մի դժբախտություն, մի կոշմար. ես ուզում եմ քեզ հոշոտել, ես ուզում քեզ հազար-հազար անգամ սպանել, սպանել, նորից սպանել, կենդանացնել՝ նորից սպանել. հավիտյան ապրել, և քեզ հավիտյան սպանել, բայց այդ չեմ կարող անել (անզոր եմ քեզ), ամբողջ էությունս բարի է... և որ ամենաողբալին է՝ ես դեռ քու ճիրաններում եմ. ինչ անեմ, ինչպես ազատվեմ. երբեմն քեզ ատում եմ ծովաչափ, ծովաչափ, և երբեմն սիրում եմ և պատրաստ ոտքերդ համբուրելու, բայց որ հիշում եմ անցյալը, ես մրրիկ եմ դառնում:

Դու մի որոնիր այս տողերի մեջ որոշ միտք, որոշ իմաստ. ես գրում եմ համարյա կիսախելագար, և մինչև մահս քեզ էլ ոչ մի

տեղ գրելու չեմ, և աչքերիդ նայելու չեմ, Աստված է վկա, վերջին անգամ պիտի լամ քու առաջ և հայհոյեմ քեզ, հայհոյեմ, հայհոյեմ քու բոլոր սրբությունները, որովհետև դու իմ սրբությունները պղծեցիր, որովհետև իմ ամենանվիրական սերս շան պես դուրս վռնդեցիր, որովհետև դու ինձ չարչարեցիր, նահատակեցիր՝ անսահմանորեն:

Դու ասում էիր ինձ, որ ինձ չես սիրել— գիտեմ, գիտեմ. բայց այդ քեզ իրավունք չէր տալիս, ինձ՝ երբ ես քու ոտքերի տակ տիեզերական հզոր սիրուցս ստորացած ընկած էի,— ծաղրելու, արհամարհելու, դուրս շպրտելու. չէ որ, Ծուշիկ ջան, ես մարդ էի. չէ որ, կային օրեր, որ դու ինձ գոնե հարգում էիր, «թանկագին» և «ջան» խոսքերով խաղում էիր հետս... և այդ բոլորից հետո դու ինձ ոտացտակ տվիր. խփեցիր ջահել սրտիս մեջ դաշույններ՝ չհանեցիր նրանց, թողիր սրտիս մեջ— մնացին ժանգոտված, և արյունովս իմ քայլափոխերս ծածկեցիր, բայց դու մնացիր դեպի ինձ միշտ ծաղրող, միշտ անգութ, միշտ անսիրտ...

Եթե ամենակատաղի թշնամուս սիրեի, իմ, դեպի քեզ մրրկող սիրուս մի չնչին մասով թշնամիս ինձ կգրկեր, կըգուրգուրեր և կմխիթարեր... Իսկ դու-դու գիտեիր իմ դժոխային տանջանքներս, բայց մոտ չեկար, մի անուշ խոսք չասիր... Ես քեզնից էլ սեր չէի ուզում. քեզ տիրել չէի ուզում, բայց քու մեջ մարդ տեսնել կուզեի, և որ՝ դու իմ մեջ մարդ տեսնեիր...

Դու ասում էիր ինձ, որ այն ժամանակ ջահել էիր և ուրիշները ներշնչում էին քեզ... Բայց, բայց... չէ որ ջահելները ունեն գթառատ սիրտ. բայց միթե դու ջահել էիր. դու հասած էիր՝ և այն էլ շատ զզվելի կերպով, որ առաջին պատահող ամուսնու գիրկն ընկար...

Այո, մենք հետո բարեկամացանք, գուցե դու հետո ինձ սիրեցիր, բայց այդ օրվանից ես քեզ սկսեցի ատել և հայհոյել. դու հետո ինձ սիրում էիր ոչ մաքուր կերպով, այլ ֆիզիկապես... Ես զզվում էի քեզնից. բայց և անդիմադրելի կերպով սիրում էի. ախ, ամբողջ 13 տարի դու նստել ես ու բռնել իմ ողջ, ողջ ուղեղը, հոգին և սրբապղծել իմ ողջ երկինքը... Դու ինձ արնաքամ արիր, գուցե ակամա, դու սպանեցիր իմ տաղանդը, դու ինձ մղեցիր ամենածանր,

դառն հուսահատության, երբ ես ամբողջապես թաթախված ինքնասպանության ծանր մտքերով, հանկարծ սթափվեցի— ինձ դուրս կանչեց ժողովուրդը, հեղափոխությունը, իմ ջախջախված գենին-ես տեսա իմ աչքում բոլոր իլյուզիաները ցրված, վարագույրները բացված և քեզ՝ որպես ամենավատ կինը բոլոր կանանցից... և քեզ հայհոյեցի աշխարհքի ամենածանր հայհոյանքով, որ իմ կյանքում մի անգամ եմ ասել, և այն էլ քեզ, իմ հոգուն, իմ իդյալին. այժմ մազերս փետռնում են և ամաչում եմ, և սոսկում եմ այդ հայհոյանքից... Եվ այն օրից, երբ գրեցի...

Ծուշիկ, ատելի, սիրելի Ծուշիկ, ուրիշ կերպ ես չէի կարող վարվել. ես պիտի քեզ անպատվեի, վայր գցեի, որ կարողանայի ազատվել այդ հրեշային սիրուց, որ ինձ ծծեց, կամ սպանեի ինձ. սպանել չուզեցա, որովհետև բնությունը իմ մեջ շատ է կյանք և կյանքի ուժ ու սեր դրել, բայց հայհոյել կարողացա. իհարկե, ավելի լավ էր մեռնեի, քան հասնեի այն օրին, որ իմ դարեր, դարեր պաշտած երազը սրբապղծեի, ոտաց տակ տայի... Բայց այս բոլորի միայնակ մեղավորը դու ես:

Այժմ ինչ եմ ուզում ասել ես. խոսքս հետ չեմ առնում, բայց այդ հայհոյանքով էլ չբժշկվեցի ես. դու մի սոսկավիթխար վերք բացիր հոգուս մեջ, լայնաբերան, դու որդ դարձար իմ վերքի մեջ, և ոչ մի երկրային ու երկնային դեղով դա չի բժշկվի... Այժմ դառնաս իմ կինը— ես իսկույն կըփախնեմ քեզնից. դառնաս հին Ծուշիկը՝ ես կսպանեմ ինձ՝ չտեսնելու համար տանջանքների այն ծանր շղթան, որ տարիներ ի վեր ինձ կաշկանդեց...

Բայց լալիս եմ հիմա, և սրտիցս արյուն է կաթում. գնա, Ծուշիկ, Աստված քեզ հետ, ապրիր քու երեխաների համար. ինձ մի անիծիր. իմ անունս երբեք, երբեք մի հիշիր և ոչ մի տեղ, և ոչ մի տեղ, ոչ մի մարդու մոտ. աղաչում եմ քեզ, ինձ թաղիր քեզ համար հավիտյան, ինձ երբեք մի նայիր. ազնիվ խոսք տուր այդպես վարվելու. ես թող բոլորովին չեղած, չծնված մարդ լինեմ քեզ համար. հոգիս խոստում է, երբ մտածում եմ, որ երբեմն դու կմտաբերես ինձ. պետք չէ հիշել այն տաճարում մի ուրիշ Աստծու անուն, որին այդ տաճարը չի պաշտում, չի (հնազանդվում), չպետք է այդ

տաճարում ուրիշ ձոնի սեղան ու պատկեր դրվի. քու հոգու տաճարից թող ես լինեմ դուրս՝ ես՝ օտար, չճանաչված Աստված եմ այդտեղ:

ԱՂԱՉՈՒՄ ԵՄ ՔԵԶ...
ԵՍ ԷԼ ԿՎԱՐՎԵՄ ՔԵԶ ՀԵՏ ԱՅԴՊԵՍ:
ԴՈՒ ԻՆՁ ՀԱՄԱՐ ՄԵՌԱՐ, ՄԵՌԱՐ...
ԱՐՏԱՍՎԵԼՈՎ ՀԱՄԲՈՒՐՈՒՄ ԵՄ ՔՈՒ ԳԵՐԵԶՄԱՆԸ
ԵՎ ՃԱՄՓԱ ԸՆԿՆՈՒՄ
ՆՈՐ ԱՍՏՎԱԾ ԳՏՆԵԼՈՒ...

ԱՎԵՏԻՔ

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԸ՝ ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

Վարպետի այս նամակներն ուղղված են Շուշանիկ Մատակյանի քրոջը՝ Աննա Մատակյանին (1886—1962)

1905, հունվարի 17, գիշերը

Այն բոլորը, ինչ երեկ ծագեց մեր մեջ, դա բխում է նրանից, որ մենք ապրում ենք զսպված դրության մեջ, և հնարավորություն չունենք իրար առաջ մեր հոգիները բանալու. իմ հոգին ձգտում է քեզ, ինչպես արտուտն է ձգտում դեպի արևը.— բայց դու հեռու ես ինձնից, ամպերի տակ ես. ես ուզում եմ ասել շատ բան, ասել և լսել քեզնից, բայց միջոց չկա. քու նամակներդ որոշ բան չեն ասում— հոգուս պահանջները չեն լրացնում. անսասան հավատ չեն ներշնչում իմ մեջ դեպի քեզ— քանի որ գրածդ նամակները ինձ չես տալիս. և առհասարակ այն տպավորությունը ունիմ, որ ես քեզ համար ամենամոտիկ մարդը չեմ, այնինչ՝ ես կուզեի, որ դու իմ հոգում ապրեիր, որպես մի շքեղ և սուրբ երազ. և ես էլ քու հոգում ապրեի, որպես մի սուրբ ու շքեղ երազ. իրար այնպես սիրեինք, որ մեռնեինք ուրախությամբ իրար համար.— բայց դու-դու գրում ես նամակներիդ մեջ, որ դեռ ինձ չես ճանաչում... և ուրիշ անհավատ խոսքեր, որոնք արյունոտում են սիրտս: Եվ ասա, խնդրեմ,

թանկագին Անանիկ, միթե կվիրավորվեն մեկից այնպես շուտ և այնպես շուտ վճիռ կարձակեն, ինչպես երեկոյան՝ գրածիդ մեջ. «Թողնենք իրար, եթե ուզում ես թողնենք». այդպես շուտ վիրավորվել ու հեռանալ այն մեկից, որին անմահ սիրում ես, անքակտելի հավատում ես— տեսնում եմ, որ քու վերաբերմունքը դեպի ինձ ջղերիդ վերա է հիմնված և այսօր—էգուց կարող ես ինձ երեսի վերա գցել ու հեռանալ. ես սիրտ չունեմ դիմանալու. և կարծում եմ, որ քեզ համար էլ դա դուրեկան չի լինի...

Եվ դու այնքան հպարտ ես, որ մի օրից մի օր վստահորեն և վճռականորեն չասացիր ինձ, որ քեզ ինչ էլ որ լինի՝ թեկուզ աշխարհ քանդվի՝ սիրում եմ և սիրում. և այդ սիրո համար զոհ կբերեմ և երրորդություն, և քույրեր, և նույնիսկ մայր... Բայց չէ որ ես քեզ այդպես եմ սիրում՝ պատրաստակամ՝ զոհաբերելու ամեն ինչ և կյանքս նույնիսկ... Բայց դու կարող ես այդպես վարվել, նույն տեսակ պատասխանել իմ սիրուն. դու լավ գիտցիր, որ սիրո գինը ուրիշ ոչինչ է, ոչ հարստություն, ոչ համբավ, ոչ ընտանիք ու ծնողներ, այլ միայն սեր.— սիրո գինը սերն է. սիրով միայն սեր կառնեն...

Հազար անգամ քեզ ասել եմ, որ քեզ սիրում եմ և շատ ու մեծ սիրում, բայց դու խրատներ ես տալիս ինձ. իսկույն նեղանում ես, խռովում ես, և քիչ է մնում, որ ոտաց տակ տաս սեր և ամեն մի բարձր զգացմունք...

Ես գիտեմ, որ դու ջղային ես— շատ նուրբ ու հիվանդ ջղերով. գիտեմ, որ երեկ ես անզգուշաբար խաղացի ջղերիդ հետ.— բայց դու էլ դատարկ բանից ահագին բան ես շինում, կարծես թե իրար չենք ճանաչում, իզուր սիրտ ես կոտրում...

Եվ եթե վիրավորվեցիր, խնդրում եմ, անպատճառ նեռես. միթե ես ընդունակ եմ քեզ տանջելու, իմ գերագույն ցանկությունս է— քեզ սիրել, գուրգուրել և ուրախություն պատճառել, որքան կարելի է շատ...

Քո՝ ԱՎԵՏԻՔ

Իմացած եղիր, որ Արիստակեսին, Գեղամին և Շուշիկին նամակներ եմ գրել, որ չխանգարեն մեզ. և նույնիսկ նպաս-

տեն մեր բարեկամության հարատևությանը՝ որքան կարող են իրենք:

Քո՝ ԱՎԵՏԻՔ:

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հունվարի 19—20

Երեկվա օրը ես այնքան տանջվեցի, որ հոգիս քամվեց. խորապես զգում եմ, որ քեզ շատ և շատ սիրում եմ. և այս սիրուց շատ եմ վախենում, վախենում եմ, որ վերջնականապես չջարդվի սիրտս և նորա հետ հույսերս ու մնացած երազներս. այնպես ջարդվի, որ դիակ դառնամ ու չկարողանամ մի բան անել. և դրա պատճառը քու տարօրինակ վարմունքն է ինձ հետ— ինչու ես լուռ, ինչ ես ուզում ասել. այդ ինչ ահավոր լռություն է քու հոգում, ես վախենում եմ. ինձ թվում է, որ դու մի րոպեի մեջ կարող ես փշրել սիրտս ու գնալ քեզ արդար համարելով. անցյալ օրվա լռությունդ— ամենասոսկալի բանն է լռությունը. դա ծովի հատակ է, դա անդունդի խորություն է. միգուցե կուզես հեռանալ ինձանից— ես այդ խստությունը չեմ կարող տանել. բայց մնալ ինձ հոգեկից, մտերիմ միթե կարող ես. դու ինձ կարոտից կմաշես. դու պահանջում ես՝ որ ես մեռցնեմ իմ մեջ սեր, կարոտ երազանք... ախ, ինչեր ես ասում. երբ պիտի քեզ հետ երկար-երկար դարեր խոսեմ. տեսնեմ հոգուդ հորիզոնները, զգամ քեզ... ես այնպես լալ եմ ուզում, և դու երեկ ինձ լացացրիր... սիրտս վիրավոր աղավնու պես թրլպրլտում է՝ դու վախեցրիր ինձ... իսկ ամբողջ օրը բոլորովին չերևացիր. ախր ինչու այդպես ես վարվում, դու չգիտես, որ քեզ անսահման սիրում եմ, որ յուրաքանչյուր խոսքդ ազդում է հոգուս վրա, և ամեն մի ամենաչնչին սառնությունը ինձ հուսահատեցնում...

Աննիկ ջան, հավատա, որ ես կաշի չունեմ և ջղերիս բերանը բաց է. մի դիպչիր նույնիսկ ամենամեղմ շնչով. շատ դառնապես եմ զգում և շատ զուլում տուժում եմ:

Դու կարող ես ինձ ոգևորել, հույս ներշնչել, եռանդ— և ես շատ պետքական մարդ կդառնամ, իսկ եթե ինձ թողնես... ես շատ պիտի քաշքշվիմ ու գլուխս կորցնեմ և գուցե հավիտյան կորցնեմ...

Չգիտեմ ինչ եմ գրում. բայց սրտիցս արյուն է գնում և սիրտս մարում է. Ինչու ամենաուժեղ կերպով չհավատանք իրար. ինչու հավատի անսահման, կապույտ, անամպ ու ջինջ երկինքը չլինի մեր մեջ...

Էհ, վերջացնեմ նամակս. զգում եմ, որ սիրտս չեմ կարող բանալ, արտահայտել. հնար լինի դնեի այս նամակի մեջ և դրկեի քեզ. և տեսնեիր, և լայիր, և հավատայիր, և սիրեիր... Զգում եմ, որ քեզանից չեմ կարող զրկվել...

Վերք կա իմ մեջ, խոր, լայնաբերան, և էլի չի գոցվում, և էլի արյունս ծորում է, թափվում է, դու չես տեսնում դա, չես զգում... բայց կարող ես, և չես ուզում նա բուժել. գուրգուրել ինձ...

19 հունվարի **Քո՝ ԱՎԵՏԻՔ**

Աննիկ ջան, երեկ էլ քեզ չտեսա՝ ինչքան կուզեի տեսնել, երևում է, որ դու խույս ես տալիս ինձանից. չեմ կարող հավատալ այդ անգութ մտքին. Աննիկ, ի սեր աստծու— լավ մտածիր...

Հիմա Երևան եմ գնում. մի 4—5 օր կուշանամ, բայց վերադարձիս աշխատիր ինձ տեսնել. աղաչում եմ:

20 հունվարի **Քո՝ ԱՎԵՏԻՔ**

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905 փետրվարի 29, ԹԻՖԼԻԶ

Սիրելի Աննիկ. գտնվում եմ նույն սենյակում և նույն գրասեղանի առաջ, Թումանյանի տանը, և ուզում եմ քեզ գրել, խոսել հետդ, բայց զգում եմ, որ այն նախկին հավատով լի,

առողջ զգացմունքը չի տաքացնում սիրտս դեպի քեզ, ինչպես այն ժամանակ:

Աստված թող դատե այն չար մարդկանց, որոնք ընկան մեր սրտերի միջև և խավար ու ցուրտ տարածեցին մեր մեջ. բայց այլևս չեմ կարող համբերել ես. այսուհետև ով որ վրատահանա մի դառն խոսք ասելու մեր մասին. ով որ իրավունք համարե մեզ իրարուց բաժանելու— ես կվարվեմ իմ ամեն քաջությամբ ու կատաղությամբ, չպետք է թողնել մարդկանց, որոնք վատ են ու չար, ու նախանձոտ, ղեկավարելու մեր սիրտը, և Ձերոնք այդպիսի մարդիկ են: Որքան էլ որ քեզ սիրեմ ու քու խաթրը պահեմ. բայց չեմ կարող ներել Ձերոնց, մանավանդ Տերտերյանին. այդ ինչ վարմունք էր, որ նա ցույց տվեց. ես չեմ կարող իմ զայրույթս ու զզվանքս չմիացնել դեպի նա, և ինչ գնով էլ որ լինի՝ ես պիտի նրան գրեմ, այնպես գրեմ, որ ինքը իրենից զզվի ու ամաչի. բայց ինչու եմ գրում այս քեզ— չգիտեմ, եղիր ներողամիտ:

Անցյալ անգամվա խոսակցության միջոցին դու մի քանի խոսքեր ասիր, որ ինձ համար անսպասելի էին. չէի կարող հավատալ, որ այդպիսի տգեղ մտքեր կան քու գլխում. բայց դա քու հոգուց չէ. այլ քու շրջանի մտքերն է:

Ախ, երբ պիտի լինի, որ մենք միառժամանակ ազատ, բոլորովին ազատ լինենք, իրար հետ. և խոսենք, լավ հասկանանք իրար. իհարկե, ինձ հեշտ է հասկանալը. որովհետև ես ասում եմ զգացածս, բայց դու՝ լուռ ու համր ես, և ծածկամիտ, մի բան, որ ինձ շատ է վիրավորում, ախր ես քեզ էն գլխից խնդրեցի, որ ինձ հետ միանգամայն անկեղծ լինես. բայց դու մանավանդ դեպի ինձ դեռ ծածուկ ես ու գաղտնապահ ու սակավախոս. դու ինձ սիրում ես— ես չեմ կասկածում դրա մեջ, ասենք, որ և հավատում ես. բայց ինչու, ինչու սիրտդ չես բանում իմ սրտի առաջ. միթե չգիտես, որ քու սրտից բխածը գետին չի թափվի, այլ ուղղակի իմ սրտի մեջ. մեր սրտերը՝ իրար հետ կապվող ծովերի պես պիտի լինին՝ իրար հետ միշտ խառնված ու հաղորդված. ինչ է սերը և բարեկամությունը. դրան պատասխանում է Սոկրատես փիլիսոփան «մի հոգի երկու մարմնի մեջ»: Ուրեմն ես ու դու մի հոգի ու մի սիրտ պիտի լինենք. հասկացար:

Ես շուտով կդառնամ. մի կարևոր գործի համար եկա Թիֆլիզ. տուն գալուց համարյա անմիջապես հետո կգնամ մեր գեղը— մի փոքր պարապելու. այնպես որ աշխատիր ինձ տեսնել. ինձ գրած բոլոր նամակներդ հետդ կբերես. և մի քանի կտոր գիրք— բաներ կան՝ կտանես, կկարդաս:

Հուսով եմ, որ այդպես կվարվես, որովհետև մինչև Զատիկ էլ չենք պատահելու. գրածդ նամակները կամաց-կամաց կկարդամ և կմխիթարվեմ. Ախ, ինչ կլինի հիշատակարանդ տաս. դա հո ինձ շատ կուրախացնի և այնպես կզգամ, թե քեզ հետ եմ, մոտս ես, ինձնից բաժան չես. թե չէ առանց քեզ՝ կարոտից շատ կտանջվեմ. հոգուդ մեռնիմ, Աննիկ ջան, Հիշատակարանդ ու նամակներդ անպատճառ բերես:

29 փետրվ. **Բարևներով՝**
ԹԻՖԼԻԶ **Քո՝ ԱՎԵՏԻՔ**

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 5, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Արդեն վերջին նամակդ շատ վիրավորական էր, դու թույլ էիր տվել ինձ մեղադրելու և ձերոնց սրբացնելու. այդ ես տարա, բայց ինչով բացատրել քո լռությունը, նույնիսկ հասարակ քաղաքավարությունը պահանջում էր հարգել մարդուն և նամակին պատասխանել՝ բայց դու՝ ինչ-որ ոչ գեղեցիկ նպատակներով, անպատասխան ես թողնում այն մարդուն, որին հավատացնում ես, թե սիրում ես...

Աննիկ, ես սիրտ չունեմ, ինձ հետ մի խաղա. արդեն մեր միջև եղած սերը թունավորված է. դու ամբողջ վեց ամիս ինձ տանջել ես՝ ձերոնց խոսքը ամեն բանից գերադասելով. դու լավ գիտես, որ ձերոնք ինձ չեն սիրում, և ես էլ նրանց. բայց ես չեմ մեղադրում քո մորը, քույրերին, փեսաներին ու քեռիներին և այդ տեսակ ապրանքներին, որոնցից ես շատ բարձր եմ, այլ մեղադրում եմ քեզ, որ մեր եր-

կար ու բարակ բացատրություններից հետո դու չգնահատեցիր ինձ. ես խորապես վիրավորված եմ քեզնից և ինչ էլ որ լինի,— խզում եմ մեր մեջ եղած ամեն մի կապ.— դու ընդունակ չես բարձր ընկերակցության, և այն աղջիկը, որ ինձ չի հասկանում ու հավատում, վերջ ի վերջո արժանի է իմ արհամարհանքին:

Դու արդեն չափազանց մեղավոր ես, որ երկդիմի դիրք ես բռնել. ես պահանջում եմ— ի սեր ինձ զոհիր ձերոնց. և դու դրան ընդունակ չես. այլևս ոչ մի բացատրություն հարկավոր չէ. և այլևս ոչ մի նամակ մի գրիր, հարկավոր չէ: Անիծում եմ ինձ, որ նորից ձեր դուռը եկա և արյունվելով՝ ետ եմ դառնում: Ներողություն, որ քեզ վշտացրի. մնաս բարև:

5 ապրիլի **Ա. ԻՍԱՀԱԿՅԱՆ**
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 7, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Երեկվա գրած նամակներս շատ խիստ էին, և այսօր խիղճս չարաչար տանջվում է, և եթե վաղը Երևան գնալու չլինեի՝ կգայի Թիֆլիզ.— Բայց դու մտիր իմ դրության մեջ, Անիկ, անշուշտ դու ինձ սիրում ես, բայց շատ, զոհաբերության աստիճանի չես սիրում իսկ ես այդպիսի սեր եմ պահանջում, որովհետև այդպիսի սեր ունիմ դեպի քեզ. և սիրո գինը սերն է. իսկ դու պոլիտիկա ես բանեցնում. մի բան, որ հոգում չկա. ինձ բոլորովին դուր չի գալիս, ես աղաչում եմ, որ դու լինես ինձի պես— պարզ, կովարար, անհամբեր, զայրացկոտ և ոչ խորամանկ, ես պահանջում եմ, որ եթե ինձ սիրում ես,— ոտքդ ամուր խփիր բոլորի առաջ, մոր, քրոջ, փեսայի և քեռու, և ասա, որ սիրում եմ, որ ձեր գործը չէ խառնվել իմ սրտի մեջ. իմ մոտ իմ սիրածի մասին ոչ մի խոսք՝ ոչ լավ, ոչ վատ. բայց դու ինձ չպաշտպանես և

թույլ չտաս ինքս ինձ պաշտպանելու. խոստովանիր՝ միթե քու խաթեր համար ես չեմ լռել մինչև այժմ, որ չեմ պատասխանել Տերտերյանին, Տեր-Միրաքյանին, մեծ քեռուդ և մյուս տիրացուներին, որոնք ամեն կերպ աշխատում են քո հավատը թունավորել դեպի ինձ. չէ որ ես այնպիսի անզուսպ և մրրկալից հոգի եմ, որ բոլորին ջարդ ու փշուր կանեմ և չեմ թողնի նույնիսկ ստվերիս վերա մրթմրթան. և եթե նրանք քաջ են ու անվախ՝ թող դուրս գան և երեսիս ասեն իմ պակասությունները, բայց նրանք այնքան ստոր են, որ գաղտնի, չորս պատերի մեջ են կռվում իմ հասցեով. ես արհամարհում եմ այդ խավար մարդկանց, բայց քեզ չեմ ներում, որ դու բացարձակ չես դնում հարցը և նրանց լռեցնում. եթե ես քո սերն եմ, քո իդեալը՝ թող այդ պարզ լինի աշխարհի և աստծու առաջ, և դու ասա, որոշ և հրամայողական, և բոլորը կլռեն. բայց դու ես տեղիք տալիս, որ նրանք հանդգնում են ոտնձգություններ անել մեր սիրո մեջ, մեր սիրո դեմ: Ես չեմ համակրում այն բոլոր խորամանկ միջոցները, որ դու ես գործ դնում, որ ապրելով քրոջ մոտ, ինձ չես ուզում նամակ գրել, որ լսելով մորդ՝ արգելում ես ինձ՝ Թիֆլիզ գալուս քեզ տեսնել. և ինձ մահացու մեղք գործող ես համարում, որ ձերոնց չեմ սիրում, և ստիպում ես ինձ հարգել ինձ հալածողներին. և առհասարակ, որ դու նրանց հնազանդվում ես՝ այնինչ դու պիտի հնազանդվես միայն քո սիրուն և իմ սիրուն. և քանի որ դու չես վարվում վերջին տեսակով, ուրեմն քո մեջ սերը զորեղ չէ. միահեծան, անխորտակելի չէ և ուր մնաց, որ աստվածային լինի. իսկ ես ուզում եմ տիեզերական, անհուն սեր, որ ամբողջ տիեզերքի և միլիոնավոր մարդկանց մեջ միայն ինձ վերա հենվեր, ինձ հավատար և ապրեր ու մեռներ հանուն ինձ, և քանի որ դրա համար ուժ չունես, դու չես կարող իմ երկինքը տեսնել և իմ հոգում սավառնել, և եթե ես խզում եմ իմ կապերը քեզ հետ՝ իրավունք ունիմ և տրամաբանական եմ վարվում, թեև դա անգթություն է իմ կողմից և ոչ քնքշություն, բայց անպայման՝ անկեղծություն և ազնվություն. որ եթե հիմա պիտի լաս, բայց հետո շնորհակալ կլինես:

Այժմ ես քու առաջ այս ու միակ ելքն եմ դնում— եթե

դու ինձ սիրում ես, եթե ես քեզ համար անգին եմ ու անփոխարինելի և քու իդեալն եմ, եթե ես քեզ համար բարձր եմ և մորից, և քույրերից, և փեսաներից, այն ժամանակ դու հայտնիր ձերոնց այդ— քո սերը, և այն ժամանակ դու կլինես իմ հոգու թագավորության թագուհին. իմ հպարտությունը, իմ կյանքի գեղեցկությունը, և արբությունը, և պոեզիան, և արևը. այն ժամանակ ես քեզ համար կլինեմ քո պահապան հրեշտակը. քո անձնվեր, քո անձնազոհ ոգին՝ միշտ հավատարիմ, միշտ անդավաճան և միշտ աստվածային. սա ոչ թե պայման եմ դնում, այլ պահանջ՝ իմ սիրո պահանջը. սիրո գինը սերն է. և իմ սերը այդպիսի գին է պահանջում, ընդունակ ես այդ գինը տալու— մենք ընկերներ կմնանք ամենավեհ մտքով հասկացած՝ (ամուսնության մասին ոչ մի խոսք) ուր էլ որ լինենք, ինչ էլ որ լինենք, բայց եթե այդպիսի խորություն չունիս, այն ժամանակ ես ոչ մի ցանկություն չունիմ քեզ հետ կոմեդիա խաղալու. դատարկ նամակներ գրելու. և թույլ, հասարակ, սովորական կապերով կապվելուն ես կարող եմ սիրելու՝ մահից զորեղ սիրով, և եթե չեմ գտնում այդպիսի մի սիրտ,— ես իմ սերս վերքի պես կպահեմ հոգումս և կընկնեմ թափառելու, մի թող ինձ թափառելու, սիրիր ինձ աստվածներին վայել սիրով, պահիր ինձ քո հոգում, իմ լավ Աննիկ, և մղիր ինձ դեպի ճշմարտություն, դեպի բարձունքները, դեպի կատարելություն:

Սպասում եմ դրական պատասխանիդ, եթե բացասական, մերժողական ես պատասխանելու՝ մի պատասխանիր, լռությունը ավելի լավ է, քան անզգացմունք, անսեր տողեր...

7 ապրիլի, 1905 **ԱՎԵՏԻՔ**
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, ապրիլի 14, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Ես միայն երեկ երեկոյան դարձա Երևանից, Էջմիածնից և ստացա քո նամակը. ցավում եմ խորապես, որ վշտացրել

եմ քեզ, բայց և ուրախ եմ, որ դրանով շատ բան կպարզվի մեր մեջ. առհասարակ. ես կովով, զոռով եմ քո բերնից խոստովանքներ լսել, ասա, սիրելիս, ասա, իմ հոգուս հոգի, ասա ինձ, ինչ որ զգում եմ թող լեզուդ— սիրտդ միայն բաց լինի իմ առաջ. ուրիշների մոտ կեղծիր, ստիր, բայց իմ առաջ եղիր ծով՝ բացարձակ. աշխարհում ես եմ քեզ հարկավոր, ուրիշ մարդիկ դաւոարկ բաներ են. ամենից առաջ ես, հետո՝ ուրիշները:

Ես վաղը երեկո կգամ Թիֆլիզ. այնպես որ շաբաթ օրը կլինեմ այդտեղ. ուր քեզ տեսնեմ. եկ Дворцовая ул., այդ տեղերը, դումայի մոտերը, Սակաձեի կաֆեի մոտերը, թե չէ կուգամ քեզ մոտ, այդտեղ կպարզվինք, կբացատրվինք, և Քրիստոսի հարությանն հետ հարություն կառնի և մեր սերը. ես հավատում եմ դրան:

14 ապրիլի, 1905 **Քո՝ ԱՎԵՏԻՔ**
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, մայիսի 7, ԱԽԱԼՑԽԱ

Անհիկ ջան, երազի պես են թվում ինձ մեր Թիֆլիզում անցկացրած օրերը— բայց ծանր և ճնշող երազ. մտքիցս չի հեռանում քու խիստ հայացքը, կախած ունքերդ ու երկարացրած քիթդ— ինչ-որ հարցական նշանի էին նման. և ես չէի հասկանում քեզ, և հիմա էլ չեմ հասկանում. իսկապես ինչ կուզես ասել. այն, ինչ որ ասում ես— շատ են անորոշ, մշուշային և փոփոխական. հոգիս շատ էր վրդովված և վիրավորված դեպի քեզ, որ դու չէիր բացվում ու փովում ու փայլում և շառաչում ծովի պես իմ հոգու առաջ՝ ինչպես արևի առաջ. դու վախենում ես ինձնից. դու քաշվում ես ինձնից, մի ինչ-որ անգիտակից կասկած կա մեջդ դեպի ինձ. մի անհավատ զգացմունք.— այս այնպես էր ինձ վրդովում, որ ես ուզում էի այսպես կամ այնպես վերջացնել մեր մեջ

այս անորոշությունը. կամ իրար մոտ, կամ հավիտյան բաժան. և ես դրա համար շատ տեղիքներ տվեցի քեզ, առաջարկեցի քանի-քանի անգամ նշանվել. դու և ընդունեցիր, և մերժեցիր. բայց վերջը մերժեցիր. և ես աշխատում էի գոհունակություններ անել— ծաղրել սեր, բարեկամություն, սիրտ, զգացմունք, որ դու երես դարձնեիր ինձնից, ինձ աչքիցդ գցեիր. հիասթափվեիր ինձնց, որ բաժանման դեպքում վիշտ, վերք չմնար սրտումդ... Չգիտեմ, դա հաջողվեց ինձ, թե ոչ...

Բայց ես էլ չեմ կարող քեզ հետ այդպես վարվել. գոհունիկ վարվել. այդ դիմակը ինձ չի սազում. և պետք է լինեմ ինչպես որ կամ. և ինչ լինում է, ինչ պիտի դուրս գա, թող լինի, թող դուրս գա. վայ թե շատ վնասվինք. կրակի հետ չի կարելի խաղալ...

Ուղիղն ասած՝ իմ հոգու խորքում ես դեպի քեզ մի շատ քնքուշ, մի շատ մանկական ու կապույտ՝ երկնագույն զգացմունք ունեմ՝ միշտ, մշտավառ, և կուզեի այդ տներ՝ առանց փոխվելու. կուզեի քեզ սիրել՝ առանց տիրապետելու, առանց այս աշխարհի մասից ունենալու. պարզ ասած՝ կուզեի քեզ միշտ սիրել՝ և չամուսնանալ հետդ, բայց և զգում եմ, որ սա անխղճություն կլինի իմ կողմից. մարդիկ ուրիշ կերպ կբացատրեն և կյանքում կտուժես՝ իմ պատճառով, չարաչար. ես ինքս չգիտեմ՝ ինչ եմ անելու. թողնում եմ քո վճռին. արա՝ ոնց որ ուզում ես— մեղքը քու վիզդ— կուզես կամուսնանանք, կուզես՝ չէ. կուզես բաժանվինք... ես կարող եմ ժամանակով վերքերս բժշկել. բայց դու... շատ եմ վախենում... լավ խորհիր: ասված է վկա, ես քեզ խաբելու ոչ մի միտք չունեմ. քեզ սիրում եմ և կուզեմ քեզ լավ և բախտավոր տեսնել:

Նամակս վերջացնում եմ. շատ ուշ գիշեր է և շատ հոգնած եմ. դեռևս մի քանի օր կմնամ այստեղ. բայց գնալու եմ Աբասթուման. հուսով եմ, որ վերադարձիս քեզ Թիֆլիզ կտեսնեմ՝ ավելի որոշ, հանգիստ, ուրախ և մեղմ.— շատ ես խիստ ու չոր, շատ ես փիլիսոփայություն անում, շատ ես գլխիդ զոռ տալիս. և չես լսում սրտիդ ձայնին, որ ավելի խելոք և առողջ՝ քան զանազան երևակայական վեպերով տանջված ուղեղդ. սա չեմ գրում քեզ վիրավորելու համար,

այլ արտանց ցավում եմ. դու դեռ պիտի բժշկվես. դու առաջ պիտի մի լավ բժշկվիս ջղերովդ, հոգովդ և ֆիզիկապես. քիչ կարդաս, շատ ուտես, շատ շրջես. հանգիստ քնես, լողանաս և ուրախ անցկացնես:

Բարի գիշեր. համբուրում եմ սիրելի Աննիկիս ձեռքերը.

7 մայիսի, 1905 **Քո՝ ԱՎԵՏԻՔ**
ԱԽԱԼՑԽԱ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, մայիսի 15, ԱԽԱԼՑԽԱ

Ամենասիրելի Աննիկ ջան,

Եթե գիտենայի, թե երկար մնալու եմ այստեղ՝ հասցե կտայի ու կ՝գրեիր. այնպես լավ կարոտցել եմ քեզ. մի երկու օրից հետո կվերադառնամ: Իսկ անգին, իմ պայծառ Աննիկ ջան, իմ ընկեր, իմ մաքուր սեր— ասա, ինչ որ կուզես՝ ես կատարեմ քեզ համար. ամենաղժվարին բաները, անկարելի բաները. մեռնել քու երազների համար. դու իմ շքեղ, իմ զուլալ երազ... Եղիր միշտ այդպես լավ, այդպես մաքուր, այդպես կուսական. թող ոչ ոքի շունչը չդիպչի քեզ, ոչ ոքի ձեռքը չհասնի քեզ— և իմ, և իմ, դու երկինք եղիր իմ հոգու համար՝ ձգտեմ, թռնեմ քեզ և մեռնեմ քու կապույտ, քու լազուր, քու ջինջ հոգում: Սիրիր ինձ, քու անձնվեր Ավետիքին:

15 մայիս, 05 թ., ԱԽԱԼՑԽԱ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հունիսի 25, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Սիրելի Աննիկ ջան, այսօր որոշել էի գալ այդտեղ, թե գործ կար և թե քեզ տեսնելու. բայց եղան հանգամանքներ, որ արգելք հանդիսացան. սակայն անպատճառ գալու եմ

մյուս շաբթու՝ ինչ էլ որ լինի. շատ կարոտել եմ քեզ. մտածում եմ, եթե մենք իրար սիրում ենք, ինչու հեռու մնանք իրարից, կարոտով մնանք, տանջվինք, ինչու ավելի պայծառ, երջանիկ, զվարթ չապրել՝ երբ կարելի է. հավատա, հոգիս, որ այստեղ լինիս, ես ավելի եռանդով կգործեմ, իսկ հիմա մտածում եմ, ոնց անեմ, որ քովդ մի կերպ ինձ գցեմ... Հետո դու ինչ ժլատն ես նամակներ գրելու մեջ. ինչ կլինի, որ ամեն օր, գոնե օր մեջ գրես. նամակներով մարդու հոգին հանգստանում է, թե չէ շարունակ այն եմ մտածում, որ դու կամ հիվանդ ես, կամ շատ տխուր... Իմ տրամադրությունս շատ վատ է, ոչ գրել եմ կարողանում, ոչ կարդալ. ամբողջ օրը ոտքի վրա չլվում եմ դես, չլվում եմ դեն. երբ պիտի գա աշունը, որ հոգիս ազատեմ այստեղից՝ գնամ արտասահման կամ մի խաղաղ վանք. սիրտս հանգստություն է ուզում, արտասվել է ուզում, տխուր երգեր, և նույնիսկ մեռնել եմ ուզում: Ախ, Աննիկ ջան, լինեի մոտդ, գրկեի քեզ, լայի, համբուրեի և մեռնեի...

1905, 25 հունիս **Քո՝ ԱՎԵՏԻՔ**
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, հուլիսի 14, ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

Սիրելի Աննիկ, քանի օր է՝ ուզում էի նամակ գրել, բայց չէր հաջողվում. շաբաթ երեկո երեկույթ կար. մնացինք մինչև լույս, կիրակի և երկուշաբթի մինչև լույս՝ հարսանիք, իսկ այս երկու օրս էլ՝ քնհատ... Հիմա ուշ գիշերին նամակ եմ գրում, և հոգնած եմ, և քունս տանում է: Հոգնած եմ, և հոգով հոգնած. այս հարսանիքը ինձ մտածելու շատ նյութ տվեց և շատ տխուր եզրակացության հասա ամուսնությունը շատ ստոր, շատ խայտառակ հիմար, ամբոխամիտ բան է. երանի այն սրտերին, որ կարող են մաքուր սիրել, և

միշտ այդպես սիրել. սերը, որ մղում է դեպի ամուսնություն՝ դա վատ, անասնական սեր է. այն սերն է բարի ու վեհ, երբ մարդուն թոցնում է դեպի երկինք, ազնվացնում, կրթում է մարդու հոգին. ավելի լավ է հանգչի սերը դրսերում, ինքն իրեն, քան թե ամուսնության մեջ. դու շատ խելոք ես մտածում, որ չես ուզում ամուսնանալ, բայց այս էլ է պարզ՝ որ չես կարող չամուսնանալ. դու այնքան բուռն ես սիրում, որ կամա-ակամա պիտի ընկնես ամուսնության թակարդը: Կարող ես դու ինձ պահել բարձրության վրա և կուսական հեռավորության վրա— չթողնել, որ ընկնեմ, ընտանիքի մարդ չդառնամ, որ բացի իրեն բնից ուրիշ բանի մասին չի մտածում, որ նեղանում է և եսական դառնում. կարող ես հոգիս միշտ թարմ ու սավառնող պահել և թե պիտի կապես— կաշկանդես և փշրես թևերս. ախ, սիրիր ինձ, բայց մի տխրիր. անհագ որոնիր մի վեհ ընկերի, սիրիր, բայց սիրուն մի լինիր գերի. սիրիր, բայց և թող և նորից գնա... Երանի նրան, ով ձգտում է դեպի աստղերը, երանի նրան, ով սիրում է և չի հասնում, ով միշտ թափառում է ու չի գտնում... Աննիկ ջան, հոգի ջան, ես տեսնում եմ, որ հոգիս շատ է վիրավորված, և որ քեզ նույնպես շատ մեծ վիշտ պետք է պատճառե. մեր սերը թող լինի ոչ այս աշխարհից. հուլեղեն չլինի. սիրենք իրար հեռավոր աստղերի պես. իրարուց հեռու, իրար սրտի մեջ..

Մի աշխատիր ինձ տիրել. մեռցրու այդ նյութեղեն սերը, հոգով սիրիր, մտքով սիրիր... երազով սիրիր: Բայց հենց որ նյութով սիրես— կորած է ամեն ինչ, այլևս չի մնա քո Ավետիքը. կդառնամ աչքումդ մի հասարակ մառ. և ոչ կատես, ոչ կսիրես... Սիրիր ինձ, և հանուն այդ լավ սիրո թող ես թռնեմ, թափառեմ, առանձնանամ, մտածեմ, լամ, հոգի դառնամ... խեղճ, իմ խեղճ Աննիկ, կարծում եմ, որ չես կարող տանել այս— դու ուզում ես ինձ միշտ մոտդ ունենալ. չէ որ գրեցի քեզ. իրարուց հեռու, իրար սրտի մեջ... Միշտ երազ, միշտ իդեալ, միշտ երկինք լինենք իրար համար. հեռավոր, բարձր, լազուր, մաքուր... թող կորչի ամուսնությունը, ամուսնական ճահիճ-մահիճը... Մենք ծնված ենք ավելի բարձր բաների համար. զզվում եմ ամուսնությունից, գիտակցաբար այդպիսի քայլ երբեք չեմ անելու...

Ախ, հոգի ջան, չգիտեմ հիմա ինչ ես զգալու, երևի կանիծես, որ հարսանիք գնացի, ով գիտե, գուցե ժամանակով տրամադրությունս փոխվի, բայց այս օրերս՝ շատ եմ վատ. լալ եմ ուզում, անապատ գնալ,— վանք քաշվել, ճգնել ու լալ, և լալ...

Շարունակությունը գրում եմ առավոտյան.— ինչ ես անում, ոնց ես անցկացնում օրերդ. իմ գնալուց հետո քեֆդ ոնց է. ես դեռ անորոշ ժամանակով այստեղ եմ. գուցե գնամ Ախալքալաք. դեռ հայտնի չէ. այստեղ էլ մարդու կարիք կա, այնտեղ էլ, չգիտենք ուր հասնենք: Հարսանիքում ես և Հովհ. Տեր-Մարտիրոսյանը միասին կանգնած էինք. մայրիկդ եկավ նրան բարևեց, բայց ինձ չբարևեց. նույնպես վարվեց և Սանդուխտը... Վերաս շատ վատ ազդեց՝ եթե դու չլինեիր՝ կապտակեի նրանց... Նրանք թող պատիվ համարեն, որ ձեռքս բռնում են... Սպասում եմ նամակիդ:

14 հուլիս, 1905 **Քո՝ ԱՎԵՏԻՔ**
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

1905, օգոստոսի 4, ԱԽԱԼՔԱԼԱՔ

Սիրելի Աննիկ, ես նկատում եմ, որ դու ինձ թարս ես հասկանում, և չգիտեմ ինչպես վարվեմ քեզ հետ. աշխատում եմ ամեն կերպ լավ, անկեղծ և սիրով վերաբերվել քեզ հետ... Բայց դու, դու, որ հիվանդ ես ջղերովդ և կասկածամիտ, և չգիտեմ ինչ, ուրիշ տեսակ ես մեկնում. ինչպես հասկանալ քեզ, ինչպես վարվել քեզ հետ. սիրում ես ինձ.— սիրում ես, լավ գիտեմ, և այդ սերը պիտի քեզ բերե կամ ինձ մոտ— իմ գիրկը, մենք պիտի ամուսնանանք, կամ պիտի հեռացնե քեզ ինձնից՝ հոգիդ այրելով դառն վշտերով. ընտրիր երկուսից մեկը. իսկ ես տեսնում եմ, որ ոչ մեկը չես կարող ընտրել. ուրեմն ես ինչ անեմ... Եվ ես

քեզ բարիք և հանգստություն կամենալով՝ առաջարկում եմ ինձ մոռանալ. ինձ մոռացիր, որովհետև դու չես կարող կապվել ինձ հետ. ամուսնանալ դու ոչ կարող ես, ոչ էլ ուզում ես. իսկ ընկերական, մտերմական սեր, որը և ես եմ ուզում, և դու՝ դա չես կարող դու շարունակել՝ շնորհիվ քո ընտանեկան՝ քեզ շրջապատող պայմանների. դու ուզում ես միշտ մոտս լինել. ես քեզնից անբաժան լինեմ. չգամ հեռու կամ արտասահման. դա ինչ կնշանակե. դա կնշանակե՝ ուզում ես իմս լինես՝ հոգով և մարմնով, որոշիր, վճռիր. և վերջացած կլինեն թե քո տանջանքները և թե իմ. ուրիշ կերպ, ոչ մի կերպ. ես ազատ մարդ եմ. ես պիտի թռչեմ, պիտի գնամ. աշխարհից աշխարհ. իսկ քո հոգին պիտի դուրս գա, ուրիշ բան է, եթե դու ազատ և զորեղ կամք ունենայիր և ջղերով առողջ լինեիր... Այս խնդրի մասին մտածիր լուրջ և երկար:

Քեզ հեռագիր խփեցի, որովհետև տեսա, որ նամակներիս չես պատասխանում, վախեցա, թե հիվանդ ես, այնինչ դու վիրավորված ես երևում. վիրավորված ես իմ նամակներից. իմ առաջարկներից. ախ, Աննիկ ջան, ես ոնց անեմ. սկզբում դու էիր ասում, թե՝ ընկերներ լինենք, ընկերներ մնանք հավիտյան. և ես ասում էի՝ թե չի կարելի, հիմա նույնը ես եմ ասում— ընկերներ լինենք, դու վիրավորվում ես... Ուրեմն՝ վճռիր, նշանվինք, և վերջանա այս ձանձրալի դրությունը:

Ես ատում եմ ամուսնությունը, բայց քեզ հետ տանելի կլինի. և մանավանդ որ դու ինձ շատ ես սիրում. և որ ես չեմ ցանկանա ուրիշի սիրտը փշրել. Օ, ինչ պիտի լինի քո հոգեկան հալը՝ երբ որ ինձ ասես, իրավունք տաս, թե գնա, ում կուզենա առ, և ես էլ գնամ մի ուրիշին առնեմ, միթե դու չես խելագարվի...

Ես դեռ մի 15—20 օր կմնամ այս կողմերը, հետո կդառնամ տուն, դու ինձ մի որոշ, մի մեծ նամակ գրիր՝ տեսնենք ինչ ես մտածում. տրամադրությունդ ոնց է. դու ինչ ես ուզում, ինչ չես ուզում, գրիր տեսնենք. նամակս գրում եմ՝ շատ հիմար, շատ հոգնած տրամադրությամբ, հոգնել եմ այստեղից. գլուխս ուռել է աղմուկներից և գործերից. բայց հեռանալ չեմ կարող. մի քանի օր առաջ մի դեպք պատա-

հեց, քիչ մնաց սպանվեի՝ ինձ հետ և մի ուրիշ ընկեր. շրջապատվեցինք ավազակներով և սկսեցինք իրար վրա հրացան արձակել. նրանք շատ-շատ էին, իսկ մենք՝ երկուսս, բայց մեր դիրքը լավն էր, բարձր, բայց հանկարծ հասան մեր ընկերներից վեց հոգի՝ զինված, և փախան ավազակները, մի ավազակ ծանր վիրավորվեց և մնաց. բռնեցինք նրան. երեկ մեռավ նա: Իմ ձին՝ տակս, գնդակով սպանվեց... էլ բան չի պատահի, հիմա, որ դուրս գամ սարերը՝ շատվոր կլինենք.

Համբույրներով և բարևներով՝

4 օգոստոսի, 05 թ. **Քո՝ ԱՎԵՏԻՔ**
ԱԽԱԼՔԱԼԱՔ

ԱՆՆԱ ՄԱՏԱԿՅԱՆԻՆ

(1905)

Սարսափելի ծանրացած սրտով գրում եմ այս տողերը և Աստված է վկա, որ էլ չեմ գրելու. կասեմ, կարտահայտեմ, ինչ որ կա սրտիս մեջ դեպի քեզ (եթե ուզում ես)— կբաժանվենք:

Ով եմ ես.— ես վեհափառ սարերի արծիվ եմ, ես կայծակ եմ մռայլ ամպերի մեջ, ես առյուծ եմ անապատի մեջ, և փոթորիկ ծովերի վրա. իմ հոգին՝ տիեզերքի չափ մեծ՝ ամբողջապես բանաստեղծություն է. ես բանաստեղծ եմ. ժամանակի և ժողովրդի հոգու տերը ես եմ. ամեն ինչ կը-մեռնի՝ հարստություն, գանձ և գահ, բայց ես (կմնամ) անմահ եմ և որքան էլ իմ (ներկա) պայմաններս ծանր լինեն, ես գրանիտի պես կմնամ և ցույց կտամ իմ մարգարեական— բանաստեղծական անմահ հոգին. ես արեվի պես կայրվեմ ու լույս կտամ, ջերմություն կտամ. ես հավատում եմ իմ ուժերին, և ամբողջ հայ ժողովուրդը հավատում է ինձ. ով չէ ինձ հավատում: Ձեր շրջանը, որը իմ ստվերը չարժե. ով չէ ինձ հավատում— մայրդ՝ մի հին կին, որ իր շեմքից հեռու չի տեսնում, որ խորապես (վիրա-

վորում) է, որ ինձ Շուշիկի ժամանակ վռնդել են ու ծաղրել, իսկ հիմա կանգուն եմ աշտարակի պես. Տեր-Միրաքյան Հովհաննեսը— մի խեղճ մարդ, Կ. Կոստանյանը՝ մի մգլած, փթած տիրացու, որոնք իրենց երևակայում են, որոնց ժողովուրդը չի ճանաչում... Կ. Կոստանյանը— ինչպես կարող է նա հաշտ նայել իմ գոյությունը,— ես, որ նրա աչքում՝ նրա ասելով միայն չոբան կարող էի լինել, այժմ նա մնաց միայն (վանքի փշրանքների) վարդապետների աչքում համարում ունեցող, իսկ ես դառա մի մարդ, որին գիտեն, որով պարծենում են (և դու ինձ չես ճանաչում). և ես իմ բարձունքից իջել եմ քու մոտ, քեզ հետ համեստորեն ընկեր եմ դառել. համբերում եմ քու երեխայական մտքերին, պատասխանում եմ քու հարցերին... և դու այնպես ես վարվում ինձ հետ, կարծես մի հասարակ մարդ լինեմ, մի ուսանող լինեմ, որոնց հազարի կյանքը իմ մի օրը չարժե. այնինչ դու պետք է անսահման ուրախ լինեիր, ամենաերջանիկ մարդը (աշխարհքի վրա) բոլոր մարդկանց մեջ, որ ինձ գըտար,— դու պիտի գլուխդ բարձր բռնած— հպարտորեն շրջեիր մարդկանց մեջ, որ ինձ պես ընկեր ու սեր ունես. դու բոլորի առաջ՝ մրրիկների ու մարդերի առաջ պիտի պաշտպանեիր ինձ ու մեռնեիր ինձ համար... և ինձ տեսնելով, արևի պետքը չպիտի զգայիր դու, և ինձ կորցնելով՝ աշխարհը՝ կորցրած պիտի զգայիր քեզ... Բայց այս ամենից ոչինչ չկա, դու նա ես անում, լարում ես քու հիմար կապրիզները... որովհետև, որովհետև դու ինձ չես սիրում, և չես կարող սիրել. իսկական սիրո համար քու սիրտը շատ է մանր ու երեխայական, ծով չի տեղավորվի այնտեղ. և մի մոր, կամ մի սադայելի (?)հիմար խոսքը կարող է դատարկել սիրտդ սիրուց... Մենք հարմար չենք իրար. դու շուրջդ նայիր, և շատ կգտնես քեզ հարմարներ— ամեն տարի հարյուրավոր) տասնյակ ուսանողներ ամառը կուգան. որին բռնես՝ գոհ կլինես. ես քու երևակայած հերոսը չեմ, և ինձ պատիվ կբերե այդ, որ քեզ պես մի երեխա (յական), փոփոխամիտ սրտի իդեալը չեմ... Ավելի լավ...

Դու չար սիրտ ունես— Շուշիկի պես. նա ինձ անսահմանորեն տանջեց, բայց տարիներ հետո ներողություն խնդրեց ու զղջաց, բայց այն ժամանակ ես երես դարձրի նրա-

ցից՝ հայհոյելով նրա ներքին էությունը. ես խաղալիք չէի նրա ձեռքում. ես մարդ էի՝ ուժեղ և բարձր, իսկ նրա ամուսինը... Չարժե հիշել նրանց մասին, և հիմա էլ դու ճիշտ և ճիշտ նույն խաղն ես խաղում ինձ հետ. ինչ է, շատ ստորացա քեզ մոտ, որ խոստովանեցի, թե սիրում եմ. չէ որ միայն զորեղ սերը լեզու ունի, և սրտից թռնում է դուրս՝ ինչքան էլ ուզենաս ծածկել, և փոխանակ իմ ծովածավալ սերը պաշտելու և երկրպագելու ինձ, դու ջղային խաղ ես դարձնում մեր զգացմունքները, մի օր այսպես ես ասում, մի ուրիշ օր՝ այնպես. երբեմն մի ժամում մի քանի տեսակ. ես ժամանակ և համբերություն չունեմ այս սրտի խաղը տանելու. մի ժամանակը թանկ է, կյանքս օգտակար, և ինձ հարկավոր է հոգեկան, սրտի հանգստություն և մխիթարություն, իսկ դու՝ կատվի պես, որքան փիսո-փիսո եմ անում, դու այնքան ավելի ջղային ես դառնում ու անխնա ճանկռտում իմ սիրտը... Որքան համբերեմ. ինձ թվում է, որ իմ սիրելով դու երես առար, և հիմա ինձ բանի տեղ չես դնում. իմ սերը, իմ երազները... Այդ քո հասկացողությունից բարձր է և անմատչելի. քո մեջ իմ սիրո ոչ միայն մի հազարերորդը, այլև ստվերը չկա. դու չգիտես սիրել մարդու. քո սերը սուր է ու թույն է. դու կարող ես միայն մարդու ցավ ու վիշտ պատճառել, այնինչ սիրո հոգեբանությունը այն է, որ սիրածին որքան կարելի է շատ երջանկություն, գուրգուրանք ու գորով ցույց տալ. քո մեջ ոչ մի քնքշություն չկա... և ինչպես իմ կույր բախտն է, չար աստղս և դաժան ճակատագիրս, որ մի անգամ ճակատս պատռվեց ձեր անմարդասեր տան շեմքին, և տարիներ հետո, աշխարհներ անցնելուց հետո, հարյուրավոր խելացի և գեղեցիկ, և զարգացած աղջիկների տեսնելուց հետո, նորից եկա և ճակատը խփեցի ձեր նզովված դռանը. միթե որոշված է, որ ձեր տունը պիտի լինի իմ կորստյան պատճառը, իմ գերեզմանը. ոչ, ոչ. Ավետիքը չպիտի մեռնի. նրա կյանքը նպատակ ունի. նրա ամեն մի օրը մի ամբողջ կյանք է և բովանդակություն, և թող տանջվի նա ու տառապի, վերջը կհաղթանակե:

Ինչու եմ գրում այս տողերը քեզ. ով ես դու, ինձ ինչ կարող ես տալ. ինձ թվում էր, թե դու իմ իդեալը՝ կնոջ, մի քնքուշ ընկերի իդեալը կարող ես լինել... Բայց միթե այդ-

պես է. այդ դու լավ գիտես, որ բացի ինձ տանջելուց, ուրիշ ոչինչ չես անում. քեզ 5—6 նամակ եմ գրել, և ամենքի մեջ ասել, խոստովանել իմ սերը, իմ հաստատակամությունը, իմ անձնվիրությունը, իսկ դու այդ բոլորը համարում ես հաստատակամությունը, իմ անձնվիրությունը, իսկ դու այդ բոլորը համարում ես եղած-չեղած, և լսում ես ձեր շրջանին. ոչխարներ և անբարոյական մարդիկ են ձերոնք. ես արհամարհում եմ նրանց, և եթե դու լսում ես նրանց՝ արհամարհում եմ և քեզ. գնա, հեռացիր ինձնից. քեզ համար այլևս Ավետիք չկա. դու չես կարող ապրել նրա երկնքում, դու երկրի ծնունդ ես. նա չի կարող ապրել քու հոգում՝ դա հասարակ կնոջ մի խորամանկ և կապրիզնի դժոխք է. չես կարող հասնել Ավետիքին, չես արժանի նրա սիրուն:— նա քեզ համար կյանք էր զոհում, իսկ դու— ով ես դու... Դու արժանի չես նրա սուրբ հոգում ապրելու. քու տեղը մի վաճառականի, կամ մի ինժեների զզվելի (սիրտն է) գիրկն է... Քեզ համար այլևս Ավետիք չկա. շատ քշա-քշա արիր, և նա թռավ վայրենի արծվի պես և հեռացավ, ցնդվեց չքնաղ ու գերերկրային (երազը) ցնորքը և դու մնացիր մորդ գրկում, բարեկամներիդ մեջ, որոնց մեջ ամեն բան կա, բացի սեր և ազնվություն... Անցավ ոսկի արևը. եկավ գիշերը, և չկա երազդ, չկա Ավետիքը. նա վեհափառ քարերի արծիվ է. նա կայծակ է մռայլ ամպերի մեջ... նա բանաստեղծ է, ստեղծագործող է. ահա նա փշրեց իր կուրծքը, խրեց մատները, հանեց քո սերը իր սրտի միջից, և շպրտեց շան ու գիլու առաջ. ահա նա ազատ է հիմա՝ինչպես ալիքը ծովում, բարձր է նա, ինչպես Հիմալայի լեռնագագաթը. նրա ճանապարհը սխալմամբ եկավ քեզ մոտ. նա սխալմամբ բախեց քու դուռը, քու սիրտը. շատ լացեց ու տառապեց, բայց չմեռավ— ահա նա թռնում է հոգու և մտքի, և գեղեցկության, և ստեղծագործության, և աստվածության աղամանդային, երկնահուպ լեռնագագաթները:

Դու մեռար նրա համար. արդյոք ինչպե՞ս պիտի հարություն առնես. արդյոք կարող ես հարություն առնել. արդյոք ուզում է նա, որ հարություն առնես...

ԱՎԵՏԻՔ

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ՝ ԱՆԹԱՌԱՄ ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ*

Վահան Տերյանի (1885—1920) նամակներն հղված են Անթառամ Միսկարյանին, որն այդ տարիներին սովորում էր խորկովյան կանանց բարձրագույն դասընթացների պատմաբանասիրական ֆակուլտետում: Նրանք ծանոթացել են 1908թ. և մինչ Տերյանի մահը ջերմ հարաբերությունների մեջ եղել: Նույն ջերմությամբ ու սիրով Վ. Տերյանը վերաբերվել է նաև Անթառամի քրոջը՝ Մարթային:

1908, 27 նոյեմբերի

Ուղարկում եմ ձեզ գրքույկս և կարծում եմ, դրանով ինչ-որ չափով արտահայտած կլինեմ անկեղծ համակրանքիս զգացումը, որ տածում եմ ձեր հանդեպ, ինչպես և արտակցությունս: Ձեր նամակն ստացել եմ այնպիսի մի պահի, երբ անասելի թախիծը նշում է հոգիս ինչ-որ տաղտկալի ծանրությամբ: Նույնիսկ դժվար է գրել: Բայց այնուհանդերձ պետք է որոշ բաներ գրեմ: Սողոմոնյանի պատմությունը ինձ շատ վշտացրեց: (Ես ենթադրում եմ, որ նա ձեզ համբուրել է հակառակ ձեր կամքի): Այսպիսով ստացվում է, որ ես ձեզ արջի ծառայություն եմ մատուցել: Շատ եմ ցավում դրա համար: Տեսնում եք, ուրեմն ամենքի հետ չէ, որ

---

* Նամակներն արտատպում ենք Վահան Տերյանի «Երկերի» (չորս հատորով) 3-րդ հատորից («Հայաստան» հրատ., Երևան, 1975): Նամակները ռուսերենից թարգմանել է Ա. Վարդապետյանը, կազմել, ծանոթագրել Նվ. Տերյանը:

1 «Մթնշաղի անուրջներ»

կարելի է անկեղծ ու պարզ լինել և, ցավոք, այդ «ամենքը» շատ են, շատ-շատ, Անտյա, ուստի իմ բարեկամական խորհուրդն է ձեզ՝ այսուհետև ավելի զգույշ լինել և ներել ինձ, սիրելի, լավ Անտյա, որ ակամա, ցանկանալով ձեզ ծառայություն մատուցել, ծանոթացրել եմ ձեզ անարժան մարդու հետ: Ես անկեղծորեն ափսոսում եմ, եթե միայն բանն այնպես է, ինչպես ենթադրում եմ: Սոսկալի թախիծ է: Ուզում եմ այստեղից որևէ տեղ գնալ: Ծատ հնարավոր է, որ իրականանա այն, ինչ ձեզ ասել էի կատակով, և մի գեղեցիկ օր տեսնվենք Խարկովում: Եթե դա լինի, շուտ կլինի, առաջին իսկ հնարավորության դեպքում: Դեկտեմբերի սկզբներին: Դուք, իհարկե, չեք մերժի ինձ որոշ ծառայություն մատուցել, օրինակ՝ սենյակ ճարել և այլն: Եթե այո, այդ դեպքում մեկնելուցս առաջ ձեզ կհեռագրեմ, որպեսզի համարներում չիջևանեմ: Ինձ պետք կլինի, իհարկե, ոչ թանկ սենյակ, ամիսը մինչև 15 ռուբլի (իհարկե, եթե հնարավոր է): Այս ամենը գրում եմ նախօրոք, որովհետև դա հնարավոր է: Ամեն, ամեն ինչից ձանձրացել եմ, ուզում եմ մի քիչ հանգստանալ: Առայժմ:

ՎԱՀԱՆ

P. S. Առայժմ գրեք: Հասցեն հինն է:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1908, 4 դեկտեմբերի

Երեկ ձեզ նամակ գրեցի ի պատասխան ձեր բացիկի: Ճիշտ ասած, գրեցի տհաճությամբ, որովհետև ձեր բացիկը համարում էի իմ նամակի պատասխանը և, իհարկե, դժգոհ էի մնացել այդպիսի պատասխանից: Ինձ թվաց, թե դուք արդեն դավաճանում եք ձեզ և խուսափում եք անկեղծությունից, իսկ նման հարաբերությունների դեպքում ես նամակագրությունը համարում եմ եթե ոչ անհնարին, ապա համենայն դեպս դժվար գործ: Առհասարակ չեմ սիրում

պաշտոնական գրագրությունը: Հենց նոր ստացա ձեր նամակը, և նա ցրեց իմ կասկածները: Ափսոսում եմ, որ նամակս արդեն չեմ կարող ուղարկել Խարկով և ստիպված եմ հասցեագրել Ցարիցին: Դուք հարցնում եք, ինձ հետաքրքրում է այդ ամենը, ինչ վերաբերում է «համբույրին»: Իհարկե, դա ինձ հետաքրքրում է, ճիշտ այնպես, ինչպես այն ամենը, որ վերաբերում է ձեզ, բայց կարծում եմ, որ չարժե ծավալվել այդ մասին: Այսր այնքան գռեհկություն կա այս ամենասքանչելի աշխարհում, որ եթե նրանցից ամեն մեկի վրա կանգ առնելու լինենք, ժամանակ չի լինի ամենայն լավի մասին մտածելու և, թերևս, կփչանա «հոգու ճաշակը», ինչպես փչանում է այն մարդկանց քիմքը, որոնք սնվում են ինչով ասես: Բացի այդ, չէ որ դա դատարկ բան է, համենայն դեպս լուրջ ուշադրության արժանի չէ: Դուք դրանից ոչինչ չեք կորցրել: Կորցրել է նա, ով, հավանաբար, կորցնելու բան չուներ:

Դուք դժգոհ եք «սիրելի, լավ Անտոյա»[1] ձևով ձեզ դիմելուց: Դա բացատրում եք նրանով, որ իրականում ոչ լավն եք, ոչ էլ սիրելի, այլ շատ վատը, և որ ես, ավելի մոտիկից ծանոթանալով ձեզ, կհիասթափվեմ: Իրոք, ձեզ առանձնապես լավ չեմ ճանաչում, բայց բավականաչափ լավ, որպեսզի երկրորդ անգամ և միշտ ձեզ դիմեմ այդ ձևով: Սիրելի, լավ Անտոյա, ես այնպես շնորհակալ եմ ձեզնից: Դուք ինձ (առանց այդ գիտակցելու) այնպիսի անփոխարինելի ծառայություն եք մատուցել... Բայց այդ մասին մի հարցրեք ինձ հիմա: Երբևէ ես կասեմ: Հետո: Չգիտեմ երբ: Դուք ինձ կանչում եք ձեզ մոտ: Շատ ցավում եմ, որ Խարկովում չեք մնում: Ինձ համար անհնար է Ցարիցին գալը: Իհարկե, ես գիտեմ, որ այդ ժամանակը հիանալի կանցկացնեի և շատ կուզենայի ձեզ հետ լինել, բայց անհնար եմ համարում ձեզ մոտ գալը: Ես չեմ կասկածում ձեր ծնողների հյուրասիրությանն ու անկեղծությանը, բայց անկեղծ լինելու համար ուղղակի կասեմ՝ չեմ կարող: Մտեք իմ դրության մեջ: Ես առհասարակ շատ ամաչկոտ եմ, իսկ նման դեպքերում ինձ շատ

---

[1] Տերյանը նրան այդպես է դիմել «Մթնշաղի անուրջներ» գրքի մակագրության մեջ:

վատ եմ զգում: Նույնիսկ իմ ամենամոտիկ բարեկամի մոտ, որն ամառը ինձ շարունակ խնդրում էր, որ գնայի, ես չգնացի, չնայած նրան, որ ծանոթ եմ նրա ծնողների ու եղբայրների հետ, որոնք, համոզված եմ, կընդունեին ինձ շատ լավ, ինչպես հարազատի: Խարկով արդեն չեմ գա և առհասարակ հավանաբար ոչ մի տեղ չեմ գնա: Իսկ ձեզ այնուամենայնիվ հույս ունեմ հանդիպելու և շատ եմ ուզում:

Ինչ հարց է՝ «Ես ձեզ ձանձրացրել եմ»: Դա լավ չէ, Անտոյա: Ես նույնիսկ չեմ ուզում այդ մասին խոսել: Վերջին օրերը ես մի քիչ վատառողջ էի և երեկ նույնիսկ պառկած էի: Այսօր ինձ ավելի լավ եմ զգում: Դուք, իհարկե, Ցարիցինից ինձ կգրեք: Օրերս ես պետք է ռեֆերատ ներկայացնեմ, այնպես որ ուզում եմ մի կերպ գրել, թեև պարապելու տրամադրություն ամենևին չունեմ: Կոլյային ես կհաղորդեմ ձեր ցանկությունը, ինչպես հաղորդեցի ձեր այն դիտողությունը բացիկում, թե նա ձեզ մոռացել է:

Պինդ, պինդ սեղմում եմ ձեր ձեռքը:

ՎԱՀԱՆ

Նամակս մի քիչ ցրված ու անկապ ստացվեց: Բայց դա պետք է ներեք, որովհետև ընկերներս իրենց խոսակցությամբ խանգարում էին ինձ:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1908, 20 դեկտեմբերի

Այս անգամ ձեր նամակի պատասխանը փոքր-ինչ ուշացրի: Երևի դուք դժգոհ եք ինձնից, Անտոյա: Որքան ուրախ կլինեի, եթե դուք շրջապատված հարազատների ու մոտիկ մարդկանց սիրով ու գուրգուրանքով, չնկատեիք այդ ուշացումը և չտրտնջայիք ինձնից: Զզգայիք սպասումի ծանրությունը: Բայց ես մասամբ հույս ունեմ, որ դուք անհամբեր

չէիք իմ պատասխանի վերաբերյալ: Դուք թերևս չէիք էլ զգում «սպասումի ծանրությունը», այլ սոսկ՝ հազվադեպ, ձանձրույթի ու «հանգիստ առնելու» բոպեներին անտարբեր բացականչում էիք. «այս ինչու չի գրում Վահանը, հետաքրքրքիր է իմանալ, այդ ինչով պետք է բացատրել»: Եվ ուրիշ ոչինչ, եթե դա այդպես լիներ, չգիտեմ, կուրախանայի, թե ոչ: Բայց և այնպես կուզենայի որևէ բանով արդարացնել պատասխանիս ուշացումը: Կարծում եմ, լավագույնը կլինի պարզել ձեզ, թե ինչ էի անում վերջին օրերս: Արտաքին փաստերը հետաքրքիր չեն: Կարևորը ներքին, հոգեկան վիճակն է: Ճիշտ չէ: Ձեր նամակն ստանալու իսկ օրից ամեն օր պատրաստվում էի ձեզ գրել, բայց ամեն անգամ նետում էի գրիչս, ի վիճակի չլինելով գրել ձեզ (թեկուզ այն մասին, որ չեմ կարող գրել): Ես հեռանում էի տնից՝ «ուր կուզե լինի, միայն թե հեռու»: Սարսափելի էր մենակ մնալը: Ես փախչում էի առանձնությունից ու մենությունից, որոնք այնպես սիրում եմ տրտմության բոպեներին: Դա սարսափելի թախիծ էր: Դուք հասկանում եք ինչ բան է թախիծը: Անառիթ, անել, խոր, ծանր թախիծը: Դուք հասկանում եք: 'Դա գրեթե ֆիզիկական ցավ է պատճառում: Ամենուր նա է, հասկանում եք, նա ամենուր է՝ իմ մեջ, իմ շուրջը, իմ վերև, ամենուր: Լավ է, եթե դա չեք հասկանում, սիրելի Անտոյա: Ես այնպես ուրախ կլինեի ձեզ համար: Այդ օրերին ես տնից գնում էի փողոց, ընկերներիս ծանոթներիս մոտ: Երկու օր գիշերեցի Կոլյայի ու Հայրունու[1] տանը: Համենայն դեպս ավելի լավ է, շաղակրատում ես, կատակում ես, «ցրվում ես», թեև առանց այդ էլ չի կարելի ասել, թե ցրված չէի: Իսկապես ասած, այս հոգեվիճակի մասին պետք չէր գրել: Երկու պատճառով: Նախ նրա համար, որ դա համարյա անպատմելի է: Երկրորդ, միշտ դժվար ու անցանկալի է ծավալվել այնպիսի ապրումների շուրջը, որոնք անհասկանալի են այդ ապրումներին և որ գլխավորն է, այդ ապրումներն ունեցող մարդուն անծանոթ շատ շատերի համար: Ես մի փոքր անհարթ արտահայտվեցի: Գիտեք ինչ,

---

[1] Հայրունի Տիգրան-Նիկոլայ Վարագովի և Դավիթ Միսկարյանի համադասարանցին Լազարյան ճեմարանում:

մարդկանց որոշ վիճակները հասկանալու համար անհրաժեշտ է նրանց մոտիկից ճանաչել և կամ, առանձնապես մոտիկից չիմանալով, նրանց ապրումներին մոտենալ զգայուն կերպով և դրանք հասկանալու անկեղծ ցանկությամբ: Դա հազվադեպ է լինում: Ես լիահույս եմ ձեզ վրա: Ինչու՝ չգիտեմ: Գուցե նրա համար, որ ձեր անկեղծությունը վստահություն է ներշնչում: Չգիտեմ: Գուցե մի այլ պատճառ կա: Միայն գիտեմ, որ ամեն անգամ, երբ պատրաստվում էի ձեզ գրել, ինձ համար պարզ է լինում, որ ձեզ պետք է գրեմ իմ թախծի մասին և գլուխ չազատեմ սովորական պատասխանով: Բայց դրա հետ մեկտեղ ինձ համար միշտ դժվար է լինում հաղորդել այդ տրամադրությունը: Ահա մասամբ իմ երկար լռելու պատճառը: Այդ տրամադրությունը հայտնվում է անակնկալ: Բոլոր առարկաները կորցնում են իրենց նշանակությունը: Կամ, ավելի ճիշտ, այլ երանգ են ընդունում: Երբեմն այդ վիճակն այնքան տանջալից է լինում, որ պատրաստ ես լինում, ամեն ինչ տալու, միայն թե մենակ չմնաս այդ սարսափի մեջ: Եվ այդ րոպեներին ընդունակ ես լինում ինչ հիմարություն ասես անելու: Բայց և այնպես դա անցնում է: Ինչպես և ամեն ինչ: Անսպասելի անցնում է, ինչպես անսպասելի հայտնվել էր: Տարօրինակ հյուր է: Ցտեսություն: Ոչ, այդ չես ասում նրան: Այլ խնդագին ընդունում ես վրա հասած դադարը: Կյանքդ դառնում է լուսավոր ու զվարթ:

Այ, հիմա այդպես է: Իմ հոգում մի տեսակ լուսավոր հզորություն ու խաղաղ ուրախություն է տիրում: Այդպիսի ուրախություն զգում ես որևէ վսեմ գեղեցկություն տեսնելիս: Դա աղմկալի զվարճություն չէ: Ոչ, դա, եթե կարելի է ասել, «թախծոտ ուրախություն է», որը չի վախենում առանձնությունից ու մենությունից, այլ ավելի շատ ձգտում է դրան: Այդ ուրախությունը նման է այն տխրությանը, որը հարուցում է գեղեցկությունը, ինչպես ասում է հանճարեղ Չեխովը (սիրո՞ւմ եք Չեխովին, Անտյա) իր «Երկու գեղեցկուհի» պատմվածքում (կարծեմ այնտեղ է, ստույգ չեմ հիշում)[1]:

---

[1] «Երկու գեղեցկուհի»— նկատի ունի Ա. Պ. Չեխովի «Գեղեցկուհիներ» պատմվածքը, որտեղ իրոք նկարագրված են երկու աղջիկ: Հետաքրքիր է, որ նրանցից մեկը հայ է, իսկ մյուսը՝ ռուս: Հենց հայուհու

Այդ ուրախալի թախիծը կամ թախծալի բերկրանքը ամբողջովին համակել է իմ հոգին: Լավ են այդպիսի րոպեները: Դրանք իմաստուն րոպեներ են: Այդ րոպեներին մարդ իրեն չի զգում աշխարհից կտրված, լքված ու միայնակ, ընդհակառակը, նա միաձուլվում է տիեզերական ներդաշնակության հետ: Բայց այդ մասին բավական է, թեև գիտեմ, որ չասացի այն, ինչ ուզում էի ասել: Չկարողացա ավելի լավ արտահայտվել: Դա ներելի է: Մանավանդ որ ուզում եմ շուտով ավարտել նամակս և ուղարկել, որպեսզի ձեզնից շուտով նամակ ստանամ: Դուք գրում եք, որ մի տեսակ «տարօրինակ վիճակի» մեջ եք եղել, երբ պատրաստվում էիք ինձ գրել: Այդ ինչ էր եղել ձեզ: Արդյոք Կոլյայի նամակը չէր ազդել ձեզ վրա այդպես: Ասենք, գուցե դա «չպետք է», ինձ հետաքրքրի: Այսօր մի ընկերոջ միջոցով հրավեր է ուղարկել, որ գամ ձեզ մոտ Ցարիցին: Ես արդեն ձեզ գրել եմ, որ չեմ կարող այդ անել: Անկեղծորեն շնորհակալ եմ ձեզնից, Անտյա: Ես լիովին համոզված եմ, որ ձեզ հետ հրաշալի կանցկացնեի ժամանակը, բայց ինձ համար անհնար է գալը: Դա փաստ է: Այդ մասին մանրամասն չեմ խոսի: Դե, արդեն ժամանակն է նամակս ավարտելու, թե չէ, գուցե մինչև վերջ չկարդաք, կամ հետաձգեք քնելուց առաջ կարդալու, քանի որ այդ ժամանակ մարդ կարդում է ինչ որ ձեռքն ընկնի: Կարող է պատահել ծննդյան արձակուրդներից հետո «կիսաճամփին» իջևանենք Մոսկվայում: Ուզում եմ ասել, գուցե կանցնեք: Թե չէ, այնպես է դուրս գալիս, կարծես Անդրեաս առաքյալի[1] պես «Հռոմի ճանապարհին» պիտի ընկնեք (ոչ թե Նովգորոդ, ինչպես նա, այլ) Մոսկվա: Կուզենայի տեսնվել ձեզ հետ և շատախոսել: Այսպես, ուրեմն, առայժմ ամենայն բարիք, սեղմում եմ ձեր ձեռքը պինդ-պինդ:

ՎԱՀԱՆ

գեղեցկությունը նկարագրելիս է Չեխովը խոսում «հանելի» թախծի մասին. «Այդ տխրությունն անորոշ էր, աղոտ, ինչպես երազը»: Եվ ապա՝ «Իմ տխրությունը համակված էր այն առանձնահատուկ զգացումով, որ արթնանում է մարդուս մեջ կատարյալ գեղեցկություն դիտելիս...»:

1 Սուրբ Անդրեաս (Նախահրավեր) առաքյալը քարոզում էր սկյութների մեջ:

Իհարկե, սույն ուղերձն ստանալով, անմիջապես կպատասխանեք: Ես չեմ ուզում դրան կասկածել: Գրեցեք մանրամասն ամեն ինչի մասին: Ինչպես եք ապրում, ինչ եք անում: Ինչպես է ձեր տրամադրությունը և այլն: Վ.:

Հասց.՝ Բոգոսլովսկի նրբ., Սերեբրյակովայի տ., բն. 17, Վահան Տերյան (ին):

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1908, 27 դեկտեմբերի

Սիրելի Անտյա

Ստացա ձեր բացիկը, որով հարցնում եք իմ երկար լռության պատճառը: Հավանաբար, հիմա արդեն ստացել եք նամակս, որը, հուսով եմ, ցրել է ձեր կասկածները: Ինքնազգացողությունս: Այդ մասին միշտ դժվար է լինում որևէ որոշակի բան ասել: Չէ որ տրամադրությունները, հատկապես իմ, այնպես արագ են փոխվում: Ես կարող եմ խոսել միայն ներկա պահի մասին:

Ես տխուր եմ: Ես միշտ տխուր եմ լինում, երբ գալիս են տոների ու «համընդհանուր» ուրախությունների հանդիսավոր օրերը: Հիմա արև եմ ուզում, Անտյա, ավելի շատ լույս: Երաժշտություն եմ ուզում և գուրգուրանք: Ուզում եմ լինել փոքրիկ-փոքրիկ, որպեսզի ինձ փաղաքշեն ու սիրեն, ինչպես սիրում ու փաղաքշում են միայն մանուկներին: Ուզում եմ կոպեկանոց նվերներ, որոնք ուրախացնում են աղքատ երեխաների սրտերը: Ինչ անհամբերությամբ էի սպասում մի ժամանակ նոր տարվան: Ինչ ուրախ էր բաբախում սիրտը, ինչպես էր թրթռում լուսավոր օրվա սպասումից: Հիմա ես ոչինչ չեմ սպասում, չեմ սպասում այդ օրերին էլ: Ընդհակառակը, կարծես թե սիրում եմ գորշ առօրյան: Արդեն տխուր եմ, անսահմանորեն տխուր:

Խոհեր: Տրտում խոհեր:

Բայց ինչու եմ գրում ձեզ դրա մասին: Ինչու եմ վշտացնում տխուր խոսքերով: Ում է պետք այս ամենը:

Ինչ կբերի ինձ այս նոր տարին, չգիտեմ:

Շատ կուզենայի, որ ձեզ բերի ուրախություն և երջանկություն: Թող լուսավոր լինի ձեր կյանքը, թող ուրախ լինի: Սեղմում եմ ձեր ձեռքը պինդ-պինդ և ցանկանում եմ ձեզ, Անտյա, ամենայն բարիք: Գրեցեք:

ՎԱՀԱՆ

P. S. Դավթին՝ ողջույն ու մաղթանքներ: Վ.:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1908, 31 դեկտեմբերի

Ձեր նամակը, Անտյա, ստացա այսօր, ամանորի նախօրյակին: Ձեր նամակը, ինչպես գրեթե միշտ, ինձ դուր եկավ և ուրախացրեց: Նստել և պատրաստվում էի պատասխանել, երբ ներս մտավ Կոլյան: Ի պատասխան նրա հարցի, թե ում եմ գրում, ասացի, որ պատրաստվում եմ գրել ձեզ: Ապա կատակով նկատեցի՝ իսկ ինչ է գրում Անտյան քո մասին: Նա կպավ ինձ, որ նամակը ցույց տամ իրեն, այսինքն, որ տամ կարդալու: Ես նրան ասացի, որ ցույց կտամ այն տեղը, որ իրեն է վերաբերվում, ենթադրվելով, որ իմ հայտարարությունը նրա ցանկությունը կկոտրի, և նա չի պնդի— այնպես որ ես ստիպված չեմ լինի նամակը ցույց տալ նրան: Բայց նա խլեց նամակը սեղանից և սկսեց համառորեն խնդրել, որ թույլ տամ կարդալու: Ես դա անհարմար էի համարում և երկար դիմադրում էի, բայց հետո որոշեցի զիջել նրա ցանկությանը: Ընդ որում իմ մեջ միտք առաջացավ, որն ստիպեց այդ անելու: Ինձ համար տհաճ էր այդ անել, չունենալով ձեր թույլտվությունը, բայց ինձ մասամբ արդարացնում էի այն հանգամանքով, որ ձեր նամակում դուք չեք խոսում այն մասին, որ ոչ ոքի, կամ էլ Կոլյային ցույց չտամ նամակը: Ճիշտն ասած, սա ձևական արդարացում է, բայց ավելի իրական արդարացում կարող է լինել թեկուզ այն, որ դուք չեք վախենում նույն բանն ասել Կոլյային, և եթե դա ձեր տեսակետն է, ապա— հավանաբար, կարող էիք

նույն բանը գրել և նրան, եթե հարկ լիներ: Բացի այդ, ինչպես վերևում նշեցի, իմ գլխում մի միտք ծագեց, որ ես պարտավոր եմ այդ նամակը Կոլյային ցույց տալ, ինչպես հիմա, այնպես էլ ապագայում որևէ թյուրիմացությունից խուսափելու համար: Մի խոսքով, իմ վիճակը նախանձելի չէր: Ես երկու կրակի արանքում էի: Ես չգիտեմ, արդյոք դուք իմ դրության մեջ կմտնեք: Իհարկե, ես չկարողացա ձեզ ամեն ինչ պարզաբանել, ինչ որ պետք էր, բայց ահա բանն այն է, որ ինձ համար էլ այդ ամենը շատ պարզ չէր: Երևի ես ընտրել էի լավագույն ելքը: Հույս դրել եմ ձեր բարության վրա: Ես հույս ունեմ, որ կներեք ինձ: Բայց հերիք է սրա մասին:

Հիմա տանը նստած եմ մենակ և «դիմավորում եմ» նոր տարին: Ողջունում եմ այդ Նոր տարին: Ողջունում եմ ձեզ՝ նոր տարվա առթիվ: Ես ինձ վատ չեմ զգում իմ միայնության մեջ և ոչնչից ու ոչ ոքից չեմ գանգատվում: Ուզում եմ երկարերկար նստել մենակ ու խորհել: Ուզում եմ եղածը հանրագումարի բերել: Հազիվ թե դա ինձ հաջողվի: Սակայն, ի մի բերելով եղածը, ես հավանաբար գոհունակությամբ պիտի արձանագրեմ այն փաստը, որ ի դեմս ձեզ ես կունենամ մի լավ, անկեղծ բարեկամ... Դա ինձ շատ է ուրախացնում: Առայժմ դադարեցնում եմ գրելը, որովհետև այլևս չեմ կարող հանգիստ գրել: Նամակս հետաձգում եմ առավոտվան: Առավոտյան ուզում եմ պատասխանել ձեր նամակի մի քանի հարցերին:

1909, 1.

Ինձ զարմացնում է ձեր համեստությունը[1]: Դուք այնպես վատ եք արտահայտվում ձեր մասին: Ինչու: Միթե իրոք դուք այդքան վատն եք: Ես պատասխանում եմ՝ ոչ: Ուրեմն

---

1 Ինձ էլ է զարմացրել Անթառամ Միսկարյանի բնավորության այդ գիծը: Նրա հետ ունեցած հանդիպումներիս ժամանակ ես ուշադրություն եմ դարձրել այդ կնոջ արտակարգ համեստությունը՝ իր արարքների գնահատման մեջ, կենցաղում: Ինձ թվում է, որ նույնիսկ այն փաստը, որ նա կրճատումներ է արել որոշ նամակներում, դուրս կըտ-

ինչով է բացատրվում դա: Ձեր նկատմամբ ունեցած հավատի թուլությամբ: Ձեզ թվում է, թե դուք ոչ մի բանի ընդունակ չեք, ոչինչ չեք կարող անել: Մինչդեռ դա որքան սխալ է: Աշխարհում այնպիսի մարդ չկա, որ ոչնչի ընդունակ չլինի: Ցանկություն է պետք: Շատ հաճախ ուժեղ ցանկության բացակայությունը քողարկում են անհնարինությամբ: Ես դրանով չեմ ուզում ասել, թե դուք ցանկություններ չունեք, ոչ, աստված մի արասցե: Ես միայն ուզում եմ ասել, որ ըստ երևույթին ձեր մեջ կամքը քիչ է, ինչպես և մեր ժամանակի ինտելիգենտ մարդկանց մեծ մասի մեջ: Պետք է իր մեջ հաղթահարել ծուլությունն ու թուլությունը, որովհետև արդեն չափից ավելի են մանրացել մարդիկ, հուսալքվել: Այդպես չէր երկու-երեք տարի առաջ: Այդպես չէր[1]: Հիմա շարունակ հանդիպում ես տղամարդկանց ու կանանց, որոնք իրենց թուլությունն արդարացնում են նրանով, թե իբր նրանց «բնավորությունն այդպես է: Լակոտ ուսանողը հարբեցողությամբ է զբաղվում՝ գիտեք, նրա բնավորությունն այդպես է: Օրիորդը սիրաբանում է՝ նրա էլ բնավորությունն է: Մի խոսքով, հիմա ամեն ինչ բարդում են «բնավորության» վրա: Դուք ասում եք, թե վատն եք: Շատ լավ, ենթադրենք, որ այդպես է, թեև ոչ ամենևին չեմ կարծում, քանի որ ձեր մեջ տեսնում եմ շատ լավ բաներ: Ենթադրենք, որ դա այդպես է: Լավը դարձեք, ավելի հեշտ ինչ կարող է լինել: Աշխատեցեք լավը դառնալ: Ինչու գանգատվել: Դա պետք չէ: Ես հասկանում եմ, երբ մարդ չի կարող լավը լինել: Բայց դուք, եթե նույնիսկ լավը չեք, ապա հաստատ կասեմ, կարող եք այդպիսին լինել: Արդեն լոկ այն, որ գիտակցում եք ձեր վատությունը, իմ մտքի լավագույն ապացույցն է: Բայց ես համոզված եմ, կրկնում եմ, որ վատը չեք: Ընդհակառակը: Իհարկե, ես ձեզ լիովին չեմ ճանաչել, բայց այնքանից, որ հասցրել եմ իմանալ, ես համարձակ եզրակացություն եմ անում՝ դուք շատ հաճելի աղջիկ եք, հիանալի մարդ: Իհարկե, ես համոզված եմ, որ ձեր մեջ,

---

րելով հենց այն բառերը, կամ նախադասությունները, որտեղ Տերյանը գովում է նրան, սա մի ապացույց է նրա համեստության:

1 Տերյանը նկատի ունի հասարակական-հեղափոխական տրամադրությունների վերելքը 1905—1907 թ. թ.:

ինչպես և ամեն մի մարդու մեջ, թերություններ կան, բայց ես ուրախ եմ արձանագրելու ձեր արժանիքները: Դուք ասում եք չունեք մի մարդ, որին կարողանայիք ամեն ինչ անել: Ես շատ ուրախ կլինեի, եթե կարողանայի ձեզ համար լինել այդ մարդը, և հուսով եմ, որ կարդարացնեմ իմ խոսքերը: Համենայն դեպս, քանի ինձ հետ անկեղծ կլինեք, իմ կողմից կհանդիպեք նույն բանին: Հա, չմոռանամ: Ես մի անգամ ուզում էի ձեզ գրել, որ դուք, եթե հնարավորություն ունեք, անպայման զբաղվեիք երաժշտությամբ: Դուք կարծես պատասխանել եք իմ մտքին: Ես շատ ուրախ եմ, որ զբաղվում եք: Ես ուզում եմ համառորեն խնդրել ձեզ, որ երբեք չթողնեք երաժշտությունը: Ես, թվում է, ամեն ինչ կտայի, որ դաշնամուր, կամ ջութակ, կամ թավջութակ, կամ գոնե կիթառ նվագել կարողանայի: Ես ինձ դժբախտ եմ զգում, որ չեմ կարող: Ահա թե ինչու այսպես համառ խորհուրդ եմ տալիս ձեզ: Հոգնեցի: Առայժմ հերիք է: Ամենայն բարիք:

ՎԱՀԱՆ

Իմ նամակն էլ կցկտուր ստացվեց: Կաշխատեմ վաղը կամ մյուս օրը ավելի կապակցված հանգամանալից նամակ գրել: Գրեցեք: Իմ կարծիքով ամենևին պետք չէ սպասել պատասխաններին, այլ պետք է գրել, հենց որ ցանկություն ու տրամադրություն լինի: Ճիշտ չէ:

ՎԱՀԱՆ

Հուսով եմ, Կոլյայի միջադեպը հարթված է: Իսկապես ասած, այդ միջադեպը վնասեց իմ նամակին, քանի որ արդեն չկարողացա գրել այն, ինչ ուզում էի: Վ.:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1909, 3 հունվարի, ՄՈՍԿՎԱ

Անտյա

Վերջին նամակումս խոստացել էի մի անգամ էլ գրուցել ձեզ հետ վերջին նամակի առթիվ: Ինձ համար շատ հաճելի

է, որ հնարավորություն ունեմ խոսքս կատարելու, չնայած այն բանին, որ տրամադրությունս տեղը չէ, կամ, ավելի ճիշտ, ուղղակի գարշելի է: Դրա համար պատճառներ ունեմ, որոնց մասին հիմա չեմ գրի: Կգրեմ նամակիս վերջում, եթե ժամանակ լինի, քանի որ արդեն գիշերվա ժամը մեկն է լինում: Ձեր նամակի առաջին իսկ տողերում հանդիպում է «ապատիա» բառը: Դա սարսափելի բառ է: Որքան հաճախ ես լսում հիմա այն: Ամեն տեղ և ամենուրեք: Ամենքի շուրթերին, աչքերում, քայլվածքի մեջ, ամեն, ամեն ինչում այդ բառն՝ ապատիա: Դժբախտաբար դուք պարզ չեք նշում այդ զգացման հետ կապված պատճառները, կամ ավելի ճիշտ՝ ուղղակի մտքերն ու ապրումները: Պատճառներն, իհարկե, ընդհանրապես հայտնի չեն լինում: Նա (ապատիան) գալիս է անլսելի, աննկատելի, գողի պես: Դժվար է, կամ նույնիսկ անհնար է, որ մարդ ինքը որոշի ապատիայի պատճառները: Բայց փոխարենը՝ դա ավելի հեշտ է հաջողվում օբյեկտիվ դիտողին:

Ես մի լավ ծանոթ աղջիկ ունեի: Նա տառապում էր «դարի»՝ դարաշրջանի՝ վերջին տարիների այդ հիվանդությամբ: Դա նրա մեջ տեղի էր ունենում այն պատճառով, որ հիասթափվել էր սիրուց, բայց ավելի շատ նրանից, որ հիասթափվել էր իրենից: Նա անչափ սիրում էր բեմը (իր ասելով) և ուժեղ հակում էր զգում դեպի այն: Բայց նրան պակասում էր ինքնավստահությունը և որոշ պայմաններ: Ավելի շատ՝ առաջինը: Այն ժամանակ նա ամեն ինչից զզվեց: Նա դարձավ անտարբեր դեպի ամեն բան, և ես լիովին հավատում եմ նրան, երբ ասում է, կյանքին վերջ կտա ինքնասպանությամբ: «Բան չկա, որին ձգտես, բան չկա, որ ցանկանաս, էլ ինչու ապրես»: Այսպես է դատում նա: Եվ նա միակը չէ: Այդպիսի դատողություններ որքան ուզեք: Մի քանի օրիորդ խոստովանել են ինձ այդ ոգով: Իսկ ինչով է բացատրվում այդպիսի ապատիան: Նրանով, Անտյա, որ այդ մարդիկ չեն կարող համաչափել իրենց ուժերը, և նրանց ցանկությունները չափազանց բարձր են, մինչդեռ ուժերը քիչ են: Բայց չէ որ նախ տափակ բան է ցանկալ այն, ինչ հնարավոր է, հաստատապես հնարավոր է, և երկրորդ, ինչ իմանանք, ինչն է գերազանցում մեր ուժերը, ինչը՝ ոչ:

Դա ճիշտ է: Բայց ահա թե ինչ, Անտյա: Ես արդեն կարծես գրել եմ ձեզ, որ լիովին ընդունում եմ Իբսենյան ափորիզմ-նշանաբանը՝ «Ինչը որ չկարողացար, քեզ կներվի, բայց ինչը չուզեցիր՝ երբեք»[1]: Եվ այսպես, երբ որևէ ուժեղ ցանկություն ունես, հարկավոր չի նրանից հրաժարվել, այլ պետք է ձգտել դեպի նա, դեպի այդ ցանկության նպատակը: Պետք չէ թեթևամտորեն ցանկանալ, որ հրաշքը կատարվի առանց գերիվեր ջանքերի: Ոչ, առանց աշխատանքի, համառ աշխատանքի, նույնիսկ ոչ մի հանճար հրաշք չի կատարել: Այդ բոլոր մարդիկ, որոնք 20—25 տարեկան հասակում, երբեմն էլ ավելի վաղ, ապատիայի գիրկն են ընկնում, ունեն միայն ու միայն ցանկություն: Նրանց տրված են միայն «ազնիվ խոյանքներ», իսկ դրանք իրացնելու համար ոչինչ չի տրված[2], որովհետև նրանք չեն ուզում ընթացքը, նրանք ուզում են տեսնել սոսկ նվաճումը: Իսկ իմ կարծիքով դա ճղճիմություն է: Պետք է ուրախանալ, կարողանալ ուրախանալ բուն ձգտման համար, հենց ընթացքի համար, և եթե պետք է նվաճման մխիթարությունը, ապա դա պետք է որոնել այն համոզման մեջ, որ նպատակին կհասնենք, թեկուզ եթե ոչ մենք, ապա հաջորդ սերունդները: Մենք չենք ուզում կյանքի աշխատավորի ուրախությունը: Մեզ ճնշում է մրջնաջան, բայց հաստատ աշխատանքը, մենք արծվի թռիչք ենք ուզում, մենք ուզում ենք «հերոսներ» լինել: Եթե կուզեք, այդ ցանկությունների մեջ քաղքենիական էգոիզմի մեծ չափ կա: Մտածեք մի լավ: «Ես ուզում եմ անպայման մեծ լինել և գործը սիրում եմ լոկ նրա համար, որ դա ինձ մեծ լինելու հնարավորություն կտա»— այդպես են դատում, կամ պետք է որ դատեն վերոհիշյալ մարդկանցից նրանք, որոնք գոնե անկեղծ են իրենք իրենց հետ:

Ես այսպես եմ դատում. ես սիրում եմ գրականությունը, ես զբաղվում եմ դրանով: Միթե ես պետք է մեծ գրող լինեմ: Ես այդ չեմ կարծում: Ոչ: «Միթե դուք փառք չեք ուզում»,

---

1 Բրանդի խոսքերը Հ. Իբսենի նույնանուն ողբերգության երրորդ գործողությունից:

2 Բառափոխված արտահայտություն Ն. Ա. Նեկրասովի «Ասպետ մի ժամով» բանաստեղծությունից:

ենենգորեն ժպտում եք դուք: Ինչ եք ասում, ինչ եք ասում: Ես դեռ այնպես փչացած չեմ և այնպիսի էգոիստը չեմ, որ փառք չուզենամ: Չէ որ իսկապես, ինչպես կարող է մարդկանց սիրող մարդը չսիրել փառքը, այսինքն՝ մարդկանց սերը դեպի ինքը: Դրա համար պետք է չափազանց եսասեր մարդ լինել: Իհարկե, այստեղ հարցն այն է, որ իմանաս քո արժեքը: Որովհետև հաճախ փառքը մարդու արժեքավորության ցուցանիշը չէ: Ինչպես առանձին մարդիկ, այնպես էլ հասարակությունը կարող են թերագնահատել մարդուն, նրան չհասկանալ և այլն: Ապա այստեղ պետք է հավատ իր նկատմամբ և կամքի ուժ, որպեսզի հաղթես հասարակության անտարբերությունը: Սակայն իր արժեքն իմացող մարդը երբեք ավելին չի ուզի, քան ինքն արժանի է: Մինչդեռ ժամանակակից երիտասարդությունից շատ-շատերը, իմ կարծիքով, չափազանց բարձր են գնահատում և ուրիշներին, և իրենց: Ահա և հայտնվում է «ձախողակների» ապատիան, մելամաղձությունը:

Հեշտ փառքը, դժբախտ բան է: Հաստատուն փառքը ձեռք է բերվում արժանիքներով, իսկական արժանիքներով: Օրինակ, Չեխովի փառքը տարեցտարի կաճի, այնինչ ժամանակակից «երևելիներից» շատ շատերի փառքը ավելի վաղ կխամրի, քան նրանք գերեզման կիջնեն, կամ դրա հետ մեկտեղ: Նրանցից շատերը, ովքեր տառապում են ապատիայից ու մելամաղձությունից, չունեն ոչ մի աշխարհայեցողություն և, որ գլխավորն է (քանի որ կուռ, քիչ թե շատ մնայուն աշխարհայեցողություն ունենալու համար մարդ պետք է շատ, չափազանց շատ աշխատի իր վրա), չեն ջանում մշակել «դույնը»: Իհարկե, շատերին արդարացնում են «պայմանները», իրոք սարսափելի պայմանները, որոնք հնարավորություն չեն տալիս այդ անելու, և շատ շատերը հենց այդ անհրաժեշտ պայմանների պատճառով են հասնում այդ անուրախ վիճակին, բայց, կրկնում եմ, մեծամասնությունը այդ տխուր վիճակին հասնում է վերոհիշյալ պատճառներով: Դուք արդեն բարկանում եք, տրտնջում եք ինձնից: Անտյա, որ ձեզ «դասում եմ» նրանց շարքը: Բայց ես այդ չեմ արել: Ես ուզում եմ համոզված լինել և գրեթե համոզված եմ, որ ձեր ապատիան ժամանակավոր է, դա նույնիսկ ապատիա

չէ, քանի որ ապատիան մեղյալ անտարբերություն է դեպի ամեն ինչ, մինչդեռ ես գիտեմ, որ դուք չափազանց կենդանի մարդ եք այդպիսին լինելու համար: Ձերը տրամադրություն է, որը արագ փոփոխվում է: Բայց ձեր նամակում խոսում եք նաև այն մասին, որ դուք վատն եք, անխելք և այլն, ահա հենց այդ էր, որ ինձ ստիպեց մտածելու ընդհանուր ապատիայի վերաբերյալ վերևում ասվածի մասին: Եվ «նախազգուշացնել» ձեզ, որ չենթարկվեք դրան: Ինքնավերլուծությունը, ինքնաքննադատությունը գոնեհիկ ինքնագովությունից խուսափելու լավագույն միջոցն են, բայց չպետք է մոռանալ և այն, որ անարդարացի վերաբերմունքը իր անձի նկատմամբ ավելի վատթար բան է, քան նույնը ուրիշ մարդկանց վերաբերմամբ: Պետք է կարողանալ կամ գոնե ջանալ իրեն «ըստ արժանավույն» գնահատել: Ես իհարկե ձեզ այնքան լավ չեմ ճանաչում, որ նպատակ դնեմ դատելու ձեր մասին, բայց և այնպես համոզված եմ, որ համենայն դեպս դուք այնպես վատը չեք, ինչպես «նախշել եք» ձեզ: Դա ինձ համար կասկածից դուրս է:

Այսպես ուրեմն, ես և դուք, Անտյա, պետք է մեզ համար մշակենք այն, ինչ հիմա ունենք՝ կուռ աշխարհայեցողություն: Դրա համար մենք ստիպված կլինենք շատ աշխատել, բայց այնքան օրինավոր լինենք, որ չվախենանք դրանից: Եվ եթե չկարողանանք մեր նպատակին հասնել, և աշխարհը մեզ համար մնա պատահականությունների և հաջողության կամ անհաջողության ասպարեզ, բոլորովին անհասկանալի մնա կյանքը, ապա գոնե մենք հանգիստ կկարողանանք ասել, որ «չկարողացանք» ուրեմն դա պետք է մեզ ներվի, քանի որ մենք ցանկանում էինք, բայց չկարողացանք: Թե չէ տարիները կթռչեն ու թերևս վրա կհասնի մի օր, երբ վհատորեն կզգանք, որ մեր ուժերը, մեր լավագույն տարիները վատնված են դատարկ բաների վրա, և մենք նույնիսկ չգիտենք ինչ բան է անկեղծ, ուժգին, դառը կասկածը, զինելու ուրախությունը և գտածի կորուստը՝ նորանոր որոնումների համար և այսպես շարունակ... Այս բոլորը ես գրում եմ, Անտյա, իհարկե նաև նրա համար, որ դա մեծ չափով վերաբերում է և ինձ: Ես ինքս եմ շահագրգռված: Ես ինքս շատ եմ մտածել ու տառապել այդ բոլորի առթիվ: Իհարկե,

ինչպես հարկն է, մենք կխոսենք, երբ տեսնվենք, որովհետև համոզված եմ, որ նամակում չարտահայտեցի այն ամենը, որ կուզենայի արտահայտել: Դա շատ դժվար է: Առավել ևս, որ ինչպես տեսնում եք, առանց այն էլ նամակս անթույլատրելի կերպով աճեց: Բայց և այնպես, դեռ չեմ վերջացրել: Մի քանի խոսք Կոլյայի մասին: Դուք չեք զայրանա: Նա հիմիից դուրս է եկել և, եթե կուզեք իմանալ, «փչացել է»: Ես դժբախտաբար չեմ կարող ստույգ որոշել, թե դրա պատճառն ինչ է, բայց որ նա կանգ է առել, որ ետ է մնացել և օրեցօր ավելի ու ավելի է ետ մնում, դա փաստ է: Որ նա չի անի այն, «ինչ կարող է» կամ ինչ «կարող կլիներ», դեռ վերջնականապես չեմ կարող ասել, բայց որ դա որոշ չափազանց հիմնավոր կասկածներ է հարուցում՝ այդ չեմ ժխտի: Եվ ինձ համար ցավալի է, շատ ցավալի է, որ նա կյանքի «լավագույն» հարցերին վերաբերվում է կամ թեթևամտորեն, կամ անփույթ, անտարբեր: Դա վատ նշան է: Նրան ուղղած ձեր մեղադրանքը «շինծու անկեղծության» մեջ (լավ բնորոշում է, դա ինձ շատ դուր եկավ) ես միանգամայն տեղին գտա և նրան ասացի այդ մասին: Ինչ վերաբերում է այն «առանձնահատուկ», «տարօրինակ» զգացմունքին, որ տածում եք դեպի նա, ես, կարծես, կռահում եմ այն: Բայց ավելի լավ է, եթե իմանամ, թե դա ինչ զգացմունք է: Քիչ անհաջող կռահումներ կարող են լինել:

Ավարտում եմ նամակս: Ուզում եմ մի քանի խոսք ասել իմ տրամադրության մասին: Ուզում եմ արև: Արև եմ ուզում. Անտյա: Մարդ դուրս գա լուսավոր դաշտ, աննպատակ թափառի... Որքան ուրախ կլինեի արևի տակ, արձակ դաշտում, անսահման տարածություններում... Ծուտ պիտի գա գարունը, սանուշ, գեղեցիկ գարունը՝ արևոտ, լուսավոր, պայծառ...

ՎԱՀԱՆ

Գրեցեք: Դուք հիմա պարտք եք, ճշտապահ եղեք և պարտքը հատուցեք տոկոսներով, այլապես ձեզ դատի կը-տամ, սեփական լավ դատիս: Վախեցեք նրանից և գրեցեք շուտով և մանրամասն:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1909, 9 հունվարի

Այս օրերին շարունակ պատրաստվում էի գրել ձեզ, սիրելի Անտյա, ի պատասխան Ձեր հունվարի մեկի նամակի, բայց դա մի տեսակ չէր հաջողվում ինձ: Այսօր ձեզնից ստացա մի մեծ նամակ, որը, ի միջի այլոց, մի քիչ ուշացել էր, դրա համար էլ շտապում եմ պատասխանել, համոզված, որ սպասում եք իմ նամակին: Ձեր նամակը ես կարդացի Կոլյային, օգտվելով ինձ տված ձեր թույլտվությունից, որը, ինձ թվաց, մասամբ նույնիսկ պարտավորեցնում էր այդ բանն անելու: Բայց դա միևնույն է, տարբերություն չունի: Ես այս նամակում ուզում եմ սպառել Կոլյայի հարցը: Կարծում եմ, հարկ չկա այդ մասին երկար ծավալվելու, առավել ևս, որ ձեր նամակը կարդացի Կոլյային և, նրա հետ խոսելով, այն եզրակացությանը եկա, որ այդ ամբողջ իրարանցումն առաջացել է դատարկ բաներից և, հուսով եմ, իմ նամակին կից Կոլյայի նամակը ձեզ հնարավորություն կտա անձամբ բացատրվելու նրա հետ: Միթե դա ավելի լավ չէ: Խոստովանում եմ, վերջին ժամանակներս ես աշխատում եմ խուսափել մարդկանց մասին խիստ, որոշակի դատողություններ անելուց և դժվարանում եմ նրանց դատապարտել, թեև միշտ չէ, որ դա ինձ հաջողվում է կամ, ավելի ճիշտ, հազվադեպ է հաջողվում: Ինչպես գրել էի անցյալ անգամ, Անտյա, միանգամայն իրավացի եմ համարում ձեր «այն» նամակում շարադրված դատողությունները Կոլյայի վերաբերյալ, թեև ձեզ հետ համաձայն չէի: Իսկ ձեզ իրավացի եմ համարում նրա համար, որ դեպի ձեզ ունեցած իր վերաբերմունքի մեջ Կոլյան ըստ երևույթին լիովին անկեղծ չէր: Որքան ինձ հայտնի է, նա ձեր նկատմամբ ոչ մի չարություն չունի: Նա ինձ ասել է, որ ձեզնով տարված չէ, բայց ձեր մասին միշտ լավ էր արտահայտվում: Ձեր լուսանկարը[1] նրա սեղանին է: Դուք, հավանաբար, հիմա կարծում եք, թե ես չարանում եմ ձեզ վրա

---

1 Խոսքը Անթառամ Միսկարյանի, «Վահան Տերյան. նամակներ» գրքում հրապարակված լուսանկարի մասին է:

կաճ բարկանում: Ամենևին: Հավատացնում եմ ձեզ, սիրելի, լավ Անտյա, դուք ինձ շատ եք դուր գալիս: Ես համոզված եմ նաև, որ Կոլյան ձեր մասին լավ կարծիքի է: Նրանով, որ դուք անկեղծորեն արտահայտեցիք ձեր մտքերը, ավելի ճիշտ, զգացմունքներն ու տրամադրությունները, դուք ոչինչ չկորցրիք իմ աչքում, այլ ընդհակառակը, ինձ համար ավելի սիրելի ու մոտիկ դարձաք: Ուզում եք իմանալ իմ կարծիքը Կոլյայի մասին: Ես ձեզ կասեմ: Նա շատ հաճելի մարդ է, բայց անհոգ և թեթևամիտ է դեպի կյանքն ունեցած իր վերաբերմունքի մեջ: Սկզբում (ես նրան ճանաչում եմ 7—8 տարի)[1] ես նրա հետ հույսեր էի կապում, կարծում էի, որ նրանից կստացվի գործունյա, օգտակար մարդ, բայց հիմա կասկածում եմ դրան: Կարծես թե նա ապագայում ցանկություններ չունի: Վերջիվերջո նրան կարծես թե գոհացնում է միջակ փաստաբան դառնալու և պարապ, աննպատակ կյանքի հեռանկարը: Այդպես կլինի եթե նրան չցնցի որևէ շատ ուժեղ բան: Ահա ամենը, ինչ կարող եմ ասել նրա մասին: Կարծեմ ամենը: Դարձյալ կրկնում եմ, ես միշտ սրտնեղվում եմ, երբ ստիպված եմ լինում որևէ մեկին դատել-դատապարտել: Ես ձեզ կարող էի Կոլյայի մասին էլի շատ բաներ գրել, բայց դա ավելորդ եմ համարում և նշում եմ բացառապես վերն ասվածը, քանի որ դրան ավելի եմ համոզված՝ քան մնացյալին: Դուք իրավացի եք, նրա մասին վատ բան լսելը ինձ համար տհաճ է, առանձնապես տհաճ կլիներ, եթե համոզվեի, որ դա ճշմարտություն է (ոչ միայն սուբյեկտիվ, այլև օբյեկտիվ): Որպես ընկեր Կոլյան ինձ համար միշտ սիրելի ու թանկ է եղել: Նա իմ լավագույն բարեկամներից մեկն է: Ահա ամենը, ինչ կարող եմ ասել նրա մասին, չվախենալով, որ ասածիս համար կզղջամ կամ ինձ կմեղադրեմ մարդու նկատմամբ անարդարացի լինելու համար[2]:

Մի խոսքով, տվյալ դեպքում իմ վիճակը բավական ան-

---

1 Այսինքն՝ Լազարյան ճեմարանում սովորելու ժամանակվանից:

2 Տերյանը միագամայն ճիշտ գնահատական է տվել Նիկոլայ Վարագովի մարդկային հատկություններին, որն իրոք անհոգ ու թեթևամիտ էր, բայց բանաստեղծի նկատմամբ ապացուցել էր իր անկեղծ բարեկամական անձնվիրությունը, երբ Տերյանը իջևանել էր Վարագովների տանը Աստրախանում:

նախանձելի է, Անտյա, որովհետև ստիպված եմ ձեզ հետ նամակով խոսել, որն անհնար է դարձնում մտքերիս ու զգացմունքներիս ճշգրիտ նկարագրությունը: Այնքան դժվար է նամակում արտահայտել այն ամենը, ինչ ուզում ես ասել: Բացի այդ, շատ հարցեր կան, որոնք ես ինքս դեռ չեմ պարզել, մինչդեռ մտքովս են անցնում ձեր նամակը կարդալիս, իսկ հաճախ նաև առանց այդ կարգի արտաքին մղման: Օրինակ, մարդկանց մասին դատելու համար իմ կարծիքով պետք է նախապես որոշել՝ ինչը պետք է չափ ու չափանիշ հանդիսանա մարդուն արժեքավորելու համար: Բայց չցանկանալով՝ հիմա զբաղվել այդ լուրջ թեմաների վերլուծությամբ, կանցնեմ ձեր նամակի մյուս կետերին: (Այդ հարցերը՝ հետո, եթե հետաքրքիր լինի և եթե գրելու տրամադրություն ունենամ): Հուսով եմ, չեք դժգոհի ինձնից նրա համար, որ այս անգամ էլ ձեր նամակը ցույց տվի Կոլյային: Իհարկե ոչ: Գրում եք, որ սկզբում ուզում էիք իմ նամակին պատասխանել լռությամբ և միայն մի երկու խոսք խզմզել: Այդ ինչու: Միթե ես բավականաչափ անկեղծ չեմ ձեզ հետ և միթե ձեզ չարիք եմ ցանկանում: Միգուցե այդպիսի բան եք նկատել: Այդ դեպքում թույլ տվեք մի անգամ էլ հավատացնել ձեզ, որ խորապես սխալվում եք, եթե այդպես եք կարծում: Ես ձեզ հետ նամակագրություն չէի ունենա և այլն, եթե դուք ինձ դուր չգայիք: Ինձ մինչև հոգուս խորքը հուզել են ձեր խոսքերը՝ «ես կուզենայի ձեզ փաղաքշել ինչպես փոքրիկ մանկան»: Ես հազար անգամ հոգումս շնորհակալություն եմ հայտնել այդ հաճելի խոսքերի համար: Չէ որ ես այդ օրերին այնպիսի կարիք ունեի փաղաքշանքի, փաղաքշական խոսքերի, բարեկամների: Ձեր նամակները ես միշտ կարդում եմ հսկայական բավականությամբ և դրանք զատում եմ իմ ստացած բազմաթիվ նամակներից: Դուք գրում եք միայնության, տրտմության ,շրջապատի չհասկացողության մասին: Հավատացեք, Անտյա, ես հասկանում եմ ձեզ, շատ լավ եմ հասկանում և ամբողջ սրտով կուզենայի ձեր բարեկամը լինել: Հանձին իմ դուք միշտ կգտնեք շիտակ ու հավատարիմ բարեկամի, որի առաջ կարող եք միանգամայն անկեղծ լինել, համոզված լինելով, որ նա կհասկանա ձեզ և միշտ լրջորեն կվերաբերվի ձեր նամակներին, ձեր կյանքին,

ձեր մտքերին ու զգացմունքներին, որը չի լինի կոպիտ ու անընբազգաց, գոնե այն չափով, որչափ կներեն նրա ուժերը:

Դուք մեկ էլ խնդրում եք գրել իմ մասին: Հիմա ես շատ ծանր բոպեներ եմ ապրում: Այո, շատ ծանր: Ես իմ մասին մի ուրիշ անգամ կգրեմ մանրամասնորեն, թե չէ նամակս առանց այն էլ շատ երկարեց, և ես հոգնեցի: Հա, դուք դաշնամուր նվագո՞ւմ եք, եթե այո, ապա ես երբևէ կուղարկեմ իմ բանաստեղծությունների համար գրած նոտաները, նվագեցեք: Ես ինքս դեռ չգիտեմ, թե դա ինչ երաժշտություն է[1]: Եթե դա հետաքրքիր չէ, գրեցեք ուղղակի, առանց քաշվելու: Դա ինձ չի վիրավորի, որովհետև դրա մեջ վիրավորվելու բան չկա: Ահա առայժմ ամենը: Սեղմում եմ ձեր ձեռքը, պինդ, շատ պինդ եմ սեղմում:

ՎԱՀԱՆ

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1909, 7 մարտի

Ես անհամբեր ձեզնից նամակ էի սպասում, որով պիտի հաղորդեիք, թե Խարկովից մեկնում եք «վաղը» և «Մոսկվայում կլինեք» այսինչ օրը, դրա համար էլ չէի գրում, համոզված, որ նամակս չի հասնի: Այդ պատճառով ձեր վերջին բացիկն ինձ զարմացրեց և, ճիշտն ասած, մի քիչ տխրեցրեց: Որովհետև ուզում էի շուտով ձեզ հետ տեսնվել և խոսել: Իսկ խոսելու բան, կարծում եմ, կգտնվեր: Ես գրիչ վերցրի ձեզ հետ շատ բաների մասին խոսելու համար, բայց հիմա,

---

[1] 1908 թ. մայիսի 3-ին Թիֆլիսից Ց. Խանզադյանին գրած նամակից երևում է, որ արդեն այդ ժամանակ կոմպոզիտոր Ռ. Մելիքյանը երաժշտություն էր գրել Վ. Տերյանի բանաստեղծությունների խոսքերով («Աշուն», «Աշնան երգ»): Իսկ 1908 թ. մայիսի 9-ին նույն հասցեատիրոջն ուղղած նամակից՝ «Արդյոք նորից» բանաստեղծության խոսքերով: Այնպես որ միանգամայն հնարավոր է, հենց այդ նոտաների մասին է խոսքը: Բայց Անթառամ Միսկարյանը չէր հիշում, թե արդյոք Տերյանը նրան ուղարկել էր այդ նոտաները:

ահա, արդեն զգում եմ, որ չեմ կարողանա, և այնուամենայնիվ, ստիպված պետք է զրույցը հետաձգել մինչև հանդիպում, որը, հուսով եմ, չի հարկադրի երկար սպասել: Թեև հաստատ չգիտեմ, ինչի մասին կխոսենք ձեզ հետ, բայց չգիտես ինչու համոզված եմ, որ լեզուներս կբացվի, և չգիտես ինչու, ինձ միշտ թվում է, որ մենք այստեղ շատ լավ բարեկամներ կլինենք և որ այն ժամանակ շատ բան կունենանք, որի մասին անհրաժեշտ կլինի խոսել: Իհարկե, դա կերևա, երբ գաք, և երբ մենք «ատամին տանք» իրար, բայց միթե հիմք չունեմ ենթադրելու, որ չենք հիասթափվի մեր սպասումներից: Համենայն դեպս, ես գրեթե համոզված եմ, որ կսիրեմ ձեզ (այդ բառի լավագույն իմաստով. ես հիմա սովորել եմ շատ բարձր գնահատել «մարդկային» սերը, սերը մարդու նկատմամբ, այլ ոչ թե սեռի, նույնիսկ պատրաստ եմ ավելի բարձր դասել, գերադասել սեռական սիրուց, որը հազվադեպ է գեղեցիկ ու խորունկ լինում): Իսկ ինչ վերաբերում է ձեզ, շատ եմ վախենում, որ ինձ տեսնելով մոտիկից ճանաչելով, հիասթափվեք, թեև, այնուամենայնիվ, ինձ թվում է, ես ավելի ստոր չեմ շատ ուրիշներից և ավելի հիմար չեմ նրանցից:

Բայց և այնպես հույս ունեմ, որ կհասկանանք միմյանց և չենք գժտվի գոնե սկզբնական շրջանում (ասենք դա պահանջում է քաղաքավարությունը, ճիշտ չէ, Անտյա): Ես ոչ ձեզ չեմ նեղացնի, որովհետև ինչքան չլինի, չէ որ դուք հյուր եք մեզ մոտ, իսկ ես, ինչպիսին էլ լինեմ, համենայն դեպս, ասիացի եմ, իսկ նրանց մասին ասում են, որ չափազանց հյուրասեր են (թեև գուցե այդ այնքան էլ չի համապատասխանում ճշմարտությանը. բայց քանի որ դա հիմա ինձ ձեռնտու է, ուզում եմ օգտվել այդ կարծիքից: Տեր աստված: Եվ ինչու չօգտվեմ, չէ որ դա այնպես հաճախ է կիրառվում մեր սքանչելի ժամանակներում): Ես արդեն նկատեցի որ իմ փակագծերը շատ են մեծ տեղ գրավում և ծիծաղեցի իմ գրել չիմանալու վրա: Բայց դա էլ դժբախտություն չէ: Եվ առհասարակ շատ քիչ կլիներ դժբախտությունը, եթե մարդիկ այնպես խուզ չլինեին, ինչպես որ են: Իսկ այդ դժբախտությանը (ամենամեծ կամ համարյա թե ամենամեծ դժբախտությանը... թու, նորից փակագիծ: Որքան փակագծեր

են պետք այս զարմանահրաշ աշխարհում), հա, իսկ այդ դժբախտությանը դժվար է օգնել: Շատ է դժվար: Որովհետև խոզից մարդ չես շինի, ինչքան ուզում ես գլուխ տրաքացրու: Բայց այս ինչու այսպես տարվեցի խոզերով, չէ որ այդ բարիքից այնքան կա, որ երևի ձեզ էլ դրանք ծանոթ են: Ահա այսպես: Թողնենք դրանց: Գիտեք ինչ, սիրելի Անտյա, շուտով եկեք, ես շատ եմ ուզում ձեզ տեսնել, ջանալ մի քիչ զվարճացնել ձեզ (թեև սատանան գիտե, թե մինչ այդ ինչ կարող է պատահել Աստծո ծառա Տերյանի հետ): Բայց և այնպես եկեք: Եվ մի բարկացեք իմ այս շաղակրատության վրա, Աստված վկա, չէի ուզում ձեզ զայրացնել, այլ «միանգամայն ընդհակառակը», և ոչ մեկը, ոչ մյուսը, ինչպես բարեհաճում եք տեսնել, չկարողացա: Վերջին երկու-երեք օրում ոչինչ չեմ արել, բայց հաստատ որոշել եմ երկուշաբթի օրվանից սկսել պարապել: Այո, հաստատ որոշել եմ: Այս արդեն 7894567...-րդ անգամ եմ որոշում: Գուցե այս անգամ հաջողվի, ով գիտե: Չէ որ մենք փոքր մարդիկ ենք, Անտյա, և ախր հասկանալի է, որ չենք կարող հսկաների քայլերով քայլել: Բայց հիանալի բան է փոքր մարդ լինելը: Ապրում ես քեզ համար և հոգդ էլ չէ, թքել ես բոլորի վրա և ոչ ոքի ու ոչնչի հետ գործ չունես, և քեզնից ոչինչ չեն պահանջում, և դու գոհ ես, միակ բանը, որ ստիպված ես անել, այն է, որ երբեմն մարդկանց հիշեցնում ես, որ դու փոքր մարդ ես: Ինչ լավ է: Անսահման ուրախ եմ, որ մեծ չեմ ծնվել: Թող կորչեն: Ցանկանում եմ նրանց ամենայն մեծություն էլի ու էլի... մինչև որ պայթեն չափից ավելի «փքվելուց»[1]: Համա թե արտահայտվում եմ, գրողը տանի: Այս ամենի համար ներեցեք ինձ, սիրելի Անտյա, և շուտով եկեք: Իսկ եթե չգաք, ես, իհարկե, ինքնասպանություն չեմ գործի և Մոսկվա գետը չեմ նետվի (առավել ևս, որ հիմա այնտեղ սարսափելի ցուրտ է, կարող եմ մրսել), բայց շատ կտխրեմ: Դա փաստ է: Իսկ առայժմ գրեցեք:

Ամուր, ամուր սեղմում եմ ձեր ձեռքը, ցավեցնելու չափ, որպեսզի չկարծեք, թե ստում եմ, երբ ասում եմ, թե հիմա շատ եմ ուզում տեսնել և զրուցել ձեզ հետ, նաև նրա համար,

---

[1] Նկատի ունի Ի. Կոիլովի «Գորտն ու եզը» առակը:

որպեսզի դուք, երբ ինձ տեսնեք, կարծեք, թե շատ ուժեղ եմ (թեև այդպես չէ): Բայց, աստված վկա, ուզում եմ, շատ-շատ եմ ուզում ձեզ տեսնել, հասկանում եք:

Էլի նույն Վահանը, որը հիմարություններ է դուրս տալիս և ինքն էլ չգիտե, թե ինչից է և ինչի համար: Բայց, իսկապես, նա այնքան հիմար չէ, որքան թվում է, և ախր բոլոր մարդիկ էլ այնքան ստոր ու հիմար չեն, որքան երբեմն թվում են նրանք, այլ նրանց մեջ կան և լավերը, կամ համենայն դեպս, առանձին մարդկանց մեջ լավ կողմեր կան, իսկ միթե դա քիչ է: Չէ որ նրանք բոլորը լոկ մարդիկ են, իսկապես, հո գերմարդ[1] չեն լինելու, որոնց մասին այնքան գրվում է և որոնք վերջ ի վերջո միայն Սանիներ են[2]: «Լեզուդ քոր է եկել»: Բավական է, դե ստորագրիր, հրեշ, ստորագրիր:

Ես ենթարկվում եմ բռնությանը և այս հիմար ուղերձը ստորագրում եմ իմ սեփական անվամբ, որը հնչում է այսպես՝ Վահան, բայց, բայց ոչ վագոն,— ինչպես շատերին թվում է առաջին հայացքից, իսկ Անտոյային կարող է թվալ, թե ես չար դիտավորություն ունեմ նրա ծանոթներին անշունչ առարկաների նմանեցնել. այդ ցանկությունը չունեմ, ես միայն ուզում եմ հիշեցնել վագոնների մասին և ուրիշ ոչինչ: Որովհետև ձեզ շատ է ուզում տեսնել Վահանը, որը ապօրինաբար յուրացրել է Տերյան[3] ազգանունը և որը առայժմ ապրում է Բոգոսլովսկի նրբափողոցում, Պորտնովի տան նո. 5 բնակարանում, որ հասցեով ուզում է նամակ ստանալ իր լավ Անտոյայից, իր բարեկամից, որին շատ է հարգում նրա լավ, անկեղծ հոգու և բարի սրտի համար, նույն ինքը՝

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

---

1 Գերմարդ— Նիցշեի տերմինն է:

2 Սանին— Մ. Պ. Արցիբաշևը՝ այն ժամանակ աղմուկ հանած նույնանուն վեպի հերոսը, գոեհկամիտ մեկը, որը ժխտում էր բոլոր տեսակի հասարակական գաղափարները, բարոյականությունը, ազնվությունը և այլն:

3 Նրա ազգանունը Տեր-Գրիգորյանը է, իսկ Տերյանը կեղծանուն է, որը նա յուրացրել էր 1907 թ.:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1909, 3 ապրիլի, ՄՈՍԿՎԱ
ՍՊԻՏԱԿԱՔԱՐ
ՈՍԿԵԳՄԲԵԹ

Անտենկա,

Ամենից առաջ շնորհավորում եմ ձեր նշանդրեքը[1] և հղում եմ ձեզ լավագույն ցանկություններ այդ առթիվ, թեև չեմ հավատում, որ իրոք նշանվել եք: Բայց ասում են, խելացի մարդիկ ոչ մի բանի համար չպիտի զայրանան այս պաղ Լուսնի ներքո, որովհետև ոչ մի անհնար բան չկա այս աշխարհում: Թեպետ ահա այնուամենայնիվ ինձ զարմացնում է, որ նամակս չեք ստացել: Ինչպես կարող էր պատահել, չեմ հասկանում: Ես ձեզ այն հաշվով էի գրել, որ նամակն ստանաք կիրակի օրը, Զատկին: Չեմ հասկանում, ինչու է այդպես պատահել, որ մինչև հիմա չեք ստացել: Իմ օրերը, սիրելիդ իմ Անտենկա, հոսում են վերին աստիճանի միապաղաղ ու ձանձրալի, սոսկ բոպեաբար ցոլանում է, և նորից ձգվում է այս գորշ-գորշ միօրինակ «կյանքը»: Մի կերպ գրեցի երկու ռեֆերատ, որոնք ինձ մահու չափ ձանձրացրել էին:

Երբեմն բանաստեղծություններ եմ գրում, բայց շատ հազվադեպ է ինձ այցելում անիծյալ «Մուսան» և մի տեսակ կողքանց է մոտենում ինձ, այնպես որ օգուտը քիչ է, ավելի շատ գոհանում եմ ապագայի վրա հույս դնելով: Չէ որ պատանիներին ոչ թե գիտություններն են սնում, այլ հույսերը: Թեև ես, ավաղ, արդեն ամենևին էլ պատանի չեմ: Ծերունի

---

[1] 1908 թ. սկսած Վլադիմիր Մորոզովը սիրահարվում էր Ա. Միսկարյանին և անընդհատ ամուսնության առաջարկություն էր անում, անկեղծորեն և խորունկ սիրելով նրան: Դավիթ Միսկարյանի վկայությամբ Ա.-ն հարցրել է հորը, թե արդյոք նա դեմ չի լինի, եթե ինքը իր բախտը կապի Վլադիմիրի հետ: Հայրը պատասխանել է, որ ինքը կուզենար, որ իր դուստրը հայի հետ ամուսնացած լինի: Ա.-ի համար այդքանը բավական էր, որ հաշվի առնելով ջերմորեն սիրած հոր կարծիքը, ճնշի իր զգացմունքները: Միայն հոր մահից հինգ տարի հետո նա ամուսնացավ Վլադիմիր Մորոզովի հետ:

է ձեր Վանիկը: 24 տարեկան: Մտածիր, սիրելիս, 24 տարեկան: Էհ, թողնենք այս խիստ անախորժ խոսակցությունը: Չէ որ վայելուչ հասարակության, comme it faut[1] մարդկանց մեջ տարիքի մասին չեն խոսում, ճիշտ չէ՞: Եվ բացի այդ, չեմ ուզում ընկնվալ: Ձանձրացրել է: Ծուրջդ բոլորը չափազանց շատ են ընկնվում: Իսկ հենց դա իմ մեջ մի տեսակ հակառակ զգացմունք՝ առույգություն է առաջացնում: Երբեմն մի տեսակ առանձնապես առույգ են լինում հոգով, և թվում է, ամեն ինչ կարող եմ անել: Ես հիմա հաճախ սկսում եմ վերստին հասկանալ առույգ խոսքերի ու գործերի գեղեցկությունը: Ահա այս բոպեներին ես չեմ զգում կյանքի ձանձրույթն ու միապաղաղությունը: Դա չափազանց հաճելի ու վսեմ տրամադրություն է: Այ ես կուզենայի, որ դուք համակվեիք դրանով: Առհասարակ պետք է ընկատել, Անտյա, որ արդեն ողջ հասարակությունը խիստ կնկավարի (ներեցեք արտահայտությանս) սկսել է ընկնվալ: Երբեմն մարդ ուզում է բղավել. Բավական է: Վերջ տվեք պառավ կնկա պես տրտնջալուն: Բայց և այնպես երբեմն ինձ վրա էլ է իջնում սարսափելի թախիծ: Ինձ թվում է, դա մենակությունից է: Թեև չգիտեմ: Երբեմն ես սոսկալի մենակ եմ լինում: Դե, Անտենկա, առայժմ: Ձեռքս հոգնեց: Գրեցեք ավելի հաճախ ու ավելի շատ: Համբուրում եմ, ձեզ, իմ սիրելի աղջնակ, և ցանկանում ամենայն բարիք: Բարևեցեք ձեր փեսացուին, եթե նա իրոք կա: Իհարկե, մենք բարեկամ կմնանք և այն ժամանակ, երբ «երիտասարդ զույգը» կմեկնի կապույտ երկնքի և ցնցվող գետնի երկիրը, չէ՞:

Մի մոռացեք ձեր բարեկամ

ՎԱՀԱՆԻՆ

...Եվ մի բարկացեք ինձ վրա:

---

[1] Բարեկիրթ մարդ (ֆրանս.)

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ[1]

1909, 12 ապրիլի, ՄՈՍԿՎԱ

Անտյա

Ձեր նամակն ստացել եմ, բայց ոչ մի հնարավորություն չունեմ պատասխանելու հանգամանալից նամակով: Առայժմ ստիպված եմ սահմանափակվելու այս բացիկով, այն էլ միայն նրա համար եմ գրում, որ չեմ ուզում հարկադրել, որ սպասեք: Առաջին հնարավորության դեպքում երկար նամակ կգրեմ: Պարապում եմ: Տրամադրությունս լավ չէ: Տրամաբանություն, անիծյալ գիտություն է, ինչը կարող է դրանից ձանձրալի լինել: Ես շատ էի ուզում նախատել ձեզ այն ամենի համար, որ հաղորդում եք, բայց առայժմ հետաձգում եմ, թեև վախենում եմ, որ «զայրույթս» կանցնի, և այլևս չեմ կատարի խոստումս: Արդյոք որևէ բանով զբաղվում եք: Ինչպես են ձեր գործերը, տրամադրությունը. գրեցեք, թե մի անգամ էլ ձեզնից լսեմ «ինքնասպանական»[2] մտքերի մասին, ձեզ չեմ ների: Վերջ տվեք: Լրջորեն մտածեցեք: Գրեցեք: Առայժմ: Մի բարկացեք, խնդրեմ, այս կարճառուտ նամակի համար: Ես այդ մեղքս կքավեմ:

Ձեր Վ.

Միթե մինչև հիմա չեք ստացել իմ վերջին նամակը:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1909, 16 ապրիլի

Վերջապես կարող եմ գրել ձեզ, սիրելի Անտենկա: Դեռ երեկ էի ուզում գրել, բայց ոչինչ չստացվեց, երկու խոսք չէի

---

1 Բաց նամակ է: Կլոր կնիքներ՝ «Մոսկվա» 13. 4. 1909, Ցարիցին, 15. 4. 09»: Տերյանի ձեռքով գրված է. «ՆԲԲ Անթառամ Միսկարովային, ք. Ցարիցին»:

2 Ըստ երևույթին Անթառամ Միսկարյանի այդ տրամադրությունը կապված էր ինչպես Վ. Մորոզովի հետ անձնական հարաբերությունների կապակցությամբ ունեցած ապրումների, այնպես էլ հիվանդության՝ թոքախտի հետ, որն այն ժամանակ վերստին սրվել էր:

կարողանում կապել: Տրամադրությունս նողկալի էր: Սարսափելի միայնություն ու թախիծ էի զգում և, ձեզ հիշելով, ուզում էի գրել, բայց, ինչպես արդեն վերը նկատեցի, դրանից ոչինչ չստացվեց:

Իհարկե, պետք է սկսել ձեր նախորդ նամակից, որի առթիվ ես պատրաստվում էի ձեզ նախատել այն ամենի համար, որ ուզում էիք անել, բայց հիմա էլ չեմ ուզում: Չարժե ձեզ նախատել, ես կուզենայի ձեզ գգվել, ոչ այնպես, ինչպես «այն» անգամ, այլ մեղմիկ, մաքուր, լավ, ինչպես գգվում է եղբայրը, լավ եղբայրը իր սիրելի քույրիկին: Ինչո՞ւ կըշտամբեմ: Ինչո՞ւ խելքիս զոռ տամ: Մի՞թե խելքով կարող ես հանգստացնել թախծոտ հոգին և մի՞թե դատողություններով կբուժես սրտի ցավը: Ավելի լավ է լանք միասին, մեղմիկ լանք ու լռենք: Դա ավելի շատ կօգնի մահացու թախծի ու վհատության բոպեներին: Ավելի լավ է ամբողջովին ունձնատուր լինենք հայեցողության ու փաղաքուշ անուրջներին, իրիկնային երազանքներին, որոնք չեն պահանջում անպայման իրականացում, այլ ինքնանպատակ են: Ճիշտ այնպես, ինչպես երաժշտություն լսելիս դուք նրանից ոչինչ չեք սպասում բացի հենց իրենից, ունկնդրում եք ու լռում եք, և ժպտում եք, և լալիս. Մի՞թե դա լավ չէ: Չէ որ միայն արվեստը կարող է երջանկացնել մարդուն: Ահա ես մի նախադասություն ասացի, որը պարզ չէ և բացատրություն է պահանջում, և շատ ցավում եմ, որ ստիպված եմ այդ անել: Երբ ասում եմ, թե լոկ արվեստը կարող է մարդուն երջանկություն տալ, ես ուզում եմ ասել, որ երջանկություն կարող է տալ լոկ այն, ինչ կապված է մեր զգացմունքների հետ: Դա նշանակում է, որ գիտությունն էլ կարող է տալ, բայց միայն դրա միջոցով, այդ ճանապարհով: Դե բավական է, չեմ բացատրի: Չարժե: Ահա նստած եմ մենակ: Այսօր նույնպիսի օր է, ինչպես և երեկ: Ոչնչով լավ չէ, ավելի շուտ որոշ առումներով ավելի վատ է: Բայց այսօր ինձ համար լավ է: Ինձ թեթև ու խընդուն եմ զգում: Այսինքն ոչ թե խնդուն, այլ տրտում: Կարծեմ ես ձեզ մի ժամանակ ասել եմ տրտում ուրախության մասին: Այդպիսի պահերին ավելի լավ եմ զգում, քան լինում է խելահեղ զվարճության բոպեներին: Այո, դա ավելի լավ է:

Խաղաղ իրիկունով նստեցեք դաշնամուրի մոտ կիսախա-

վարի մեջ և նվագեցեք որևէ մեղմ, թախծոտ, գգվող, բարի, թեթև արցունքներդ ակամա հոսեն, ձեզ լավ կզգաք, և եթե հիշեք, որ ուր որ հեռու-հեռու մեկը նստել է և թախծում է և երբեմն մտաբերում է ձեզ, ձեզ լավ կզգաք: Եվ եթե հանկարծ հիշեք, որ ձեր շուրջը եռում է «կյանքը», աղմկում ու իրար է անցնում այդ խելահեղը, նա կթվա հեռավոր ու սքանչելի, ինչպես ամեն մի հեռավոր բան, և կուզենաք հանկարծ տեսնել որևէ մեկին և նրա հետ զրուցել դատարկ բաների մասին:

Հիմա ես հիշեցի Իբսենի խոսքերը «ինքն իրեն հարազատ լինելու»[1] մասին «Եղիր ինքդ քեզ հարազատ»: Որովհետև ես ասել եմ այն մասին, թե որքան լավ է ներանձնանալ և ապրել ինքն իր հետ, իր հոգու մեջ, նվիրվել իրեն, և աշխարհը դարձնել հրաշալի անուրջ: Բայց հիշելով այդ ֆրազը, ես բոպեապես մերժեցի այն: Մի՞թե կարելի է հավերժ լինել ինքն իր հետ և ինքն իրեն հարազատ: Չէ՞ որ ամենահետաքրքիր մարդիկ էլ ձանձրացնում են: Քաշվել իր մեջ և ամեն ինչ մոռանալ, այդ լավ է, բայց ոչ միշտ, այլ երբեմնակի: Ամբողջ կյանքում անրջելը ճղճիմ բան է, բայց թախծի ու տրտմության պահին առանձնանալ և մենության հովանու ներքո լալ ու անրջել՝ դա հոգու պահանջն է, նույնքան անհրաժեշտ, որքան սնունդը: Մենության անապատից վերադառնալ մարդկանց մեջ նորոգված ու լուսավոր, սերը սրտում և կյանքի, աշխատանքի ծարավով: Ես այս ամենը գրում եմ իմ մասին, բայց ինձ թվում է, որ դա մասամբ եթե ոչ ամբողջովին, վերաբերում է և ձեզ, սիրելի Անտյա:

Ասենք, չգիտեմ ինչ գրեցի, և եթե որևէ բան այդպես չէ, մի բարկացեք և մի նախատեք ինձ: Հանգամանորեն գրել չեմ կարող, այսինքն՝ գրում եմ շատ, բայց ոչ այնքան հետևողականորեն, և անկանոն: Ինչ արած: Ահա և ամենը:

---

[1] «Ինքն իրեն հարազատ լինելու» մասին խոսքերը՝ Պեր Գյունտի խոսքերն են Իբսենի «Պեր Գյունտ» դրամայից (4-րդ գործողություն) և Բրանդի խոսքերը Իբսենի նույնանուն դրամայի 2-րդ գործողությունից: Հետաքրքրական է, որ իր այն ժամանակվա քննադատական հոդվածներում այդ բառերը շատ հաճախ մեջբերում է Ա. Բլոկը, որ ըստ իս խոսում է այն ժամանակ այդ արտահայտության տարածված լինելու մասին:

Ասենք, ես դա ասում եմ նրա համար, որ ձեռքս արդեն հոգնեց և էլ գրել չեմ ուզում:

Համբուրում եմ ձեզ և պինդ սեղմում ձեր ձեռքը:

Ձեր՝ ՎԱՀԱՆ

Գրեցեք: Եռանդով պարապում եմ: Գրում եմ երրորդ ռեֆերատը: Նախորդներն անցան բարեհաջող՝ ստուգարք նշանակեցին: Սա վերջին ռեֆերատն է, իսկ հետո կանցնեմ քննություններին: Դուք ինչ եք անում:

Գրեցեք ավելի մանրամասն: Մի սպասեք անպայման պատասխանի, այլ գրեցեք, երբ տրամադրություն է լինում և գրելու բան կա: Այդ ասում եմ նրա համար, որ հիմա որոշ ժամանակ ես զբաղված եմ և, կարող է պատահել, չկարողանամ գրել հաճախ ու երկար: Իսկ դուք ազատ եք: Դե, ուրեմն, գրեցեք:

Ինչպես է ձեր առողջությունը: Այդ մասին գրեցեք անպայման և հիմարություն մի արեք՝ բուժվեք, եթե դա պահանջվում է: Հասկացա՞ք: Դե, ամենայն բարիք:

ՎԱՀԱՆ

Մի բարկացեք նամակիս անկանոնության և անընթեռնելիության համար:

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

(1909, դեկտեմբերի վերջ)[1]

Ձեր նամակը, սիրելի Անտենկա, վաղուց եմ ստացել, բայց մինչև այսօր ոչ մի հնարավորություն չունեի պատաս-

[1] Այս նամակը Ա. Միսկարյանն ինձ տվել է «անթվակիր նամակներ» խորագրի տակ, որովհետև բնագրի վրա ամսաթիվ չկար, իսկ ծրարը չէր պահպանվել: Ըստ բովանդակության, ինչպես և նույն հասցեատիրոջը գրած 1910 թ. հունվարի 4-ին (նո. 105) գրած նամակի և Մարթա Միսկարյանին հասցեագրած 1910 թ. ապրիլի 7-ի (նո. 108) նամակի հետ համադրելու միջոցով ես տվյալ նամակը վերագրում եմ 1909 թ. դեկտ. վերջին:

խանելու և հիմա էլ որոշակի չգիտեմ, ինչ գրեմ և ինչպես: Իսկապես ասած, գրելու բան կա, բայց մի տեսակ չի գրվում: Ձեզ ծանո՞թ է այդպիսի տրամադրությունը, Անտենկա: Եթե ծանոթ է, ինձ կհասկանաք: Շատ կուզենայի ձեզ մոտ գալ, բայց դա էլ չկարողացա: Ինձ վերապահում եմ մի ուրիշ անգամ ձեզ հյուր գալու իրավունքը, եթե թույլ կտաք: Հիմա ես գտնվում եմ Պիտերում: Ապրում եմ ծանոթների մոտ եղբորս հետ[1]:

Բան նայն է, որ եղբայրս մի քանի օր առաջ պահանջեց, որ Պիտեր գամ, սպառնալով ինձ հետ խզել բոլոր դիվանագիտական հարաբերությունները, եթե հրաժարվեմ գնալուց: Ինձ էլ պետք էր եղբորս հետ տեսնվել, ահա և ես այստեղ եմ: Իսկ Ցարիցին գալ ես շատ էի ուզում, և թվում է, այստեղ ինձ լավ կզգայի: Ինձ շատ հուզեց այն, որ ձեր գեղասքանչ Մարթան[2] էլ, մի անձնավորություն, որի մասին այնքան լավ բաներ եմ լսել ձեզնից: Նույնպես միացել է ձեր հրավերին: Ես շատ կուզենայի ծանոթանալ նրա հետ: Ճիշտ չէ՞, որ չէի հիասթափվի: Չգիտեմ ինչու, նա ինձ պատկերանում է շատ հաճելի ու լավը: Չխոսելով արդեն այն մասին, որ ես ձեզ հետ, հավանաբար, ինձ շատ լավ կզգայի: Թեև, նայած թե ինչ տրամադրության մեջ կլինեինք: Հանգիստ կաշխատեի (իսկ դա այնպես պետք է Անտենկա, այնպես անհրաժեշտ է ինձ): Իհարկե, ոչ համալսարանական առարկաներով, ոչ:

Ձեր մեկնումն ինձ համար անսպասելի էր և ինձ զարմացրեց: Այդ ինչու ինձ մոտ չանցաք գեթ հրաժեշտ տալու: Ավելորդ համարեցիք:

Իսկ այդ շրջանում ես ինձ լավ չէի զգում: Ահա միայն հիմա պատրաստվեցի գրելու և առաջին նամակը գրում եմ ձեզ: Իսկ էլի որևէ մեկին կգրեմ թե ոչ, չգիտեմ: Այնպես չէ՞մ ուզում գրել: Ինչ որ համրություն է կաշկանդել ինձ: Ուզում եմ լռել և շատ հազվադեպ է փայլատակում բարեկամներիս կամ ծանոթներիս մի խոսք գրելու ցանկությունը, որն, իհար-

---

1 Այն ժամանակ Պետերբուրգում էր գտնվում բանաստեղծի եղբայրը՝ Արամ Տեր-Գրիգորյանը (1877—1925), որն ավարտել էր Պետերբուրգի համալս. իրավաբ. ֆակ.-ը:

2 Մարթա Մինայի Միսկարյան (1893—1958)— Անթառամ Միսկարյանի քույրը:

կն, չեմ կատարում: Մի անգամ ուզեցի վերցնել ու նամակ գրել... Գիտեք ում: Կռահեցեք: Մարթա Միսկարյանցին: Որին չեմ ճանաչում, որի հետ ծանոթ չեմ, բայց և այնպես, ուզում էին նստել ու գրել նրան շատ, շատ ինչի մասին՝ չգիտեմ, բայց ինչ-որ տխուր ու ղլավ բանի մասին: Ինչ-որ լուսավոր ու գեղեցիկ բանի մասին: Բայց դա անցավ: Ու նրա մասին իմ մեջ ինչ-որ հիշողություն, զարմանալի լավ, մաքուր ու պայծառ, խաղաղ ու տխուր: Ես երբեմն նստում եմ մենակ ու մտորում եմ նրա մասին: Արդյոք իսկապե՞ս նա այդքան հրաշալի է: Մի անգամ մտքովս անցավ. ահա հանկարծ նրանից, այդ զարմանալի Անծանոթ Աղջնակից[1] նամակ ստանամ: Ու թեև դա տեղի չունեցավ, սակայն այդպիսի ենթադրության հնարավորությունը իմ մեջ ծնեց մի տեսակ տարօրինակ ուրախություն, ինչպես հուշը մի բանի, որը չի եղել, բայց որի մասին երազել ես մի ժամանակ, որ սիրել ես մի ժամանակ, որը դեռ կանչում է իր մոտ: Ես կասեի, տրտում ուրախություն, բայց վախենում եմ, որ ինձ ուլտրադեկադենտ համարեք: Բայց չէ՞ որ իրոք այդպես է. Այ թե ինչքան շաղակրատեցի: «Մարթա Միսկարյանին», հաղորդեցեք ողջույնս, միայն ողջույնս, որովհետև ավելին ուղարկել չեմ համարձակվի: Բայց կուզենայի, որովհետև նա ինձ համար հիմա լուսավոր մուսա է: Ես մի քանի բանաստեղծություն եմ գրել նրա մասին մտածելով, և դրա համար պետք է շատ շնորհակալ լինեմ նրան[2]: Մի՞թե չէի կարող նրան ավելի շատ բան ուղարկել, քան ողջույնը: Դուք ձեր մասին ոչինչ չեք գրում: Ձեր տրամադրության, ձեր գործերի և այլնի մասին ոչ մի լուր չունեմ: Թե երբ կլինեք Մոսկվայում, ինձ նույնպես հայտնի չէ: Ես այնտեղ կլինեմ ամսի 6-ին: Եթե ինձ գրեք, շատ շնորհակալ կլինեմ և ուրախ, ինչպես նաև, հուսով եմ՝ ավելի ճշտապահ: Ուրեմն թույլ տալիս եք ինձ իրավունք վերապահել ձեզ մոտ հյուր լինելու ասենք, թեկուզ, բարեկենդանին: Ես լուրջ եմ հարցնում: Հղում եմ

---

1 Այստեղ Վահան Տերյանը դիմում է Ալեքսանդր Բլոկի համանուն բանաստեղծության (1906) և պիեսի (1907) Անծանոթուհու բանաստեղծական կերպարին:

2 Դժբախտաբար, Անթառամ Միսկարյանը չկարողացավ նշել, թե հատկապես որ բանաստեղծություններն էին:

ձեզ իմ լավագույն ցանկություններս, կուղարկեի նախ իմ բարեկամական համբույրը, բայց դուք, թերևս, բարկացած եք ինձ վրա և չեք ընդունի։ Առհասարակ դուք վերջին ժամանակներս, կարծես, սկսել եք վերաբերվել ոչ այնպես, ինչպես առաջ։ Չեմ ուզում ինձ արդարացնել, թեև կարծում եմ, որ ձեր առաջ ոչ մի մեղք չեմ գործել։ Չվիճենք ու չգժտվենք, ինչ կարիք կա։ Նոր տարի է գալիս։ Թող նա լինի— վերակենդանացման և ուրախության տարի։ Ճշմարիտ, դուք լավ մարդիկ եք, Անտենկա, դուք և ձերոնք։ Չգիտես ինչու, ես դրանում խորապես համոզված եմ։ Բարևեցեք Մարթային և ձեր ծնողներին։ Գրեցեք։ Շնորհավոր ձեր նոր տարին։

Միշտ անձնվեր՝

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Հասցես՝ Պետերբուրգ, Արխիեիյսկայա, տ. 29-ա, բն. 6։

Ներեցեք, որ գրում եմ այսպիսի պատառիկների վրա, ձեռքիս տակ թուղթ չկար։

Ա. ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1910, 4 հունվարի, Ս.— ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

Սիրելի Անտենկա

Ձեր բացիկից կարելի է եզրակացնել, որ լավ չեք, թեև այդ մասին որոշակի ոչինչ չեք գրում։ Ոչինչ չեք գրում ձեր մասին։ Իսկ դա շատ հետաքրքիր է։ Վաղուց է, ձեզնից մեծ նամակներ չեմ ստանում։ Գրում եք, որ բարկացած եք ինձ վրա իմ լռության և այն բանի համար, որ չեկա։ Լռությունս բացատրվում է նրանով, որ լավ չեմ, բացի այդ, չէ՞ որ նույնպիսի իրավունք ունեմ ձեզ վրա բարկանալու ձեր լռության համար։ Չէ՞ որ դուք էլ էիք լռել, որովհետև կարճլիկ բացիկը հո չի նշանակում «չլռություն»։ Իսկ չեկա՝ շատ և չափազանց հիմնավոր պատճառներով, թեև շատ էի ուզում և հիմա էլ ուզում եմ։ Ինձ թվում է, ձեզ մոտ, խուլ վայրում ձեր

ընկերակցությամբ (ձեր և առհասարակ ձերոնց ընկերակցությամբ) ես ինձ լավ կզգայի: Ես հիմա էլ ձեր տունը պատկերացնում եմ որպես խաղաղ հանգրվան, որտեղ այնքան լավ է նստել և լսել դաշնամուրի մեղմ հնչյունները: Այնպես կուզենայի հանգստանալ: Սուզվեի լռության երաժշտության և մեղմ երաժշտության քաղցրության մեջ՝ պարզ, անկեղծ, սիրալիր մարդկանց շրջապատում: Ես այնպես եմ ուզում այդ գգվող լռությունը, գրգանքն ու հեռացումն ամեն ինչից, և սիրալիրությունը, և գուրգուրանքը: Դուք ինձ կհասկանաք, եթե հիշեք, որ արդեն մայր չունեմ, և վաղուց չեմ տեսնում նրա գգվանքը[1]: Ասենք, չգիտեմ, նրանց համար, ովքեր մայր ունեն, արդյո՞ք հասկանալի է լքվածության զգացումը, որն այնպես ծանոթ է ինձ, և, հավանաբար, այն բոլորին, ովքեր այդպիսի հիանալի, գթոտ մայր ունեին, ինչպես իմն էր, որը հիմա չկա, արդեն վաղուց չկա, հասկանում եք այդ, արդեն չկա և երբեք չի լինի: Ինձ թվում է մեկ էլ, որ այնտեղ, ձեզ մոտ, ես կաշխատեի և լավ բաներ շատ կգրեի... Բայց տեսնում եք, աստված չտվեց: Ինչ արած: Գուցե երբևէ մի ուրիշ անգամ կհաջողվի: Ինչ իմանաս: Ինձ դուր է գալիս հիմա գալու ձեր այդ հաճելի առաջարկությունը (որ ես կարող եմ ձեզ մոտ մնալ, իսկ դուք կմեկնեք ամսի 10-ին): Այնպես չէ՞, դա շատ սիրալիր է: Բայց և այնպես, գիտեք ինչ: Արդեն վաղուց է մտքովս անցնում թողնել Մոսկվան և գոնե մի ամիս ու կեսով հեռանալ որևէ ետ ընկած տեղ: Այ եթե դա վերջնականապես որոշեմ (իսկ դա շատ հավանական է), ինչու չտեղավորվեմ Ցարիցինում: Ծանոթներ կլինեն, որոնց կարող եմ այցելել տրտմության պահերիս: Ահա սա, թերևս, վատ չէր լինի: Իսկապես, միևնույն չէ, Ցարիցինը կամ մի ուրիշ գավառ, իսկ Ցարիցինն այն առավելությունն ունի, նախ, որ, այնտեղ, ինչպես ասացի, ծանոթներ կլինեն, երկրորդ՝ դրանք չեն լինի, այսինքն դրանք քիչ կլինեն: Եվ հավանաբար կյանքն էլ այնտեղ թանկ չէ: Այնպես չէ: Տեսնենք, ահա կգամ Մոսկվա, գործերս կկարգավորեմ, իսկ հետո կո-

---

1 Վահան Տերյանի մայրը վախճանվել է 1903 թ. և թաղված է բանաստեղծի ծննդավայրում՝ Վրացական ՍՍՀ Բոգդանովկայի շրջանի Գանձա գյուղում:

րոշեմ: Գուցե այսօր մեկնեմ Մոսկվա: Պիտերն ինձ ձանձրացրեց և դուր չի գալիս: Ինձ գրեցեք Մոսկվա և անպայման գրեցեք ձեր մասին որքան կարելի է շատ: Բարևներս ձերոնց:

Պինդ սեղմում եմ ձեր ձեռքը:

ՎԱՀԱՆ

Մոսկվայում հասցես հինն է:

ՄԱՐԹԱ ՄԻՍԿԱՐՅԱՆԻՆ

1910, 7 ապրիլի

Այս նամակը հասցեագրված է միայն ձեզ, Մարթա:

Շատ-շատ տխրեցի, երբ կարդացի Մարթայի նամակը: Նա ինչու է հիշել ինձ:

Տխուր է:

Արդյոք երազանքն է անլինելիի մասին, թե կարոտը անդառնալի-հեռավորի մասին, չգիտեմ: Ինչ-որ տարօրինակ զգացողություն է: Կարծես թե նամակը հին, վաղուց ծանոթ, մի ժամանակ մոտիկ և անակնկալ հեռացած մեկից է: Կարծես հարազատ և տարորեն հեռու, գուցե առհավետ, նույնիսկ, ամենից հավանական է, առհավետ հեռու մեկից: Միթե մենք կհանդիպենք: Միթե կմտերմանանք երբևէ:

«Կուզենայի ավելի մոտիկ...»

«Այդպես դասավորվեցին հանգամանքները»:

Ես էլ էի ուզում, հիշո՞ւմ եք:

Ինձ խանգարեցին հանգամանքները: Բայց չէ՞ որ մեզանից յուրաքանչյուրը կարող էր ասել՝ «ուզում եմ»: Եվ մոտենալ: Մի՞թե սարսափելի է մարդուն մոտենալը և մոտիկից նայելը: Երբեմն՝ այո: Բայց չէ՞ որ ամեն մեկը չարժե դրան: Գուցե ես էլ չարժեմ: Իսկ դուք: Չգիտեմ: Բայց ես կուզենայի ավելի մոտիկ լինել, ինչպես և դուք, և համենայն դեպս

մենք չմոտեցանք: Իսկ գուցե հենց դուք եք նա, որը չկա այս աշխարհում:

Լավ է նրանց համար, ովքեր սիրում են և սիրում են և սիրված են: Նրանց համար հանգամանքներ չկան:

Եթե սիրեի: Ինչ լավ կլիներ, չէ՞, Մարթա: Մի տեսակ քարացել է հոգիս: Սառել է:

Անկամ ու հոգնած:

Գարունն այստեղ աշնան պես է:

Անձրև ու անձրև:

Տխրություն:

Մենակություն: Մշտապես:

Մենք բոլորս այդպես ենք: Տա աստված, որ ուժգին սիրեք, ում որ սիրում եք:

Սիրուց լավ բան չկա:

Իսկ ո՞վ կձայնի մեզ, մեռածներիս՝ «ելեք»: Ո՞վ կասի մեզ, տրտումներիս ու միայնակներիս՝ հավատով ու տիրական՝ «սիրեցեք և դուք կհաղթեք մահվան»:

Անձրև է: Ցեխ: Գիշեր: Միայնություն: «Հեռվություն»: Ինչ սարսափելի հեռվություն: Մարդ կարողանա սպանել այս միայնությունը: Տա աստված, որ ուժգին սիրեք, Մարթա: Հանդիպում ես, ծանոթանում ես, բաժանվում: Հավիտենական շրջապտույտ: Եվ հոգումդ վերստին ամայություն է ու միայնություն: Եվ թախիծ: Հոգնություն, մահացու հոգնածություն: Ինձ թվում է, թե ես մեռնում եմ: Ուզում եմ, որ երբ մեռնեմ, և շուրջս մահվան լռությունը տիրի, գերեզմանիս վրա հանկարծ, բայց աննկատելի, երաժշտություն հնչի, որ ճերմակ շորերով մի աղջիկ[1] բերկրալից խաղաղ տրտմությամբ լի, մի եղանակ նվագի անլինելի հեռավորի, առհավետ հեռավորի մասին: Որ շուրջս ծաղկեն փաղաքուշ, պայծառ անմոռուկներ, ինչպես լուսավոր տխրության և մեղմ ուրախության մեղեդի:

Ախ, նորից այս տաղտկալին, աշնանայինը, հնազանդն ու մորմոքունը, սիրտ ճմլողը: Հավերժորեն, հավերժորեն:

Մարդ ազատվեր սրանից, այս անբացատրելի, այս տար-

---

[1] Այստեղ Տերյանն ըստ երևույթին նկատի ունի Մարթային, որովհետև նա զբաղվում էր երաժշտությամբ:

օրինակ տխրությունից: Այս սարսափելի հոգնածությունից: Այս տաղտուկից: Ես շատ-շատ տխրեցի, երբ կարդացի հեռավոր, բայց կարծես վաղուց-վաղուց ծանոթ, մի ժամանակ մոտիկ, մի ժամանակ հարազատ Մարթայի նամակը...

Ներեցեք այսպիսի նամակի համար: Ուրիշ տեսակ այս չէի կարողանա գրել:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Երեկ երեկոյան նամակ գրեցի և չեմ ուզում վերընթերցել, որովհետև եթե վերընթերցեմ, չեմ ուղարկի: Դա արդեն գիտեմ, իսկ ես ուզում եմ այսօր ուղարկել: Մի բարկացեք ինձ վրա խառնափնթորության և անորոշության համար: Տրամադրությունս այդպես էր՝ գրեցի, իսկ թե ինչ՝ չեմ հիշում, համենայն դեպս այն, ինչ զգում և մտածում էի: Դուք նամակ ներն ուրիշներին տալու սովորություն չունեք: Ես սարսափելի չեմ սիրում դա: Հասկանում եք ինչու: Եթե ոչ, մի անգամ կբացատրեմ: Եվ ապա՝ ընդունեցեք ողջույնս և լավագույն ցանկություններս: Եթե գրեք, ուրախ կլինեմ կարդալ Ձեր ավելի երկար նամակը, քան նախորդն էր:

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

Անտենկան մեկնել է և նույնիսկ չի զանգահարել ինձ, խնդրում եմ, ասացեք նրան, որ դա լավ չէ: Բարևեք: Ի՞նչ նորություններ կան ձեզ մոտ: Ինչպե՞ս եք ապրում, ինչպե՞ս է Ձեր առողջությունը:

Tono Stano — « Sécession tardive » 1985